# ՀԱՄԱՌՕՏ ՔՆՆՈՒԹԻՒՆ

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

## Եւ Մահմետական Կրօնի։

Յաշխարհաբառ լեզուի շարադրեալ յումեմնէ հոգեւորէ ՚ի պէտս պարզամտաց։



ԱԿԱԴԵՄԻԱ

1831։ ՚Ի ՄՈՍԿՈՎ. ռմձ։

՚Ի տպարանի Ճեմարանի Հայոց

Տեարց Լ րեանց։

Ընթերցեալ մեր զձեռագիրս՝ հրամայեցաք 'ի տիպ մուծանել, և զտպեալն ընդ դաղափարին կրկին մեզ առաջի առնել նախ քան ըզ հրապարակելն ։

Դատաքննիչ գրոց Միքայէլ Ծայրագոյն Վարդապետ Ալլահնթեանց Վանական և Նուիրակ սրբոյ Էջմիածնի ։

'ի 6 Սեպտեմբերի · 1830 · 'ի Մոսկուա ։

# Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . Ամէն ։

## Առաջաբանութիւն ։

1 .

Երբ որ մեր Տէրն և փրկիչն Յիսուս Քրիստոս իրան չարչարանքովն և մահովն մարդկանց ազգըն ազատել էր մեղքի պատժիցն՝ և յաւիտենական դատապարտութենիցն, ապա իրան համբարձման ժամանակն հրաման տուաւ իրան առաջին աշակերտներին՝ թէ գնացէ՛ք ամէն աշխարհք, և ամէն հեթանոսներին փրկութեան և քաւութեան աւետարանըն քարոզեցէ՛ք ։

Ու առաքեալներն էլ էն հրամանըն էնքան ջերմեռանդութենով և ջանքով կատարեցին, մինչև որ իրանց կեանքին էլ չի խնայեցին մինչևի մահ. բայց իրանց ամէն բաները թողեցին, և օրէ ցօր նախատանքի և չարչարանքի մէջն կենալով, ամէն կերպ նեղութիւններ քաշեցին՝ որ փրկութեան աւետարանըն քարոզեն, և ամէն մեղաւորները կանչեն իրանց փրկիչ Յիսուսի մօտ ։

2 .

Բայց ինչպէս որ առաքեալներն Քրիստոսի հրամանին հնազանդ էլան . էնպէս էլ ամէն քրիստո-

նեայքըն որ առաքելոց մեռնելույն ետև մինչև մեր ժամանակս կային, սպարտական էին՝ որ իսկի մին ժամանակ հանգիստ չի առնեն, բայց միշտ ամէն երկրի վերայ մանգան, և Քրիստոսի աւետարանըն քարոզեն. մինչև որ ամէն գաւառի, ամէն քաղաքի, և ամէն գիւղի մարդիքն լսեն՝ և մտքներըն առնեն. թէ քանի՞ պարտաւոր են առաջի Աստուծոյ, և անարժան շնորհայն, և թէ ինչպէս Աստուած իրան անպատմելի ողորմութենովն իրան միածին որդին ուղարկեց էս աշխարհքս. որ իրան չարչարանքովն և մահովն ամէն մարդկանց մեղքերըն քաւէ, և կորած մեղաւորների համար յաւիտենական կեանք պատրաստէ։ Բայց ինչպէս որ Պօղոս առաքեալն՝ կորնթոս քաղաքումն էլած հաւատացելոց համար առաջուց ասածէր՝ թէ վախումեմ որ չլինի թէ ինչպէս օձն եւային խաբեց՝ էնպէս էլ ձեր միտքն աւրվի էն միամտութենիցն որ Քրիստոսումն է՝ (Բ. Կորն. ԺԱ. 3). էնպէս շուտով պատահեց։ Ինչու որ քրիստոնեայքն քիչ ժամանակից ետև սկսեցին էն հաւատոյ միամտութիւնըն և ջերմեռանդութիւնըն թողուլ՝ որ մարդոյ սիրտըն միշտ Քրիստոսի՝ հետ կապումէ և Աստուծոյ ուրախութենովն լցնումէ. և էնտուր համար Քրիստոսի սէրըն էլ նորանց սրտիցն պակասեցաւ, և որովհետև Աստուծոյ շնորհքըն որ Քրիստոսումն է՝ իրանք իրանց սրտերումն չէին պահում, ինչպէս առաջ. նրա համար էլ թուլ էլան էն Աստուծոյ շնորհքըն և մարդասիրութիւնն ուրիշ մարդկանց քարոզելոյ համար և էն քրիստոնէական սէրըն որ ամէնին փրկութիւն է խնդրում, և ամէ-

նին կանչումէ գալ Քրիստոսի մօտ, օրէցօր տըկարացաւ, և վերջն էլ խպառ հանգաւ։ Ընտուր համար Քրիստոս էլ՝ ինչպէս որ եփեսացոց եկեղեցուն ա՛հ էր տուել՝ (յայտ. Բ. 5). շատ քրիստոնէական եկեղեցիներին պատիժ տուաւ, և իրանց հաւատարիմ չի մնալոյ համար աւետարանի ճրագակալըն իրանց տեղրանքիցն շարժեց որ է անել, նա թոյլ տուաւ՝ որ պարզ և հարազատ աւետարանի քարոզութիւնըն որ Քրիստոսի արնամբըն էլած փրկութիւնըն և հաշտութիւնըն յայտնումէ, կամաց կամաց քչանայ, մինչև որ վերջն էլ նորա ամէն ձայնն կտրվեցաւ, և նորա տեղն մեծ և ողորմելի տգիտութիւն շատ եկեղեցիների և ազգերի վերայ հասաւ՝ որ նորանով ծածկըվեցաւ նորանց էն մին միայն ճշմարիտ փըրկութեան ճանապարհն, որ նորան աւետարանն է յայտնում։

Ընպէս էլաւ արևմտեան կողմերումն, և արևելեան երկրներումն։ Ով կարող չէ պատմել էն տգիտութեան խաւարըն՝ որ հինգ՝ վեց և օթըն հարիւր տարի Քրիստոսից ետև՝ քրիստոնէից մէջն սկսեց տիրել և էն փրկութիւն տուօղ աւետարանի ճշմարտութիւնըն թաքցրուց։

Ընտուր համար էլ մեծ թշուառութիւնք հասին արևմտեան եկեղեցիների վերայ, բայց աւելի մեծ և ծանր էր էն պատիժն՝ որ արևելեան կողմերի մէջն երևեցաւ. ինչու որ էն սուտ մարգարէն Մահմէտ առաջ եկաւ՝ որ անասելի համարձակութենով կենդանի Աստուծոյ դէմ խօսեց, ու որդ

ւոյն՝ Քրիստոսին անարգեց, և սուրբ աւետարա-
նի դէմ շատ հակառակ ուսմունք սովորցնելով՝ և իրան զուրանի մէջ ժողովելով՝ շատ մարդկանց միտքըն մոլորայրուց՝ և դէպի կորուստն տարաւ։

Նա էր էն սուտ մարգարէներից մինն՝ որ Քրիստոս նորանց համար առաջուց ասել էր՝ թէ շատ սուտ մարգարէներ դուրս կըգան, և շատերը կըմոլորացնեն (Մատթէոս. իդ. 11)։ Նոյնպէս էլ առաքեալներն ասել էին, թէ ամէն հոգի՝ որ Յիսուսին Քրիստոսին մարմնով եկած չէ հաւատում. նա Աստուծանից չէ (ա. յովհ. դ. 3)։ Նոյն մին էլ, ով է սուտն, եթէ ոչ էն՝ որ կուրանայ՝ թէ Յիսուսն չէ Քրիստոսն. նա ինքն է նեռն՝ որ ուրանումէ հայրըն և որդին։

Ամէն ով որ որդին կուրանայ, նա հօրն էլ չի ընդունիլ (ա. յովհ. բ. 22—23)։ Նոյն մին էլ՝ թէ որ մենք կամ երկնքից (եկած) հրեշտակ աւետարանէ ձեզ նորանից աւելի՝ քան որ մենք աւետարանեցինք, նզովեալ լինի։ Ինչպէս որ առաջ ասացինք, մին էլ կասեմք՝ թէ որ ձեզ աւետարանէ նորանից աւելի, քան որ դուք առիք՝ նըզովեալ լինի (Գաղատ. ա. 8—9)։

Բայց էն մահմետի սուտ և մոլորայնօղ վարդապետութիւնն էնքան զօրացաւ՝ որ մեծ ազգերըն էլ նորան ընդունեցին, և յետոյ շատ քրիստոնէից երկիրներըն բռնելով՝ նորանց էլ մոլորութենով՝ և ամէն կերպ նեղութենով լցրին։

Ո՞հ քանի՞ սաստիկ է պատիժն, որ արդար դա-

տուողըն եկեղեցիներին վերայ հասցրուց՝ ինչու որ աւետարանի Ճանապարհն թողել էին և իրանց փրկչին հնազանդ չէին էլած ։

3 .

Միայն թէ Քրիստոսի ողորմութիւնն և մարդասիրութիւնն իսկի չի կամենում թողուլ մարդիկներըն իրանց մեղքի և թշուառութեան մէջն, բայց նա բարի հովուի նման՝ իրան կորած ոչխարին համար միշտ ամէն տեղ մանէգալիս որ գտնէ նորանց և փրկութեան և կեանքի Ճանապարհն տանի . (Ղուկ . ժԷ .) և էն ողորմութենովն էլ միշտ և ամէն ժամանակներումն քանի մի հոգիներ և քանի մի ժողովուրդներ պահել է , որ կենդանի հաւատով նորան էին ընդունում, բոլորով սըրտիւ նորան էին սիրում, և ամէն ջերմեռանդութենով նորա կամքըն կատարելոյ էին հետևում, ինչպէս որ եկեղեցոյ պատմութիւնն նորանց համար վկայումէ ։

Էնպէսի հաւատացելոց ժողովուրդներն իրանց կարողութեան չափովն միշտ էլ հետևումէին որ ջերմեռանդ սիրով Քրիստոսի փրկութիւնն՝ թէ խօսքերով և թէ վարքի օրինակով քարոզեն էն մարդկանց , որ նորա փրկօղ մարդասիրութեան համար բան չէին լսել , և նորա համար շատ ժամանակ նեղութիւների և չարչարանքի մէջն էլան . բայց Քրիստոսի սէրն նորանց զօրացրուց որ ամէն աշխարհքի բաներըն թողեցին , և իրանց կեանքին էլ չի խնայեցին , միայն թէ Քրիստոսին ծառայեն և աւետարանի ձայնով մեղաւորներին կանչեն՝ որ գան փրկվին հաւատով ։

Բայց հարիւր տարույն և աւելի էր· երեսուն կամ քառասուն տարույն առաջ արևմտեան եկեղեցոյ մէջն շատ քրիստոնեայք սկսեցին խմանալ և մըտքներն առնել, թէ քանի՞ ամօթ, և քանի՞ մեղք է մեզ քրիստոնէից, որ հիմիկ էր հազար ութ հարիւր տարի Քրիստոսի երկինքն համբառնալուցն ետև էնքան շատ մեծ մասն մարդկանց, հեթանոսական և մահմետական մոլորութեան և խաւարի մէջն նստումէ, և Աստուծոյ լոյսըն չի տեսաւ, և աւետարանի ձայնըն չի լսեց, և էնպէս էր, որ ջհուտներն Քրիստոսից հեռու են մնում մինչև հիմիկ և քանի մի հոգիք մէնակ նորա փրկութիւնըն գտել են և ընդունել, և էս մտածմունքս նորանց սիրտըն տըրտմութենով լցրուց և շարժեց։

Էն պատճառովն շատ Աստուածապաշտ և Քըրիստոսասէր մարդիք մինն մըննին ժողովեցին, և իրանց մէջ ժողովներ շինեցին՝ որ էն հին ծուլութեան խոցըն բժշկեն և իրանց ամէն կարողութենով Քրիստոսի հրամանըն կատարեն՝ և նորա աւետարանըն հեթանոսաց և մահմետականաց և ջհուտների մէջն քարոզութենով յայտնի անեն։

Էնպէս կամաց կամաց կարելի էլաւ՝ որ հիմիկ քանի մի հարիւր եւրոպացիք Քրիստոսի աւետարանըն քարոզելու համար դուրս եկլին և ամէն աշխարհքի մէջ մանեն գալիս՝ կերպ կերպ ազգերի լեզուներ սովորումեն՝ աւետարանըն բերանով քարոզումեն, սուրբ գրքերըն նորանց լեզուի մէջ թարգմանումեն, ծերերին և ճահիլներին Քրիս-

տոսի վարդապետութիւնըն սովորցնումն, և նո-
րանց միջից՝ որ Քրիստոսի փրկութիւնըն հաւա-
տով ընդունումն՝ ուսուցիչներ են ընտրում և
կանգնացնում՝ որ տիմօթէոսի նման (Ա. Տիմօթ.
Գ. 2: եփես. Դ. 12.) իրանց ազգըն՝ թէ մահմե-
տական լինին և թէ հեթանոսական՝ սովորցնեն,
և աւետարանովն լուսաւորեն:

Այս նոր սկսած աւետարանի քարոզութեա-
նըն՝ մեր հաւատարիմ Տէրն էլ շատ յաջողու-
թիւն շնորհեց մինչև էսօր՝ և կռապաշտներից
աւելի քան հարիւր հազար մարդիք՝ թէ մեծ՝ թէ
փոքր, թէ ծեր՝ թէ ջահիլ՝ և թէ մանուկ, Քրիս-
տոսի փրկութիւնըն ընդունեցին հաւատով՝ և
նորանց տներն և սրտերն լցվեցան Աստուծոյ
խաղաղութենովն՝ և ընկերի սիրովն, և յաւիտե-
նական կենաց յուսովն՝ որ առաջ ծածկված էր
նորանցից. եւ հիմիկ էլ ամէն օր Տէրն էն նոր
հաւատացելոց վերայ փրկվածներ է աւելացնում
շատ երկրներում (Գործ. Բ. 47):

Կան էլ մահմետականք, մանաւանդ հնդըս-
տանի մէջն՝ որ Քրիստոսին հաւատալով նորա
շնորհքըն ընդունեցին, և նորանով էլ նոր մարդիք
դառան. որ երկնաւոր միտք ունին, և մէնակ ար-
քայութիւնըն են խնդրում, և ճշմարտութիւ-
նըն սիրումն և պահում:

Ձեզ որ պէտք է՝ որ ամէնքս, սրտի մեծ ուրա-
խութենովն իմանանք՝ թէ քանի՛ մեղք և ամօթ է
մեզ առաջի Աստուծոյ՝ որ էնքան ժամանակ թու-
լութենով մնացել ենք նորա հրամանըն, և նրա
համար շատ պէտք է՝ որ Աստուծոյ առաջի ըղ-

ջանանք՝ և մեր թմրութենից զարթուն լինելով՝ հիմիկ սկսենք՝ որ Քրիստոսի քաղցր հրամանըն կատարենք և նորա փրկութիւնըն մահմետականաց մէջումն յայտնենք ։

4.

Մենք ամէնքս պարտական ենք որ Քրիստոսի կամքին պէս ոչ միայն ամէն մարդիքներըն սիրենք, բայց էլ կեանքի ճանապարհըն նորանց ցոյց տանք. ուրեմն պէտք է որ չէ թէ միայն մեզ համար հոգս անենք բայց մենք ամէնքս էլ պարտական ենք որ ամէն չորս կողմով բնակված մահմետականներինէլ սիրով կանչենք և սովորցնենք և աւետարանի փրկութիւնըն նորանց ցոյց տանք ։

Լաւ է և ուրախանալի՝ որ քանի մի հոգիք շատ ջերմեռանդութիւն ունին Քրիստոսի ուսմունքն մահմետականաց յայտնելոյ համար՝ բայց շատերըն էլ ամէնքս էլ պէտք է մեր հոգևոր քնիցըն զարթնենք, Քրիստոսի սէրըն մտածենք, և թէ խօսքով՝ և թէ բարի վարքի օրինակով մեր փրկչի անունըն փառաւորենք, և մահմետականներին նորա մօտ կանչենք ։

Քանի՞ ողորմելի են էն մեր կորած եղբարքն. քանի՛ պէտք է որ մեր սրտումն նորանց կորուստի համար դառն արտասունքով լաց լինինք, և առաջի Աստուծոյ նորանց փրկութեան համար աղօթք անենք. քանի՛ էլ պէտք է որ անդադար սիրով օրէցօր սովորցնենք յորդորենք, և կանչենք նորանց՝ մինչև որ լսեն և դառնան մեր բարի հովիւ Քրիստոսի մօտ ։ Ուրեմն ամէնքս էլ աղաչանք անենք դէպի Աստուած, որ իրան շնորհօքն նո-

րանց աչքըն բանայ որ տեսանեն իրանց ողորմելի մոլորութիւնըն և կորուստըն և էն Աստուծոյ փրկութիւնըն Ճանաչեն որ նորանց համար իրան որդւոյ մահովն պատրաստեց. և ապա ամէն սըրտով փոշիմաննեն և անառակ որդւոյ նման (Ղուկ. ԺԵ. 17—21.) աղաչանքով իրանց շատ ողորմած Աստուծոյ և հօր մօտ դառնան, և թողութիւն խնդրեն, և մին էլ էն կորած շնորհքըն և երանութիւնըն նորանից գտնեն և ընդունին:

Ո՜հ քանի՞ մարդասէր և ողորմած է մեր Տէրն՝ որ ամէն փոշեմանող մեղաւորներին իրան մօտ է կանչում. մինչև որ էն խաչի վերայ մեռնող աւազակըն էլ չի անարգեց՝ բայց ընդունեց. նա հիմիկ էլ պատրաստ և յօժար է՝ որ իրան ողորմութիւնըն էն մեր կորած եղբարներին ցոյց տայ, թէ որ մէնակ յետ դառնան իրանց մոլորութենից, և գան նորա մօտ, նորանց էլ կընդունի և թէ էս կեանքումն, և թէ յաւիտենական արքայութենումն նորանց սիրտըն հոգւոյ շնորհօքն էնպէս կըլցնէ՝ որ ուրախութենով գոհանան և իմանան թէ քանի՛ անմիտ և ողորմելի էին էն ժամանակն որ էնպէսի տէրըն թողեցին՝ և թէ քանի՛ երանելի լինի նա որ փոշիմանի և դառնայ իրան փրկիչ և Տէր Քրիստոսի մօտ:

Ուրիշ հոգիք էլ կան՝ որ Աստուած իրան խընամովն նորանց էն մէծ փորձանքներին և կորուստիցըն ազատ է պահել. բայց որովհետև նորանք էլ աւետարանի քաղցր վարդապետութիւնըն լաւ չէին Ճանաչում և Քրիստոսի սէրըն իրանց սրտի մէջն հաստատ տնկված չունէին, շատ հեշտ պատա-

հել է որ օրէցօր մահմէտականաց մէջն կենալով և նորանց խօսքերըն լսելով՝ կամաց կամաց նորանց ծուռ և խաբեբայ մտածմունքի կերպն սկսեցին ընդունել, և թողուն առանց գիտելոյ մահմետական ուսմունքի թոյնն էնպէս նորանց սրտի մէջն մտաւ և էնպէս բռնեց, հիմիկ շատ քաների համար իրանց մահմետական ընկերաց նման են մտածում և խօսում:

Էնոր համար շատ էլ սկսեցին տարակուսանք առաջ գալ աւետարանի գլխաւոր վարդապետութիւնների համար և առհասարակ բոլոր աւետարանի ճշմարտութեանն համար, և նորանց միտքըն անհաւատութենով լցրին:

Էս շատ տրտմելի և ցաւելի վիրաւորութիւն է. բաւական չէ՞ որ հեթանոսներըն մեզ ասեն՝ ո՞ր տեղ է ձեր Աստուածն (Սաղ: ժդ. Դ. հբ. 10.) տան երեխաներըն էլ սկսումեն իրանց հօր համար երկմտել, նորանք էլ սկսումեն չի ճանաչել, չի պատուել, չի սիրել նորան (Եսայ. ա. 2. 3.) Տէր Աստուած նայէ՛ և օգնէ իրան ողորմութեան և ամենակարողութեան կեօրէ՝ նա բժշկէ՛ էն մեծ խոցերըն՝ որ նորանցով ծերերըն և ճահիլներըն, մարդիքներըն և կնանիքներըն, հարուստներըն և աղքատներըն, մեծաւորներըն և փոքրաւորներըն, Քրիստոսի եկեղեցւոյ միջուցն վիրաւորվել են էն մահմետականաց ընկերութենովն, և խօսակցութենովն: Նա ինքն՝ մեր Տէրն մեզ պահէ, որ մենք նորանց մօտ չի դառնանք, բայց որ նորանք օրէցօր աւելի մեծ շատութենով և ուրախութենով մեզ մօտ դառնան՝ ինչպէս որ Աստուած երեմիայ մարգարէին խոստացաւ, երբ որ նորան ուղար-

կեց խորայէլացւոց ապստամբւած և հակառակօղ ազգի մօտ: բայց որ մեր ժամանակումս անհաւատութիւնն ու հասարակ էսքան մեծանումէ, և շատ զանազան կերպերով մարդկանց միտքն խաբումէ, սորա պատճառի մինչէ էն է, որ շատ մարդիք իրանց երեխայութեան ժամանակն Յիսուսի Քրիստոսի վարդապետութենիցն տգէտ են մնայել, և իրանց սրտումն նորա մեծ սէրըն և ողորմութիւնըն չեն ճանաչում, որ մեզ և ամէն կորած մեղաւորներին կանչումէ, և ուզումէ փրկել: Ինչու որ մեր ամէն կեանքի մէջն էն սէրն է մէնակ հաստատ կապանքն՝ որ պինտ և անլուծանելի կերպով կարօղ է կապել մեր սիրտըն Քրիստոսի հետ՝ էնպէս որ միշտ նորան իբր մեր յաւիտենական բարերար՝ և ողորմելի կորուստի միջից ազատող հովիւ և փրկիչ պատուենք, սիրենք և ամէն ուրախութենով ծառայենք:

Բայց եթէ մարդոյ սիրտն երեխայութեան ժամանակն չի սկսէ իրան փրկչի սէրըն ճանաչել և ընդունել, և էն սիրոյ կապանքով չի միաւորվի իրան երկնաւոր հովուին հետ, շուտով էս աշխարհքիս բաների սէրն նորա սիրտն կըմտնէ, և մարմնոյ ցանկութիւնն, և աչքի ցանկութիւնն, և էս կեանքիս ամբարտաւանութիւնն (ա. Յօհ. Բ. 16.) նորան կը որսան և իրանց հետ կըքաշեն: Յետոյ նորա սիրտն էս բաներիս մէնակ մոլիկ կըլայ, և էլ չի թուլանալ նորանց ցանկանալով մանգալով, և քրտունքով ջանքանելով և վազելովն նորանց ստանալոյ համար, և էլ էն ցանկանալովն և վազելով՝ ամէն երկնաւոր բաներըն կըմոռանայ, և հոգւոյ փրկութեան համար ցուրտ և անհոգ և

ծոյլ կըդառնայ. ինչու որ հոգւոյ աչքն կուրացել է ցանկութեանց խաւարովն որ մէնակ էս աշխարհքիս փուճ և ոչինչ ապրանքըն, փառքըն, և ցանկութիւններըն խնդրում և ցանկանում: Ու երբոր էն խաբված սիրտն էս աշխարհքիս ապրանքըն կամ փառքըն և ցանկութիւններըն ստանում՝ ապա սկսում մտանալ նորանց շուտով անցկենալըն և ունայն լինիլըն, ինքն իրան կամենում հաւանացնել՝ թէ միշտ մնալու են, և չեն անցնիլ, և ընտուր համար չէ սիրում միտքն առնել. թէ մահ կայ՝ թէ դատաստան կայ՝ թէ յաւիտենական կեանք կայ՝ և թէ յաւիտենական դատապարտութիւն կայ, բայց աւելի փախչում էսպիսի մտածմունքիցս, ինչու որ նորանցով ճանաչում, թէ իրան ամէն ապրանքն շուտով պիտի անցնեն, և տրամութենով լցվում: Ուրեմն օրէցօր աւելի յօժար կըլինի՝ որ Աստուծոյ բանըն մոռանայ, անարգէ, և նորա ճշմարտութեան համար տարակուսած լինի, և թաքուն կամենում որ նորա խօսքերն իսկի ճշմարիտ չի լինին. կամ թէ որ միշտ իրան խղճմտանքն վկայէ. թէ Աստուած կայ, թէ արքայութիւն կայ, ապա շուտով կամենում որ էն արքայութիւննէլ էնպէս մարմնաւոր և մարմնոյ ցանկութեանց ախորժ լինի՝ ինչպէս էն ճէննէթն՝ որ նորանից մահմետական ղուրանն խօսում:

Բայց թէ պէտքէ մեղաց թողութիւն խնդրել և ստանալ, և մեղսասիրութենից և մեղքերի իշխանութենիցն ազատվիլ, և էն գարշելի ցանկութեանց պղծութենիցն սրբվիլ, և նորանով Աս-

տուծոյ ընդունելի լինիլ և մօտենալ, և էն Աստուծոյ հետ հաղորդութիւն ունելըն իբր ամէնի վերայ մեծ երանութիւն խնդրել, էս ամէն մտածմունքս և խնդիրքս էսպիսի մարմնաւոր սրտի մէջ չեն ընկնում։

Ուրեմն ինչպէս կարելի է՝ որ էնպէսի մարդն ոչ թէ բերանով մէնակ՝ բայց պարզ և ջերմեռանդ սրտիւ հաւատայ Քրիստոսին՝ որդոյն Աստուծոյ, որ նրա համար էս աշխարհքս եկաւ, մարմին առաւ, չարչարուեցաւ և մեռաւ, որ մեղքով ապականուած մարդկանց ազգըն և բնութիւնըն բժշկէ, և առաջի Աստուծոյ ընդունելի անէ։

Օ՞հ քանի՞ ջանք պէտք է մեզ եղբարք՝ որ մենք ամէնքս՝ էս շատ վնաս տուող աշխարհասիրութենիցըն և էս երկրիս մարմնաւոր բաների ցանկութենիցն արթուն լինինք։ Աստուծոյ ողորմութենովն էն մահմետական մոլորութեան փորձանքիցըն շատերն ազատուած են՝ բայց ինչ օգուտ է. թէ որ հիմիկ աշխարհասիրութեան փորձանքի մէջըն մեր հաւատքըն կորցնենք, և էս երկրիս բաների համար մեր Տէրըն մոռանանք, և մեղքով ուրանանք։ Ուղորդ է՝ որ շատ քրիստոնեայք էս աշխարհքիս ապրանքըն և փառքըն ստանալոյ համար իրանց հաւատքըն կորցրին, և բերանով մէնակ պահում են՝ ուղորդէ որ էս աշխարհքս օրէցօր աւելի խաբելոյ հնարք է լինում, և մարմնոյ քաղցր ցանկութիւններըն աւելացնելով՝ կամենումէ ամէն մարդոյ որսալ իրան թագուն թալակներով, բայց Քրիստոս մեր փրկութեան առաջնորդէ, և նա կարող է զօրացնել և պահել և ազա

տեւ մեզ ամէն փորձանքից, թէ որ մենակ մեր սիրտը փակենք աշխարհքի դիմացն՝ և բանանք Աստուծոյ հոգւոյն, և նորա ձայնին ականջ դընենք։ Ուրեմն էս աշխարհքիս փորձանքի մէջն ամէն օր աղաչանք անենք դէպի մեր փրկիչն և առաջնորդն Քրիստոս՝ որ իրան շնորհօքն մեր հոգւոյ աչքըն լուսաւորէ՝ աշխարհքիս խաբեբայ զբաղմունքըս տեսնելոյ և նորանցից փախչելոյ համար՝ և մեր միտքըն և սիրտըն զօրացնէ և պահէ հաւատոց և կեանքի ճանապարհի վերայ։

Բայց հիմիկ՝ որովհետև քանի մի Աստուածապաշտ եղբարք շատ են փափակում որ երկմտող հոգիներըն աւետարանի վկայութենովն հաստատեն՝ և մահմետականացն էլ Քրիստոսի փրկութիւնըն յայտնեն. նրա համար խնդրել են նորանք՝ թէ մին փոքր գրքի մէջ հաւաքված լինին էն գլխաւոր վկայութիւնքն որ մեր սուրբ հաւատոյ ճշմարտութիւնըն և փառքըն յայտնի հաստատումեն՝ և ղուրանի սուտ և ունայն լինելըն ցուցեն տալիս։ Ուրեմն նորանց բարի խնդիրքըն կատարելոյ համար Աստուծոյ օգնութենովն սկըսենք առաջ մեր սուրբ գրոց վարդապետութիւնըն և նորա հաստատութիւնըն ցոյց տալ, և ապա ղուրանի վարդապետութիւնըն քննենք և տեսնենք՝ թէ Աստուծոյ արժան և ճշմարիտ է՝ թէ չէ։ Վերջն էլ կըխօսենք՝ թէ մահմետականաց հակառակութեանըն ինչպէս պիտի պատասխան տանք՝ և նորանց հետ ինչ կերպով պիտի խօսինք։

# Առաջին Մասն.

Աստուածաշունչ Գրոց համար՝ թէ նորանց վարդա-պետութիւնը Աստուծոյ արժանաւոր և հաստատ է և ամեն մարդկանց համար կատարեալ փրկութեան և երա-նութեան ճանապարհն յայտնում է:

## Առաջին Գլուխ

Նրա համար՝ թէ Աստուած ինչպէս առաջուց պատ-րաստեց մարդկանց փրկութեան խորհուրդը:

Մեր սուրբ Աստուածաշունչ գիրքն սկզբիցն մինչև 'ի վերջն այսինքն Ծննդոց գրքիցն մինչև 'ի յօհաննէսի յայտնութիւնըն մին գիրք են, և զար-մանալի կարգաւորութենով և միաբանութենով մէնակ մին մեծ խորհրդի վերայ են խօսում և պատմում՝ թէ Աստուած ինչպէս նորան աշ-խարհքի սկզբիցն առաջ հաստատեց՝ և ապա ա-դամիցն մինչև Քրիստոսի գալն թէ օրէնքով՝ և թէ մարգարէների ձեռովն առաջուց պատրաստեց և նշանակեց և պատմեց. բայց յետոյ Քրիստոսի ծննդովն՝ չարչարանքովն և մահովն կատարեց, և ապա ամէն աշխարհքին հիմիկ յայտնումէ և քարո-զումէ մինչև Քրիստոսի մին էլ գալն և աշխարհքի վերջն. որ էն ժամանակն էս խորհրդիս ամէն պտուղներն կատարված և ժողոված կըլինին:



ԳՐԱԴԱՐԱՆ

Այս խորհուրդս՝ Աստուծոյ մարդասիրութեան և մեղաւոր մարդոյ փրկութեան խորհուրդն է։ Աստուած մարդին ստեղծեց իրան պատկերին կերպէ՝ այսինքն իմաստուն միտք և սուրբ և արդար սրտով՝ և երանելի և անմահ բնութենով, Եւ էլ ազատ կարողութիւն շնորհեց նորան՝ որ իրան ընտրողութեան կերպէ՝ կամ իրան ստեղծողին հնազանդ լինելով միշտ երանելի մնայ, կամ նորա կամքին հեռանալով՝ ճանաչէ և իմանայ թէ քանի՛ ողորմելի կըլնի նա՝ որ Աստուծոյ հեռ չի մնում։ Ու էլ՝ առաջուց ասաց Աստուած մարդին, թէ ամէն անհնազանդութիւն հոգւոյ և մարմնոյ համար մահ կըգործէ. բայց էնպէս էլ մարդըն շուտով իրան ստեղծողըն և նրա հրամանըն մոռացաւ, և առաջուց ապստամբված սատանայի խաբէութեանըն հետևեցաւ, իրան երկնաւոր հայրըն և նորա կամքըն թողեց, և սատանային ծառայ դառաւ։ Նրանով ամէն աստուածային լուսին և փառքին զըրկեցաւ. նորա միտքն խաւար դառաւ՝ սիրտն մարմնաւոր և մեղաւոր, և ամէն բնութիւնըն խեղջ և ողորմելի էլաւ, և մահի տակ ընկաւ։ Արանից ետև Աստուած մարդիցըն վկայում է թէ՝ մարդկանց միտքն չար մտածմունքի մէջ հաստատված են հենց իրանց մանկութենից՝ (Ծնն. Ը. 21։) սրտից դուրս կըգան չար խորհուրդներ՝ սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ (Մատթ. ԺԵ. 19։) մարմնից ծնված մարմին է (Յովհ. Գ. 6). արդար չի կայ՝ իսկի մին էլ՝ և ոչով չի կայ որ իմանայ, և ոչով չիկայ որ Աստուածըն խնդրէ. ամէնքն ծուռ էլան և անպիտան դառան, ոչ ով չիկայ, որ քաղց-

ըութիւն անէ՝ ինչպէս՝ որ իսկի մին էլ չի կայ. (Հռովմ. գ. 10. 11. 12.) խտրութիւն (ջոկութիւն) չի կայ. ինչու որ ամէնքն մեղանչեցին և Աստուծոյ փառքից պակասեցան (Հռօմ. գ. 22. 23.)։ Մեռած էինք ձեր մեղքերի և յանցանքի մէջն՝ որ նորանցում էս աշխարհքիս ճանապարհին կերթէ էիք գնում, էս օդիս իշխանի իշխանութեան պէս, էն դևի, որ հիմիկ ապստամբութեան որդիքների սիրտն է մտել, որ նորանց մէջն մենք ամէնքս էլ ման էինք գալիս մեր մարմնոյ ցանկութեան մէջ՝ և մարմնոյ և մտքի կամքն էինք կատարում. և բնական բարկութեան որդիք էինք ինչպէս ուրիշներն (Եփես. բ. 1—3.). Նորանց սրտերն խաւարված են և օտար են Աստուծոյ կեանքիցն՝ էն տգիտութեան պատճառովն՝ որ կայ նորանց մէջ իրանց սրտերի կուրութեան համար. (Եփես. դ. 18.)։ Մին մարդոյ անհնազանդութենով շատ մեղաւորներ էլան. Մին մեղքովն ամէն մարդկանց դատապարտութիւն (էլաւ). (Հռօմ. ե. 19. 18.) մին մարդից մեղքն աշխարհքս մտաւ և էն մեղքիցըն էլ մահն, և էնպէս ամէն մարդկանց մէջ մահն փոխեցաւ. պատճառն որ ամէնքն մեղանչեցին (Հռօմ. ե. 12)։ Էս է ադամի և նորա որդիքըների պատկերն. էս է մեղքի պտուղն՝ որ նորանով մարդն իրան ստեղծողըն թողեց, և խաւարի, մեղքի, սատանայի իշխանութեան և յաւիտենական մահի տակ ընկաւ։ Ո՞վ կազատէ նորան. ինքն կարող չէր սատանայից յաղթել և իրան անձը նորա կապանքիցն ազատել. էլ կարող չէր իրան մեղքըն քաւել և ջնջել և Աստուծոյ արդարութիւնն լցնել. և իսկի էլ կարող չէր իրան հոգին նորոգել և իրան միտքըն լուսաւորել և

իրան սիրտըն սրբել ։ Ընտալը գրված է թէ՝ գիտումեմ որ իմ մէջն , այսինքն իմ մարմնոյս մէջն, մին բարի բան բնակված չի կայ՝ ինչու որ կամք կայ ինձանում , բայց բարի անելն չէ ։ Ես մին խղճալի մարդ եմ ․ ով կապրեցնէ ինձ էս մահի մարմնիցն (Հռոմ․ է․ 18 և 24)։ Մին էլ գրված է թէ՝ եղբայր չի փրկիլ՝ և մարդ չի փրկիլ՝ և չի տալ փրկելու գին և ոչ էլ իրան անձնի փրկութեան գինըն (Սաղ․ խը․ 8 և 9) ։ Բայց էս բաւական չէ․ մարդն իրան ապստամբութենովն էլ արժանի էլաւ՝ որ իրան ստեղծողն էլ թողէ նորան և իրան արդարութեան կեօրէ յաւիտենական թշուառութեան մէջ քցէ նորան ․ ինչու որ ինքն կամեցաւ ոչ թէ Աստուծոյ բայց սատանայի հետ լինել ։ Ո՜հ ․ քանի՛ ողորմելի էլաւ մարդն իրան անհնազանդութենովն և մեղք գործելովն ․ և նորա հետ էլ ամէն մարդկանց ազգն ։ Բայց տեսէ՛ք թէ քանի՞ մեծ և անպատմելի է մեր Աստուծոյ սէրն և ողորմութիւնըն ապստամբված և մեղաւոր մարդու համար ․ արդարութեան կեօրէ արժան էր պատժել նորան և թողել , բայց Աստուծոյ հայրական սէրն յաղթում է արդարութեան՝ և շուտով կորած որդին խնդրում է և նորա փրկութեան համար հոգս է քաշում ։ Շուտով Աստուած ադամին երևեցաւ և նորան յայտնեց՝ թէ քանի ողորմելի դառաւ մեղքովն․ բայց նորա տրտմած սրտին բժշկութեան յոյս էլ տուաւ ․ ասելով թէ՝ անիծած լինիս դու (օձ)՝ երկրի ամէն անասունքի և ամէն գազանների մէջն ․ քո կուրծքի և քո փորի վերայ պիտի գնաս և հող ուտես քո կեանքի ամէն օրերն ․ և թշնամութիւն կըդնեմ քո

մէջ և էդ կնկան մէջ և քո զաւակի և դորա զաւակի մէջ՝ և նա ջանք կանէ քո գլուխը ջարդելու և դու ջանք կանես նորա կրունկին վնասելու (Ծննդ. Գ. 14 և 15.)։ Ահա՛ յայտնի խոստանումէ Աստուած էս խօսքերով՝ թէ սատանայի զօրութիւնը և իշխանութիւնը պիտի կոտրվի՝ և թէ կնկան զաւակն նորա գլուխը պիտի ջարդէ և նորա ձեռքին տակ լինող խեղճ մարդկանցն ազատութիւն՝ և փրկութիւն բերէ և շնորհէ։ Նորանցից յայտնի տեսնումենք Աստուծոյ ողորմութիւն մեծ և ուրախանալի խորհուրդը որ նորանով ամէն ժամանակներից առաջ հաստատեց՝ թէ ամենակարօղ փրկիչ պիտի գայ աշխարհքս՝ որ մարդկանց մեղքերը քաւէ և նորանց մահիցն և դատապարտութենից ազատէ և նորանց բնութիւնը սրբէ և նորոգէ և էլ նորանց յաւիտենական կեանքն տանի։

Բայց էն փրկիչն ո՞վ պէտք էր լինի։ Նա առաջ ամէն մարդկանց մեղքը պէտք էր վերառնել և սուրբ և արդար Աստուծոյ առաջին նորանց պատիժը պէտք էր քաշել։ Ուրեմն ինքն կատարեալ սուրբ պէտք էր լինիլ։ Յետոյ պէտք էր որ նա սատանայից յաղթէ և մարդկանց ազատէ նորա իշխանութենից. ուրեմն պէտք էր որ նա սատանայիցը աւելի զօրով լինէր։ Պէտք էր որ նա ամէն ժամանակում և ամէն աշխարհքում լինող մեղաւոր մարդկանց սրտերը և նեղութիւնները գիտենայ. նորանց աղաչանքն և խնդիրքն լսէ՝ որ կարօղ լինի ամէն մէկին օգնել, և ամէն կերպով ազատել. ուրեմն պէտք էր որ ամէն տեղ հայր և

ամէն բան գիտող լինի ։ Վերջն էլ պէտք էր որ ամէն աշխարհքումն և ամէն ժամանակումն ամէն իրան մօտ փախչօղներըն ամէն թշնամիներէ ղիմացն պահէ , ամէն նեղութիւններիցն ազատէ՝ և արքայութիւնն տանի․ ուրեմն պէտք էր որ նա ամենակարօղ լինի ։ Բայց ո՞վ է կատարեալ սուրբ՝ ո՞վ է սատանայիցն զօրով ․ ո՞վ է կարօղ ամէն տեղ լինել և ամէն մարդկանց բաներըն գիտել ․ ո՞վ է ամէնակարօղ օգնելոյ համար եթէ ոչ մէնակ ինքըն Աստուած ․ ուրեմն ոչ մարդ՝ ոչ հրեշտակ կարօղ էր մարդկանց փրկիչ լինիլ ․ բայց միայն Աստուած ինքն ։ Բայց մարդկանց փրկիչն պէտք էր որ ինքն էլ մարդ լինի՝ ինչու որ մարդոյ կերպարանքովն ամէն մարդկանց մեղքըն պէտք էր վերանէ քաւէ և ջնջէ և նորանով ամէններին առաջի Աստուծոյ արդար շինէ ․ մարդոյ կերպարանքովն պէտք էր սատանային և մահին յաղթէ ․ որ իրան ամէն եղբարքըն ազատէ և առա Աստուծոյ ժողովուրդ շինէ ․ մարդոյ՛ կերպարանքովն պէտք էր օրինակ տայ էն սրբութեան որ նորան ամէն փրկվածներըն պիտի հետևէին՝ և մարդոյ կերպարանքովն պէտք էր նորանց էնպէս մօտ լինել՝ որ եղբօր նման ճանաչեն նորան՝ և յուսով և առանց վախենալոյ նորան մօտանան՝ և ամէն թըշուառութեան բժշկութիւն նորանից խնդրեն և յուսան ։ Ուրեմն ամէն կողմանէ պէտք էր որ մեր փրկիչն Աստուած և մարդ լինի․ նրա համար՝ որ կարենայ ամէն կերպով և կատարելապէս մեր հոգւոյ և մարմնոյ ամէն թշուառութիւններըն բըժշկել և կատարեալ երանութիւնըն մեզ տանել ․ էս պատճառովս էլ Աստուած առաջուց յայտնի

նշանակեց նորա Աստուած և մարդ լինելըն՝ ա-սելով թէ՝ նա կնկան զաւակ կը լինի և սատանա-յի գլուխն կը ջարդէ։

Այս խոստումն ամէն նախահարց ուրախանալոյ պատճառ էլաւ. ինչու որ՝ իրանք իրանց մեղաւոր տեսնելով՝ էն նոր եկօղ փրկչին վերայ իրանց յոյ-սըն դնումէին և նորա փրկութիւնըն հաւատով ընդունումէին թէ և դեռ կատարված չէր։ Էւ էնպէս Էնովք, Նոյ և Աբրահամ հաւատային յուսով՝ և Աստուծոյ ընդունելի էլան։ Բայց Աստուած էլ ոչ մէնակ էն առաջին խոստումն շատ անգամ նորոգեց՝ և աւելի յայտնութենով առաջ դրաւ. բայց էլ շատ խնամով ամէն բան էնպէս կառավարեց և առաջուց պատրաստեց՝ որ հաս-տատված ժամանակումն էն խոստացված փրկիչն կարենայ գալ աշխարհք, և որ ամէնքն ճանան-չեն նորան՝ որ կամենան փրկվիլ։

Սրա համար Նոյին պահպանեց ջրհեղեղի ժա-մանակումն որ նորա ազգիցն փրկիչն ծնվի, սրա հա-մար էլ աբրահամին ընտրեց կռապաշտութեան շատանալոյ ժամանակումն՝ որ նորա ազգըն կռա-պաշտներիցն ջոկէ՝ պատուիրանքներովն սրբէ և իրան համար յատուկ ժողովուրդ շինէ և ապա նո-րանում մարգարէներովն փրկչի գալըն առաջուց պատրաստէ։ Ամէնիցն առաջ էն ժողովուրդին սուրբ օրէնքըն տուաւ՝ որ նորանով ամէնքն ի-մանան թէ քանի՞ սուրբ է Աստուծոյ կամքն, և էլ թէ քանի՞ մեղաւոր և մեղքով ապականված է մարդոյ սիրտն և բնութիւնըն. որ միշտ յօժար է դէպի չարն գնալ, և նրա համար կարօղ չէ

մօտենալ ամենասուրբ Աստուծոյն ։ Էնտուր համար օրէնքով յայտնի էլաւ մարդկանց՝ թէ մեղքի տակն են և մեղաց համար դատապարտուած են, և ապա ճանանչեցին թէ որքան պէտք է որ Փրկիչ գայ և նորանց ազատէ փրկէ, և մեղքերըն սրբէ ։ Ապա էլ աւելի սկսեցին իրանց յոյսըն էն նոր եկօղ փրկչին վերայ դնել · նորա գալուն ցանկանալ և հաւատով նորա փրկութիւնըն ընդունել ։ Ու որ էն յոյսն և հաւատքն օրէցօր հաստատվլի նորանց սրտերումն, Աստուած շատ նշաններ տուաւ նորանց որ իբր պատկերով էն փրկութիւնըն նշանակեցին՝ յայտնեցին և մարդկանց միտքըն բերին ։ Ամէն կարդացօղն որ աղօթքով և միտք անելով սուրբ գիրքն կարդումէ՝ շատ տեղ էն նշաններըն կըտեսնէ և նորանց նշանակութիւնըն կիմանայ և էնտուր համար էստեղ նորանցից մէնակ մին քանիսը կըյիշենք և կըմտածենք ։

Էնպէսի նշան էր զատկի գառն՝ որ նորան իսրայէլացիքըն Աստուծոյ հրամանին կեօրէ առաջին անգամ Եգիպտոսի մէջն մորթեցին էն գիշերումն որ եգիպտոսից դուրս եկին · և յետոյ ամէն տարի մին անգամ մորթումէին իրանց եգիպտոսից ազատվիլըն յիշելու համար ։ Էն գառն պէտք էր որ կատարեալ և առանց պակասութեան լինի՝ որ կրակի վերայ խորովվի՝ որ նորա ոսկորներն չի կոտորվին և նորա արիւնից դռների դրանդիներին վերայ թափվի · պատճառն որ՝ Աստուծոյ հրեշտակըն նորանց տներից անցկենայ, և նորանց առաջինեկ որդիքները չի սպանէ՝ ինչպէս որ եգիպտացւոց որդիքներըն սպանեց · բայց նորանց ամէնին

փարաւօնի ձեռքին ազատէ: Քանի՜ յայտնի նը-շանակվեցաւ էատեղէն նոր եկօղ փրկիչն՝ որ Աստուծոյ զատն լինելով՝ սուրբ և առանց պակասութեան պէտք էր լինի՝ որ խաչի փայտին վերայ պէտք էր խոլովլի մեռնի և իրան արիւնըն թափէ՝ որ ամէն մարդ որ էն արիւնըն հաւատով ընդունի՝ մաշի հրեշտակին և իրան ամէն պատժին և էլ հօգւոյ ծառայութենին ազատվի և Աստուծոյ համար ազատ ստացուած լինի:

Ինչպէս էլ Աստուած աշխարհքի սկիզբին կարգեց՝ որ մարդիք ոչխարներ կամ ուրիշ սուրբ անասուններ պատարագ բերեն նորան. բայց մանաւանդ իսրայէլացւոց հրամայեց՝ որ ամէն օր ոչխարներ մորթեն և պատարագ անեն նորա առաջին: Էս պատարագներովս մարդիքն յայտնի խոստովանեցան թէ՝ ինչպէս որ ոչխարըն կամ եզըն իրանց տեղն մորթուէին, էնպէս էլ իրանց անձինքն մեղաւոր և մահի արժան էին, և թէ մին կատարեալ պատարագ պէտք էր որ իրանց մեղքըն քաւէ և ջնջէ: Ուրեմն էն ամէն պատարագներն նշան էին՝ թէ նոր եկօղ փրկիչն մին կատարեալ պատարագ պիտի մատուցանէ՝ որ ամէն մարդկանց մեղքըն քաւէ և նորանց Աստուծոյ հետ հաշտեցընէ և ընդունելի անէ: Ուրեմն պատարագներ-իսրայէլացւոց մէջ էն նոր եկօղ փրկչին համար լինօղ հաւատքն և յոյսըն օրէցօր հաստատեցին և նորանց սրտերըն մխիթարեցին: Մին գլխաւոր նշան էլ էն պղնձի օձն էր՝ որ Մովսէսն Աստուծոյ հրամանով կանգնացրուց փայտի վերայ էն ժամանակումն որ իսրայէլայիքն իրանց անհնազանդութեան համար չարաչար վիրաւորվեցան օձե-

րիցըն, և շատերն էլ մեռան ։ Ամէն խոցված մարդ որ էն պղնձի օձին մտիկ տուաւ՝ բժշկվեցաւ և չի մեռաւ ։ Նրանով Աստուած յայտնի նշանակեց՝ թէ ամէն մարդկանց հոգիքն դժոխքի օձիցըն վիրաւորվել են՝ բայց նոր եկօղ փրկիչն փայտին վերայ մեռնելով՝ ամէններին կըբժշկէ՝ որ հաւատով նորան մտիկ տան և նորանից բժշկութիւն խնդրեն և ընդունին ։

Բայց ոչ մէնակ էնպէսի պատկերներով (նշաններով) քարոզեց Աստուած էն նոր եկօղ փրկութիւնըն, բայց էլ աւելի յայտնի նշանակեց նորան մարգարէութիւններովը, որ ամէն ժամանակներումն տուաւ մարդկանց ։

Աբրահամին ասաց՝ թէ քո զաւակովդ երկրի ամէն ազգերն կօրհնըվին (Ծննդ. ԻԲ. 18.) յայտնի նշանակելով՝ թէ նորա որդիքներիցն պիտի աշխարհքի փրկիչն դուրս գայ՝ որ ամէն ազգերի համար փրկութիւն գործէ ։ Յակոբայ բերանովը ասաց թէ՝ իշխան չի պակասիլ յուդայիցն և ոչ առաջնորդ նորա միջիցն՝ մինչև որ գայ նա՝ որ նորանն է նոր եկօղ թագաւորութիւնն, և նա է հեթանոսների յոյսն (Ծննդ. ԽԹ. 10) ։ Մովսէսին ասաց՝ թէ քեզ նման մարգարէ վեր կըկացնեմ նորանց համար՝ նորանց եղբայրներիցն և որ մարդ որ չիլսէ էն խօսքն, որ մարգարէն իմ անունովս կը խօսի, ես վրէժ կը խնդրեմ նորանից ։ (Երկ. օրէնս. ԺԸ. 18. 19) ։ Դաւիթին խոստացաւ թէ՝ նորանից պիտի որդի դուրս գայ՝ որ Աստուծոյ համար տուն շինէ և որ նորա թագաւորութիւնըն հաստատ պիտի մնայ մինչև յաւիտեան .

(Ե. Եսգ. Է. 11. մինչև 26)։ Եսայի մարգարէի բերանովը ասաց՝ թէ մանուկ ծնվաւ մեզ՝ որդի տրվեցաւ մեզ՝ որ իրան իշխանութիւնն իրան ուսերի վերայ էլաւ, և նորա անունն կոչվեցաւ մեծ խորհուրդի հրեշտակ՝ զարմանալի խորհրդակից․ Աստուած․ Հզօր․ Իշխան․ նոր եկօղ աշխարհքին Հայր։ Եւ խաղաղութիւն կածեմ նորա իշխաններին վերայ և առողջութիւն՝ և նորա խաղաղութեան վերջ չի կայ։ Դաւթի աթոռն կը նստի և նորա թագաւորութիւնըն աջողակ կը շինէ և նորան զօր կը տայ իրաւունքով և արդարութենով՝ հիմիկուց ետև և յաւիտենական ժամանակներումն։ Զօրութեանց Տէրի նախանձն էս բանս կանէ (Եսայ Թ. 6. 7)։ Երեմիա մարգարէի բերանովը ասաց․ Ահա գալիս են օրեր՝ ասումէ Տէր․ և կը հաստատեմ իմ բարի խօսքերըս՝ որ խօսեցի իսրայէլի տան համար և յուդայի տան համար։ Էն օրերումն և էն ժամանակներումն կը ծագեմ Դաւթի համար արդարութեան ծագումն՝ որ իրաւունք և արդարութիւն անէ երկրի վերայ․ էն օրէրումն յուդան կըփրկվի և երուսաղէմն յուսով կը բնակվի։ Էս է անունն․ որ նորան պիտի կանչեն (այսինքն) Տէր մեր արդարութիւն (Երեմ Գ. 14.—16։) Եւ Դանիէլ մարգարէի բերանովը ասաց՝ թէ պէտք է գիտես և իմանաս (թէ) բանի (այսինքն կիւրոսի հրամանի) դուրս գալիցն․ որ պատասխանն է տալիս, և երուսաղէմի շինելիցն մինչև օծեալ առաջնորդն եօթն շաբաթներ և վաթսուն երկու շաբաթներ (են) (Դան. Թ. 25։)

Էս մարգարէութիւններովս յայտնի էլաւ հին հաւատացեալներին՝ թէ նոր եկօղ փրկիչն ամէն

ազգերըն կը փրկէ՝ թէ մովսէսի նման Աստուծոյ խօսքերըն կատարեալ կերպով կը յայտնէ և մարդկանց ճշմարտութեան ճանապարհն կը տանի · թէ դաւթի ազգիյն դուրս կը գայ և դաւթի նըման կը թագաւորէ փրկված մարդկանց վերայ հոգևոր թագաւորութենով՝ մինչև յաւիտենական ժամանակներումն · թէ նա Աստուած և նոր եկող աշխարհքին հայրն է · թէ նա է Տէր՝ մեր արդարութիւն, (այսինքն) որ մեղ մեղաւոր մարդկանցս կատարելապէս արդար կը շինէ · և վերջն էլ դանիէլի խօսքերովն նորա ՝գալըյ ժամանակըն հաստատվեցաւ · որ երուսաղէմի շինելըյն ետև եօթանասուն մարգարէական շաբաթներ էին ։ Բայց մին մարգարէական օրն մին տարի է նըշանակում, ուրեմն եօթանասուն շաբաթներն՝ 490 տարի են շինում ։

Բայց էս էլ բաւական չէ ։ Աստուած մարգարէներովն էլ շատ աւելի յայտնութիւն տուաւ նոր եկող փրկչին համար, որ նորանցից մէնակ գլխաւոր խօսքերըն կը յիշենք էս տեղ ։

ա · Եսայի մարգարէի բերանովն ասումէ՝ թէ փրկիչն մին կուսից պիտի ծնվի · էնտուր համար տէր ինքն նշան կըտայ ձեղ՝ ահա կոյսն կը յղանայ և որդի կը ծնի և նորա անունըն Էմմանուէլ կասեն ։ (Եսայ · է · 14 ։)

բ · Միքիա մարգարէի բերանովն ասումէ՝ թէ փրկիչն բեդղեհեմումն կը ծնվի · Եւ դու բեդղէհէմ եփրաթայի տուն · որ քիչ ես յուդայի հազարաւորներիցն մին լինելոյ համար · քեզանից ինձ համար պիտի դուրս գայ նա՝ որ

խորայէլի իշխան լինի, և նորա դուրս գալն աշխարհքի օրերի սկզբիցն է։ (Միքիա. Ե. 2։)

գ. Դաւթի և Եսայի մարգարէների բերանովն ասումէ՝ թէ փրկիչն մեր մեղաց համար պիտի չարչարուի և մեռնի։

Աստուած Աստուած դէպի ինձ նայիր. ինչու համար թողեցիր ինձ. ես մին որդեմ՝ և մարդ չեմ. մարդկանց նախատինք և ժողովուրդների անարգված բան (էլայ). ամէնքն որ ինձ տեսնումէին՝ անարգումէին ինձ և պռօշներով խօսումէին և իրանց գլխներըն շարժումէին. դէպի Աստուած յուսացաւ սա. թող ազատէ նորան եթէ կամենումէ նորան։ Ջրի նման թափվեցայ՝ և իմ ամէն ոսկերքս ցրվեցան. և իմ սիրտս մոմի պէս հալվեցաւ իմ փորիս միջումն. իմ կարողութիւնս թրծված ամանի պէս չորացաւ. իմ լեզուս դամաղիս հետ կպաւ, և մահի հողն իջացրին ինձ. իմ ձեռներըս և ոտներըս ծակեցին. իմ շորերըս իրանց մէջն բաժանեցին, և իմ կապայիս վերայ վիճակ քցեցին։ Թող յիշեն ամէն երկրի ծայրերըն, և տէրին մօտ դառնան. թող ամէն ազգերի տոհմերըն երկրպագութիւն անեն նորան։ (Սաղմ. ԻԱ։)

Իսկի կերպարանք չի կար նորան՝ և ոչ էլ գեղեցկութիւն. բայց նորա կերպարանքն անարգված էր՝ մարդկանց ամէն որդիքներիցն պակասված. մին մարդ, (որ) խոցերումն (է), և գիտումէ համբերել ցաւերին. ինչու որ՝ իրան երեսըն յետ դարձնելով՝ անարգվեցաւ, և ոչ ինչի տեղ համարվեցաւ։ Նա մեր մեղքն է վերառնում և մեզ համար է չարչարվում, և մենք իբր Աս-

ուածանից համարեցինք նորան ցաւերումն և խոցերումն և չարչարանքներումն լինել ։ Բայց նա վիրաւորվեցաւ մեր մեղաց համար, և պատժվեցաւ մեր անիրաւութեանց՝ համար։ Տէրն մատնեց նորան մեր մեղաց համար, և նա չարչարանքի մէջն իրան բերանըն չի բանում․ ոչխարի պէս դէպի սպանդիլըն տարվեցաւ․ և գառան պէս կայ առաջի խուզօղին առանց ձայն հանելոյ․ էնպէս իրան բերանըն չի բանում ։ Էնտուր համար նա կը ժառանգէ շատերըն , և զօրավների թալանըն կը բաժանէ, նրա համար որ նորա անձն մատնըվեցաւ մահին և անիրաւներին հետ համարվեցաւ ․ և նա շատերի մեղքերըն վերկալաւ՝ և նորանց անօրէնութիւնների համար մատնըվեցաւ (Եսայ․ ԾԳ․ 2․ 3․ 4․ 5․ 7․ 12 ։ )

դ․ Մին էլ Դաւթի բերանովն ասումէ՝ թէ փրկիչն մեռելների միջիցն պիտի յարութիւն առնէ ։ Իմ մարմինս էլ կը բնակվի յուսով․ ինչու որ իմ անձըս թողիլ չես դժոխքի մէջ , և չես տալ քո սրբոյն որ ապականութիւնըն տեսնէ․ ինձ ցոյց կը տաս կենաց ճանապարհն։ (Սաղմ․ ԺԵ․ 10 ։ Գործ․ Բ․ 27—31 ։ )

ե․ Էլ Դաւթի բերանովն ասումէ՝ թէ փրկիչն յարութենիցն ետև պիտի համբառնայ երկինքըն ։ Տէրն իմ տէրին ասաց․ թէ իմ աջ կողմս նստի՛ր՝ մինչև քո թշնամիներըն քո ոտացդ կոխելիք դնեմ ։ ( Սաղմ․ ՃԹ․ 1 ։ )

զ․ Վերջն էլ մարգարէների բերանովն ասումէ՝ թէ փրկչի արիւն թափելըն և մեռնելըն ինչ

փրկութիւն և երանութիւն պիտի գործէ։ Անոր
համար մարգարէութիւնը յայտնուած է թէ մին
նոր ուխտ պիտի հաստատուի. որ նորանով հա-
ւատացեալքն մեղքի թողութիւն ունենան, և ա-
պա հոգւով և սրտով Աստուած պաշտեն. թէ
հեթանոսներն էլ կը կանչուին էս շնորհացս մաս
նակից լինելու համար. թէ սուրբ հոգին ամէն
մարմնոյ վերայ կը թափուի՝ ժողովուրդներն կը-
լցնէ և նորանց Աստուծոյ ժողովուրդ կըշինէ, և
այնպէս Աստուծոյ արքայութիւնն երկրիս վերայ կը
հաստատէ. և վերջն էլ՝ թէ աստուծոյ էն արքա
յութիւնն կառաջանայ և ամէն երկիրն կըլցնէ
մինչև դատաստանի օրումն իսպառ կը կատարուի և
ամէն բան կընորոգուի։ Ահա օրեր են գալիս ասու-
մէ Տէր. և նոր ուխտ կը դնեմ իսրայէլի և յու-
դայի տան հետ. ոչ թէ էն ուխտի նման որ իրանց
հարանց հետ դրել եմ էն օրումն որ նորանց ձեռի
ցըն բռնեցի՝ նորանց եգիպտացւոց երկրիցն հա-
նելու համար։ Ինչու որ նորանք չի պահեցին իմ ուխ
տըս, և ես նորանց երեսից քցեցի, ասումէ Տէր։
Բայց էս է ուխտն որ կըդնեմ իսրայէլի տան հետ.
էն օրերիցն ետև՝ ասումէ Տէր. կըտամ իմ օրէն
քըս նորանց մտքի մէջ. և նորանց սրտի մէջ կը
գրեմ նորանց (այսինքն օրէնքներըս) և նորանց
Աստուած կըլինիմ, և նորանք ինձ ժողովուրդ
կըլինին։ Եւ էլ մինն չի սովորացնի իրան ընկե-
րին. և խոկի մինն չի ասի իրան եղբօրն՝ թէ ճա-
նաչի՛ր Տէրն. ինչու որ ամէնքն (էլ) կըճանա-
չեն ինձ, նորանց փոքրներիցն մինչև մեծամեծներն
ասումէ Տէր. ինչու որ նորանց անօրէնութիւն-
ներին քաւիչ կըլինիմ, և նորանց մեղքերն էլ

չեմ յիշել։ (Երեմ. լա. 31—34. տե՛ս Եբր. ը. 7—13։)

Եւ (Աստուած) տուեր ինձ. մե՛ծ բան է եղ-քեզ. որ քեզ իմ ծառայ կանչեմ՝ Յակոբայ ազգերն հաստատելու համար և Իսրայէլի ցրուածներըն յետ դարձնելու համար։ Ահա ազգի ուխտ և հեթանոսների լոյս լինելու համար կարգեցի քեզ. որ փրկութիւն լինի մինչև երկրի ծայրերըն. (Եսայ. խթ. 6։ տե՛ս Հռովմ. ժե. 9—12։)

Անկից ետև իմ հոգույն ամէն մարմնոյ վերայ կը թափեմ, և ձեր որդիքներն և ձեր աղջիկներն կը մարգարէանան. և ձեր ծերերն երազներ կը տեսնեն և ձեր երիտասարդներն տեսիլք կը տեսնեն։ Եւ իմ ծառաներիս վերայ և իմ աղախիններիս վերայ էն օրերումն իմ հոգույն կը թափեմ և կը մարգարէանան։ (Յովէլ. բ. 28—29։ Գործ. բ. 17. 18։)

Եւ նշաններ կըտամ վերև երկնքումն, և նըշաններ ներքև երկրումն, արիւն, կրակ, և ծուխի փոթորիկ։ Արեգակն խաւար կը դառնայ և լուսինն արիւն. մինչև որ Տէրի էն մեծ և փառաւոր օրն դեռ եկած չի լինի. (Յովէլ. բ. 30. 31։)

Նոր երկինք կը լինի և նոր երկիր. և էլ չեն յիշել առաջինները և էլ չի ընկնիլ նորանց սրտի մէջ։ (Եսայ. կէ. 12։)

Էլ շատ էսպէսի մարգարէութիւններ կան մեր սուրբ Աստուածաշունչ գրքումն. որ աստուածապաշտներն էնտեղ կարող են գտնել և կարդալ։ Բայց սորանցով էլ որ էստեղ հաւաքեցինք յայտ-

նի տեսնումենք • թէ քանի սիրով և զգուշութեանով Աստուած հին հաւատացեալներին յայտնեց էնոր եկօղ փրկիչն և էն ամէն շնորհքներըն որ նա պիտի տար մեղաւոր և ողորմելի մարդկանց իրան գալովն և մեռնելով ։ Յայտնի սովորցնումէ նորանց՝ թէ նա մարդկանց տեղ մեռնելովն՝ և նորանց մեղքն քաւելով՝ ո՛չ թէ մին ազգը • բայց ամէն ազգերը և մարդիկքները մեղքի իշխանութենիցն պիտի ազատէ, սուրբ հոգւով սրբէ, և ապա աստուծոյ սուրբ և երանելի ժողովուրդ շինէ • որ իրան փրկչին ամէն սրտով սիրէ, և նորան հետևելով՝ վերջն կատարեալ և յաւիտենական արքայութիւնն մտնէ՝ և ամէնի վերայ երանելի կեանքն ժառանգէ ։ Ես քանի՛ ուրախացնօղ աւետիք էին կորած մեղաւորների համար • բայց սորանք մէնակ մեր փրկութեան մեծ խորհուրդին սկիզըն են • ուրեմն պէտք է որ հիմիկ էլ տեսնենք, թէ ի՛նչպէս կատարվեցան էս քաղցր աւետիքներըս • թէ փրկիչն ի՛նչպէս եկաւ աշխարհքս մեղ ողորմելի մեղաւորներս ազատելոյ և երանութիւնըն տանելոյ համար ։

# Երկրորդ Գլուխ։

## Թէ ի՛նչպէս եկաւ խոստացած Փրկիչն և մարդկանց փրկութիւնըն կատարեց։

Երբոր Դանիէլ մարգարէի բերանովն հաստատուած ժամանակն, այսինքն եօթանասուն շաբաթներն կամ 490 տարիներն իրանց վերջին մօտեցան՝ իշխանութիւնըն կամաց կամաց սկսեց հեռանալ Յուդայի ազգից, և հռովմայեցիքն եկին առաջ հերովդէսին թագաւոր կարգեցին. և ապա սկսեցին Յուդայի երկիրն իրանց ձեռքի տակըն քցել։ Ապա լցուաւ էն ժամանակն՝ որ Յակոբայ մարգարէութեան կեօրէ պէտք էր աշխարհքի փրկիչն գայ. և էն ժամանակի հաւատացեալքըն էլ մեծ յանկութենով մտիկ էին տալիս նորա գալուն համար. և ահա հենց էն ժամանակումն գաբրիէլ հրեշտակն ուղարկվեցաւ մարիամ կուսի մօտ՝ (որ դաւթի ազգից էր. և նազարէթ քաղաքումն բնակված և մին յօսէփ մարդոյ հետ նշանած էր.) և նորան ասաց. ահա կը յղանաս և որդի կը ծնիս և նորա անունըն Յիսուս կը կանչէն։ Նա մեծ կը լինի և որդի բարձրելոյն կասվի. և տէր Աստուածն նորա դաւիթ հօր աթոռն կը տայ նորան. և յակոբայ տան վերայ մինչև յաւիտեան կը թագաւորէ. և նորա թագաւորութեանն վերջ չի լինել։ Սուրբ հոգին կըգայ քեզ վերայ և բարձրելոյն զօրութիւնն քեզ վերայ

շուտք կանէ. պատճառն որ նա էլ որ քեզանից կը ծնվի. սուրբ է և որդի Աստուծոյ կըկոչվի (Ղուկ. ա. 31. 32. 33. 35): Այն ժամանակումըն հաւատացեալ զաքարիան սկսեց խմանալ՝ թէ փրկութեան ժամանակ հասաւ և ուրախութենով գոհացաւ Աստուածանից ասելով՝ օրհնեալ է իսրայէլի Տէր Աստուածն՝ որ մեզ տեսութիւն եկաւ՝ և իրան ժողովուրդին փրկութիւն արաւ. Նու իրան դաւիթ ծառայի տանիցն փրկութեան եղջիւր մեզ համար վերկացրուց. մեր հօրերիս վերայ ողորմութիւն անելով և իրան սուրբ ուխտն յիշելով. էն երդումն որ մեր աբրահամ հօր համար երդուաւ, որ տայ մեզ՝ որ առանց վախենալոյ մեր թշնամիների ձեռքիցն փրկված պաշտենք նորան (Ղուկ. ա. 68. 69. 72. 73. 74:)

Բայց երբոր մարիամ կուսի ժամանակն լցվաւ, Աստուած էնպէս կարգեց՝ որ օգոստոս կայսրն հրաման տուաւ՝ որ աշխարհքի ամէն մարդկանցն գրեն՝ և որ նրա համար ամէն մարդ իրան բնական տեղն գնայ: Ուրեմն յօսէփն և մարիամն էլ որովհետև դաւթի ազգիցն էին, պէտք էր որ իրանց դաւիթ հօր քաղաքն բեդղեհէմն գնան, և էն տեղ գրվին. և երբ որ էն տեղն հասան, մարիամն ծնաւ իրան էն առաջինեկ որդին. որ նորա համար Աստուծոյ հրեշտակն աւետիք էր տուել նորան. և լցվաւ մարգարէութիւնն, թէ աշխարհքի փրկիչն բեթղեհէմումն պիտի ծնվի: Բայց Աստուած ինքն էս ծնունդիս փառքն յայտնեց հրեշտակի ձեռամբն՝ որ գիշերումն երևեցաւ էնտեղ լինող հովիւներին՝ և ասաց. ահա մեծ ուրախութեան աւետիք եմ տալիս ձեզ՝ որ ամէն ժողո-

վուրդին համար կըլլինի. ինչու որ ձեզ համար փըրկիչ ծնաւ էսօր. որ ինքն օծեալ Տէր է՝ դաւթի քաղաքումն. և ապա երկնքի զօրքն Աստուած օրհնելով ասացին՝ փառք (լինի) Աստուծոյ երկնքումն՝ և երկրի վերայ խաղաղութիւն և մարդկանց մէջ հաճոյութիւն:

Եւ երբ որ մարիամ և յօսէփ երեխային տարան երուսաղէմ Աստուծոյ Տաճարն, սուրբ հոգին մինչև վկայեց աստուածապաշտ Սիմէօնի բերանովն՝ թէ նա է փրկութիւնն՝ որ նորան Աստուած ամէն ժողովուրդների առաջին պատրաստեց, լոյս, որ հեթանոսներին պիտի յայտնիլլի, և իրան իսրայէլ ժողովուրդին փառք: Բայց յայտնեց էլ. թէ նա կըլլինի հակառակութեան նշան. որ նորանով շատերն վերկընկենան և կըփրկվլին հաւատով. և շատերն էլ կըգայթակղվլին, և անհաւատութենով կըկորչին: Բայց Աստուած ոչ թէ մէնակ իսրայելացւոցն յայտնեց էս երեխայիս ծընունդն. բայց հեթանոսներին էլ մին նշանաւոր աստեղով ցոյց տուաւ նորան՝ որ նորանք էլ իմանան թէ իրանց համար էլ փրկիչ լինելու է նա, և նրա համար նորանցից էլ Աստուածապաշտ մարդիք եկին և նոր ծնված երեխային իբր իրանց փրկիչ և թագաւոր պաշտեցին. և նորան երկրպագութիւն տուին: Բայց էս տեղ փոքր ինչ հանգիստ առնենք՝ որ մտածենք. թէ քանի զարմանալի կերպով Աստուծոյ ամէն խոստմունքըն կատարվեցան էս երեխայի ծննդովն: Նա առաջին խոստացաւ՝ թէ կնկան զաւակն օձի գլուխըն կըջարդէ, և եսայեայ բերանովն ասաց՝ թէ

կոյս որդի կը ծնի որ նորա անունն կը կանչեն Էմմանուէլ՝ որ թարգմանվում է՝ Աստուած մեզ հետ· և այն հիմիկ մարիամ կուսին սուրբ հոգւոյն զօրութենովն որդի է ծնվում, որ նորա անունըն Աստուծոյ հրամանովն Յիսուս է կոչվում· որ փրկիչ է նշանակում· և երկնքի հրեշտակներն վէր են գալիս քարոզելով՝ թէ նա բարձրելոյն որդի՝ և ինքն օծեալ Տէր է, և ամէն ժողովուրդներն կըփրկէ իրանց մեղքերիցն։ Այն կնկան զաւակն և կուսի որդին· որ նորան հրեշտակներն էլ իրանց Տէր են դաւանում· Աստուած աբրահամին և դաւթին խոստացաւ՝ թէ իրանց ազգից պիտի դուրս գայ աշխարհքի փրկիչն· և այն հիմիկ մարիամ կուսից՝ որ դաւթի և աբրահամի ազգից էր· ծնվում է նա՝ որ նորան հրեշտակներն էլ յաւիտենական թագաւոր են քարոզում՝ և սուրբ հոգին էլ հեթանոսաց լոյս, և իսրայէլի փառք է տալում։ Յակոբայ, և միքիայի, և դանիէլի բերանովն Աստուած խոստացաւ· թէ բեդղեհէմի մէջն պիտի ծնվի՝ էն ժամանակումն, որ յուդայի իշխանութիւնն վերջանալու է, և այն հենց էն օրերումն և էն գիշերումըն է նա ծնվում· որ հռովմայեցիքն սկսեցին յուդայի մարդկանցն կայսերի հրամանի տակն քըցել, և նորանց ամէների անունն գրել· և էլ բեթղեհէմի մէջն է ծնվում· իբր դաւթին խոստացած որդին· որ իրան ժողովուրդն ամէն թըշնամիներից ազատէ։ Բայց Աստուած էլ խոստացէլ էր՝ թէ հեթանոսներն էլ նորանով պիտի փրկվին, և այն շուտով էլ մոգերն նորա մօտ են հասնում՝ որ ամէն հեթանոսաց տեղակ՝ նո-

րան երկրպագութիւն տան ։ Քանի՜ գեղեցիկ և կատարեալ է ես հին խոստմունքի կատարումն․ և քանի՜ զարմանալի համաձայնութիւն է՝ որ ամէն կողմանէ հին և նոր կտակարանի մէջն ես տեղ գտնումնք և տեսնումնք ։ Ան որ ադամին, աբրահամին, յակոբին, դաւթին և մարգարէներին հազարաւոր տարիներից առաջ յայտնվեցաւ․ ահա՛ ամէնն ես երեխայիս ծննդովն կատարվեցաւ կատարելապէս ։ Աս էլ մտածենք՝ թէ ինչպէս որ եսայի մարգարէն գալու փրկչին իբր Աստուած և նոր եկող աշխարհքին հայր Ճանաչեց և առաջուց քարոզեց՝ էնպէս էլ հիմիկ հրեշտակներն նոր ծնված մանուկի համար քարոզումեն, թէ նա է որդի բարձրելոյն, օծեալ Տէր, որ նորա թագաւորութեանն վերջ չի կայ ։ Ուրեմն նորանք հրամայումեն մեզ՝ որ նոր ծնված մանուկն չէ թէ իբր մարդ մէնակ համարինք․ բայց աստուածային փառքին մտիկ տանք՝ որ հիմիկ խոնարհութեան կերպարանքովն ծածկված է․ բայց յետոյ հաստատված ժամանակումն կըյայտնվի ։ Ուղորդ որ մարմնաւոր մարդկանց աչքերն հիմիկ մէնակ մին աղքատ և տկար երեխայ մսուրի մէջ դրած են տեսնում․ բայց հոգւով մտիկ տուող մարդն հրեշտակների խօսքերից և սուրբ հոգւոյ յայտնութենից որ զաքարիայի և սիմէօնի բերանովն տուաւ․ յայտնի իմանումէ՝ թէ ես երեխայիս փառքն ամէն մարդկանց փառքից աւելի է, և թէ նորա ձեռքովն էնպէսի մեծ գործքեր պիտի կատարվին․ որ ինքի մարդ չի կարողանայ կատարել ։ Սրա համար ամէն կարողու-

թենով մոլիկ տանք՝ որ իմանանք թէ Աստուծոյ մարդասիրութեան բոլոր խորհուրդն ինչպէս պիտի կատարվի նոր ծնված Յիսուսի ձեռով։ Մինչև նորա երեսուն տարին մին նշանաւոր գործ կամ բան չենք տեսնում. բայց նազարէթ քաղաքումն նա մեծացաւ ինչպէս ուրիշ մարդիք, և աճումէր իմաստութենով՝ և Աստուծոյ և մարդկանց շնորհքով (Ղուկ. Բ. 51.). էլ նորա ամէն կեանքն էնտեղ էնքան խոնարհ և ցած էր՝ որ ամէն մարդիք նորան մէնակ տիւլկերի որդի էին համարում և ասում։ Թէ և իրան տասներկու տարումն լաւ գիտայ և յայտնեց՝ թէ պէտք է՝ որ ես իմ հօրս տանն լինիմ. նշանակելով՝ թէ Աստուծոյ գործն (կամ հրամանն) է իրան յատուկ գործն. բայց էնպէս էլ համբերութենով մնաց մինչև երեսուն տարին հասաւ։ Էս տարիս հաստատված էր՝ որ նա նորանում առաջ գայ, և ժողովուրդներին յայտնվի իբր Աստուածանից եկած փրկիչ։ Նորանից առաջ Աստուծոյ հրամանով երևեցաւ Յօհաննէս մկրտիչն անապատ տեղումն. որ ժողովուրդներն առաջուց պատրաստէ՝ իրանց փրկիչն ընդունելոյ համար։ Էնուր համար նա քարոզեց՝ թէ ապաշխարեցէք՝ որ երկնքի թագաւորութիւնն մօտացել է. (Մատթ. Գ. 2.) ինձանից աւելի զօրաւոր կըգայ ինձանից ետև՝ որ ես արժան չեմ խոնարհիլ և նորա կօշիկների կապն արձակել. (Մարկ. Ա. 7.) ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարութեան համար. բայց ինձանից ետև եկօղն ինձանից շատ զօրաւոր է. նա ձեզ կըմկրտէ սուրբ հոգւով և կրակով։ Հիմիկուց ետև ապաշխարութեան ար-

ժանի պտուղ արէք․ ինչու որ հիմիկ կացինն ծառերի արմատին մօտ դրած է․ ամէն ծառ որ բարի պտուղ չի բերէ՝ կը կտրվի և կրակի մէջ կը քցվի (Մատ․ Գ․ 11․8․9)։

Այս խօսքերովս յայտնի նշանակեց՝ թէ ժամանակն հասել է՝ որ նորանում Աստուած սատանայի և մեղքի իշխանութիւնն կը քանդէ, և մարդկանցն ազատելով՝ իրան համար սուրբ ժողովուրդ կը շինէ, և իրան հոգևոր թագաւորութիւն կը հաստատէ, և ապա ցոյց տուաւ էն Յիսուսին՝ որ նորա ձեռովն էն ամէնն պիտի կատարվի, որ ոչ թէ ջրով դրսևանց մէնակ կը սրբէ իրան հաւատացեալներին․ բայց հոգւով և կրակով կը նորոգէ նորանց բոլոր սիրտն և բնութիւնն․ էնպէս որ ոչ թէ մին էլ դրսի արարողութիւններով՝ բայց հոգւով և ճշմարտութենով Աստուած պաշտեն և նորան երկրպագութիւն տան։ Ուրեմն բարձր ձայնիւ կանչեց Յօհաննէսն․ որ ամէնքն ապաշխարութենով յետ դառնան մեղաւոր ցանկութենիցն իրանց Աստուծոյ և նոր եկօղ փրկչին մօտ՝ որ պատրաստ լինին սրտով՝ նորան ընդունելոյ, և նորա նոր թագաւորութեանն մասնակից լինելոյ համար․ ինչու որ նա երեսպաշտութիւն չի անիլ․ բայց նորանց մէնակ կընդունի՝ որ անկեղծ սրտով նորա փրկութեանն և սրբութեանն կը ցանկանան․ թէ՛ աբրահամի զաւակ լինին, թէ՛ հեթանոսայ։ Բայց նորանք որ յօհաննէսի խօսքերն ընդունումէին, նորա ձեռքովն յորդանան գետումն մկրտվումէին, և էն մկրտելովն խոստովանումէին՝ թէ իրանք մեղաւոր են, և էն սրբութիւնն են խնդրում՝ որ նոր եկօղ

փրկիչն պիտի բերէր և ընծայէր ։ Ուրեմն էին քարոզութեանն և մկրտութեանն Յօհաննէսի յայտնի վկայումէր՝ թէ ոչ մարմնաւոր՝ այլ հոգևոր թագաւորութիւն պիտի սկսէ նոր եկող փրկչի ձեռամբ՝ և ինչպէս Աստուածապաշտներըն ջոկեց էին կեղծաւորներից և ամբարիշտներից՝ որ մէնակ աշխարհքի փառք էին կամենում ստանալ նոր եկող մեսիայից ։

Վերջն ինքն Յիսուս էլ եկաւ նազարէթից Յօհաննէսի մօտ՝ որ ինքն էլ մկրտուի նորանից և ապա իրան գործն մտնի կամ սկսէ ։

Բայց երբ որ մկրտուեցաւ և էն ջրից դուրս եկաւ՝ հենց էն ժամուն երկինքն նորա համար բացուեցաւ , և Աստուծոյ հոգին տեսաւ որ վեր էր գալիս աղաւնոյ պէս նորա վերայ , և ահա ձայն էլաւ երկնքից որ ասումէր . էդ է իմ սիրելի որդին որ դորան հաւանելեմ ։ (Մատթ . գ. 16. 17 ։) Ապա ինքն Յօհաննէս էլ ճանաչեց և ամէն մարդկանց առաջի վկայեց թէ ես չէի գիտում նորան . բայց նա որ ինձ ուղարկեց ջրով մկրտելոյ համար՝ նա ինքն ինձ ասաց, թէ որին վերայ որ տեսնես հոգին որ վեր գայ և նորա վերայ հանգչի՝ նա է որ սուրբ հոգւով պիտի մկրտէ ։ Ու ես տեսի և վկայեցի՝ թէ սա է որդին Աստուծոյ ։ (Յօհ . ա . 32 . 33 . ) Ու մին էլ էսպէս վկայեց ասելով թէ՝ ահա Աստուծոյ գառն՝ որ աշխարհքի մեղքն վեր է առնում . (Յօհ . ա. 29.) նշանակելով՝ թէ նա է՝ որ ամէն մեղաւոր մարդկանց մեղքն իրան վերայ կառնէ և կըքաւէ և կըջնջէ ։

Այս բաները քանի՛ նշանաւոր սկիզբն էին ։ Յօհաննէսն երկրիս վերայ է վկայում, և Աստուած երկնքիցն է վկայութիւն տալիս՝ թէ Աստուծոյ սիրելի որդին է նա՝ որ հիմիկ յառաջ կը գայ և իրան գործն կըսկսէ, և էլ լսումենք՝ թէ նա ոչ թէ նոր պատուիրանք պիտի առաջ բերէ, բայց ինքն մեր յանցանքըս և մեր մեղքս վեր առնելով՝ և մեզ մեղաւորներս քաւելով՝ սուրբ և Աստուծոյ սիրելի և երանելի ժողովուրդ կըշինէ։ Ահա՛ սրանից էլ աւելի մեծ ուրախացնօղ աւետիք չի կայ մեզ համար ։ Ուրեմն տեսնենք թէ ի՛նչպէս կատարվեցաւ ։ Առաջին գործն էն էր՝ որ մարդկանց ազգի թշնամին և նորա խաբէութիւնն յայտնի անէ՝ և նորան յաղթէ ։ Նրա համար հոգին նորան մին անապատ տեղ տարաւ՝ որ էն տեղ առաջ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահեց և ապա սոված լինելոյ ժամանակն սատանայն մօտ եկաւ նորան՝ որ նորան փորձելով մեղքի մէջ գցէ ինչպէս որ ադամին գըցեց ։ Որովհետև նոր էր լսել Յիսուս էն երկնքիցըն եկած ձայնն՝ թէ սա է իմ սիրելի որդին, նրա համար փորձիչն ուզումէր ամբարտաւանութենով լցնել նորա սիրտն, ասելով նորան՝ եթէ Աստուծոյ որդի ես՝ ինչո՞ւ համար սոված ես մընում․ հրամա՛ն տուր որ էդ քարերդ հաց դառնան ։ Բայց Յիսուս որովհետև իրան ամէն կամքըն հօր կամքին հետ միաբան ունէր, ասաց՝ թէ մարդն ոչ թէ մենակ հացով կապրի․ բայց ամէն բանով որ Աստուծոյ բերանիցն դուրս է գալիս՝ նշանակելով՝ թէ բաւական է Աստուծոյ վերայ իրան յոյսն դնել․ որ իրան կամքին կեօրէ

ամէն կերպով կարօղ է հաց տալ իրան սիրելիներին ։ Յետոյ՝ փորձիչն տարաւ նորան սուրբ քաղաքն, և կանգնացրուց նորան տաճարի վերայ՝ որ կարօղանայ էն տեղ նորան ուրիշ կերպով փորձել և մեղքի մէջ քցել ։

Նրա համար ասաց՝ եթէ Աստուծոյ որդի ես՝ ցոյց տուր քեզ մարդկանց. էս տեղից քեզ վե՛ր քցիր՝ որ ամէնքն էլ տեսնեն և հաւատան. ինչու որ Աստուծոյ հրեշտակներն քեզ կըպահեն՝ որ իսկի փնաս չի լինի քեզ ։ Բայց Յիսուս էստեղ էլ յաղթեց նորան ասելով՝ թէ գրված է՝ թէ չի փորձես քո Տէր Աստուածը. վերջն էլ սատանայն մին բարձր սարի վերայ տարաւ նորան՝ որ էնտեղ ամէն աշխարհքի փառքն ցոյց տայ նորան՝ և էն ամէնըն նորան խոստանալով՝ մոլորացնէ նորան ։

Էս փորձելոյ կերպս ամէնիցն էլ հեշտ էր երևում՝ ինչուոր ամէն աշխարհքն և ջհուտներն էլ ճշմարիտ Աստուածըն թողելով՝ շատ ժամանակ կուռք էին պաշտում ։

Էնտուր համար ասաց նորան. էս ամէնքս քեզ կըտամ՝ եթէ մէնակ երեսիդ վերայ ընկնելով. ինձ երկրպագութիւն տաս ։ Բայց Յիսուս յայտնի և հաստատ պատասխան տուաւ նորան ասելով՝ տէ՛ն գնա ինձանից սատանայ. ինչուոր՝ գրած է թէ՝ քո Տէր Աստուծոյդ երկրպագութիւն պիտի անես և մէնակ նորան պաշտես ։ Էս խօսքերովըս ոչ թէ մէնակ յաղթեց սատանային. բայց յայտնեց էլ՝ թէ նա է որ մարդկանց մոլորացըրուց որ իրանց ստեղծօղն թողեն և կուռք պաշտեն. թէ նա է ապստամբուած չարն՝ որ ամէն

մեղք և յանցանք և ապստամբութիւն է սովորցը-նում մարդկանց ։ Ուրեմն նորանով էլ յայտնեց Յիսուս՝ թէ ինքն սատանայից զօրով է՝ և թէ նա հիմիկ եկել է՝ էս մոլորացնողի իշխանութիւ-նըն քանդելու և Աստուծոյ Ճշմարտութիւնն և թագաւորութիւնըն հաստատելու համար ։

Քանի՜ յայտնի երևեցաւ որանով՝ թէ նա ոչ թէ մէնակ մարդ էր, բայց էլ ամէն մարդկան-ցից զօրաւոր և բարձր էր ։ Պատճառն որ յաղ-թեց նորան ․ որ ամէն մարդկանց իրան ծառայ էր շինել ։

Քանի՛ զարմանալի կերպով հաստատվեցաւ էս փորձութենովս և յաղթութենովս ․ թէ ճշմա-րիտ էր էն երկնքից եկած խօսքն՝ որ մկրտու-թեան ժամանակումն վկայեց՝ թէ դա է իմ սի-րելի որդին՝ որ նորան հաւանեցեմ ։ Էսուր հա-մար նորա յաղթութենից ետև՝ հրեշտակներն էլ եկին և նորան իբր իրանց Տէր պաշտեցին ։ Բայց ոչ թէ մէնակ էստեղ յայտնվեցաւ նորա Աստուածային զօրութիւնըն և փառքն ․ բայց էլ նորա ամէն կեանքումն և գործքերումն տեսնու-մենք՝ թէ էն մարդկութեան խոնարհ կերպարան-քումն՝ Աստուծոյ կատարելութիւն զօրութիւն՝ սրբութիւն և իմաստութիւն են երևում և գոր-ծում ։ Բայց մեզ անկարելի՛ է որ էս ամէն բա-ները մին մին գրենք ինչպէս որ պէտքէ ․ բայց ցանկացօղն հեշտ կարող է տեսնել սուրբ Աւե-տարանումն՝ որ սուրբ հոգւով է գրված և Յիսու-սի ամէն զարմանալի վարքն յայտնումէ ։ Էսուր համար էստեղ մէնակ շատ հարկաւորներըն կըյի-

չենք ։ Մկրտութենիցն, և սատանայի յաղթու-
թենիցն եւս սկսեց՝նա իրան գործըն մնիլ և
քարոզել՝ թէ ապաշխարեցէ՛ք և աւետարանին
հաւատացէ՛ք՝ պատճառն որ երկնքի թագաւորու-
թիւնըն մօտեցել է։ (Մարկ. Ա. 15 ։) Այս երկնքի
կամ Աստուծոյ թագաւորութիւնն էն մըքով
պէտք է իմանանք՝ թէ Աստուած հիմիկ փրկչի
ձեռովը սատանայի իշխանութիւնն մարդկանց մի-
ջիցն կը քանդէ, նորանց հոգւոյ կապանքըն կար-
ձակէ, նորանց մեղացն թողութիւն կը շնորհէ,
և նորանց սիրտըն էնպէս կը սրբէ, որ միայն Աստ-
ուած սիրեն և նորան պաշտեն՝ և խաղաղ նորա
ժողովուրդ լինին՝ որ նորանց միջումն նա ինքն ի-
րան հոգւով ամէն սրտին առաջնորդէ և ամէն բան
էնպէս կառավարէ՝ որ վերջն ամէնքըն էլ յաւիտե-
նական սրբութիւն և երանութիւն վայելեն ։
Որտեղ որ մինչև հիմիկ սատանայի խաբէութե-
նով մոլորութիւն և խաւար տիրեց, էնտեղ հիմիկ
Աստուծոյ ճշմարտութիւնն և լոյսն կըծագէ և
մարդկանց սիրտըն կըլուսաւորէ․ որտեղ որ մեղք
և անիրաւութիւն տիրեց՝ էնտեղ հիմիկ սրբու-
թիւն և Աստուածպաշտութիւն թագաւորու-
թիւն կանէ․ որտեղ որ մարդիք իրանց մեղքի
համար Աստուծոյ պատժիցն, և մահիցն վախե-
ցան և ամէն կեանքի մէջն ողորմելի էլան՝ էնտեղ
հիմիկ Աստուծոյ շնորհօքն մեղքի թողութիւն կը-
վայելեն՝ Աստուած բոլոր սրտով կըսիրեն, և յա-
ւիտենական կեանքի հաստատ յուսովը երանելի կը
լինին ։ Այս է Աստուծոյ թագաւորութիւնն՝ որ
նոր սկսեց մօտենալ հենց էն Յիսուսի ձեռովը՝

որ առաջ իրան քարոզութենովն յայտնեց նորան․ ինչու որ՝ նորանից եւ նա սկսեց ցոյց տալ՝ թէ նա ինքն է էն փրկիչն՝ որ պէտք էր գալ աշխարհքը, որ Աստուծոյ թագաւորութիւնն մարդկանց մէջն հաստատէ։ Բայց ինչպէս ցոյց տուաւ իրան։ Առաջ վարդապետութենով, ապա կատարեալ սրբութեան օրինակով՝ յետոյ զարմանալի հրաշքներով և մարգարէութիւններով, և վերջն իրան մահովն, յարութենովն և երկինքն համբառնալովն։ Թէ և մարգարէների գրքերումըն յայտնի ասված էր, թէ Աստուծոյ թագաւորութիւնն, որ նոր եկօղ փրկչի ձեռովն պէտք էր հաստատվլի, հոգևոր թագաւորութիւն պիտի լինի՝ և ոչ երկրաւոր կամ մարմնաւոր, բայց ջըհուտներն առ հասարակ էնքան մարմնաւոր էլան, որ մարգարէների խօսքերըն չիմացան, և էլ իսպառ մոռացան։ Էնտուր համար կարծեցին՝ թէ մովսէսի օրէնքն և Աստուծոյ պաշտօնի արարողութիւններըն մէնակ դրսվանց պահելն՝ բաւական է առաջի Աստուծոյ ընդունելի լինելոյ համար․ բայց սրտով մեղաւոր, կեղծաւոր և պիղծ լինելն ոչինչ համարեցին, և նորա համար մէնակ մին էնպէսի փրկիչ էին ուզում, որ կռապաշտների ձեռներիցն նորանց ազատէ և ապա մին փառաւոր թագաւորութիւն երկրիս վերայ հաստատէ և ջհուտներին ամէն ազգերի վերայ մեծ և փառաւոր անէ։ Էս էր նորանց յոյսն և փափաքն. էնպէսի թագաւորութիւնն՝ Աստուծոյ թագաւորութիւն էին ասում։

Բայց Յիսուս էս ամէն կարծիքներս խափանեց և յայտնի սովորցրուց՝ թէ Աստուծոյ թա-

գաւորութիւնըն հոգևոր է՝ որ մարմին և արիւն, այսինքն մարմնաւոր մարդ կարող չէ մտնել նորա մէջ։ Անոր համար մովսէսի օրէնքի միտքն մեկնելով ցոյց տուաւ՝ թէ ոչ թէ մինակ մարդոյ մարմինըն սպաննելն է մեղք. բայց եղբօր վերայ բարկանալն կամ թշնամանք տալն էլ մարդասպանութեան նման մեղք է. ոչ թէ մինակ գործով շնութիւն անելն է մեղք, բայց սրտի ցանկութենով էլ մին կնկան վերայ նայիլն շնութեան նման մեղք է, բաւական չէ մինակ քո բարեկամներըդ սիրել՝ բայց ամէն մարդին և թշնամիներին էլ պէտք է սիրել։ Բաւական չէ՝ մինակ յայտնի և մարդկանց առաջի ողորմութիւն տալ՝ պահս պահել և աղօթք անել. բայց բոլոր սրտով և Աստուծոյ սիրոյն պէտք է աւելի ծածուկ էլ գործել էն ամէն բաները. բաւական չէ՝ որ մէնակ բերանով Ճշմարիտ Աստուածըն դաւանիս, բայց իսպառ անկարելի է՝ որ քո սիրտդ մին ուրիշ բան սիրէ խնդրէ, և նորա վերայ իրան յոյսըն դնէ՝ եթէ ոչ միայն Աստուծոյ վերայ. կարող չէք Աստուծոյ և մամոնային ծառայել. առաջ Աստուծոյ արքայութիւնըն և նորա արդարութիւնըն խնդրեցէ՛ք և (աշխարհքի) էդ ամէն բաներն կաւելանան ձեզ. (Մատթ. Զ.) ուրեմն հոգւոյ շնորհքըն խնդրեցէ՛ք՝ որ բոլոր սիրտըն կըսրբէ, և կընորոգէ։ Նեղ դըռնովն ներս մտէ՛ք՝ ինչու որ լայն է դուռն, և համարձակ Ճանապարհըն՝ որ դէպի կորուստն կըտանի և շատ են նորանք՝ որ նորանով կըմտնին։ Որքան նեղ է դուռըն և նեղ է Ճանապարհն որ դէպի կեանքն կըտանի, և քիչ են նորանք որ կըգտնեն նորան

(Մատթ. է.)։ Այս խօսքերովս յայտնի նշանակեց՝ թէ մարդկանց ճանապարհներըն խոպան. պէտք է թողել՝ և մէնակ էն նեղ ճանապարհովն գնալ՝ որ նորա վերայ ամէն հին և մեղաւոր բնութիւնըն պէտք է մեռնի և խաչվի՝ որ նոր մարդ և նոր սիրտ ծնվի ։ Այս մին էլ նշանակեց ասելով՝ թէ ամէն բարի ծառ բարի պտուղ կըբերէ, և չար ծառն չար պտուղ կը բերէ (Մատթ. է։) Կամ ծառըն բարի՛ արէք և նորա պտուղն էլ բարի. կամ ծա-ռըն չար արէ՛ք՝ և նորա պտուղն էլ չար. ինչու որ ծառն իրան պտղիցն կըճանանչվի (Մատթ. ԺԲ. 33։) Ծառն մարդոյ սիրտն է՝ պտուղն գործքերն են ։ Անտուր համար միտքն էն է՝ թէ բաւական չէ՝ մէնակ դրսեվանց քանի մի մեղք թողել և քա-նի մի բարի գործքեր անել. ինչու որ ամէն պը-տուղներըն չարեն քանի որ ծառն չար է՛ ։ Ուրեմն էլ քանի որ մարդոյ սիրտն մեղաւոր և մեղքով ապականված է՝ կարող չէ բարի գործքեր դուրս բերել՝ բայց ամէնն մեղաւոր է, ինչու որ՝ աղբիւ-րըն մեղաւոր է. ուրեմն ծառն, այսինքն սիրտն ինք-նին առաջ պէտք է փոխվի, սրբվի, նորոգվի, որ յետոյ կարողանայ բարի պտուղ բերել և Աստու-ծոյ հաճոյ լինիլ ։ Այս պատճառովս նիկոդեմոսին հաստատ ասաց թէ՝ ճշմարիտըն ասումեմ քեզ՝ թէ որ մինն նոր չի ծնվի՝ նա Աստուծոյ արքայու-թիւնըն կարող չէ տեսնել. և մին էլ՝ թէ որ մինն ջրից և հոգւոց չի ծնվի, նա կարող չէ Աս-տուծոյ արքայութիւնն մտնել ։

Նմանապէս Աստուած պաշտելոյ համար սո-վորցրուց՝ թէ ոչինչ բան է՝ մէնակ պըռօշներով Աստուած պատուել եթէ սիրտն չի մօտենայ նո-

րան. (Մատթ. ԺԵ.) և թէ՝ ամէն դրսի ճըգ-նութիւններն և պահպանութիւններն փուճ են, եթէ արդարութիւն և ողորմութիւն և սէրն թողված լինի: Ըստուր համար ասաց թէ՝ ժամանակ կըգայ և հենց հիմիկ է (էն ժամանակն) որ ճշմարիտ երկիրպագողներն երկրպագութիւն կանեն հօրն հոգւով և ճշմարտութենով. ինչու որ հայրըն էլ իրան էնպէսի երկրպագողներ է խնդրում. Աստուած հոգի է և նորա երկրպագողներն պէտք է որ հոգւով և ճշմարտութենով երկրպագութիւն անեն նորան (Յօհ. Դ. 23. 24): Ուրեմըն ամէն դրսի արարողութիւններն՝ ինչպէս որ ջհուդներն ունէին՝ բաւական չեն մարդոյ պաշտօնն ընդունելի անելոյ համար, բայց ճշմարիտ պաշտօնն պէտք է հոգւով և սրտով կատարվի:

Քանի՞ սուրբ և յատուկ վարդապետութիւն է էս. նա խսկի չի թողնում, որ մեր մարմնաւոր բընութեան շորի վերայ մէնակ մին նոր հոգևոր կարկատան դնենք, և նորանով իբր հոգևոր մարդիք երևինք մարդկանց առաջի, բայց նա խպառ հրամայումէ՝ որ ամէն հին բաները թողենք և մեր բոլոր մեղաւոր բնութիւնըն մեռացնենք, և նոր ծնվինք հոգւով՝ եթէ կամենանք Աստուծոյ արքայութիւնն մտնել. ինչու որ էնքան սուրբ և հոգևոր է էն արքայութիւնն, որ խսկի մարմնաւոր մտածմունք և ցանկութիւնք կարօղ չեն մտնել նորա մէջ: Բայց մեղաւոր մարդն ինչպէս պիտի իրան մեղաւոր բնութիւնն դուրս հանէ. ինչպէս պիտի նոր ծնվի և էն նոր սիրտըն առնայ՝ որ Աստուծոյ արքայութիւնն կարենայ մտնել: Ուշ

ով կարող չէ ինքն իրան մեղաւոր սիրտն սրբել և նոր շինել. ոչով մարդ էլ կարող չէ ցոյց տալ էն Ճշմարիտ Ճանապարհն որ դէպի կատարեալ սըր-բութիւնն կըտանի՝ ինչպէս որ յայտնի տեսնու-մենք հին և նոր փիլիսոփաների գրքերիցն՝ որ մեծ պարծանքով խօսեցին՝ բայց իրանք իրանց բնու-թիւնըն չի կարացին մեղքից սրբել և նոր շինել. ուրեմն որքան աւելի քիչ կարողացան ուրիշներին ցոյց տալ էն Ճշմարիտ սրբութեան Ճանապար-հըն որ իրանք իրանց համար չի գտացին գտնել: բայց Յիսուս նորանց պէս չի անում. նա ոչ թէ մէնակ Աստուծոյ արքայութիւնըն և նորա սրբու-թիւնըն մեզ ցոյց է տալիս, բայց էլ կատարեալ Ճանապարհն է յայտնում՝ որ էնտեղ է տանում իրան խնդրող մարդկանց: Էնտուր համար որ ան-կարելի է մարդոյ ինքն իրան սրբել՝ նա մեր նեղա-ցած սիրտըն դէպի Աստուած քցեց և նորան յայտնեց մեզ իբր մեր երկնաւոր հայր՝ որ իրան ամենակարող շնորհքովն և ողորմութենովն մեր փրկութիւնըն և մեր սրբութիւնըն առաջուց կա-տարելապէս պատրաստեց, էնպէս որ հիմիկ մարդոյ կողմանէ մէնակ պարզ և անկեղծ կամեցողութիւն պէտք է՝ այն արքայութիւնըն խնդրելոյ, գտնելոյ և մտնելոյ համար: Նա ասաց. «ինչպէս որ մովսէսն
,, անապատումն (չոլումն) օձըն բարձրացրուց՝ էն
,, պէս էլ պէտք է՝ որ որդին մարդոյ բարձրանայ,
,, որ ամէն ով որ նորան հաւատայ՝ յաւիտենական
,, կեանք ընդունի. պատճառն որ Աստուած էն-
,, պէս սիրեց աշխարհքըն՝ մինչև որ իրան միածը-
,, նունդ որդին տուաւ. որ ամէն ով որ նորան հա-
,, ւատայ չի կորչի՝ բայց յաւիտենական կեանքն

,, ընդունի ։ Ինչու որ՝ Աստուած իրան որդին չի
,, ուղարկեց աշխարհքս՝ որ աշխարհքըն դատապար
,, տէ՝ բայց որ աշխարհքն նորանով փրկվի ։ Ով
,, որ նորան կըհաւատայ՝ չի դատապարտվիլ՝ և ով
,, որ նորան չի հաւատայ. նա հենց հիմիկ էլ դա-
,, տապարտված է՝ ինչու որ Աստուծոյ միածը-
,, նունդ որդւոյն չի հաւատաց ։ Էս դատաս-
,, տանն էն է՝ որ լոյսն աշխարհքս եկաւ և մար-
,, դիք խաւարն աւելի սիրեցին՝ քան թէ լոյսըն.
,, էնտուր համար որ նորանց գործքերն չար էին ։
,, Ինչու որ՝ ամէն ով որ չար կըգործէ՝ նա լոյսն
,, կատէ և դէպի լոյսն չի գալ՝ որ նորա գործ-
,, քերն չի յանդիմանվին ։ Բայց ով որ ճշմար
,, տութիւն կըգործէ՝ դէպի լոյսն կը գայ՝ որ նո
,, րա գործքերն յայտնի լինին՝ թէ Աստուծով
,, գործվեցան ։ (Յօհ. Գ. 18—21 ։)

Ահա Աստուծոյ սէրն՝ որ փրկութեան և կատարեալ սրբութեան ճանապարհ ցոյց տուաւ ։ Ինչ որ անկարելի էր մարդոյն՝ նա պատրաստեց և կատարեց իրան սիրովն և ողորմութենովն՝ որ նորանով իրան միածնունդ որդին ուղարկեց աշխարհքս որ նա մարդկանց փրկութիւնըն կատարէ և յաւիտենական կեանքն տայ նորանց ։ Էս նա ուրիշ բան չի հրամայում, բայց միայն որ հաւատով մօտենանք նորա որդւոյն՝ և նորանից փրկութիւն խնդրենք և ընդունինք ։ Ուրեմն ամէն մարդ՝ որ մեղքից, և մեղքի թըշուառութենից և պատժից կամենումէ ազատվիլ և սուրբ և երանելի կեանք ստանալ՝ նա էս խօսքերովս յայտնի ճանապարհ բացված ունի որ էն ամենակարող որդւոյն հաւատովն մօտե-

նայ, որ եկած է աշխարհքն փրկելու համար։ Ուրեմն նորանք մէնակ են ողորմելի և առանց բժշկութեան որ աշխարհքի և մեղքի սիրոյն՝ աւելի կամենում են խաւարի մէջն մնալ՝ քան թէ Աստուծոյ լուսոյն մօտենալ և նորա սէրն և փրկութիւնըն ընդունիլ՝ և միածնուն որդւոյ ձեռովն յաւիտենական կեանքի ժառանգաւոր լինիլ։ Բայց որովհետև ամէն փրկութիւնըն որդւոյ ձեռովն է կատարվում, էնտուր համար Յիսուս էլ աւելի իրան անձըն յայտնեց մեզ՝ որ ամէնքն ճանանչեն նորան և նորա մօտ գան՝ Աստուծոյ արքայութիւնըն ժառանգելու համար։ Արա համար վկայեց և ասաց՝ թէ։

,, Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւնն և
,, կեանքն, ոչ ով չի գալ հօր մօտ՝ եթէ ոչ ինձանով։ (Յօհ. ԺԴ. 6.)

,, Ես եմ աշխարհքի լոյսն. ով որ իմ ետևէս
,, կը գայ՝ նա չի գնալ խաւարի մէջ, բայց կեանքի լոյսն կընդունի։ (Յօհ. Ը. 12։)

,, Ես եմ կեանքի հացն. նա որ ինձ մօտ կըգայ՝
,, սոված չի լինիլ՝ և ով որ ինձ կըհաւատայ՝ խմելու
,, չի ծարաւիլ (Յօհ. Զ. 35։)

,, Ես եմ յարութիւն և կեանք. նա որ ինձ կը-
,, հաւատայ՝ թէ և մեռնի էլ՝ կապրի։ Եւ ամէն
,, ով որ կենդանի է՝ և ինձ կըհաւատայ, նա յա-
,, ւիտեան չի մեռնիլ։ (Յօհ։ ԺԱ. 25։)

,, Էս է իմ հօրս կամքն՝ որ ամէն ով որ որդւոյն
,, կըտեսնէ և նորան կը հաւատայ՝ յաւիտենական
,, կեանքըն կընդունի՝ և ես նորան կըյարուցա-
,, նեմ վերջին օրումն (Յօհ. Զ. 40)։

Էս խօսքերովս վկայեց նա՝ թէ ինչպէս որ արեգակն մեր մարմնոյ աչքերին լոյս է տալիս, էնպէս էլ Յիսուս ինքն մարդկանց հոգւոյ լոյսն է՝ որ առանց նորան խաւարի մէջն են մնում. ինչպէս որ մարմնաւոր հացն մարդկանց մարմինըն կերակրումէ և մարմնաւոր կեանքն զօրայնումէ, էնպէս էլ նա մեր հոգին կերակրումէ և հոգւոյն կեանք է շնորհում և պահում։ Մէնակ նա կարող է հօր մօտ տանիլ, և մէնակ նա էլ հոգւով և մարմնով մեռածներին կարենումէ յարութիւն տալ և նորանց յաւիտենական կեանք շընորհել։ Ուրեմն երկնաւոր հօր կամքն է՝ որ ամէնքն ճանանչեն նորան և հաւատան՝ և էն հաւատովն կեանքըն ստանան։ Բայց Յիսուս իրան Աստուածային կարողութիւնն, և դէպի մեղաւոր մարդկէք լինօղ սէրըն էլ էնպէս քարոզեց և վկայեց՝ որ ամէնքս կարենանք յուսով և առանց վախենալոյ մօտենալ՝ և նորա վերայ մեր յոյսըն դնել։ Էնտուր համար նա ասաց՝ թէ
,, Իմ հայրս մինչև հիմիկ գործումէ՝ և ես էլ գոր-
,, ծումեմ։ Ինչպէս որ հայրն մեռելներին յարուցա-
,, նումէ և կենդանի է անում, էնպէսէլ որդին կեն-
,, դանի է անում որին որ կամենումէ։ Եւ ոչ թէ
,, հայրն մընին դատումէ՝ բայց ամէն դատաստան
,, աներըն իրան որդւոյն տուաւ։ Որ ամէնքն պատ-
,, ուեն որդւոյն՝ ինչպէս որ հօրըն պատուումեն.
,, ով որ որդւոյն չի պատուում նա հօրըն էլ չի
,, պատուում՝ որ նորան ուղարկեց։ Ճշմարիտն
,, ասումեմ ձեզ՝ թէ էն որ իմ խօսքիս ականջ կը
,, դնէ և կը հաւատայ նորան որ ինձ ուղարկեց՝
,, նա յաւիտենական կեանքըն կընդունի և դա-

,, տաստան չի մտնիլ՝ բայց մահիցն դէպի կեանքն
,, փոխվեցաւ․ Ճշմարիտն ասում եմ ձեզ՝ թէ ժա
,, մանակ է գալիս, և հենց հիմիկ է, երբ որ մե-
,, ռելներն Աստուծոյ որդւոյ ձայնըն կը լսեն, և
,, նորանք որ կըլսեն կենդանի կը լինին։ Պատ-
,, ճառն որ՝ ինչպէս որ հայրն իրան անձնումն
,, կեանք ունի՝ էնպէս էլ որդւոյն տուաւ՝ որ ի-
,, րան անձնումն կեանք ունենայ։ Եւ նորան իշ-
,, խանութիւն տուաւ դատաստան անելոյ․ պատ-
,, ճառն որ՝ նա որդին մարդոյ է։ Նրա համար
,, ի՞նչ էք զարմանում։ Ինչուոր ժամանակ կըգայ
,, որ ամէնքն որ գերեզմաններումն են նորա ձայ-
,, նըն կը լսեն, և դուրս կըգան նորանք որ բա-
,, րի են գործել՝ դէպի յարութիւնն կենաց և
,, նորանք որ չար են արել՝ դէպի յարութիւնն
,, դատապարտութեան։ (Յ․Հ․ Ե․ 17․ 21—29։)
,, Ես եմ ոչխարների դուռն․ թէ որ մինն ինձա-
,, նով մտնի՝ նա կապրի․ կը մտնէ և դուրս կը-
,, գայ և արօտ կը գտնէ։ Ես եկի որ կեանք ունե-
,, նան և էլ աւելի ունենան։ Ես եմ քաջ հո-
,, վիւն․ քաջ հովիւն իրան անձըն ոչխարների
,, վերայ է դնում․ ես քաջ հովիւն եմ և իմոնք-
,, ները ճանանչում եմ և իմոնքներից էլ ճա-
,, նանչվում եմ։ Ինչպէս որ հայրն ինձ գիտումէ,
,, էնպէս էլ ես հօրն գիտումեմ, և իմ անձըս ոչ-
,, խարների վերայ եմ դնում։ Բայց ուրիշ ոչ-
,, խարներ էլ ունիմ, որ էս բակիցն չեն՝ և նո-
,, րանց էլ պէտքէ ես էստեղ բերեմ և իմ ձայ-
,, նըս կը լսեն և մին հօտ և մին հովիւ կը լինին։
,, Իմ հայրս էնտուր համար է ինձ սիրում, որ իմ
,, անձըս դնումեմ, որ մին էլ առնեմ նորան։ Ու

,, ով նորան չի հանում ինձանից. բայց ես ինքն
,, իմ անձնովս եմ դնում նորան։ իշխանութիւն
,, ունիմ նորան դնելոյ և իշխանութիւն ունիմ
,, նորան մինէլ առնելոյ. էս պատուերս իմ հօ-
,, րիցս առի։ Իմ ոչխարներս իմ ձայնիս ականջ
,, են դնում և ես նորանց ճանանչում եմ և իմ
,, ետևէս գալիս են. և ես նորանց յաւիտենական
,, կեանքն եմ տալիս և՛ յաւիտեան չեն կորչիլ՝ և
,, ոչ ով չի յափշտակիլ նորանց իմ ձեռքիցն.
,, իմ հայրս որ նորանց տուաւ ինձ, ամէնիցն մեծ
,, է. և իմ հօրս ձեռքիցն ոչով չի կարող յափշ-
,, տակել նորանց. ես և իմ հայրս մին ենք։ (Յօհ.
,, Ժ. 9—10. 11. մինչև 18. 27 մինչև 30։)

Ահա ամենակարող փրկիչն որ ինքն էլ հօր նը-
ման կեանքն ունի իրան անձին մէջ, և կարե-
նում է ամէներին կեանք տալ՝ որին որ ուզում է,
որ էլ ոչ թէ մէնակ մեռելներն կը յարութա-
նէ, բայց որ դատաստան անելն էլ իրան ձեռ-
քըն ունի։ Ուրեմն նա կարող է ամէն մարդկանց
օգնել և փրկել. ինչու որ մեղքից և մահից և
սատանայից զօրաւոր է նա. և էնտուր համար
արժան է որ ամէնողորմելի մեղաւոր մարդ փախ-
չի դէպի նա. բայց նա ոչ թէ մէնակ կարող է
փրկել՝ բայց նորա սիրտն էլ բորբոքվում է սի-
րով և ողորմութենով դէպի մեղաւոր մարդն.
էնպէս որ յօժար մտօք պատրաստ է՝ ամէն նե-
ղութիւն և չարչարանք քաշել՝ միայն թէ իրան
կորած ոչխարներըն կորուստից ազատէ և երա-
նութեան մէջ տանի. նա էլ պատրաստ է՝ իրան
կեանքըն տալ մահին, միայն թէ ոչխարներըն

յաւիտենական պատժից փրկէ՝ և յաւիտենա-կան կեանքին մասնակից անէ: Օ՛հ ո՛րքան է հօր սէրն՝ որ միածնունդ որդին տուաւ մեզ մե-ղաւոր մարդկանցս համար. ո՛րքան է որդւոյ սէ-րըն՝ որ ո՛չ միայն մարդ էլաւ, բայց իրան կեան-քին էլ չի խնայեց՝ որ յօժար մտօք մեղաւոր մարդկանց համար տայ նորան: Ուրեմն ամէն յուսով մեղաւորն կարօղ է մօտենալ՝ իրան էն փրկչին՝ և առանց վախենալոյ իրան հոգոյ հա-մար բժշկութիւն և փրկութիւն խնդրել նորանից: Նրա համար Յիսուս ինքն էլ շատ քաղցր սիրով մեղաւորներին կանչեց և հրաւի-րեց՝ ասելով թէ

„ Երանի հոգւով աղքատներին՝ որ նորանցն է
„ երկնքի արքայութիւնն: Երանի սգաւորներին,
որ նորանք պիտի մխիթարվին:

„ Երանի նորանց՝ որ սոված և ծարաւ են ար-
„ դարութեան համար՝ որ նորանք պիտի կուշ-
„ տանան (Մատ. Ե. 3. և 6): Ինձ մօ՛տ եկէք
„ ամէն վաստակածներ և բեռնաւորներ՝ և ես
„ կը հանգըստացնեմ ձեզ՝ իմ լուծըս առէ՛ք
„ ձեզ վերայ՝ և ինձանից սովորեցէ՛ք որ ես հե-
„ զահոգի եմ և սրտով խոնարհ. և ձեր անձին
„ համար հանգիստ կը գտնէք: Ինչուոր իմ լուծս
„ քաղցր է՝ և իմ բեռս թեթև (Մատ. ԺԱ.
„ 28—31: Թէ որ մինն ծարաւէ՝ թո՛ղ ինձ մօտ
„ գայ, և խմէ: (Յօհ. Է. 37.) և ով որ ինձ մօտ
„ կը գայ, ես նորան դուրս չեմ հանիլ: (Յօհ.
„ Զ. 37:) Որդին մարդոյ եկաւ՝ որ կորածները
„ գտնէ և ազատէ (Ղուկ. ԺԹ. 10): Առողջ-
„ ներին բժիշկ պէտք չէ՝ բայց հիւանդներին.

,, Ես չեմ եկել՝ որ արդարներըն կանչեմ դէպի
,, ապաշխարութիւն, բայց մեղաւորներըն (Ղուկ.
,, ե. 31. 32։)
,, Որդին մարդոյ չի եկաւ որ իրան ծառայեն,
,, բայց որ ինքն ծառայէ՝ և շատերի տեղակ իրան
,, անձըն փրկութեան դին տայ (Մատթ. ի. 28)։

Նմանապէս իրան սէրըն դէպի մեղաւոր մարդիք առակով էլ յայտնեց՝ ասելով թէ,
,, Ձեզանից ով է էն մարդն՝ որ հարիւր ոչխար-
,, ունենայ՝ և նորանցից մինըն կորցնէ. նա էն ինն-
,, սուն և ինը չի թողիլ անապատումն (չեօլումն)
,, և էն կորածին ետևէն գնալ մինչև որ գտնէ նո-
,, րան։ Եւ երբոր գըտնէ՝ ուրախանալով իրան ու-
,, սերի վերայ կըդնէ նորան և տուն կըգայ՝ բարե-
,, կամներին և դրացիններին կըկանչէ և նորանց
,, կասէ՝ ինձ հետ ուրախ եղէք՝ որ իմ կորած ոչխա-
,, րըս գտայ։ Ասում եմ ձեզ՝ թէ երկնքումն էլ
,, էսպէս ուրախութիւն կըլինի մին մեղաւորի հա-
,, մար՝ որ ապաշխարէ, քանթէ իննսուն և ինն ար-
,, դարներին համար՝ որ նորանց ապաշխարու-
,, թիւն պէտք չէ (Ղուկ. ժե)։

Էս խօսքերս բաւական են՝ Յիսուսի քաղցր, սուրբ, և կատարեալ վարդապետութիւնըն իմացնելոյ համար։
,, Լաւ վկայեց յօհաննէս նորա համար՝ թէ օ-
,, րէնքըն Մովսէսի ձեռովն տըրվաւ. (բայց) շը-
,, նորհքըն և ճշմարտութիւնն Յիսուսի Քրիս-
,, տոսի ձեռովն էլաւ. Աստուծոյն ոչ ով չի տե-
,, սաւ՝ բայց միածնունդ որդին՝ որ հօր ծոցումն
,, է, նա պատմեց մեզ (Յօհ. ա. 17—1)։

Պատճառն որ՝ հին կտակարանն մէնակ իբր պատկերով յայտնեց Աստուծոյ սէրըն և խորհուրդն · բայց Յիսուս պայծառ լուսով ցոյց տուաւ նորան իբր մեր հայր՝ որ անսահլի սիրով սիրում մեզ և մեր փրկութիւնըն խնդրում ։ Նմանապէս նա ինքն իրան էլ յայտնեց իբր Աստուծոյ միածնունդ որդին , որ հօր կողմիցն եկած էր մեզ փրկիչ լինելոյ համար՝ որ էլ սիրով բորբոքված եղբօր նման բոլոր սրտով ցանկանում որ մարդկանց փրկութիւնըն կատարէ՝ և նորանց մէջ Աստուծոյ արքայութիւնըն հաստատէ՝ մինչև որ ամէններին յաւիտենական կեանքն տանի ։ Վերջն էլ լսեցինք թէ ինչպէս ամէն մեղաւորներին քաղցր ձայնով իրան մօտ կանչում՝ որ միայն հաւատան՝ և իրան մօտենալով բժշկութիւն և երանութիւն ընդունին · ինչու որ ինքն իրան կեանքն ուզում պատարագ անել՝ որ իրան մահովն իրան ողորմելի եղբայրներին յաւիտենական կեանքն շնորհէ ։ Սորեմն տեսնումենք էս ամէն վարդապետութենիցն՝ թէ նա է առաջուց խոստացած փրկիչն՝ որ ամէն մարգարէները խօսքերն պէտք էր կատարէ՝ և սատանայի գործքերն խալաքանդէ՝ նորանց միջիցն՝ որ իրան հաւատան և նորա ձեռովն Աստուծոյ սուրբ և երանելի ժողովուրդ լինին ։ Նորա համար նա էլ ոչ թէ իբր մարգարէ մէնակ Աստուծոյ անունովն էր սովորցնում, բայց իրան վարդապետութեան
,, համար վկայումէր՝ թէ ինչ որ գիտումենք՝ էն
, ենք խօսում՝ և ինչ որ տեսինք՝ էն ենք վկայում։
,, Իսկ ոչ ով չէլաւ երկինքն՝ եթէ ոչ որդին

„ մարդոյ՝ որ երկնքիցն վէր եկաւ՝ նա որ երկն-
„ քումն է (Յօհ. 4. 11—13): Այն բանն որ
„ ձեզ հետ խօսեցայ՝ հոգի է և կեանք (Յօհ. Զ.
„ 64): Այս աշխարհքս լոյս եկի՝ որ ամէն ով որ
„ ինձ հաւատայ՝ խաւարի մէջն չի մնայ: Այլ թէ
„ որ մինն իմ խօսքերս լսէ՝ և չի պահէ՝ նորան
„ ես չեմ դատիլ. պատճառն որ՝ ես չի եկի որ
„ աշխարհքը դատիմ, բայց որ աշխարհքը փըր-
„ կեմ. նա որ ինձ անարգումէ և իմ խօսքերը
„ չէ ընդունում, կայ որ նորան դատէ, էն խօս-
„ քերն որ ես խօսեցայ՝ ես իմ անձնէս չի խօսե-
„ ցայ՝ բայց հայրն որ ինձ ուղարկեց՝ նա ինձ պատ-
„ ուէր տուաւ՝ թէ ինչ պիտի ասեմ՝ և ինչ պի-
„ տի խօսիմ. և գիտումեմ թէ էն պատուիրան-
„ քըն յաւիտենական կեանք է. ուրեմն ինչ որ
„ խօսումեմ, էնպէս եմ խօսում. ինչպէս որ հայ-
„ րըն ինձ ասաց (Յօհ. ԺԲ. 46 մինչև 50):

Բայց ինչպէս որ Յիսուս իրան վարդապետութեանն փրկութեան ճանապարհն յայտնեց և սովորեցուց, էնպէս էլ իրան կեանքովն կատարեալ սրբութեան օրինակ տուաւ՝ և նորանով իրան վարդապետութիւնըն իբր կնքով հաստատեց: Ուղորդ է՝ որ մարմնոյ աչքերն մէնակ աղքատ և խոնարհ՝ և շատ անարգված մարդ են տեսնում, բայց էն խոնարհութեան կերպարանքումն մըտիկ տուօղն հեշտ կարօղ է տեսնել Աստուածային սէրն և սրբութիւնըն: Ամէն տեղ և ամէն ժամանակ իրան հօր սէրն էնքան բորբոքվումէր նորա սրտումն՝ որ խիկի ուրիշ կամք չի մտաւ նորա սիրտն՝ բայց մէնակ հօր սուրբ կամքըն՝ և խիկի ուրիշ գործ չի ճանանչեց և չի ընդունեց՝ բայց մէնակ Աստուծոյ գործըն:

,, Իսուսը համար կարող էր ասել թէ՝ իմ կերա-
,, կուրս էն է՝ որ նորա կամքն անեմ՝ որ ինձ ու-
,, ղարկեց՝ և նորա գործըն կատարեմ (Յօհ. դ.
,, 34). և էլ՝ ահա ես գալիս եմ՝ գրքերի խօսքե-
,, րումն գրված է ինձ համար. ի՛մ Աստուած քո
,, կամքդ կամեցայ կատարել՝ և քո օրէնքըդ իմ
,, սրտի մէջ (պահումեմ) (սաղ. լթ): Եւ իւրան
,, աշակերտներին և ժողովուրդին ասաց՝ չի՛ կար-
,, ծէք՝ թէ ես եկելեմ որ օրէնքըն և մարգարէ-
,, քըն քանդեմ. չեմ եկել քանդելու՝ բայց կա-
,, տարելու համար (Մատթ. է. 17). իմ կամքըս
,, չեմ խնդրում. բայց նորա կամքն՝ որ ինձ ու-
,, ղարկեց (Յօհ. զ. 38): Իսուսը համար էլ
յօժար կամօք պատրաստ էր ամէն նեղութեան
մէջ մտնել՝ միայն թէ իւրան հօր կամքն կա-
տարվի. ինչպէս որ ինքն աղաչանքով ասաց՝
,, թէ՝ ի՛մ հայր եթէ որ կարելի է՝ թո՛ղ՝ էս
,, բաժակս ինձանից անցնէ. բայց չէ՛ թէ ինչ-
,, պէս որ ես եմ ուզում, բայց ինչպէս որ դու
,, (Մատթ. իզ. 31):

Ինչպէս էլ ամէնի վերայ մեծ չարչարանքի մի-
ջումն իւրան անձըն հօր ձեռքն յանձնեց և նորա
սիրովն ամէն կերպ թշնամանք և նեղութիւնք
համբերութենով քաշեց,» և հնազանդ էլաւ
,, մինչևի մեռնիլ՝ և խաչի վերայ մեռնիլ (Փի-
,, լիպ. բ. 8): Իս սիրոյ սուրբ փափագն էնքան
լցնումէր նորա սիրտն՝ որ էլ միշտ իւրան հօր
հետ աղօթքով խօսէր և շատ անդամ առան-
ձին սարերի վերայ գնայ՝ և բոլոր գիշերն էն-
տեղ մնայ որ աղօթք անէ և հօր հետ խօսելովն
իւրան հոգին ուրախացնէ և զօրացնէ (Ղու-կ.

ղ. 12)։ Նա նմանապէս ամէն բարիքների համար գոհութիւն տուաւ նորան՝ և նորա անունն փառաւորեց (Մատթ. ժա, 25 և այլն)։ Թէ և ինքն էլ կեանքն ունէր իրան անձնումն՝ բայց էնպէս էլ իբր մին մարդի պէս էր վարվում՝ և ամէն բան Աստուածանից աղօթքով խնդրումէր՝ և տուողին գոհութիւն էր տալիս՝ որ կատարեալ օրինակ թողնէ մարդկանց։ Բայց ինչպէս որ իրան երկնաւոր հօր հետ միշտ սիրոյ ջերմեռանդութեամբ միաւորված էր՝ էնպէս էլ մարդկանց հետ միշտ և ամէն տեղ անասելի սիրով և ողորմութեամբ վարվումէր։ Թէ և հրեշտակներն նորա ծնընդի ժամանակն աւետիք տուին՝ թէ նա որդի բարձրելոյն է՝ թէ իրանց տէրն է, և թէ յաւիտենական թագաւոր լինելու է՝ բայց էնպէս էլ նա ընտրեց աղքատութեան և խոնարհութեան կերպարանքով երևիլ մարդկանց մէջն՝ որ ամէն աղքատ՝ խոնարհ, և ողորմելի հոգիք առանց վախենալոյ կարենան մօտենալ նորան և բժշկութիւն խնդրել և գտնել։ Էնտուր համար էլ երեք տարի հրէաստանի մէջն օրէցօր ման եկաւ՝ որ ամէն հիւանդութեան և կերպ կերպ թշուառութեանց մէջ լինօղներն ճանանչեն նորան՝ և թէ հոգևոր՝ և թէ մարմնաւոր մխիթարութիւն նորանից խնդրեն և ընդունին։ Ինչու որ իրան սիրով բորբոքված սիրտն ցաւեցաւ մարդկանց վերայ՝ տեսնելով՝ թէ աշխատած և ցըրված էին՝ ինչպէս ոչխարներ որ հովիւ չունին (Մատթ. Թ. 36)։ Էնտուր համար էնքան ջերմեռանդութեամբ վազումէր՝ թէ վարդապե-

տուլթենով՝ և թէ գործով օգնութիւն տալ նորանց՝ որ շատ անգամ էլ հաց ուտելոյ ժամանակ չունէր ։ Թէև իրան սուրբ սիրտն ամէն մեղքն ատեց , բայց ինչպէս էլ մեղաւոր մարդկանց իբր հոգւով հիւանդնէր ամէն սիրով ընդունեց և համբերութենով նորանց հետ վարվեցաւ ․ մինչև որ նորանց հոգին մեղայ թողութենով և ողորմութենով բժշկվեցաւ և սրբվեցաւ ։ Ինչպէս էլ անասելի համբերութենով իրան աշակերտների մարմնաւոր մտածմունքին երեք տարի տարաւ՝ և օրէյօր անփոփոխ սիրով նորանց հետ վարվեցաւ՝ և թէ և լաւ գիտումէր՝ թէ յուդա իսկարիովտացի նորանցից մինն մատնելու էր նորան , բայց ինչպէս էլ ուրիշների նման սիրեց նորան՝ և անփոփոխելի երկայնմտութենով նորա կեղծաւորութիւնն տարաւ ։ Իւր թշնամիների մէջն՝ որ նորան անարգեցին , թշնամանք տուին և սպանել ուզեցին՝ միշտ հեզահոգի էլաւ՝ և նորանց ամէն վատ խօսքերին համբերութենով ընդունեց ․ և թէպէտ հեշտ էր նորան նորանց ամէներին կորցնել ․ բայց նա ողորմած էր նորանց վերայ և աւելի ընտրեց համբերել , քան թէ մընին վնաս տալ ։

Իւր սէրըն խաչի վերայ էլ պահեց ․ ինչպէս որ էնտեղ էլ իրան թշնամիներին համար դէպի իրան հայրըն աղօթք արաւ , և ասաց ․ հա՛յր թողութիւն տուր նորանց ․ ինչու որ չեն գիտում թէ ինչ են անում (Ղուկ ․ ԻԳ ) ․ էնքան իրան անձըն իսկի չի սիրեց , բայց մէնակ մարդկանց , և թշնամիների փրկութիւնն խնդրեց ։

Էնտուր համար էլ ամբարտաւանութեան նը-շան խկի չի երևեցաւ նորա կեանքումն. բայց էնքան խոնարհացրուց իրան անձըն, որ էլ ի-րան աշակերտների միջումն ծառայի նման էր, և էլ նորանց ոտներըն լուաց։

Միայն թէ Աստուծոյ փառքն էր խնդրում ա-մէն նախանձով. և խկի թոյլ չէր տալիս, որ նորա տաճարն և պաշտօնն պղծվի մարդկանցից, և սրա համար առանց խնայելոյ, թէ՛ մեծամեծ-ներին և թէ՛ փոքրներին, թէ՛ քահանաներին և թէ՛ ժողովուրդի մարդկանցն սուրբ նախան-ձով յանդիմանումէր և պատժումէր։ Էսպէս էր Յիսուսի կեանքն, ամէնն սէր, և սրբու-թիւն էր. ինչպէս որ Աստուած սէր և սրբու-թիւն է։ Էնտուր համար համարձակութեա-նով կարող էր ասել հրէաներին թէ, Ձեզանից ով է որ մեղքի համար ինձ յանդիմանէ (Յոհ. ը. 46)։ Եւ Աստուած առաքելոյ բերանովն վկայումէ, թէ նա մեղք չի գործեց, և նենգա-ւորութիւն չի գտվաւ նորա բերանումն (ա. պետր. բ. 22)։ Թէև նա ամէն բանով տկար մարդի նման էր, և միշտ փորձանքի նեղութիւն-ների և բամբասող թշնամիների մէջն կենու-մէր, բայց խկի մին մեղք նորա սիրտն չի մտաւ և իրան գործքերումն խկի չի երևեցաւ, մինչև որ առաքեալն էլ կարող էր համարձակ վկայել, թէ ամէ՛ն բանով փորձվեցաւ մեզ նման. բայց առանց մեղաց (մեղայ) (Եբրայ. դ. 15)։ Էս սուրբ օրինակովս նա ոչ թէ միայն սովորցրուց՝ թէ իրան հաւատացեալներըն ինչպէսի սուրբ կեանք պիտի վարեն, որ նորան նման լինին, բայց ի-

րան վարդապետութիւնըն էլ հաստատեց , թէ
նա Աստուածանից է եկել ամէն մեղք ջնջելու և
Աստուծոյ պատկերըն , (այսինքն) սրբութիւն
և սէր մարդկանց միջումն նորոգելու համար ։
Յայտնի էլ էս սրբութեան մէջն երևեցաւ նո-
րա Աստուածային փառքն , ինչու որ ադամի
մեղանչելուցն ետև մինչև Յիսուսի ժամանակն
և նորանից ետև էլ մինչև էսօր էնպէսի կատա-
րեալ սրբութիւն չի երևեցաւ աշխարհքումս ,
ինչպէս որ Յիսուսի մէջն տեսնումենք . նա էն
մինն է , որ առանց մեղայ էր , և ծնընդիցն մին-
չև 'ի խաչն ամէն բանի մէջն Աստուածային կա
տարեալ սրբութիւն ցոյց տուաւ ։

Բայց նորա Աստուածային փառքն և սէրն
և ողորմութիւնըն էլ աւելի յայտնի երևեցաւ
էն հրաշագործութիւններումն . որ ժողովուրդ-
ներին օգնելու համար նորա միջումն կատարեց։
Մին խօսքով կերպ կերպ հիւանդներ բժշկեց
(Մատթ . ԺԵ . 30։ Ղուկ . Է . 18 ։ Զ . 6 ։) . կու-
րերի աչքերըն բաց արաւ (Յօհ . Թ ։ Մատթ .
Ի . 30 .) . և քարերի ականջներըն բաց արաւ
(Մարկ . Ը . 25 .) . լալիկների լեզուներըն արձա-
կեց (Մատթ . ԺԲ) . և բորոտներըն սրբեց (Մատթ
Ը . 2։ Ղուկ . ԺԷ . 11 ) . և ամէն տեղ որ գնումէր
հիւանդներըն , և ցաւերով տանջվածներըն նո-
րա մօտ էին ժողովվում , և բժշկութիւն էին
առանում։ Բայց ոչ մէնակ մարդոյ բնութիւնըն
նորա հրամանին հնազանդվեցաւ , բայց սատա-
նայի դևերըն էլ չի կարացին նորան հակառակ
կալ , բայց նորա հրամանովն փախան էն մարդ-

կանգնին որ նորանց տանջել էին կերպ կերպ հի-ւանդութեանց տանջանքներով (Ղուկ. դ. 33։ Մատթ. ը. 28. ժէ. 22.)․ և նմանապէս մահի իշ-խանութիւնը քանդելով՝ մեռելներին էլ յա-րութիւն առնել տուաւ (Ղուկ. է. 11։ Յօհ. ժա)։ Կենդանութիւն չունօղ բնութեան վե-րայ էլ իւր ստեղծօղի իշխանութեանը տիրա-պետեց. ինչուոր ջուրը գինի փոխեց։ (Յօհ. բ. 1.)։ Քիչ հացով չորս և հինգ հազար մարդ-կանց կերակրեց (Մատթ. ժդ. 19. ժե. 36—37). և ծովի և քամու սաստիկ զօրութիւնը էլ իրան հրամանին հնազանդացրուց (Մատթ. ը. 23.)։ Այս ամէն հրաշքները ոչ թէ ծածուկ գործեց. բայց միշտ մեծ ժողովուրդների միջումն՝ որ ա-մէնքն էլ կարօղ էին իրանց աչքովն տեսնել և վկայել։ Անոր համար թշնամիները էլ չի կարային նորա հրաշքները ուրանալ, բայց շատ ժամանակ խոստովանեցին։ Եւ ոչ թէ մարգարէներին նման գործեց էս հրաշքները, որ միշտ Աստուծոյ յայտնի հրամանովն կամ աղօթ-քով կատարեցին նորանք, բայց նա ամէն տեղ և ամէն ժամանակ իբր ուրիշ հասարակ գործ արաւ նորանց, և նորանով ցոյց տուաւ, թէ ստեղծօղի պէս ամէն երևելի և աներևոյթ ըս-տեղծուածների վերայ իշխանութիւն ունի, և նորանց կարօղ է փոխել իրան կամքովն և հրա-մանովն. ինչպէս որ կամենայ։ Բայց նա եկել մին ժամանակ պարծենալոյ կամ իրան անձը ցոյց տալոյ համար հրաշք չի գործեց. բայց որ Աստուծոյ անունը և սէրը նորանցով փառա-ւորէ, և մարդկանց նորա մօտ տանի, և որով-

հետև իւրան սիրոն միշտ բորբոքվումէր սիրով
դէպի մարդիկը՝ էնտուր համար նա խղճայ նո-
րանց ցաւերի և տանջանքի համար և ողորմե-
լով նորանց օգնական էլաւ և մարմնաւոր օգ-
նութիւն տալով՝ նա մանաւանդ կամեցաւ հա-
կացնել նորանց՝ թէ հիմի Աստուածանից է
եկել էն փրկիչն, որ ոչ թէ մենակ մարմնոյ,
բայց հոգւոյ բժշկութիւն և փրկութիւն է
շնորհում: Էնտուր համար նա միշտ ջանք ա-
րաւ, որ մարդկանց սովորցնէ, թէ որքան հո-
գևոր բժշկութիւն պէտք է նորանց, որ չի կոր-
չին. և էն ժամանակ որ մին մարդ մօտացաւ
նորան որ ոչ թէ մենակ մարմնով էր հիւանդ,
բայց աւելի էլ հոգւոյ տրտմութիւն ունէր ի-
րան մեղաց համար. նա ամենիցն առաջ մեղաց
թողութիւն շնորհեց նորան. և նրանով նորա
հոգին բժշկեց: Ահա յայտնի ցոյց տուաւ, թէ
նա ոչ թէ մենակ մարմնոյ բժիշկ է. բայց մա-
նաւանդ հոգւոյ. և իւրան Աստուածային կարո-
ղութիւնըն նշանց տուաւ, որ երկրիս վերայ մե-
ղաց թողութիւն տայ նորանց, ողգջանալով
մօտենողն նորան (Մատթ. Թ. 1. Ղուկ. Է. 36—50):

Էնպէսի հոգւոյ բժշկութիւնները ամէ-
նիցն մեծ հրաշքներ էին. ինչու որ նորանցով
նշանակեց, թէ նա ոչ մենակ էս երկրիս վե-
րայ օգնական է լինում, բայց էլ կարօղ է հի-
ւանդ և մեղքով մեռած հոգւոյ յաւիտենական
կեանքըն շնորհել: Ուրեմն յայտնի էլաւ նո-
րանցով. թէ նա էն փրկիչն է, որ ամէններին
ազատելոյ համար աշխարհքս եկաւ: Էնտուր
համար էլ նա խնդրեց մարդկանցից, որ իւրան

գործքերը՛ն տեսնելով՝ հաւատան նորան և իբր
իրանց փրկիչ ընդունեն։ Երբ որ Յօհաննէ-
սի աշակերտներն հարցնումէին նորանից թէ
դո՞ւ ես խոստացված փրկիչն. նա պատասխան
տուաւ նորանց՝ թէ «գնացէ՛ք Յօհաննէսին պատ-
,, մեցէ՛ք ինչ որ լսեցիք և տեսիք. կուրերն տես-
,, նումեն, կաղերն գնումեն, բորոտներն սրբ-
,, վումեն, խուլերն լսումեն, մեռելներն յարու-
,, թիւն են առնում, և աղքատներին աւետիք են
,, տրվում (Մատթ. ԺԱ. 5)։ Եւ հրեաներին
ասաց թէ՝

,, ես Յօհաննէսից էլ աւելի մեծ վըկայութիւն
,, ունիմ. էն գործքերը՛ն որ հայրն տուաւ ինձ՝
,, որ կատարեմ նորանց՝ էլ էն գործքերը՛ն՝
,, որ գործումեմ՝ նորանք վկայումեն ինձ հա-
,, մար՝ թէ հայրն ուղարկեց ինձ (Յօհ. Ե. 96)։
,, Եթէ իմ հօրս գործքերն չեմ գործում՝ ինձ
,, մի՛ հաւատաք. բայց եթէ որ գործումեմ՝ թէ
,, և ինձ չի հաւատաք՝ բայց գործքերին հաւա-
,, տացէ՛ք՝ որ գիտենաք և ճանաչէք՝ թէ հայրն
,, իմ մէջն՝ և ես հօր մէջն (Յօհ. Ժ. 37—38)։

Նմանապէս իրան փիլիպպոս աշակերտին ա-
սաց. թէ

,, չե՞ս հաւատում որ ես հօր մէջն եմ, և հայրն
,, իմ մէջն. էն բանը՛ն որ ես ձեզ հետ խօսու-
,, մեմ չէ թէ իմ անձնէս եմ խօսում, բայց
,, հայրն որ ինձանում բնակված է՝ նա է էն
,, գործքերը՛ն գործում։ Հաւատացէ՛ք ինձ, թէ
,, ես հօր մէջն եմ, և հայր իմ մէջն է։ Ապա թէ
,, չէ՝ գոնեա գործքերին համար հաւատացէ՛ք ինձ
,, (Յօհ. ԺԴ. 10—12)։

Հիմիկ թէ Յիսուսի ծնունդըն մտածենք՝ թէ նորա մարդասպանութեանն, կամ նորա կեանքի վախճանին և կամ նորա հրաշքներին միտք տանք որ տեղ որ մեր հոգւոյ աչքերն դառնան՝ ամէն տեղ և ամէն բաների մէջն նորա Աստուածա-յին փառքն մարդկային կերպարանքի մէջն յայտ-նի երևումէ՝ և տեսնըվում։ Ինչուր համար էլ իրան աշակերտներից մինն վկայումէ՝ թէ
,, (Աստուծոյ) բանն մարմին էլաւ. և մեր մէջն
,, բնակվեցաւ, և նորա փառքըն տեսինք՝ ինչպէս
,, հօրից էլած միածնունդ որդւոյ փառքըն՝ շը-
,, նորհքով և ճշմարտութեամբ լիքն (Յօհ. ա.
14)։ Եւ երբոր Յիսուս աշակերտներից հարց-րուց՝ թէ «դուք ո՞վ էք ասում ինձ համար որ
,, լինիմ. սիմոն պետրոսըն ամէնների տեղակ
պատասխան տուաւ՝ և ասաց.» դու ես Քրիս-
,, տոսըն, կենդանի Աստուծոյ որդին. (Մատթ.
,, Ժզ. 15—16)։ Բայց ամէնից յայտնի նորա
Աստուածային փառքն երևեցաւ էն ժամանակն՝
,, որ պետրոսին, և յակոբոսին և յօհաննէսին ի-
,, րան հետ առաւ և մին սար գնաց աղօթք անե-
,, լոյ համար։ Ինչու որ՝ երբոր նա աղօթք էր
,, անում՝ նորա երեսի կերպարանքն ուրիշ կերպ
,, էլան՝ և նորա հագուստն փոխվեցաւ և սպիտակ
,, փայլուն էլաւ։ Եւ ահա երկու մարդիք նորա
,, հետ խօսումէին՝ որ մովսէսն և եղիան էին փառ-
,, քով երևեցած՝ և նորա վախճանին վերայ էին
,, խօսում, որ երուսաղէմումն պէտք էր կատարէ.
,, (Ղուկ. Թ)։ Ապա պետրոսն ասաց Յիսուսին.
,, Տէ՛ր լաւ է որ մենք էստեղ կենանք. թէ որ
,, կամենաս՝ երեք խորան (չադըր) կըշինենք՝ մինը

,, քեզ համար, մինը Մովսէսին և մինը Եղիային։
,, Եւ դեռ քանի նա խօսումէր՝ ահա մին լուսա-
,, ւոր ամպ նորանց վերայ շուք արաւ. էն ամ-
,, պիցն ձայն էլաւ և ասաց. դա է իմ սիրելի որ-
,, դին՝ որ դորան հաւանեցեմ՝ դորան ականջ
,, դրէք։ Երբոր աշակերտներն լսեցին՝ իրանց
,, երեսներին վերայ ընկան՝ և շատ վախեցան։ Եւ
,, Յիսուս մօտացաւ՝ նորանց բռնեց և ասաց.
,, վեր կացէք և մի վախենաք. իրանց աչքերըն
,, բարձրացրին՝ և ոչ ով չի տեսին՝ բայց միայն
,, Յիսուսին (Մատթ. ԺԷ.)։ Յիսուս իրան փառ-
քըն որ մարդոց կերպարանքի մէջն ծածկված
էր իսկի մին ժամանակ էնքան չի յայտնեց՝ ինչ-
պէս որ էս տեղս. ինչու որ՝ ոչ թէ մէնակ իրան
կերպարանքըն փառաւոր էլաւ՝ բայց հին կտա-
կարանի գլխաւոր մարգարէներն էլ երևեցան
և նորան՝ և նորա փրկութեան գործոյն որ ե-
րուսաղէմումն պիտէր կատարէ, վկայութիւն
տուին՝ և Աստուած էլ ամպի միջիցն վկայեց՝
թէ դա է իմ սիրելի որդին, էնորա համար
հիմիկուց ետև ոչ Մովսէսին, և ոչ Եղիային.
բայց դորան ականջ դրէք։ Քանի՞ անասելի
փառաւոր յայտնութիւն էլաւ էս։ Էնորա
համար աշակերտներն էլ չի կարողացան մնա-
նալ նորան. բայց շատ ժամանակից ետև պետ-
րոսն ամէններին առաջ վկայումէ թէ՝, ոչ թէ
,, մենք սուտումուտ հնարած խօսքերի ետևէն
,, գնալով մեր Տէր Յիսուսի Քրիստոսի զօրու-
,, թիւնըն և գալըն ցոյց տուինք ձեզ, բայց յա-
,, տուկ մեր աչքովն տեսինք նորա մեծութիւնըն.
,, ինչու որ Աստուածանից և հօրիցն փառք և պա-

,, ուխ տուաւ՝ երբ որ էն մեծ վայելուչ փառքիցն
,, էնպէսի ձայն եկաւ՝ թէ դա է իմ սիրելի որ-
,, դին՝ որ նորան հաւանել եմ. և էս երկնքիցն
,, եկած ձայնըս մենք ինքնին լսեցինք՝ որ նորա
,, հետ սուրբ սարին վերայ էինք (Բ. պետ. Ա.
,, 16—18):

Էսպէսի կերպով Յիսուս երեք տարի հրէա-ների մէջն իրան կեանքն վարեց և իրան կեանքն ցոյց տուաւ մարդկանց՝ թէ մարգարէների բե-րանովն խոստացած փրկիչն է: Բայց հրէաների սրտերն էնքան մարմնաւոր և Աստուածա-նից հեռացած էլան՝ որ իսկի հոգւոյ փրկու-թեան համար հոգս չի քաշեցին, բայց մէնակ մին երկրաւոր փրկիչ, և զօռով և փառաւոր թագաւոր ուզեցին, և նորա գալուն մտիկ տու-ւին՝ և նրա համար նորանց աչքերն կուրացած էին՝ որ Յիսուսի խոնարհ և աղքատ կերպա-րանքումն Աստուծոյ փառքըն չի տեսին, բայց նորան անարգեցին և ոչ ինչ համարեցին:

Եւ որովհետև Յիսուս իրան լուսաւոր վար-դապետութենովն նորանց յանցանքներն և մեղ-քերըն յայտնեց, նորանց փուճ աւանդութիւն-ներըն իբր անպիտան ցոյց տուաւ. նորանց դրսի արարողութիւններըն անարգեց, և նո-րանց կեղծաւոր Աստուածպաշտութեան պըղ-ծութիւնըն յայտնի յանդիմանեց և պատժեց. էնտուր համար էն ազգի առաջնորդներն և քա-հանաներն շատ բարկացան նորան վերայ, և ամէն կերպով ջանք արին որ նորան սպանա-նեն, և ապա իրանց խաւարի մէջն կարենան հանգիստ նստիլ և մեղք գործել: Բայց էնքան

էր Յիսուսի իմաստութիւնն և կարողութիւնն, որ իսկի չի կարացին նորան հակառակ կալ՝ կամ նորան բռնել. մինչև իրան ամէն գործըն առաջուց պատրաստեց. և ապա մարգարէների խօսքերըն կատարելու համար՝ եկաւ և ինքն իրան տուաւ նորանց ձեռքն։

Մինչև հիմիկ նա իրան ամէն խօսքերովն և գործքերովն ցոյց էր տուել՝ թէ նա է Աստուածանից եկած փրկիչն և շատ մարդիք հաւատացին նորան. բայց նա շատ ժամանակ նշանակեց՝ թէ իրան յատուկ գործն էն է՝ որ իրան կեանքըն մարդկանց համար փրկութեան գին տայ՝ և նորանց տեղակ մեռնելով՝ ապրեցնէ նորանց։ Ընտուր համար ամէն բան էնպէս կարգեց առաջուց՝ որ իրան գործոց հիմունքն միշտ հաստատ մնան՝ թէ և ինքն մարմնովն էս աշխարհքիցս հեռացած լինի։ Բայց էս պատրաստելս էլ ոչ թէ մարդկանց իմաստութեան կեօրէ կարգված էր՝ որ մէնակ զօռով, հարուստ և իմաստուն մարդկանց են ընտրում իրանց բաներըն հաստատելու համար՝ բայց Յիսուս մէնակ տասներկու խոնարհ, տգէտ և ոչինչ համարված ձուկ որսօղ կամ կեօմրուկճութիւն անօղ մարդիք ընտրեց՝ որ իրան աշակերտներ լինին և երեք տարի օրէցօր իրան հետ լինելով՝ իրան ամէն կեանքըն և գործերըն տեսնեն, և իրան վարդապետութիւնըն լսեն, և նրանով կատարելապէս պատրաստ լինին՝ որ յետոյ հաստատ ճշմարտութենով կարենան վկայութիւն տալ նորա ամէն գործքերին համար, և մարդկանց մէջըն էն փրկութիւ

նըն քարոզել՝ որ նորա ձեռօքն պէտք էր կատարիլ։ Բայց նորանց միտքն էլ շատ ժամանակ էնքան մարմնաւոր էր՝ որ մէնակ մին երկրաւոր և մարմնաւոր փրկութիւն և թագաւորութիւն ցանկացան և յուսացան․ և թէպէտ երեք տարի Յիսուսի հետ էլան, և նորա Աստուածային փառքըն տեսին՝ և նորան յայտնի Աստուծոյ որդի խոստովանեցին, բայց էնպէս էլ չի հասկացան՝ թէ ինչ պիտի լինի Յիսուսի մեռնելըն և չարչարանքի մէջ մտնելըն։ Երբ որ առաջին անգամ իրան չարչարվիլն յայտնեց նորանց՝ պետրոսն նորան առաւ և խրատելով նորան յորդորեց՝ թէ էս բանս հեռու լինի քեզանից։ Բայց որքան որ նորանց մարմնաւոր միտքն հակառակ էր Յիսուսի չարչարանքին, էնքան էլ աւելի նա ջանք արաւ՝ որ հասկացնէ նորանց։ Էնդուր համար ամէնից յայտնի պատմեց նորանց իրան չարչարվիլըն և մեռնելըն էն ժամանակն՝ որ սկսեց երուսաղէմ գնալ՝ որ էնտեղ ինքն իրան անձըն չարչարանքի մէջ տայ։

,, Ահա (ասաց) հիմիկ գնումենք երուսաղէմ և
,, ամէնն կըկատարվի՝ որ որդւոյ մարդոյ համար
,, մարգարէից ձեռօքն գրված է․ ինչու որ հե-
,, թանոսների ձեռքըն կըմատնվի՝ և ծաղր կա-
,, նեն նորան՝ և կըծեծեն և կըսպանեն նորան՝ և
,, երեք օրումն յարութիւն կառնէ (Ղուկ. ԺԸ.
,, 31—32)։ Բայց էնպէս էլ նորա խօսքըն չիմացան, բայց ծածուկ մնաց նորանցից։ Ուրեմըն նորանք անչափ շատ տխուր էին էն մեծ գործոյ համար՝ որ պէտք էր կատարէր քանի մի ժամանակից ետև․ հենց իրանք էլ ուղէին մար-

դիք էին՝ և դեռ մարմնաւոր տկար՝ և ամէն չարչարանքից փախչող էին ։ Ուրեմն ինչպէս կարող էին Յիսուսի մեռնելուցն ետև առաջ գալ և զօրաւոր քահանայապետներին և իշխաններին, և ամէն ժողովուրդին դէմ՝ վկայել՝ և Յիսուսի վարդապետութիւնին հաստատութենով՝ և համարձակութեանով ոչ միայն հրէաների բայց էլ հեթանոս ազգերի մէջն քարոզել ։ Ամէն կողմանէ ինչպէս էր երեւում՝ թէ էական մարդկանց ձեռամն Յիսուսի մեծ գործն իսկի կարող չէ յաջողակ լինել, բայց պիտի խափանվի ։ Ուղորդ որ ինչպէս էր երեւում մարդկանց առաջի՝ բայց Յիսուս ոչ թէ էս մարդկանց՝ և նորանց տկարութեան վերայ շինեց իրան գործըն, բայց ինքն խոստացաւ նորանց՝ որ էն ժամանակն էլ որ մարմնովն հեռացած լինի՝ հոգւովն միշտ լինի նորանց հետ, և նորանց առաջնորդէ, զօրացնէ, և ամէն բաները կատարէ ։

Ինքը համար ասաց թէ՝ Ձեզ որբ չեմ
,, թողուլ ։ Ձեզ մօտ կըգամ ։ Քիչ մի ժամանա-
,, կից (ետև) աշխարհքս էլ չի տեսնիլ ինձ ։ բայց
,, դուք կըտեսնէք ինձ ։ ինչու որ ես կենդանի
,, եմ, և դուք էլ կենդանի լինելու էք ։ Էն օրն
,, դուք կիմանաք թէ ես իմ հօր մէջն եմ և դուք
,, ինձանում, և ես ձեզանում ։ (Յով. ԺԴ.
18—20) ։

Մինչէլ ասաց թէ՝ „կացէ՛ք ինձանում և ես
,, ձեզանում՝ ինչպէս որ ուռն իրան անձնէն կա-
,, րող չէ պտուղ բերել թէ որ որթին մէջ հաս-

,, տատուած չի լինի, ինչպէս էլ դուք, թէ որ
,, ինձանում հաստատուած չի լինիք: Ես որթն
,, եմ, և դուք ուռ. ով որ ինձանում հաստատ-
,, ված է և ես նորանում, նա շատ պտուղ կըբե-
,, րէ, ինչու որ՝ առանց ինձ դուք ոչինչ կարող-
,, չէք անել: Եթէ դուք ինձանում կենաք և
,, իմ խօսքերս ձեզանում կենան, ինչ որ կամե-
,, նաք խնդրեցէ՛ք՝ և կըլինի ձեզ (Յօհ. ԺԵ.
,, 4—7.). ինչ որ խնդրէք իմ անունովս՝ էն կա-
,, նեմ. որ հայրն որդումն փառաւորվի. (Յօհ.
ԺԴ. 13):

Ինքն յայտնի և հաստատ պատմեց իրան ա-շակերտացն առաջուց՝ թէ ինքն միշտ նորանց հետ միաւորված կըլինի՝ և նորանց ամէն հար-կաւոր լոյս և զօրութիւն կըշնորհէ՝ թէ և ին-քըն մարմնովն հեռացած լինի նորանցից: Եւ որ հաստատ իմանան նորանք թէ նա ի՞նչ կեր-պով պիտի լինի իրանց հետ, էլ աւելի յայտ-նի պատմեց նորանց՝ թէ սուրբ հոգին կուղար-կէ նորանց վերայ որ իրան տեղակ ամէն ճշմար-տութիւն սովորցնէ և ամէն բանի մէջն առաջ-նորդէ նորանց էնպէսի յայտնութենով՝ ինչ-պէս որ ինքն սովորցրուց նորանց: Ինտուր համար ասաց թէ՝ »

Ես կաղաչեմ հօրըն և ուրիշ մխիթարիչ կըտայ ձեզ որ յաւիտեան ձեզ հետ մնայ (Յօհ. ԺԴ. 16)
,, հիմիկ ես ինձ ուղարկողին մօտ եմ գնում. էլ
,, լաւ է ձեզ համար, որ ես գնամ. պատճառն որ՝
,, եթէ ես չի գնամ՝ մխիթարիչն ձեզ մօտ չի գայ.
,, բայց եթէ գնամ. նորան կուղարկեմ ձեզ մօտ:

,, Եւ նա երբ որ գայ, աշխարհքին կը յանդիմա-
,, նէ մեղաց համար, և արդարութեան համար, և
,, դատաստանի համար. մեղաց համար՝ որ ինձ
,, չեն հաւատում. արդարութեան համար՝ որ
,, ես իմ Հօրս մօտն եմ գնում, և էլ չէք տես-
,, նիլ ինձ. դատաստանի համար՝ որ էս աշխարհ-
,, քիս իշխանն դատապարտուած է: Էլ շատ բան
,, ունիմ ասել ձեզ՝ բայց հիմիկ կարող չէք տա-
,, նիլ: Որ ժամանակ նա՝ ճշմարտութեան հո-
,, գին՝ կըգայ, ամէն ճշմարտութենով կառաջ-
,, նորդէ ձեզ. պատճառն որ՝ նա ոչ թէ իրան
,, անձնէն բան ինչ կը խօսի, բայց ինչ որ կը-
,, լսէ՝ էն կը խօսի՝ և գալու բաներըն կը պատ-
,, մէ ձեզ: Նա կըփառաւորէ ինձ՝ ինչու որ իմի-
,, ցըն կառնէ և ձեզ կըպատմէ: Ամէն ինչ որ
,, Հայրն ունի, իմն է. նրա համար ասացի ձեզ՝
,, թէ իմիցս կառնէ և ձեզ կըպատմէ. (Յօհ.
,, Ժզ. 7—15):

,, Մին էլ ասաց թէ՝ մխիթարիչն՝ սուրբ հո-
,, գին՝ որ Հայրն նորան իմ անունովս կուղար-
,, կէ ձեզ՝ նա ամէն ինչ որ ձեզ ասացի՝ կը սո-
,, վորցնէ ձեզ՝ և ձեր մտքերըն կըբերէ (Յօհ.
,, Ժդ. 26):

,, Որ ժամանակ մխիթարիչն կըգայ՝ որ նորան
,, ես Հօրիցն կուղարկեմ ձեզ՝ ճշմարտութեան
,, հոգին, որ Հօրիցն է դուրս գալիս՝ նա ինձ հա-
,, մար կըվկայէ. և դուք էլ կը վկայէք՝ ինչուոր
,, սկիզբիցն ինձ հետ էիք (Յօհ. ԺԵ. 26—27):

Էս խօսքերիցս յայտնի է՝ թէ ինչպէս որ Յի-
սուս մինչև հիմիկ բերանով սովորցրել էր աշա-

կերտոններին՝ ինչպէս էլ սրանից ետև սուրբ Հոգին սրտի և մտքի ներսումն պիտի լուսաւորէ, սովորցնէ, և առաջնորդէ նորանց՝ ինչպէս որ Յիսուսի ամէն խօսքերըն և ուսմունքներըն իրանց միտքն հաստատ պահեն և Աստուծոյ ամէն ճշմարտութիւնըն կատարելապէս իմանան, և առանց մոլորվելոյ՝ ուրիշներին էլ կարենան յայտնել և քարոզել ։ Բայց նա ոչ թէ միայն աշակերտներին հոգումն կը վկայէ, բայց աշխարհքին էլ՝ այսինքն ամէն մարդկանց էլ ցոյց կըտայ՝ թէ Յիսուսին չի հաւատալն և նորան չի ընդունելն՝ ամէն մեղաց բռկիզըն և աղբիւրն է, թէ Յիսուսն մեռնելով և Հօր մօտ գնալով կատարեալ արդարութիւն է պատրաստել ամէններին համար, և թէ նորա ձեռովն սատանայի իշխանութիւնն խափանվել է։ Որեմն ինքն՝ Աստուծոյ Հոգին՝ ոչ թէ միայն դըրսանց խօսքերի ձայնովն՝ բայց էլ սրտերի մէջն Աստուածային զօրութեանովն Յիսուսի վարդապետութիւնըն և փրկութիւնըն կը յայտնէ մարդկանց, և նորանով աշակերտաների քարոզութիւնըն կը հաստատէ, և պտղաբեր կանէ ։ Որեմն Աստուծոյ սուրբ Հոգին է՝ որ քարոզողներին և լսողներին կը լուսաւորէ և կառաջնորդէ ։ Սրա համար Յիսուսն էլ ասաց աշակերտներին թէ՝ » իսկի հոգս չի անէք՝
,, թէ ինչպէս՝ կամ ինչ պիտի խօսէք ։ Ինչու որ
,, էն ժամումն կը տրվի ձեզ ինչ որ պիտի խօսէք ։
,, Պատճառն որ՝ չէ թէ դուք էք որ կը խօսէք,
,, բայց ձեր Հօր Հոգին է՝ որ ձեզանում կըխօսի
,, (Մատթ. Ժ. 19—20) ։

Ասա յայտնի է՝ թէ Աստուծոյ հոգին ինչ-պէս որ մարդկանց սրտերում Յիսուսի փըր-կութիւնը կը վկայէ, էնպէս էլ Աստուծոյ զօրութեանը առաքեալներում կը գործէ՝ որ նորանք ոչ թէ իրանց մտածմունքները, բայց միշտ և ամէն տեղ հոգւոյ յայտնութիւնը և Աստուծոյ բանը խօսին, և էնտուր համար նորանք չեն, որ կը սովորցնեն, բայց ինքն Աս-տուծոյ հոգին է, որ նորանց սրտերը լուսա-ւորելով և շարժելով՝ նորանց խօսել կը տայ: Ահա էս է ամէնի վերայ հաստատ հիմունքն, որ Յիսուս իրան գործոյ համար դրաւ. նորանք էնքան հաստատ էին՝ որ ոչ աշակերտներին տը-կարութիւնն և ոչ էլ աշխարհքի և սատանա-յի թշնամութիւնն կարող էր շարժել նորանց: Ինչու որ՝ ոչ թէ մարդիք՝ բայց ինքն Յիսուս Աստուծոյ հոգւոյն զօրութեանը միշտ և ամէն տեղ իրան աշակերտացն և ամէն իրան հետե-ւողներին հետ կը լինի, և նորանց կառաջնոր-դէ և կը պահէ:

Էնտուր համար նա համարձակ հաստատու-թեամբ առաջուց պատմեց՝ թէ էն երուսաղէմ որ հիմիկ էնքան չարութեամբ իրան փըկիչըն և թագաւորըն, և նորա ծառաները անար-գում և չարչարում է, շուտով պիտի կործան-վի. ինչու որ՝ իրան չարութեան չափն լցված է: (Ղուկ. իա. 23—24: Մատթ. իդ. 2):

,, Բայց Աստուծոյ թագաւորութեան աւետա-
,, րանն ամէն աշխարհքում պիտի քարոզվի՝ որ
,, ամէն հեթանոսներին վկայութիւն լինի, և ա-
պա վերջն կը գայ (Մատթ. իդ. 14): Ու-

րեմն Քրիստոսի աւետարանն ամէն հեթանոսներին կը քարոզվի՝ որ ամէնքն փրկութեան Ճանապարհըն ճանանչեն և Աստուծոյ թագաւորութիւնըն մտնեն՝ մինչև աշխարհքի վերջն էս աւետարանս կը քարոզվի՝ մինչև որ ամէն երկրի վերայ և ամէն ազգերի մէջն տիրէ ։

Ինչու համար ոչ աշխարհքն և ոչ սատանայն կը կարենայ նորա զօրութիւնըն խափանել՝ և ոչ էլ չարչարանքներով և սպանմունքներով նորա ծառաներին յաղթել ։ Որքան որ աշխարքի թագաւորներն և իշխաններն կը հալածեն նորանց, նորանք միշտ կը զօրանան՝ մինչև որ վերջն գայ՝ որ ինքն Յիսուս մին էլ երևի փառքով և իրան ամէն թշնամիներըն որ սատանային աւելի սիրեցին քան իրանց փրկիչն՝ խոպառ կը յաղթէ և կը դատէ, և ապա արդարներին երկնքի արքայութիւնն կը տանի, և ամբարիշտներին յաւիտենական կրակն կը քցէ · (Ղուկ · իա · 12—18 ։ Մատթ · իդ · 30—31 · 35—36 · իե · 46 ) ։ Ինքն յայտնութենով Յիսուս ամէն գալու բաներըն առաջուց պատմեց իրան աշակերտներին՝ և նորանով ոչ թէ մենակ նորանց սիրտըն քաջալերեց՝ բայց էլ յայտնի նշանակեց՝ թէ նա ինքն է որ էն ամէն բաներըն կը կառավարէ, և յաղթութենով գլուխ կը տանի · բայց երբոր Յիսուս էս խօսքերովս իրան աշակերտներին իրան չարչարվիլըն, մեռնիլըն և երկինքն համբառնալըն և սուրբ հոգւոյ գալըն և աւետարանի մինչև աշխարհքի վերջն քարոզվիլըն յայտնեց, ապա

պատրաստութիւն տրաւ որ իրան գլխաւոր գործի մէջն մտնէ, և մարգարէների խօսքերն կատարելով՝ իրան կեանքն ամէն մարդկանց փրկութեան համար պատարագ ընծայէ։ Ընտուր համար երուսաղէմ քաղաքն գնաց զատկի ժամանակումն՝ և թագաւորական կերպով մտաւ նորա մէջն. որ մին էլ նորանց ցոյց տայ՝ թէ ինքն է իսրայէլի փրկիչն և յաւիտենական թագաւորն՝ թէ և հաստատ գիտումէր և դաւրն արտասունքով յայտնումէր՝ թէ իսրայէլն իրան փրկիչն կանարգէ և կըսպանէ։ Բայց էլ էնպէս սուրբ նախանձով և Աստուածային իշխանութենով Աստուծոյ տաճարն ամէն պըղծութենիցն սրբեց՝ և քահանայապետների և առաջնորդների անիրաւութիւնըն և կեղծաւորութիւնըն յանդիմանեց, և Աստուածանից գալու պատիժըն և նորանց քաղաքի կործանվիլըն նորանց նշանակեց։ Բայց ինչ որ էլ ասաց՝ ազգի մեծաւորներըն իսկի չի զղջացան՝ բայց էլ աւելի բարկացան և ամէն կերպ պատրաստութիւն արին որ նորան սպանեն, և ապա հանգիստ ունենան իրանց անիրաւութեանց մէջ։ Ընտուր համար էլ ջանք արին որ ժողովուրդներին հաւանացնեն՝ և Յիսուսին իբր մին մոլորացնօղ մարդ ցոյց տան նորանց որ արժանի լինի մահով դատապարտվիլ։ Վերջն Յուդայ Իսկարիոտացին՝ Յիսուսի տասներկու աշակերտներիցն մինն՝ եկաւ և իրանց ագահութեան ցանկութիւնըն լցնելոյ համար խոստացաւ քահանայապետներին և ժողովուրդի ծերերին՝ որ

Յիսուսին նորանց ձեռքն մատնէ, միայն թէ երեսուն արծաթի փող տան նորան.

Այս ամէնըն Յիսուս գիտայ՝ և իրան աշակերտներին յայտնեց, և երբ որ նորանց մխիթարեց և քաջալերեց. ապա ինքն իրան կամքովն նորանց հետ գեթսեմանի կոչված տեղն գնաց՝ որ առաջուց գիտումէր՝ թէ էնտեղն պիտի մատնվի քահանայապետների ձեռքն: Բայց արժան է որ նորա չարչարանքի պատմութիւնըն հենց էն բառերովն գրենք՝ որ նորանց Աստուծոյ հոգին ինքն պատմեց մեզ աւետարանումըն:

Աւետարանիչներն էսպէս են պատմում՝ թէ էն ժամանակն Յիսուս եկաւ իրան աշակերտներին հետ մին գիւղ՝ որ նորա անունն գեթսեմանի էր. նորանց ասաց՝ էդ տեղ նստեցէ՛ք մինչև ես գնամ աղօթք անեմ. և պետրոսին և զեբեդեայի որդիքն իրան հետ առաւ՝ սկսեց տրտմիլ և հոգս քաշել. Էն ժամանակն նորանց ասաց՝ իմ հոգիս մեռնելոյ չափ տրտմած է. էս տեղ կացէք և ինձ հետ արթուն մնացէ՛ք: Ու մինքիչ առաջ գնաց՝ իրան երեսի վերայ ընկաւ՝ աղօթք արաւ՝ և ասաց, ի՛մ հայր. թէ որ կարելի է, էս բաժակս ինձանից թեղ անցնէ. բայց չէ թէ ինչպէս ես եմ ուզում, բայց ինչպէս դու (Մատթ. Իզ. 36. 9):

Ու հրեշտակ երևեցաւ նորան՝ և զօրացնումէր նորան, և մեծ խռովութեան մէջ էր, և աւելի ջանքով աղօթումէր. և քրտունքն վազումէր նորանից ինչպէս արիւնի կաթիլք, և

կլոր կլոր թափվումէր երկրի վերայ (Ղուկ. ԻԲ 43—44)։ Ապա եկաւ աշակերտներին մօտ և գտաւ նորանց քընի մէջ և ասաց պետրոսին. Ի՞նչպէս մին ժամ (սահաթ) էլ չի կարայիք ինձ հետ արթուն լինիլ։ Արթո՛ւն կացէ՛ք և աղօթք արէք՝ որ փորձանքի մէջ չընկնիք, հոգին յօժարէ՝ բայց մարմինն տկար։ Մին էլ երկրորդ անգամ Յիսուս գնաց և աղօթք արաւ և ասաց. Ի՛մ հայր՝ թէ կարելի է՝ որ էս բաժակս ինձանից անցնէ. ապա թէ չէ՝ կըխմեմ նորան. թո՛ղ քո կամքդ լինի։ Եւ մին էլ եկաւ նորանց քընի մէջ գտաւ. ինչու որ նորանց աչքերն ծանրացել էին։ Նորանց թողեց և գնաց և երրորդ անգամ աղօթք արաւ և մինէլ էն խօսքըն ասաց։

Էն ժամանակն աշակերտներին մօտ եկաւ. և նորանց ասաց՝ հիմիկվանից ետև քո՛ւն էլէք և հանգի՛ստ առէք, ինչու որ հրէս հասել է ժամանակն և որդին մարդոյ մեղաւորաց ձեռքըն կըմատնվի։ Եւ դեռ քանի որ նա էն խօսումէր, ահա յուդա՝ էն տասներկուսից մինն՝ եկաւ և նորա հետ մեծ ամբոխ թրերով և փայտերով քահանայապետներից և ժողովուրդի ծերերից (Մատթ. ԻԶ. 40—47)։ Եւ նորանք ձեռները քցեցին նորան և բռնեցին նորան (Մարկ. ԺԴ. 46)։ Էն ժամանակն ամէն աշակերտներն թողին նորան և փախան։

Բայց նորանք Յիսուսին բռնեցին և կայիափա քահանայապետին մօտ տարան որ էնտեղ կարդայօղներն և ծերերն ժողոված էին։ Եւ քահանայապետներն և բոլոր դատաստանըն

Յիսուսի համար սուտ վկայութիւն էին ու-
զում՝ որ նորան սպանեն: Եւ էն շատ սուտ
վկաներին որ էնտեղ եկել էին՝ բան չէին գը-
նում: Յետոյ քահանայապետն պատասխան
տուաւ և նորան ասաց. կենդանի Աստուծով
երդումեմ տալիս քեզ՝ որ ասես մեզ թէ դու
որդի Աստուծոյ Քրիստոսն ես: Յիսուս նո-
րան ասաց՝ դու ասացիր. բայց ասումեմ ձեզ՝
որ հիմիկվանից ետև կըտեսնէք որդին մարդոյ
(Աստուծոյ) զօրութեան աջ կողմն նստած և
երկնքի ամպերին վերայ եկած:

Էն ժամանակն քահանայապետն իրան շորե-
րըն պատառեց և ասաց. հայհոյեց. էլ ի՞նչ
պէտք է մեզ վկայ. ահա հիմիկ դուք հայհո-
յեանքըն լսեցիք: Ի՞նչ հաճոյ է ձեզ. նորանք
պատասխան տուին և ասացին. մահապարտ է:
Էն ժամանակն նորա երեսին թքեցին, բը-
ռունցքով թակեցին և քանի միւսն էլ նորան
ապտակ (սիլլէ) տուին՝ և ասացին. դու Քրիս-
տոս՝ մեզ մարգարէացի՛ր՝ թէ էն ո՞վ է որ քեզ
զարկեց՝ (Մատթ. իզ. 56—59. 60—68): Եւ
ուրիշ էլ շատ հայհոյանքով նորա դէմ խօսու-
մէին (Ղուկ. իբ. 65): Երբ որ առաւօտ է-
լաւ՝ ամէն քահանայապետներն և ժողովուրդի
ծերերն Յիսուսի համար խորհուրդ արին՝ որ
սպանեն նորան: Նորան կապեցին և տարին
գնացին, և պոնտացի պիղատոս դատաւորի
ձեռքըն տուին (Մատթ. իէ. 1—2):

Բայց պիղատոսն հարցրուց նորան և ասաց.
դո՞ւ ես հրէաների թագաւորն. նա էլ պա-

տասխան տուաւ նորան և ասաց • դու ասացիր։ Պիղատոսն քահանայապետներին և ժողովուրդին ասաց • ես մին վնաս չեմ գտնում էս մարդումս (Ղուկ • ԻԳ • 34)։ Բայց սովորութիւն է ձեզ որ զատկի ժամանակն մինը արձակեմ ձեզ (համար)՝ ուրեմն կամենումէք՝ որ արձակեմ ձեզ համար հրէաների թագաւորըն։ Բայց քահանայապետներն և նորանց ծառաներըն երբոր տեսին նորան, բարձր ձայնով աղաղակեցին և ասացին • խաչ հանիր, խաչ հանիր դորան • պիղատոսն նորանց ասաց • թէ՝ դուք առէ՛ք դորան ձեր մէջն, և դուք ձեզանից խաչ հանեցէք • ինչու որ՝ ես մին վնաս չեմ գտնում դորանում (Յօհ • ԺԸ • 39 • ԺԹ • 6)։ Ու էն ժամանակին նաև պիղատոսն ուզումէր որ նորան արձակէ • և հրէաներն աղաղակումէին և ասում, թէ որ դորան արձակես կայսերին բարեկամ չես։ Էն ժամանակն նորան տուաւ նորանց ձեռքն՝ որ խաչվի, և նորանք առին տանումէին նորան • և ինքն խաչի փայտըն վերէր կալել՝ և դուրս էր գնում էն տեղն՝ որ անվանված էր գագաթն՝ և եբրայեցերէն գողգոթա էր կոչվում • որ տեղ որ խաչ հանեցին նորան՝ և նորա հետ էլ ուրիշ երկուսը, նորա էս կողմն և էն կողմն և Յիսուսին մէջ տեղն (Յօհ • ԺԹ • 12 • 16 • 18)։

Ու Յիսուս ասաց • հայր թողութիւն տուր դորանց՝ ինչու որ չեն գիտում թէ ինչ են գործում • և նորա շորերըն որ բաժանումէին վիճակ քցեցին։ Ու ժողովուրդն կանգնած

նայումէր · իշխաններն էլ նորանց հետ՝ ծաղր էին անում նորան և ասում, թէ՝ ուրիշներին ազատեցրուց՝ թող իրան անձըն էլ ազատէ՝ թէ որ դա է Քրիստոսն՝ Աստուծոյ ընտրված որդին (Ղուկ · իգ · 34 · 35) ։ Ուրիշներին ազատեցրուց՝ ինքն իրան կարող չէ ազատեցնել · թէ որ Իսրայէլի թագաւորն է՝ հիմիկ խաչիցը թող վէր գայ, և հաւատանք դորան (Մատթ · իէ · 42) ։ Եւ էն կախված չարագործներից մինն էլ հայհոյումէր նորան և ասումէր · չէ՞ որ դու Քրիստոսն ես · քո անձըդ փրկի՛ր և մեզ էլ ։ Պատասխան տուաւ նորան ընկերն յանդիմանելով՝ և ասաց · չե՞ս վախենում դու Աստուածանից՝ որ դու հենց էն պատժի մէջն ես · և մենք իրաւունքով (ենք քաշում) · ինչու որ մեր արած գործքերի արժան հատուցումն ենք առնում · և սա խիկի անիրաւ բան չի գործել ։ Եւ Յիսուսին ասաց · տէ՛ր՝ ինձ յիշի՛ր երբ որ քո թագաւորութեանդ գաս ։ Եւ Յիսուս ասաց նորան · ճշմարիտ ասումեմ քեզ՝ թէ էսօր ինձ հետ դրախտի (արքայութեան) միջումն կը լինիս ։ Եւ վեց ժամին (սահաթին) դէմ էր, և խաւար էլաւ ամէն երկրի վերայ մինչև ինն ժամն · արեգակն խաւարվեցաւ (Ղուկ · իգ · 39—44) ։ Եւ ինն ժամին դէմ՝ Յիսուս մեծ ձայնով կանչեց՝ և ասաց · էլի՛ էլի՛ լամա՛ սաբաքթանի · որ կասի՝ իմ Աստուած իմ Աստուած ինչու թողիր ինձ (Մատթ · իէ · 46) ։ Սրանից ետև երբ որ Յիսուս գիտաց՝ թէ ամէն բան կատարված է՝ որ գիրն կատար-

մի՛ տայ՝ ծարաւ եմ՝ եւ էնտեղ մին աման կար քարախալ լցված. եւ նորանք մին սրունգ (սխեն-կէր) քարախալ լեղուն հետ լցրին եւ զողայի (ծնեծրունի) փնջի չորս կողմից դրած՝ դէպի նորա բերանն մօտացրին ։ Երբոր Յիսուս քացախըն լեղուն հետ առաւ՝ ասաց. ամէն բան կատարվել է՝ եւ գլուխըն խոնարհացրուց, եւ հոգին աւանդեց (Յօհ. ԺԹ. 28—30)։ Եւ ահա տաճարի վարագուրն վերեւից մինչեւ ցածըն երկուս ճղվեցաւ, եւ երկիրն շարժվեցաւ, եւ քարեր պատառվեցան ։ Եւ գերեզմաններ բացվեցան եւ շատ մարմիններ սուրբ ննջեցելոց յարութիւն առին, եւ գերեզմաններիցըն դուրս ելին նորա յարութիւնից ետեւ՝ սուրբ քաղաքն մտին եւ շատերին երեւեցան ։ Բայց հարիւրապետն եւ նորանք որ նորա հետ Յիսուսին պահումէին, երբ որ շարժմունքըն եւ էն էլածները տեսին, շատ վախեցան՝ եւ ասացին. շիտակ՝ որ սա Աստուծոյ որդի էր. (Մատթ. ԻԷ. 51—54)։ Եւ երբոր իրիկուն էլաւ, արեմաթեայից մին հարուստ մարդ եկաւ, որ նորա անունն յովսէփ էր՝ որ ինքն էլ Յիսուսի աշակերտ էլած էր ։ Սա պիղատոսի մօտ գնաց՝ Յիսուսի մարմինըն խնդրեց. էն ժամանակն պիղատոս հրամայեց որ մարմինըն տան ։ Եւ յովսէփ մարմինըն առաւ՝ յստակ կտաւներով պատեց՝ եւ մին նոր գերեզմանում դրաւ՝ որ քարի մէջ փորել էր. եւ մին մեծ քար գերեզմանին փակելոյ համար դռան առաջին քցեց՝ եւ գնաց (Մատթ. ԻԷ. 57—60)։ Բայց քահանայապետներըն եւ փարիսեցիքներն պիղատոսից

հրաման տուին և ապա եկին գերեզմանի վերայ մեօհր դրին և նորա մօտ պահապան զինուորներ կանգնացրին, որ իսկի մին մարդ չի կարենայ մօտենալ (Մատթ. ԻԷ. 62—66)։

Էն ժամանակն մարմնաւոր մարդկանց աչքերին առաջի երևեցաւ՝ թէ քահանայապետներըն Յիսուսին իսպառ ջնջեցին երկրի երեսիցըն, և թէ՝ խաւարի իշխանըն յաղթեց լուսի թագաւորին։ Ամէն մարդ՝ որ մարգարէների խօսքերըն չիմացաւ, և մանաւանդ հենց Յիսուսի աշակերտներըն էլ, էն ժամանակն մեծ տարակուսանքի մէջ ընկան. կարծելով՝ թէ նորանից ետև Աստուծոյ թագաւորութիւնըն չի կարողանայ հաստատվիլ. էնտուր համար որ թագաւորութեան գլուխն սպանվեցաւ։ Էս պատճառով քահանայապետներըն ուրախացան՝ և Յիսուսի աշակերտներըն տրտմեցան և վախեցան։

Բայց Յիսուս շուտով ցոյց տուաւ՝ թէ մահըն կարող չէր նորա անձըն կապել իրան կապանքովն՝ բայց երեք օրումն յարութիւն առաւ՝ և իրան երկմտող և վախեցող աշակերտներին մօտ եկաւ և նորանց յայտնեց՝ թէ իրան առաջուց ասած խօսքերին կեօրէ, ոչ թէ բռնութենով, բայց իրան կամքովն է մտել մահին մէջ, և հիմիկ իբր մահին յաղթօղ և կեանքի տէր յարութիւն է առել։ Եւ որ ամէն տարակուսանքիցն ազատելին՝ նա իրան խոցված ձեռներըն և ոտներըն և կողըն ցոյց տուաւ նորանց. և նորանց հետ կերաւ, և քա-

ռասուն օր նորանց միջումն երևեցաւ, և Աստուծոյ թագաւորութեան համար նորանց հետ խօսեցաւ (Յօհ. ի. 20. Գործ. ա. 3)։

Այն ժամանակն Յիսուս նորանց յայտնեց սուրբ գրքերի միտքն, և նորանցից յայտնի իմացան՝ թէ ինչպէս մովսէսն և ամէն մարգարէներն մեսիայի կամ նոր եկող փրկչի չարչարվիլըն և մեռնիլըն առաջուց պատմեցին։ Ինչպէս որ Աստուծոյ հրամանովն կարգված էր՝ որ ամէն օր պատարագ լինի մեղաց քաւութեան համար, էնպէս էլ դաւթի և եսայի մարգարէի բերանովն յայտնի նշանակված էր՝ թէ աշխարհքի փրկիչն երբ որ գալու լինի՝ մարդկանց մեղքն պիտի վերառնէ, և նորանց քաւութեան և փրկութեան համար իրան սուրբ և անմեղ կեանքըն պատարագ անէ։ Ապա հիմիկ Յիսուս կատարեց էն խոստմունքներըն. ինչու որ ամէն մարդկանց մեղքըն վերառաւ և մեղքի պատիժըն՝ որ է մահն, ինքն իրան հոգուովն և մարմնովն քաշեց, և իրան կեանքըն փրկութեան գին տուաւ՝ ամէններին տեղակ մեռնելով։ Ապա թողութեան և փրկութեան դուռն ամէնների համար բաց արաւ։

Բայց ինչպէս որ սուրբն և անմեղն մեղաւորների վերայ մեռաւ և նորանց տեղակ մեղքի պատիժըն քաշելով նորանց ապրեցրուց՝ էնպէս էլ նորա յարութիւնովն յայտնի էլաւ՝ թէ նա իրան պատարագովն մահի իշխանութիւնն քանդեց և նորա ձեռքիցն ազատեց նորանց որ նորա փրկութիւնըն ընդունելու էին՝ թէ նա է

կեանքի իշխանն՝ որ կարօղ է փրկել՝ և յաւի-
տենական կեանքն տանիլ իրան ամէն հաւատա-
ցեալներին՝ և թէ նա է Աստուած հզօր՝ որ
մահին, սատանային, և դժոխքի կապանքներն
խզած կտրեց, և անմահութիւնըն յայտ
նեց և հաստատեց: Բայց Աստուած հայրն էլ
Յիսուսին յարութեամբ մեռելների միջիցըն
հաստատ վկայեց՝ թէ իրան որդւոյ պատարա-
գըն որ մարդկանց համար ընծայեց, կատարե-
լապէս ընդունելի է իրան՝ էնպէս, որ նորա
համար՝ ամէն մեղք թողէ, և ամէն մեղաւոր-
ներըն որ էն փրկութեանըն հաւատան, որ-
դոր համարի և ընդունի:

Ապա Քրիստոսի գործն կատարեալ էլաւ՝
ինչու որ էն աշխարհքի սկզբիցն խոստացված
փրկութիւնըն հիմիկ կատարվեցաւ, և թողու-
թեան և յաւիտենական կեանքի դուռն ամէն
ապաշխարօղ և յաւատացօղ մեղաւորների հա-
մար բացվեցաւ: Սրանից ետև միայն պէտք էր
որ էս փրկութիւնս ամէն մարդկանց քարոզվի
և յայտնվի. որ մեղքից յետ դառնան՝ և Աս-
տուծոյ և Քրիստոսին հաւատալով՝ թողու-
թիւն և փրկութիւն գտնեն: Էնտուր համար
էլ Յիսուս իրան յարութենիցն ետև վկայեց՝
և իրան աշակերտներին ասաց. թէ » Էս են էն
,, բաները որ ձեզ հետ խօսեցայ՝ դեռ քանի որ
,, ձեզ հետ էի՝ թէ պէտք է որ էն ամէնն որ Մով-
,, սէսի օրէնքումն և մարգարէներումն և սաղմո-
,, սումըն ինձ համար գրված է՝ կատարվի: Պէտք
,, էր որ Քրիստոսն էնպէս չարչարվի և երեք

„ որում մեռելների միջից յարութիւն առնէ՝
„ և նորա անունովը ապաշխարութիւն և մեղաց
„ թողութիւն քարոզվի ամէն ազգերի մէջն, Ե-
„ րուսաղէմից սկսած (Ղուկ. իդ. 44. 46. 47).

Բայց ինչպէս որ Յիսուս մարդկանց փրկու-թիւնը իրան մարդկութեան մէջն կատարել էր էս երկրիս վերայ՝ էնպէս էլ պէտք էր՝ որ էն կատարված փրկութիւնը երկնքում յայտ-նէ՝ և Աստուծոյ հօր առաջին ցոյց տայ՝ թէ հիմիկ մեղքերի քաւութիւնն և մեղաւորաց ա-զատութիւնն և հաշտութիւնն կատարեալ է-լաւ. Եւ որովհետև նա իրան մարդ լինելովը, չարչարելովը և մեռնելովը՝ սատանայի իշխա-նութիւնը քանդեց, և մարդկանց ազգն ի-րան արիւնովը փրկեց և գնեց՝ որ հիմիկվանց ետև ամէնքն Աստուծոյ երանելի ժողովուրդ լինին և նորա ձեռովը կառավարվին՝ նրա հա-մար պէտք էր որ ինքն առաջ երկնքում թա-գաւորութեան աթոռի վերայ նստի՝ և այս աւետարանի քարոզութեանը մարդկանց կան-չէ և ժողովէ իրան թագաւորութիւնն. էլ պէտք էր՝ որ նա ոչ թէ մարմնովը՝ բայց հոգ-ւովը իրան աշակերտներին և ժողովուրդներին ամէն աշխարհքի մէջն մօտիկ լինի՝ և ամէն հաւատացեալ հոգիներին առաջնորդէ՝ և ա-մէն թշնամիներիցն պահէ, և դէպի յաւիտե-նական կեանքն տանի. Էս ամէն պատճառնե-րի համար պէտք էր որ ինքն առաջ երկինքն համբառնայ՝ ինչպէս որ Աստուած դաւթի բերանովը առաջուց պատմել էր ասելով՝ թէ

,, Տէրն իմ տէրին ասաց. Թէ՝ իմ աջ կողմն
,, նստի՛ր մինչև քո ամէն թշնամիներըն քո ոտա-
,, ցըը կոխելիք դնեմ (Մատթ. իբ. 44):

Անոր համար Յիսուս իրան յարութենէն
ետև ոչ մէ՛ակ իրան աշակերտներն Աստու-
ծոյ արքայութեան համար սովրցնումէր և
մարգարէների խօսքերըն նորանց մեկնումէր,
բայց ամէն բան էնպէս առաջուց պատրաստեց՝
որ ինքն կարողանար նորանցից հեռանալ մար-
մընով: Ապա պատճառովս յայտնեց նորանց թէ՝
,, ամէն իշխանութիւնն երկնքումն և երկրումն
,, ինձ տըվվաւ. ինչպէս հայրն ինձ ուղարկեց՝
,, էնպէս էլ ես ձեզ ուղարկումեմ: Ահա ես ձեզ
,, հետ եմ ամէն օր մինչև աշխարհքիս վերջն:
(Մատթ. իը. 18. 20): Մինչէ սուրբ հոգ-
ւոյ գալըն խոստացաւ նորանց հրամայելով՝
,, որ երուսաղէմիցն չի հեռանան՝ բայց հօր աւե-
,, տիքներին մտիկ տան՝ որ ինձանից լսեցիք:
,, Ինչու որ Յօհաննէսն ջրով մկրտեց. բայց դուք
,, ոչ շատ օրերիցն ետև սուրբ հոգւով պիտի
,, մկրտիք: Դուք զօրութիւն պիտի առնէք սուրբ
,, հոգւոյն ձեզ վերայ հասնելովն՝ և ինձ վկայ կը-
,, լինիք երուսաղէմումն և ամէն հրէաստանումն
,, և սամարիայումն և մինչև երկրի ծայրերըն
,, (Գործ. ա. 8): Ուրեմն գնացէ՛ք ամէն հե-
,, թանոսներըն սովրցրէ՛ք, նորանց մկրտե-
,, ցէ՛ք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ անուննո-
,, վըն. նորանց սովրցրէք որ ամէն ինչ որ ձեզ
,, պատուիրեցի պահեն (Մատթ. իը. 19): Ապա
,, նորանց հանեց մինչև բեթանիա, և իրան ձեռ-

,, ներըն բարձրացրուց և նորանց օրհնեց : Եւ է-
,, լաւ որ՝ դեռ որ օրհնումէր նորանց, նորանցից
,, հեռացաւ և դէպի երկինքն համբառնումէր
,, և նորանք երկրպագութիւն արին նորան, և
,, մեծ ուրախութենով դարձան երուսաղէմ, և
,, ամէն օր տաճարի մէջն էին Աստուծոյն գովու-
,, մէին և օրհնում (Ղուկ. իդ. 50—53) :

Ահա էսպէս կատարեալ կերպով կատարվեցաւ էն ամէնն որ Աստուած աշխարհքի ըսկըզբիցն նոր եկօղ փրկչին համար խոստացած. և մարգարէների բերանովն առաջուց պատմել էր՝ և էնպէս կատարվեցաւ՝ որ խսկի մին բան չի պակասեցաւ. բայց ամէն լցվաւ : Ինչու որ էն Յիսուսն՝ որ նորան հրեշտակներն իրան ծնընդի ժամանակումն աշխարհքի փրկիչ և յաւիտենական Թագաւոր քարոզեցին, նա ինքըն ոչ մէնակ ամէն կողմանէ ցոյց տուաւ՝ Թէ Աստուծոյ զօրութենովն և սիրովն եկել է մարդկանց փրկելոյ համար, բայց էլ գործով մեղքըն և մեղքի պտուղըն վերառաւ, և ամէնների տեղակ մեռնելով՝ և ապա յարութիւն առնելով՝ մահի և դժոխքի իշխանութիւնըն քանդեց և կենաց դուռըն բաց արաւ : Վերջըն էլ իրան հօր մօտ դարձաւ երկինքն՝ որ նորանից էր վէր եկել՝ որ նորանից ետև յաւիտենական Թագաւոր նստի, և ամէն մարդկանց ազգերըն իրան ձեռնի տակ ժողովէ՝ և իրան Թագաւորութեան միջումն՝ նորանց երանելի շինէ :

Ապա ո՞վ է էն մարդն որ էս ամէնըս տեսնելով՝ չի զարմանայ, և Աստուծոյ իմաստու-

թիւնըն՝ և սէրըն չի զօրաբանէ՝ և երեսի վերայ ընկնելով՝ միշտ և ամէն ժամանակ նորան երկրպագութիւն չի տայ ։ Ո՞հ եկէ՛ք օրհնեցէ՛ք մեր տէր Աստուծոյն՝ որ էսպէսի յայտնութիւն տուաւ մեզ , և էսպէսի փրկութիւն գործեց և կատարեց մեզ մեղաւորայս համար ։

## Երրորդ Գլուխ ։

Նրա համար՝ թէ Յիսուսի Քրիստոսի ձեռով կատարված փրկութեան մէջը հիմէ ինչ պտուղ բերաւ՝ և էլ մէջը յաւիտենական ժամանակներըն պիտի բերէ մարդկանց միջումն ։

Թէ և Քրիստոսի փրկութեան գործըն կատարեց և Աստուծոյ աջ կողմն յաւիտենական թագաւոր նստաւ՝ բայց էս երկրիս վերայ անկարելի կամ անանելի դժուար երևեցաւ՝ որ մարդիքըն նորա ձեռովն կատարված փրկութինըն հաւատան , և փրկվելոյ համար նորա մօտ դառնան. հրեաներըն նորան անարգեցին և սպանեցին՝ երբ որ նա ինքն նորանց մէջն էր՝ սպա ինչպէս հիմիկ կարող են հաւատալ նորան՝ որ աչքով չեն տեսնում , բայց իբր մին խաչված մարդ էլ աւելի անարգումն ։ Ինչպէս կարելի կըլինի՝ նորանց մէջն էն փրկչի անունն քարոզել . որ նորա ազգի առաջնորդներըն և իշ-

փանքները տեսլին, ուրացան, և սպանեցին, և հիմիկ էլ ատումեն և անարգումեն ։ Ու նմանապէս հեթանոսներըն՝ որ էն ժամանակումն ամէն կերպ գիտութիւնք ունէին և փիլիսոփայական ուսմունքներ էին սիրում․ Ի՞նչպէս կըհաւատային մին խաչված մարդոյ՝ որ նորան իբր երանց յաւիտենական փրկիչ և թագաւոր ընդունին և նորա վարդապետութեանըն հնազանդ լինին ։

Ու ո՞վ էին նորանք՝ որ Յիսուսին կարգվեցան, նորա երկինքն համբառնալուցն ետև էն իրան փրկութիւնըն և վարդապետութիւնըն քարոզել մարդկանց մէջն՝ և նորանց հաւատք բերել ։ Ու տասներկու ձուկ որսող մարդիքն էին՝ որ փիլիսոփաների խորին ուսմունքներըն և ճարտար խօսելոյ արհեստըն՝ իսկի չի ճանանչեցին և էնտուր համար իբր ռամիկ մարդիք անարգված էին իմաստունների առաջին ։ Ուրեմն նորանք ի՞նչպէս իշխաններին և առաջնորդներին, փիլիսոփաներին և իմաստուններին դէմ առաջ կըգան և խաչված Յիսուսին իբր ամէն աշխարհքի փրկիչ՝ էնպէս կը քարոզեն՝ որ մարդիք հաւատան և նորանց խօսքերըն ընդունին ։ Ոս բանս խալաս անկարելի էր երևում ։

Բայց որքան էս բանս անկարելի երևեցաւ մարդկանց առաջի, էնքան յայտնի էլաւ ամէնին՝ թէ Աստուծոյ զօրութիւնըն մէնակ կարող է էնպէսի տկար մարդկանց ձեռովն Յիսուսի վարդապետութիւնըն հաստատել՝ և թէ

Հրէաներին և թէ հեթանոսներին մէջն տարածել և նորանց հաւատք բերել ։ Յիսուսի աշակերտներն կարող էին կատարել վկայ լինիլ՝ ինչու որ երեք տարի նորա հետ էլան՝ նորա վարդապետութիւնն լսեցին, և նորա ամէն Աստուածային գործքերն, և նորա չարչարվիլն, մեռնիլն, յարութիւն առնիլն, և երկինքն համբառնալն իրանց աչքերովն տեսին . բայց մնաց և հոգւոյ էն լուսաւորութիւնն՝ որ նորանով Յիսուսի ձեռովն կատարված փրկութիւնն կատարելապէս խմանան մարգարէների խօսքերին կեօրէ, և առանց որխալմունք ունեյց ամէն բան հաստատ և յայտնի սովորցնեն ուրիշներին՝ և էլ էն հաւատոյ հաստատութիւնն՝ որ նորանով Աստուծոյ զօրութեան վերայ յոյս դնելով՝ և առանց վախենալոյ ամէն թշնամիներին դիմաց Յիսուսի փրկութիւնն վկայեն և քարոզեն և մինչև մահ նորան խոստովանին և դաւանին՝ էս ամէնս մէնակ Աստուած կարող էր տալ և շնորհել նորանց ։ Ուրեմն եթէ Յիսուսի գործքն երկրիս վերայ յաջողիլ և հաստատ լինելու էր՝ յայտնի նշան երևումէ՝ որ ոչ թէ մարդկանց Ճարտարութեան վերայ , բայց Աստուծոյ զօրութեան վերայ էր հաստատված նա ։

Յիսուս շատ անգամ՝ էլ խոստացաւ՝ թէ նա ինքն միշտ նորանց հետ կըլինի և իրան հօրից սուրբ հոգին կուղարկէ նորանց՝ որ նորանց ուսուցիչ մխիթարիչ և կառավարիչ լինի ։ Էնտուր համար առաքեալներն նորա համբառնալն.

լուցն ետեւ բան չի արին՝ բայց աղօթք ընելով Երուսաղէմում մնացին տաճարի մէջն եւ մէկի տունն էին օրին՝ որ սուրբ Հոգին նորանց վերայ գալու էր եւ Քրիստոսի խոստումն ըլնի կատարվէր ։ •

Ու աչն տասն օր Քրիստոսի համբառնալուցն ետեւ երբ որ ամէնքն միաբան ժողոված էին՝ հենց էն օրումն՝ որ Աստուած հին օրէնքըն մովսէսի ձեռովն տուաւ. յանկարծակի ձայն էլաւ երկնքիցն՝ որ սաստիկ քամիպէս եկաւ եւ լցրուց էն ամէն տունըն՝ որ նորանում նըստած էին ։

Ու կրակիպէս երեւցան նորանց բաժանված լեզուներ՝ եւ նա նորանց ամէն մէկի վերայ նըստաւ ։ Ու ամէնքն լցվեցան սուրբ Հոգւով եւ սկսեցին ուրիշ լեզուներ խօսիլ. ինչպէս որ Հոգին տալիս էր նորանց խօսիլ (Գործ. Բ. 2—4) ։ Էն ժամանակումն աշխարհքի ամէն կողմիցն շատ հրէաներ հաւաքված էին երուսաղէմումն տօնին համար՝ եւ նորանցից շատ Աստուածավախ մարդիք՝ երբոր էս ձայնըս լսեցան՝ եկին եւ զարմանալով լսեցին՝ թէ առաքեալներըն նորանց ամէն մէկի լեզուն խօսումէին եւ Աստուծոյ սքանչելիքըն գովաբանումէին ։ Էնպէսի զարմանալի բան խելի մին ժամանակ չէին տեսած եւ լսած. եւ էնտուր համար մինն մինին հարցնումէին թէ՝ էս ինչ պիտի լինի ։ Ապա պետրոսն՝ առաքեալների մինն՝ վերկացաւ եւ նորանց յայտնեց թէ հիմի կատարեց Աստուած էն խոստումն՝ որ յոէլ մարգարէի

բերանովը խոստացաւ՝ թէ « վերջին օրերումը
„ իմ Հոգուս կը թափեմ ամէն մարմնոյ վերայ և
„ ձեր որդիքներն և ձեր աղջիկներն կը մարգա-
„ րէանան ։ Ո՛վ Իսրայէլացի մարդիք՝ լսեցէ՛ք էս
„ բաները ։ Յիսուս Նազօրեցին՝ էն մարդն՝ որ
„ Աստուածանից ցոյց տըրվաւ ձեզ զօրութենով,
„ նշաններով և հրաշքներով՝ որ Աստուած նո-
„ րանով ձեր միջումը արաւ՝ ինչպէս որ դուք էլ
„ գիտումէք՝ նորան Աստուծոյ սահմանված խոր-
„ հըրդովը և նախագիտութենովը մատնըված ան-
„ օրէնների ձեռքովը փայտի վերայ բևեռած սպա-
„ նեցիք ։ Որ նորան Աստուած յարոյց մահի ցա-
„ ւերըն արձակելով ․ ինչու որ կարելի չէր՝ որ
„ նա նորանից բռնըված լինէր ։ Ինչուր համար
„ դաւիթ էլ առաջուց նորա յարութեան հա-
„ մար խօսեցաւ՝ թէ նորա հոգին չի թողվաւ դը-
„ ժոխքումը և նորա մարմինն ապականութիւն չի
„ տեսաւ ։ Էս Յիսուսին Աստուած յարոյց՝ որ
„ մենք ամէնքս վկայումենք նորան ։ Նա Աստու-
„ ծոյ աջովը բարձրացած՝ սուրբ Հոգւոյ աւետի-
„ քըն Հօրից առած տարածեց սրան՝ որ դուք
„ հիմիկ տեսնումէք և լսումէք ։ Ինչու որ՝ չէ թէ
„ դաւիթ վեր ելաւ երկինքըն, բայց ինքն ասու-
„ մէր՝ թէ Տէրն իմ Տէրին ասաց՝ թէ իմ աջ
„ կողմս նստի՛ր մինչև քո թշնամիներըդ քո ո-
„ տացըդ կոխելիք դնեմ ։ Ուրեմն Իսրայէլի բո-
„ լոր տունդ պէտք է գիտենայ՝ թէ Աստուած
„ նորան Տէր և օծեալ արաւ՝ էն Յիսուսին որ
„ դուք խաչեցիք (Գործ․ Բ) ։

Նորան զօրութենով՝ համարձակութենով և

յայտնութենով պետրոս և ուրիշ առաքեալնե-
րըն վկայութիւն տուին Քրիստոսի համար
մարդկանց մեծ ժողովուրդին առաջի, և Աս-
տուծոյ հոգին նորանց քարոզութենովն ինչպէս
շարժումէր լօզ մարդկանց սրտերըն՝ որ շատ
զղջացան իրանց փրկիչն սպանելոյ համար, և
փրկութեան համար մեծ ցանկութենով հարց-
րին թէ՝ » մարդի՛ք եղբարք ի՞նչ պիտի ա-
նենք » : Այս պետրոսն պատասխան տուաւ և
ասաց. » ապաշխարեցէ՛ք և ձեր ամէն մէկն թող
,, մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունովն՝ որ
,, մեղաց թողութիւն լինի ձեզ և սուրբ հոգւոյ
,, աւետիքըն ընդունիք:

Այս աւուր երեք հազար մարդիք նորա խօսքըն
ընդունեցին և Յիսուսի անունովն մկրտուեցան
էն օրումն (Գործք. Բ):

Այս պատմութենիցս յայտնի է՝ թէ որքան
կատարեալ կերպով Յիսուսի խոստմունքըն կա-
տարվեցաւ՝ թէ սուրբ հոգին կըգայ և նորա
համար վկայութիւն կըտայ: Յիսուն օրից ա-
ռաջ հրէաներըն Յիսուսին ուրացան և խաչե-
ցին՝ և այժմ հիմիկ խաչվածն յայտնի քարոզվու-
մէ նորանց միջումն՝ թէ նա է նորանց Տէրն և
փրկիչն՝ որ նորա մօտ ամէնքըն պէտք է ապաշ-
խարութենով և հաւատով գան դառնան որ նո-
րա անունովն մկրտուին և թողութիւն գտնին և
սուրբ հոգին առնան, և էս քարոզութիւնըս
հենց էն աշակերտներովն է լինում որ քիչ մի
առաջ վախեցող էին՝ և էլ էս քարոզութիւնս
էնքան զօրաւոր է՝ որ երեք հազար մարդիք՝

զղջման և խաչված Յիսուսին իրանց փրկիչ և տէր հաւատով ընդունէին և նորա անունովն մկրտվէին և նորա ժողովուրդ լինէին ։ Այս ամէն զարմանալի գործքերս մեծ զօրութենով վկայեցին՝ թէ Յիսուսն կենդանի է, և Աստուծոյ հոգին ուղարկեց՝ որ իրան տեղն առաքեալներին առաջնորդէ և զօրացնէ, և նորանց խօսքերըն մարդկանց սրտերումն վկայելով՝ նորանց հաւատք բերէ և դէպի փրկութիւնն տանի ։ Ինչպէս որ Յիսուս առաջ մարմնով փրկութեան գործըն կատարել էր՝ էնպէս էլ հիմիկ սկսեց հոգւոյ ձեռովն էն փրկութիւնըն յայտնել և մարդկանց լուսաւորել՝ որ մեղքիցըն և սատանայի իշխանութենից հեռանան, և զղջանալով և հաւատալով՝ փրկութեան մասնակից լինին, և Քրիստոսի փրկված սրբված և հնազանդ ժողովուրդ դառնան ։

Ապա էն ժամանակից սկսեց Աստուծոյ էն խոստացած թագաւորութիւնն որ Քրիստոսի ձեռովն ամէն երկրի վերայ պէտք էր տարածվի և ամէն մարդկանց որ զղջանան և հաւատան ընդունի և երանելի շինէ · ապա յայտնըվեցաւ Քրիստոսն՝ թէ նա է էն տէրն և թագաւորն՝ որ իրան արիւնովն ազատված մարդկանցն իրան ժողովուրդ պիտի շինէ, և նորանց մէջն իրան ամէն փառքըն և շնորհքըն յայտնէ ։

Առաքեալներն հոգւոյ լուսովն էս ամէն զարմանալի խորհուրդներըս իմանալով՝ նորանից ետև միշտ և ամէն տեղ, և ամէն հրէաների մէջըն սկսեցին Աստուծոյ զօրութենովն վկայու-

Թիւն տալ՝ Թէ Յիսուս է խոստացած փրկիչն և Իսրայէլի Թագաւորն՝ որ մեռաւ, և յարու-Թիւն առաւ՝ որ ամէնքն նորա ձեռօքն Թողու-Թիւն գտնեն և Աստուծոյ համար ընդունելի ժողովուրդ լինին : Նոտուր համար պետրոսն քարոզեց · Թէ

,, Աբրահամի Աստուածն և սահակայ Աստուածն
,, և յակոբայ Աստուած, էն մեր հարանց Աստ-
,, ուածն իրան Յիսուս որդին փառաւորեց · որ
,, դուք նորան մատնեցիք և ուրացաք պոնտացի
,, պիղատոսին առաջի՝ երբ որ նա դատեց որ նո-
,, րան արձակէ · և դուք էն սուրբն և արդարըն
,, ուրացաք՝ և խնդրեցիք որ մին մահապարտ մարդ
,, շնորհէ ձեզ : Նու կենաց առաջնորդըն սպանե-
,, ցիք՝ որ նորան Աստուած մեռելների միջիցն
,, յարոյց՝ որ նորան մենք յատուկ վկայումենք :
,, Ուրեմն եղբարք գիտումեմ՝ որ էն տգիտուԹե-
,, նով արիք՝ ինչպէս որ ձեր իշխաններն էլ : Բայց
,, Աստուած ինչպէս որ ամէն մարգարէների բե-
,, րանովն առաջուց պատմեց իրան Քրիստոսի չար
,, չարվիլըն, էնպէս էլ կատարեց : Ուրեմն ապաշ-
,, խարեցէ՛ք և յետ դարձէ՛ք՝ որ ձեր մեղքըն ջընջ-
,, վին : Որ Աստուծոյ երեսիցն հանգստուԹեան
,, ժամանակներ գան և առաջուց ձեզ համար պատ-
,, րաստված Յիսուս Քրիստոսին ուղարկէ : Որ
,, նորան երկինքն պէտք է ընդունի մինչև էն ժա-
,, մանակներն՝ որ ամէն բաներ հաստատվին, որ
,, նորանց համար Աստուած իրան սուրբ մար-
,, գարէների բերանովն խօսեցաւ : Մովսէսն ասաց
,, մեր հարանց Թէ՝ ձեր Տէր Աստուածն՝ ձեր

,, եղբայրներիցդ պիտի ինձ նման մարգարէ վեր-
,, կայնէ, նորան ականջ դրէք ամէն բաներու-
,, մըն՝ ինչ որ խօսելու լինի ձեզ ։ Եւ կըլլնի
,, որ՝ ամէն անձըն որ էն մարգարէին ականջ չի
,, դնէ, թող սատակվի ժողովուրդի միջիցն ։ Եւ
,, ամէն մարգարէներն որ Սամուէլիցն մինչև հի-
,, միկ մարգարէացան՝ էս օրերը պատմեցին ։
,, Դուք էն մարգարէների որդիքն էք և էն ուխ-
,, տուպայմանի՝ որ Աստուած մեր հարանց հետ
,, հաստատեց, և աբրահամին ասաց • երկրի ամէն
,, ազգերն քո զաւակովը կօրհնվին ։ Աստուած ա-
,, ռաջ ձեզ համար իրան որդուն յարոյց՝ և նո-
,, րան ուղարկեց ձեզ օրհնելու՝ որ դուք ամէն մէ-
,, կըդ ձեր չարութենիցն յետ դառնաք (Գործք.
,, Գ. 13. Եւայլն) ։

Նմանապէս էլ ապա հալածօղ քահանայա-
պետներին և իշխաններին առաջի՝ Աստուա-
ծային հաստատութենով Քրիստոսի համար
վկայեցին թէ՝ « նա է ձեզանից շինօղներիցդ
,, անարգված քարն՝ որ անկիւնի գլուխ էլաւ ։
,, Եւ ուրիշ բանով փրկութիւն չկայ • ինչու
,, որ ուրիշ անուն չկայ երկնքի տակն տըրված
,, մարդկանց մէջն որ նորանով կարենանք ազ-
,, րիլ (Գործք. Դ) ։ Եւ մինէլ՝ « Մեր հարանց
,, Աստուածն Յիսուսին յարոյց՝ որ դուք նորան
,, փայտից կախելով սպանեցիք • Աստուած նո-
,, րան Առաջնորդ և փրկիչ բարձրացրուց իրան
,, աջովը որ Իսրայէլին ապաշխարութիւն տայ և
,, մեղաց թողութիւն ։ Եւ էս բաներիս համար
,, մենք ենք նորան վկայ և սուրբ հոգին՝ որ նո-

,, րան Աստուած իրան հնազանդվածներին տա-
,, լու (Գործք. Է):

Ինչպէս առաքեալներն հաստատ յայտնութենով Քրիստոսին՝ իսրայէլի փրկիչ և Տէր քարոզեցին՝ և Աստուծոյ հոգին նորանց վկայութեանն էնքան զօրութիւն տուաւ՝ որ թշնամիներըն իսկի չի կարացին հակառակ կալ՝ և թէ ժողովուրդներէն, և թէ քահանայներէն շատերըն հաւատացին՝ էնպէս որ մին օրումն հինգ հազար մարդիք զղջացան և դէպի Քրիստոս դառնալով՝ նորա անունովն մկրտութիւն ընդունեցին։

Բայց Աստուած իրան հոգուովն Յիսուսի համար լինող վկայութիւնըն ոչ թէ մէնակ մարդկանց սրտերի մէջն պինտ հաստատեց՝ որ հաւատային նորան, բայց առաքեալներն էլ Յիսուսի անունովն շատ նշաններ և հրաշքներ արին՝ և նորանցով վկայեցին՝ թէ Աստուծոյ զօրութիւնն իրանց ձեռովն գործումէ և իրանց քարոզութիւնըն հաստատումէ։ Ինտուր համար շատ մարդիք իրանց հիւանդներըն բաց փողոցների մէջ դնումէին՝ որ առաքեալների անցկենալոյ ժամանակն ըժշկվին՝ շատերն էլ մօտիկ քաղաքներէն եկին և հիւանդներըն՝ և պիղծ դևերէն տանջվածներըն բերումէին և ամէնքըն ըժշկվումէին։

Էս ամէն գործքերս էլ հրէաների ամէն ժողովուրդի մէջն էնքան յայտնի էլան՝ որ ամէնքըն և անհաւատներըն էլ Աստուծոյ զօրութիւնըն ճանանչեցին խոստովանեցան և հաւա-

տացելոց ժողովուրդին մեծարեցին։ Մէնակ քահանայապետներն և իշխաններն իրանց միտքներն էնքան կուրացրին՝ որ էլ Աստուծոյ էն ամէն գործքերն տեսնելով՝ իսկի չի զղջացան բայց էլ աւելի բարկութենով և նախանձով առաքելոց դէմ վերկացան՝ և նորանց հրամայեցին՝ որ Յիսուսի անունն իսկի չի յայտնեն և քարոզեն, և երբ որ տեսին՝ թէ իրանց հրամանն օգուտ չունի՝ ապա սկսեցին առաքեալներին հալածել և բանտի մէջ քցել՝ և վերջն էլ սպանել։ Բայց Աստուած առաքեալներին էնքան զօրացրուց՝ որ ազգի առաջնորդների դիմացն և ամէն տանջանքի մէջն էլ անշարժելի համարձակութենով Քրիստոսի համար վկայեցին և նորան իսրայէլի փրկիչ և տէր քարոզեցին, էնպէս որ ամէնքն էլ պապանձվեցան, և նորանց քարոզութիւնն էնքան նշաններով և հոգւոյ զօրութենով հաստատվեցաւ՝ որ էլ մեծ հալածմունքների և տանջանքների ժամանակն շատ մարդիք հաւատացին և Քրիստոսի հաւատացեալներն շատացան։ Եւ երբոր նորանցից շատերն հալածմունքի համար երուսաղէմիցն հեռացան՝ ուրիշ քաղաքների մէջն էլ Աստուծոյ աւետարանն քարոզեցին և Աստուած նորանց հետ էլաւ և սուրբ հոգւոյ վկայութենովն նորանց խօսքերն հաստատեց՝ էնպէս որ ամէն տեղ նոր ժողովուրդներ հաւաքվեցան որ Յիսուսին հաւատով ընդունեցին և մեղաց թողութիւն գտնելով՝ ուրախութենով և ճըշմարտութենով Աստուծոյ ծառայումէին։ Բայց հալածօղների մինն էլ՝ սողոս անուն՝ որ ամէ-

նիցըն սաստիկ էր, և հետևումէր որ Քրիստոսի աշակերտներըն սպանէ որ տեղ որ գտնէ. նա էլ Դամասկոս (շամ.քաղաք) գնալոյ ժամանակումն Յիսուսի փառքն և զօրութիւնըն տեսնելով՝ էնքան յայտնի տեսաւ՝ որ աչքերն կուրացան, և ապա զղջանալով՝ շնորհք գտաւ որ հենց ինքն ոչ թէ մենակ Յիսուսի աշակերտ բայց էլ առաքեալ էլաւ՝ որ նորանից ետև միշտ և ամէն տեղ և ամէն մարդկանց դէպի նա կանչումէր ։

Էն ժամանակն ամէն ով որ իրան հոգւոյ աչքերըն չէկուրացրուց, կարօղ էր յայտնի իմանալ՝ թէ ինքն Աստուած առաքեալներին հետ է և իրան հոգւոյ զօրութենովն Քրիստոսի ժողովուրդըն պահումէ՝ հաստատումէ, և շատացնումէ ։ Էնտուր համար քահանայապետներն էլ՝ թէ և միշտ հակառակ և թշնամի էլան, բայց նորանք էլ իրանց հալածմունքն քանի մի ժամանակ վերացրին՝ և ապա Քրիստոսի բոլոր եկեղեցին՝ որ երկու կամ երեք տարումն բոլոր Հրէաստանի և Սամարիայի և Գալիլիայի մէջն հաստատվեցաւ, խաղաղութիւն ունէր՝ և շինութեան և Աստուծոյ երկիւղածութեան հետևումէր և սուրբ հոգւոյ մխիթարութենովն շատանումէր (Գործ. Թ. 31) ։

Բայց Յիսուսի փրկութիւնն ոչ մենակ հրէաներին համար էլաւ, բայց հեթանոսներն էլ պէտք էր կանչվէին՝ որ կուռքերն թողեն և Յիսուսի փրկութեանն մասնակից լինին և մենակ նորան իբր իրանց տէր և թագաւոր ընդունին

և նորան հնազանդվին ։ Էնոր համար ինքն Աստուած ինչպէս կարգեց՝ որ առաջ պետրոս առաքեալն կուռնելիոս անուն հարիւրապետի տունըն կոչվեցաւ՝ Քրիստոսի աւետարանն քա֊րոզելոյ համար՝ և էնտեղ զարմանալով տեսաւ որ Աստուծոյ հոգին հեթանոսներին վերայ էլ եկաւ և նորանց սրտերն լուսաւորեց և շնորհ֊քով լցրուց՝ որ Քրիստոսին իրանց փրկիչ և տէր ճանանչեն և հաւատով ընդունին՝ ինչպէս էն հաւատացեալներն որ հրէաների ազգիցնէին։

Էն ժամանակին եւ առաքեալներն սկսե֊ցին հեթանոսներին էլ Յիսուսի աւետարանըն յայտնել, և մանաւանդ Պօղոսն՝ որ առաջ սօղոս էր կոչված. Աստուածանից կարգվեցաւ որ հեթանոսների երկիրներումն մարդկանց կը֊ռապաշտութենից դէպի Քրիստոս կանչէ և Աստուծոյ ժողովուրդ շինէ ։ Որ տեղ որ գնա֊ցին, Աստուծոյ զօրութիւնըն երեւեցաւ նո֊րանց քարոզութեանցն՝ և կերպ կերպ նշաննե֊րով և հրաշքներով որ աւետարանի վկայու֊թիւնըն հաստատեցին ։ Էնոր համար թէ և անհաւատ մարդիկըն ամէն կերպ հալածմունք և տանջանք առաքեալների վերայ բերին, բայց էնպէս էլ աւետարանն օրէօր յաղթեց ամէն խաւարին և հազար հազարաւոր կռապաշտներ նորա լուսոյն լուսաւորվեցան և զղջացան և Յիսուսին հաւատալով՝ իրանց մեղքիցն սրբե֊վեցան ։ Էս պատճառովս քանի և երեսուն տա֊րիների մէջ ոչ թէ մինակ ասորեստանի և ասի֊այի երկիրներն, բայց էլ յունաստանի և հռո֊

մնայեցուց աշխարհքն Քրիստոսի հաւատովն լուց-վեցան, և ամէն գլխաւոր քաղաքների մէջն հաւատացելոց ժողովուրդներն հաստատվեցան ։

Այն ժամ, թէ՝ որպէս զարմանալի զօրութենով Աստուծոյ արքայութեան սերմն քիչ տարիների մէջ բուսաւ և աճեցաւ ։

Սկզբումն ինչպէս մանանեխի (հարտալի) սերմն շատ փոքր էլաւ և ոչինչ երևեցաւ, և աշխարհքի իշխաններն նորան անարգեցին և ամէն կերպով ջանք արին որ խղդեն նորան ջնջեն. բայց նա շուտով ամէն նեղութեան և հակառակութեան մէջն իրան ճուղերըն փռեց՝ որ երեսուն տարիներիցն ետև հազար հազարաւոր հրէաներ և հեթանոսներ նորա ճուղերի տակն հանգիստ էին առնում և իրար հետ միաբանութենով և ուրախութենով բնակվումէին ։ Սատանայի և մեղքի իշխանութենիցն փրկված էին՝ և էնտուր համար ուրախ սրտով Աստուծոյ խաղաղութիւնըն վայելումէին . և Յիսուսի անունովըն Աստուծոյն պաշտումէին հոգով և ճշմարտութենով՝ և աշխարհքիս ամէն նեղութիւնըն ոչինչ էին համարում էն նոր եկօղ և յաւիտենական կենաց փառքին համար՝ որ Յիսուսի ձեռովն նորանց՝ համար պատրաստված և բացված էր ։ Ուրեմն Քրիստոսի արիւնովն և սուրբ հոգովն սրբված՝ հոգևոր եղբայրութիւն վայելեցին և Աստուծոյ հետ միաւորված՝ օրէցօր աճեցան շնորհքով և ճշմարիտ սրբութենով ։ Ինչպէսև ժողովուրդներն յայտնի ցոյց տուին՝ թէ երկնքի արքայութիւնն երկրիս վերայ հաս

տատուած է՝ ինչու որ նորանք մեղքերյն ազատուած էին և Քրիստոսի հաւատովն Աստուծոյ խաղաղութիւնըն և երանութիւնըն ունէին՝ և սրբութենով մէնակ նորան ծառայումէին ։

Բայց պէտք է էստեղ՝ որ էս ժողովուրդների որպիսութիւնըն աւելի քննենք և ճանաչենք որ Աստուծոյ էն նոր սկսած թագաւորութիւնըն աւելի յայտնի լինի մեզ ։ Նորա համար առաջ տեսնենք՝ թէ ինչպէս էր առաքելոց էն վարդապետութիւնն · որ Աստուծոյ մեծ զօրութենովն էնքան շատ մարդիքը խաւարիյն դէպի լոյսն բերաւ և Քրիստոսի իշխանութեան տակ մին նոր ժողովուրդ շինեց · և երկրորդ էլ տեսնենք՝ թէ էն վարդապետութիւնն ինչ պըտուղ բերաւ նոր տնկուած ժողովուրդների մէջն ։

(1.)

Առաքեալներն ոչ թէ նոր ուսմունք առաջ բերին, բայց հենց Աստուծոյ էն յայտնութիւններըն որ նա աշխարհքի սկիզբիյն մարգարէների բերանովն տուել էր մարդկանց՝ կատարեալ լուսով մեկնեցին և ցոյց տուին՝ թէ ամէնն Յիսուսի ձեռովն կատարելապէս կատարվեցաւ՝ էնպէս որ ամէն մարդիք հիմիկ կարող են մասնակից լինել էն փրկութեան պըտուղներին որ առաջ խոստացւած էր՝ և Քրիստոսի ձեռովն կատարվեցաւ ։ Ինչ որ մարգարէներն առաջուց պատմեցին՝ թէ լինելու է, հենց էլ էն բանըն առաքեալներն ցոյց տուին՝ թէ հիմիկ կատարվեցաւ ։

(ա) Փրկութեան Բոլոր խորհրդոյն համար էին սովոր-ցընում՝ Թէ Աստուած աշխարհքի սկզբից առաջ հաստատեց նորան, և մարգարէներով առաջուց նշանակեց. բայց վերջին ժամանակում կատարելա-պէս յայտնեց ։

,, *Աստուած ընտրեց մեզ Քրիստոսով աշխարհ*
,, *քի լինելուցն առաջ. որ մենք նորան առաջի*
,, *սուրբ և անարատ լինինք սիրով ։*

,, *Առաջուց մեզ սահմանեց որ որդեգիր լինինք*
,, *նորան՝ Յիսուսի Քրիստոսի ձեռով. իրան*
,, *կամաց հաճութեան պէս* (Եփես. ա. 4. 5)։
,, *Ինձ . . . տրվաւ էս շնորհքս՝ որ հեթանոս-*
,, *ների մէջն Քրիստոսի անքննելի մեծութիւ-*
,, *նըն աւետարանեմ և ամէնքն լուսաւորեմ.*
,, *թէ ինչ է էն խորհրդոյ տնտեսութիւնն՝ որ*
,, *ամէն յաւիտենիցն ծածկված էր Աստուծոյ*
,, *մօտ. որ ամէն բան արաւ՝ որ հիմիկ յայտնվի*
,, *իշխանութիւններին և պետութիւններին որ*
,, *երկնքումն են՝ եկեղեցու ձեռով՝ Աստուծոյ*
,, *էն շատ կերպ իմաստութիւնն.* (Եփես. գ.
,, 9. 10)։

,, *Աստուած մեզ փրկեց և դէպի սուրբ կոչումն*
,, *կանչեց չէ թէ մեր գործքերին համար, բայց*
,, *իրան նախասահմանութեան և էն շնորհայն*
,, *պէս որ Քրիստոսով Յիսուսով տրված մեզ*
,, *յաւիտենական ժամանակներիցն առաջ. բայց*
,, *հիմիկ յայտնվեցաւ երբոր մեր Յիսուս Քրիս-*
,, *տոս փրկիչն երևեցաւ՝ որ մահըն խափանեց և*
,, *կեանքըն և անմահութիւնըն դէպի լոյսն բե-*
,, *րաւ իրան աւետարանովն* (Բ. Տիմ. ա. 9. 10)։

,, Ան փրկութեան համար խնդրեցին և քննու-
,, թիւն արին մարգարէքն՝ որ ձեզանում լինե-
,, լու շնորհքին համար մարգարէացան. քննու-
,, մէին թէ ինչպէսի և որ ժամանակին առաջուց
,, նշանակէր Քրիստոսի հոգին՝ որ նորանցում
,, էր. որ առաջ Քրիստոսի չարչարանացն, և
,, ապա փառացն համար վկայումէր (Ա. պէտ.
,, 10. 11):

(Բ) Փրկութեան խորհուրդն Աստուծոյ ողորմու-
թեան խորհուրդ է. որ ամէն մարդ համէնուն պէ-
տք փրկութիւնն առնել:

,, Աստուած որ մեծ է ողորմութեամբ. իրան ա-
,, ռատ սիրոյն համար՝ որ սիրեց մեզ՝ դեռ որ մե-
,, ղաց մէջն մեռած էինք, մեզ կենդանի արաւ
,, Քրիստոսովը. ինչու որ՝ շնորհքով ապրեցանք
,, (Եփես. Բ. Դ. 5):

,, Սրանում է սէրն՝ որ ոչ թէ մենք սիրեցինք
,, Աստուծոյն, բայց որ նա (առաջ) մեզ սիրեց
,, և իրան որդին ուղարկեց մեր մեղքերն քաւելու
,, համար: Տեսէ՛ք թէ հայրն ինչպէսի սէր շնոր-
,, հեց մեզ՝ որ մենք Աստուծոյ որդիք կոչվինք
,, (Ա. Յօհ. Դ. 10: Գ. 1):

,, Աստուած յայտնեց իրան սէրըն մեզանում.
,, որ դեռ որ մեղաւոր էինք՝ Քրիստոս մեզ հա-
,, մար մեռաւ (Հռոմ. Ե. 8):

,, Աստուած կամենումէ որ ամէն մարդիք ապ-
,, րին և դէպի ճշմարտութեան գիտութիւնն
,, գան (Ա. Տիմ. Բ. Դ):

,, Նա չի կամենում որ մինն էլ կորչի, բայց որ

,, ամէնքն ապաշխարութեան հասնին (Բ. պէտ.
,, Գ. 9):

(4) Այս խորհուրդս հաստատելոյ համար՝ Աստուծոյ միածնունդ որդին. որ նորա ձեռամբ բոլոր աշխարհքը ստեղծւած է՝ ինքն աշխարհքս եկաւ և մարմին առաւ՝ և մարդ ծնւելու սահմանւած ժամանակումն :

,, Սկզբումն էր բանն՝ և բանն Աստուծոյ հետ
,, էր, և բանն Աստուած էր: Նա սկզբումն Աս-
,, տուծոյ հետ էր. ամէն ինչ նորանով եղաւ՝ և
,, առանց նորան ոչինչ եղաւ՝ ինչ որ եղաւ: Բանն
,, մարմին եղաւ՝ և մեզանում բնակվեցաւ. և
,, նորա փառքըն տեսինք՝ ինչպէս հօրիցն եղած
,, միածնունդ որդւոյ փառքըն, շնորհքով և ճշմա
,, րտութենով լիքն :(Յօհ. Ա. 1—3. 14):

,, Քրիստոս աներևոյթ Աստուծոյ պատկերն է՝
,, ամէն ստեղծուածների առաջինեկն (այ գլու-
,, խըն)՝ որ նորանով ամէն բաներն հաստատվե-
,, ցան. նորանք որ երկնքումն են. և նորանք որ
,, երկրիս վերայ. նորանք որ երևումեն՝ և որ
,, չեն երևում. թէ աթոռներն՝ թէ տէրու-
,, թիւններն՝ թէ պետութիւններն. ամէն բան
,, նորանով և նորա համար հաստատվեցաւ: Նա
,, նա ամէնիցն առաջ է՝ և ամէն բան նորա նով
,, բովանդակվեցաւ (Կող. Ա. 15. 16. 17):

,, Քրիստոս ճշմարիտ Աստուած է՝ և յաւիտե-
,, նական կեանք (Յօհ. Ե. 20):

,, Յիսուս Քրիստոս Աստուծոյ կերպարանքու-

,, մըն ըլլալով՝ խակի յափշտակութիւն չի հա-
,, մարեց Աստուծոյ հաւասար ըլլալըն. բայց
,, իրան անձըն խոնարհացըուց ծառայի կերպա-
,, րանք առնելով՝ և մարդոյ նման էլաւ՝ և կեր-
,, պարանքովը մարդոյ պէս գտուաւ (Փիլ. Բ. 6. 7)։
,, Ճշմարիտ է էս բանս՝ և ամէն կողմանէ ըն-
,, դունելի. որ Յիսուս Քրիստոս աշխարհք ե-
,, կաւ՝ մեղաւորներըն փրկելոյ համար (Ա.
,, Տիմ. Ա. 15)։
,, Երբ որ ժամանակի լըցւիլըն եկաւ, Աստուած
,, իրան որդին ուղարկեց. որ կնկանից էլաւ և
,, օրէնքի տակ մտաւ՝ որ գնէ նորանց, որ օրէն-
,, քի տակն էին. որ մենք որդեգրութիւն ըն-
,, դունինք (Գաղ. Դ. 4)։
,, Որովհետև մանկունք արիւնին և մարմնոյն հա-
,, ղորդ էլան, և ինքըն էլ մօտաւոր ըլլալով նո-
,, րանց մասնակից էլաւ՝ որ իրան մահովը խա-
,, փանէ նորան, որ մահի իշխանութիւնըն ու-
,, նէր. այ՝ սատանային. և ազատեցնէ նորանց՝
,, որ մահիցն վախենալով՝ միշտ ծառայութեան
,, մէջ ընկած բռնված էին (Եբրայ. Բ. 14. 15)։

(Դ) Յիսուս Քրիստոս մարդկանց մեղաց համար չար-
չարւեցաւ և մեռաւ։

,, Քրիստոս մեղաց համար մին անգամ ձեզ վե-
,, րայ մեռաւ՝ արդարն անարդարների վերայ.
,, մար որ ձեզ Աստուծոյ մօտացնէ (Ա. Պետ. Գ. 18)։
,, Քրիստոս մեր մեղքերըն վեր առաւ իրան մը-
,, նովը խաչափայտին վերայ՝ որ էն մեղքիցն ազատ-
,, վինք՝ և նորա արդար կենացն ընկեր ըլլինք՝

,, որ նորա խոցերովն բժշկվեցանք (Ա․ Պետ․
,, Բ․ 24)։

,, Քրիստոս մեր մեղաց համար մեռաւ՝ գրքերի
,, ասածին պէս (Ա․ Կորնթ․ ԺԵ․ 3)։

,, Եթէ մինն ամէնների տեղակ մեռաւ, ապա
,, ուրեմն ամէնքն մեռած են։ Աստուած նորան
,, որ մեղք չէր գիտում՝ մեզ համար մեղք շի-
,, նեց, որ մենք նորանով Աստուծոյ արդարու-
,, թիւն լինինք (Բ․ Կորն․ Ե․ 14․ 21)։

(Է) Յիսուս Քրիստոս մարդկանց կատարած փրկու-
թիւնը ցոյց տալոյ համար յարութիւն առաւ՝ և
ապա երկնքի յաւիտենական արքայութիւնն հաստա-
տելոյ համար՝ երկինքն համբարձաւ և Աստուծոյ
աջ կողմն նստաւ։

,, Աստուած Յիսուսին երեք օրումն յարոյց՝ և
,, տուաւ՝ որ նա յայտնի լինի, ոչ թէ ամէն ժո-
,, ղովրդին, բայց մեզ (նորա) վկաներին՝ որ
,, առաջուց Աստուածանից ընտրված ենք՝ որ
,, նորա հետ կերանք և խմեցինք՝ իրան մեռելնե-
,, րի միջից յարութիւն առնելուցն ետև․
,, (Գործ․ Ժ․ 40․ 41)։

,, Քրիստոս մեր մեղաց համար մատնվեցաւ՝ և
,, յարութիւն առաւ մեզ արդարացնելոյ հա-
,, մար (Հռովմ․ Դ․ 25)։

,, Ո՞վ է նա որ կըդատապարտէ․ Յիսուս Քը-
,, րիստո՛ս՝ որ մեռաւ և որ ինքն էլ յարութիւն
,, առաւ, և Աստուծոյ աջ կողմն է՝ որ էլ բա-
,, րեխօսութիւն է անում մեզ համար (Հռովմ․
,, Ը․ 34)։

,, Քրիստոս երկինքն գնացած Աստուծոյ աջ
,, կողմն է՝ հնազանդվելով նորան հրեշտակներն
,, և իշխանութիւններն, և զօրութիւններն (Ա.
,, Պետ. Գ. 22):

,, Քրիստոս ոչ թէ ձեռքով շինած սրբարանըն
,, մտաւ՝ որ ճշմարտութեան օրինակ էր, բայց
,, յատուկ երկինքն՝ որ Աստուծոյ երեսի դիմա-
,, ցըն լինի մեզ համար (Եբրայ. Թ. 24):

,, Աստուած Յիսուսին մեռելների միջից յա-
,, րայց և երկնքումն իրան աջ կողմն նստացրուց.
,, ամէն իշխանութեան և պետութեան և զօ-
,, րութեան և տէրութեան վերայ, և էն ամէն
,, անուններին վերայ՝ որ անուանվումեն. ոչ թէ
,, մէնակ էս աշխարհքիս մէջ, բայց նոր եկօղ-
,, ներին մէջ էլ: Եւ ամէն բան նորա ոտաց
,, տակն հնազանդացրուց, և նորան եկեղեցւոյ
,, ամէն բանին վերայ գլուխ դրաւ (Եփես.
,, Ա. 21. 22):

,, Քրիստոս իրան անձըն խոնարհացրուց մինչև
,, 'ի մեռնիլըն՝ և էլ խաչի վերայ մեռնիլըն. էն-
,, տուր համար Աստուած էլ աւելի բարձրա-
,, ցրուց նորան՝ և նորան էնպէսի անուն շնոր-
,, հեց՝ որ ամէն անունիցն վերև է: Որ Յիսուսի
,, Քրիստոսի անունովն ամէն ծունր դնիլի երկ-
,, նաւորներին, և երկրաւորներին և երկրի տակ
,, լինօղներին, և ամէն լեզու դա սանի՝ թէ
,, Յիսուս Քրիստոսն՝ տէր է հօր Աստուծոյ
,, փառքին համար (Փիլիպ. Բ. 8. 9. 10. 11):

,, Նա պէտք է թագաւորէ՝ մինչև որ ամէն թշ-
,, նամիներին իրան ոտաց տակն դնէ. վերջին
,, թշնամին որ խափանվում, մահն է. և (հայ-
,, րը) ամէն բան նորա ոտաց տակն հնազանդ
,, արաւ (Ա. Կորնթ. ԺԵ. 25. 26):

(դ) Յիսուս իրան մահովն և յարութենովն ամէն մարդ-կանց համար կատարեալ փրկութիւն պատրաստեց. ինչու որ իրան պատարագովն նորանց Աստուծոյ հետ հաշտացրուց և արդարացրուց. սատանայի և մահի իշխանութենից ազատեց. սուրբ հետոյ վե-րելոյ զօրութիւն շնորհեց. և յաւիտենական կե-նաց յոյսն հաստատեց:

,, Քրիստոս մեզ սիրեց և իրան անձըն մեզ հա-
,, մար մատնեց. որ Աստուծոյ պատարագ և
,, մատաղ լինի անուշ հոտով (Եփես. Ե. 2):

,, Քրիստոս յաւիտենական հոգւովն իրան ան-
,, ձըն Աստուծոյ անարատ պատարագ ընծայեց
,, (Եբրայ. Թ. 14):

,, Աստուած իրան հետ հաշտացրուց մեզ Քր-
,, րիստոսովն. և մեզ հաշտութեան պաշտօնըն
,, տուաւ. ինչու որ Աստուած էր նա. որ Քր-
,, րիստոսովն աշխարհքս իրան հետ հաշտացը-
,, րուց՝ և նորանց մեղքըն չի համարեց նորանց
,, և հաշտութեան խօսքըն մեր մէջն դրաւ.
,, (Բ. Կորնթ. Ե. 18. 19):

,, Հաճոյ էլաւ (Աստուծոյ) որ նորանում բո-
,, լոր Աստուածութեան լիութիւնն բնակվի,
,, և նորանով ամէնքն հաշտայնէ իրան հետ.
,, (նա) խաղաղութիւն արաւ իրան խաչի արիւնովն

,, ամէններին համար որ երկրի վերայ են՝ և որ
,, երկնքումն են (Կողոս. Ա. 19. 20)։

,, Ինչպէս որ մինի՝ (Ադամի) մեղքովն ամէն մարդ-
,, կանց վերայ դատապարտութիւն էլաւ, էնպէս
,, էլ մինի (Քրիստոսի) արդարութեանովն ամէն
,, մարդկանց համար կենաց արդարութիւն է-
,, լաւ։ Ինչու որ՝ ինչպէս մին մարդի անհնա-
,, զանդութեանովն շատ մեղաւորներ էլան, էն-
,, պէս էլ մինի հնազանդութեանովն շատ ար-
,, դարներ կը լինին (Հռոմ. Ե. 18. 19)։

,, Աստուած ուղարկեցրուց մեզ իրան սիրելի-
,, վին՝ (այսինքն որդուն) որ նորանով փրկութիւն ու-
,, նինք նորա արիւնովն՝ մեղաց թողութիւն. ի-
,, րան շնորհաց մեծութեան չափովն Եփես. Ա. 6. 7)։

,, Քրիստոս է մեր մեղաց քաւութիւն. և ոչ
,, թէ մենակ մերին, բայց ամէն աշխարհքին։
,, (Ա. Յօհ. Բ։ 2)։

,, Աստուծոյ որդին նորա համար յայտնվեցաւ՝
,, որ սատանայի գործքերն քանդէ (Ա. Յօհ. Գ. 8)։

,, Քրիստոս (մարմին առաւ) որ իրան մահովն
,, խափանէ նորան՝ որ մահի իշխանութիւն ու-
,, նէր՝ այսինքն սատանային, և ազատէ նորանց՝ որ
,, մահից վախենալով՝ միշտ ծառայութեան
,, մէջ ընկած բռնված էին (Եբրայ. Բ. 15)։

,, Քրիստոս (ձեզ) հաշտեցրուց իրան մարմնոյ
,, անդամներովն՝ իրան մահովն՝ որ ձեզ սուրբ և
,, անբիծ և անարատ կանգնացնէ նորա դիմացն
,, (Կողոս. Ա. 22)։

,, Քրիստոս իրան անձին մեզ համար տուաւ՝ որ

,, մեզ ամէն անօրէնութենէն ազատէ, և սըր-
,, բէ՝ իրեն յատուկ ժողովուրդ և բարի գործ-
,, քերին հետեւող լինելոյ համար (Տիտ. Բ. 14)։

,, Յիսուս Քրիստոս սիրեց մեզ՝ և իրեն արիւ-
,, նովը մեր մեղաց կապանքէն արձակեց. և մեզ
,, թագաւոր և քահանայ արաւ Աստուծոյ և ի-
,, րեն Հօր համար (Յայտ. Ա. 5. 6)։

,, Աստուած յայտնեց իրեն սէրը մեզ վրայ՝
,, որ երբ որ մեղաւորներ էինք Քրիստոս մեզ
,, համար մեռաւ. ապա որքա՜ն էլ աւելի հիմիկ
,, որ նորա արիւնովը արդարացանք. նորանով
,, պիտի ազատինք՝ Աստուծոյ էն բարկութենէ-
,, յըն (Հռով. Ե. 8. 9)։

,, Քրիստոս երբ որ կատարուեցաւ (չարչարան-
,, քովը) ամէն իրեն հնազանդողներին համար
,, յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ՝
,, (Եբրայ. Ե. 9)։

,, Աստուած մեզ բարկութեան համար չի դը-
,, րաւ. բայց փրկութենով կենդանի լինելոյ
,, համար՝ մեր տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը՝
,, որ մեզ համար մեռաւ. որ թէ արթուն լինինք
,, թէ ննջենք՝ նորա հետ ապրինք (Ա. Թես.
Ե. 9. 10)։

(Է) Ուրեմն Յիսուս Քրիստոս մարդկանց համար հա-
ստատեալ փրկիչ միջնորդ և տէր է՝ որ նորա ձեռամբ
Աստուածային ամէն շնորհք տալիս է մեզ՝ որ պէտք
է մեր յաւիտենական փրկութեան համար։

,, Քրիստոս մեզ օրէնքի անէծքիցն գնեց՝ ինքն
,, մեզ համար անէծք լինելով, ինչու որ՝ գրուած է

,, Թէ՝ անիծեալ է ամէն ով որ փայտէն կախուած
,, լինի ։ Որ աբրահամի օրհնութիւնն՝ հեթանոսա-
,, ներին մէջ լինի Քրիստոսով Յիսուսով ․ որ
,, մենք սուրբ հոգւոյ աւետիքըն ընդունենք հա-
,, ւատքով (Գաղ․ Գ․ 13․ 14)։

,, Քրիստոս իրան արեանովը մին անգամ մտաւ
,, էն սրբատեղն և յաւիտենական փրկութիւն
,, գտաւ (Եբրայ․ Թ․ 12)։

,, Քրիստոս մին պատարագ մեղաց համար մատոյց՝
,, և յաւիտեան Աստուծոյ աջ կողմն նստաւ ․ և
,, սրանից ետև սպասումէ՝ մինչև որ նորա թըշ-
,, նամիներն իրան ոտաց տակն դնվին, ինչու որ՝
,, մին պատարագով կատարեց սրբվածներըն մին-
,, չև յաւիտեան (Եբրայ․ Ժ․ 12․ 13․ 14)։

,, Քրիստոս յաւիտեան կենալոյ համար առանց
,, անց կենալոյ ունի քահանայութիւնն ։ Ուրեմն
,, նորա ձեռովը դէպի Աստուած եկօղներըն կա-
,, րող է բոլորովին կենդանի անել ․ ինչու որ նա
,, միշտ կենդանի է՝ որ նորանց համար բարեխօս
,, ըլնի (Եբրայ․ Է․ 24․ 25)։

,, Մինէ Աստուած՝ և մին մի Աստուծոյ և մարդ-
,, կանց միջնորդ՝ Յիսուս Քրիստոս մարդն ․ որ
,, իրան անձըն փրկութեան գին տուաւ՝ ամէննե-
,, րի համար (Ա․ Տիմ․ Բ․ 56)։

,, Թէ որ մինն մեղանչէ՝ Աստուծոյ մօտ բարե-
,, խօս ունենք Յիսուս Քրիստոսըն՝ էն արդա-
,, րըն և անարատըն (Ա․ Յօհ․ Բ․ 1)։

,, Նորա համար Քրիստոս մեռաւ և կենդանի

,, էլաւ, որ կենդանիներին և մեռելներին առ
,, հասարակ տիրապետութիւն անէ (Հռօմ. ԺԴ. 9):

,, Մեզ մին տէր է՝ Յիսուս Քրիստոս՝ որ նորա-
,, նով ամէնքն են և մենք նորանով (Ա. Կորնթ.
,, Ը. 6):

,, Քրիստոսովն Աստուած մեզ ընտրեց աշխարհ-
,, քի լինելուցն առաջ (Եփես. Ա. 4):

,, Յիսուս Քրիստոսի ձեռովն առաջուց սահմա-
,, նեց մեզ՝ որ որդեգիր լինինք (Եփես. Ա. 5):

,, Քրիստոսովն լսեցիք ճշմարտութեան խօսքե-
,, րըն (Եփես. Ա. 13):

,, Քրիստոսովն հաւատացիք Աստուծոյն՝ որ մե-
,, ռելների միջիցն յարոյց նորան (Ա. Պետր. Ա. 21):

,, Քրիստոսովն ընդունեցիք էս շնորհքիս մէջ
,, մտնելըն՝ որ նորա մէջն կացած ենք (Հռոմ.
,, Ե. 2):

,, Քրիստոսովն երկուքս՝ (Հրէաներին և Հեթանոս-
,, ներին) մին հոգւով հօր Աստուծոյն մօտ մօտե-
,, նալըն ունինք (Եփես. Ե. 18):

,, Աստուած ամէն հոգևոր օրհնութիւններով
,, օրհնեց մեզ երկնաւոր (բարիքներումն), Քը-
,, րիստոսովն (Եփես. Ա. 3):

,, Քրիստոսովն վիճակ ընկաւ մեզ որ առաջուց
,, կոչվեցանք (Եփես. Ա. 17):

,, Աստուծոյ հետ խաղաղութիւն պիտի ունենանք
,, մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովն (Հռոմ.
,, Ե. 1):

,, Քրիստոսովն երբ որ հաւատացիք՝ աւետեաց
,, սուրբ հոգւովն կնքվեցաք (Եփես. Ա. 18):
,, Աստուծով պարծենումենք մեր Տէր Յիսուսի
,, Քրիստոսի ձեռովն՝ որ նորանով հաշտութիւ-
,, նըն ընդունեցինք (Հռովմ. Ե. 17):
,, Աստուած մեզ բարի գործքերի մէջն հաստա-
,, տումէ՝ իրան կամքն անելոյ համար՝ Յիսուսի
,, Քրիստոսի ձեռովն (Եբրայ. ԺԳ. 21):
,, Աստուած մեզ յաղթութիւն տուաւ մեր Տէր
,, Յիսուսի Քրիստոսի ձեռովն (Ա. Կորնթ. ԺԵ. 57):
,, Աստուած մարդկանց ծածուկ բաներն կըդա-
,, տէ Յիսուսի Քրիստոսի ձեռովն (Հռոմ. Բ. 16):
,, Քրիստոսն ամէնն է՝ և ամէնի մէջն (Կողոս.
,, Գ. 11):

(բ) Որովհետև Յիսուսի ձեռովն հաստատեալ փրկու-
թիւնն է պատրաստուած ամէն մարդկանց համար՝ Աս-
տուծոյ կամքն է՝ որ ամէն մարդիք ճանաչեն՝ և ճա-
նաչելով ընդունեն նորան:

,, Աստուած տգիտութեան ժամանակներին չի
,, նայելով՝ հիմիկ մարդկանց է՛ս է պատուիրում՝
,, որ ամէնքն ապաշխարեն (Գործք. ԺԷ. 30):
,, Աստուած Յիսուսին Քրիստոսին առաջուց
,, ղըաւ քաւութիւն լինելոյ համար՝ նորա ա-
,, րիւնովն՝ հաւատով, որ իրան արդարութիւնն
,, ցոյց տայ՝ առաջուց գործված մեղքերի թողու-
,, թեան համար՝ որ Աստուած ներող էլաւ՝ որ
,, էս ժամանակումս իրան արդարութիւնն երևա-
,, ցընէ. որ ինքն արդար լինի՝ և արդարացնէ
,, նորան՝ որ Յիսուսի հաւատքիցն է (Հռովմ. Գ.
,, 25. 26):

,, Այսքան գրվեցաւ՝ որ հաւատաք, թէ Յիսուս
,, Քրիստոսն որդի Աստուծոյ է. և որ հաւատաք
,, և յաւիտենական կեանքըն ընդունիք նորա ա-
,, նունովն (Յօհ. Ի. 31):

,, Աստուծոյ պատուիրանքն էս է՝ որ իրան որդ-
,, ւոյ՝ Յիսուսի Քրիստոսի անունին հաւատանք
,, (Ա. Յօհ. Գ. 23):

,, Ո՛վ որ հաւատայ և մկրտվի՝ կապրի. և ով որ
,, չի հաւատայ, կըդատապարտվի (Մարկ. ԺԶ. 16):

(Ա) Բայց որովհետև մարդկանց միտքն և սիրտն խա-
ւարած են մեղքով, որ կարօղ չեն Յիսուսի Քրիստո-
սի փրկութիւնն ճանաչել և հաւատալ. Աստ-
ուած իրան սուրբ հոգին ուղարկեց՝ որ մարդկանց
սիրտըն լուսաւորէ, և աւետարանի ճշմարտութենով
դէպի Քրիստոս կանչէ:

,, Էս աշխարհքի Աստուածն. (որ է սատանայն)
,, անհաւատների սիրտներն կուրացրուց՝ որ Քր-
,, իստոսի փառաց աւետարանի լուսաւորութիւ-
,, նըն նորանց վերայ չի ծագէ. որ նա աներևոյթ
,, Աստուծոյ պատկերն է (Բ. Կորնթ. Դ. 4):

,, Ու ով չի կարենում Յիսուսին տէր ասել՝ եթէ
,, ոչ սուրբ հոգւով (Ա. Կորնթ. ԺԲ. 3):

,, Էն որ աչքն չի տեսաւ՝ և ականջն չի լսեց՝ և
,, մարդի սիրտն չի ընկաւ, Աստուած իրան հոգ-
,, ւովն յայտնեց. ինչու որ՝ հոգին ամէն բան
,, քննումէ և Աստուծոյ խորին բաներըն էլ:
,, Պատճառն որ՝ մարդկանցից ո՞վ է նա, որ մար-
,, դոյ բաներըն գիտենայ եթէ ոչ՝ մարդոյ հո-
,, գին որ նորանում է. էսպէս էլ Աստուծոյ բա-

,, ՚ները ոչ ով չի գիտեր՝ եթէ ոչ Աստուծոյ
,, Հոգին։ Բայց մենք՝ չէ թէ էս աշխարհքիս Հո-
,, գին առինք, բայց էն Հոգին, որ Աստուածա-
,, ՚նից է․ որ ճանանչենք էն բաները՝ որ Աստ-
,, ուածանից շնորհվեցան մեզ ։ Էս էլ ինչ որ խօ-
,, սումենք՝ չէ թէ մարդից սովորած վարպետա-
,, բան խօսքերով՝ (ենք խօսում) բայց Հոգւոյ
,, վարդապետութեամբն Հոգևորները Հոգևորնե-
,, րին հետ համեմատումենք ։ Ինչու որ՝ շնչաւոր
,, մարդն Աստուծոյ Հոգւոյ բաները չի ընդու-
,, ՚նում, պատճառն որ յիմարութիւն է ՚նորա հա-
,, մար, և չի կարող գիտել՝ թէ էն Հոգևոր կեր-
,, պով պիտի քննվի ։ Բայց Հոգևոր մարդն ա-
,, մէն բան քննումէ՝ և ինքն իսկի մէկից չի քըն-
,, նվում ։ Ուրեմն Տէրին միտքըն ով գիտաց՝ որ
,, էլ խորհրդակից լինի ՚նորան, բայց մենք Քրի-
,, ստոսի միտքըն ունինք (Ա․ Կորնթ․ Բ․ 9—16)։

,, Իմ խօսքս և քարոզութիւնս ոչ թէ խաբե-
,, բայ իմաստութեան բաներով, (էլաւ) բայց
,, Հոգւոյ գործքերովն և զօրութեամբն՝ որ ձեր
,, հաւատքն մարդկանց իմաստութեամբ չի լինի
,, բայց Աստուծոյ զօրութեամբն (Ա․ Կորնթ․ Բ․
,, Դ․ 5)։

,, Աստուած որ ասաց՝ թէ խաւարից լոյս ծագէ,
,, ՚նա մեր սրտին մէջն էլ լոյս ծագեց՝ որ Աս-
,, տուծոյ փառաց գիտութիւն լուսաւորէ՝ Յի-
,, սուսի Քրիստոսի երեսովն (Բ․ Կորն․ Դ․ 6)։

,, Աստուած է որ մեզ ձեզ հետ Քրիստոսովն հաս-
,, տատեց և մեզ օծեց․ որ էլ մեզ վերայ կրան

,, կնիքըն դրաւ՝ և հոգւոյ գրաւըն մեր սրտի մէջ
,, տուաւ (Բ. Կորնթ. Ա. 21. 22).

(Ժ) Այն մարդիկ կարօղ են Յիսուսի փրկութեանըն մասնակից ըլլիլ, եթէ սուրբ հոգւոյ վկայութեան և աւետարանի վարդապետութեան ականջ դնելով՝ իրենց մեղաւոր և ողորմելի ըլլալըն ճանաչեն, և ապա իրենց մեղքերուն ճշմարիտ ապաշխարութենով զղջանան, և դէպի Յիսուս Քրիստոս դառնան, և հաւատան, թէ նա՛ է իրենց փրկիչը՝ որ ոչ թէ իրենց արժանաւորութեանն, բայց իրեն արիւնի և մահի համար մեղքի թողութիւն և յաւիտենական փրկութիւն շնորհում նորանց.

,, Հաւատքըն լսելիցն է լինում՝ և լսելըն Քրիս-
,, տոսի խօսքիցն (Հռոմ. Ժ. 17).

,, Աւետարանն՝ Աստուծոյ զօրութիւն է՝ ամէն
,, հաւատացեալներըն փրկելոյ համար. ինչու որ
,, Աստուծոյ արդարութիւն նորանով յայտնւու-
,, մէ հաւատքիցն դէպի հաւատք (Հռոմ. Ա.
16. 17).

,, Նա (Յիսուսը) քեզ հեթանոսների մէջ կու-
,, ղարկեմ նորանց աչքերըն բանալոյ համար՝ որ
,, խաւարիցն դէպի լոյս դառնան, և սատանայի
,, իշխանութենիցն դէպի Աստուած. որ մեղաց
,, թողութիւն առնեն՝ և ինձ հաւատալով՝ սրբ-
,, բոց մասնակից լինին (Գործք. Իզ. 17. 18).

,, Ապաշխարեցէք՝ և յետ դարձէք՝ որ ձեր մեղ-
,, քերըն ջնջվին (Գործք. Գ. 19).

,, Զարթի՛ր՝ դու որ քնած ես, և մեռելներիցն

,, վեր կացիր՝ և Քրիստոս քեզ կլուսաւորէ ։ (Եփես․ Ե․ 14) ։

,, Ամէն մարգարէներն Յիսուսին համար վկայու- ,, մեն՝ թէ նորան ամէն հաւատացողներն՝ նորա ,, անունովը մեղաց թողութիւն կառնեն (Գործ․ Ժ․ 43) ։

,, Նա՝ որ գործք չի անէ, բայց հաւատայ նորան՝ ,, որ ամբարիշտներըն արդարայնումէ, նորա հա- ,, ւատքըն արդարութեան տեղ կըհամարվի ։ (Հռովմ․ Դ․ 5) ։

,, Օրէնքի վախճանն Քրիստոս է՝ որ ամէն հա- ,, ւատացողներին արդարայնէ (Հռովմ․ Ժ․ 4) ։

,, Քրիստոսովը ունինք փրկութիւն իրան արիւ- ,, նովըն՝ (այն) մեղաց թողութիւն (Եփես․ Ա․ 7) ։

(Ժա) Ամենեցուն հաւատոյ պտուղն էն է՝ որ հաւատա- ցեալներըն ոչ միայն մեղաց թողութիւն ստանան, բայց եւ Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենան, եւ Աստուծոյ որդիք՝ եւ յաւիտենական կենաց ժա- ռանգաւոր լինին ։

,, Դուք լուացվեցաք՝ դուք սրբվեցաք՝ դուք ,, արդարացաք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ա- ,, նունովը՝ և մեր Աստուծոյ հոգւովը (Ա․ Կորնթ․ Զ․ 11) ։

,, Մենք հաւատովը արդարացած՝ Աստուծոյ հետ ,, խաղաղութիւն պիտի ունենանք մեր Տէր Յի- ,, սուսի Քրիստոսի ձեռովը՝ որ նորանով ընդու- ,, նեցինք հաւատով էս շնորհքիս մէջ մտնելըն ,, որ նորանում կացած ենք և Աստուծոյ փառաց ,, յուսովը պարծենումենք․ ինչու՝որ Աստուծոյ

,, սէրն մեր սրտերուն մէջն թափած է սուրբ Հոգ-
,, ւոյ ձեռօքն՝ որ տրուաւ մեզ (Հռովմ. ե. 1. 2. 5)։

,, Աստուծոյ խաղաղութիւնն՝ որ ամէն մտքերն
,, վերև է, ձեր սիրտըն և միտքն Քրիստոսով
,, Յիսուսով պահպանէ (Փիլիպ. դ. 7)։

,, Ամէն ով որ կհաւատայ թէ Յիսուս է Քրիս-
,, տոսն՝ նա Աստուածանից է ծնուած (Ա. Յօհ.
ե. 1)։

,, Ամէնքդ Աստուծոյ որդիք էք Յիսուսի Քրի-
,, ստոսի հաւատովն (Գաղ. գ. 26)։

,, Նորանք որ Աստուծոյ Հոգւովն վարվումեն,
,, Աստուծոյ որդիքն են. ինչու որ դուք ծառայու-
,, թեան հոգին չէք առել՝ որ մին էլ վախենաք.
,, բայց որդեգիր լինելոյ հոգին առիք՝ որ նորա-
,, նով կանչումենք աբբա հայր. հենց էն հոգին
,, մեր հոգւոյն վկայութիւն է տալիս՝ թէ Աստու-
,, ծոյ որդիք ենք. և թէ որդիք, ապա էլ ժա-
,, ռանգներ՝ Աստուծոյ ժառանգներ՝ և Քրիս-
,, տոսի ժառանգակիցներ (Հռովմ. ը. 15. 16. 17)։

(ԺԲ) Հաւատացեալներն՝ որ Քրիստոսովն իրանց փրկ-
չին հետ միաւորվեցան, սուրբ Հոգւովն նորոգ-
վումեն իրանց սրտերում որ Աստուծոյ շնորհքու-
նովը աշխարհքին և սատանայի փորձանքներին և ամէն
մեղքին յաղթեն՝ և սուրբ կեանք վարեն։

,, Երբ որ մեր փրկիչ Աստուծոյ քաղցրութիւ-
,, նըն և մարդասիրութիւնն յայտնվեցաւ, ոչ
,, թէ արդարութեան գործքերին համար որ մենք
,, արինք, բայց իրան ողորմութեան համար՝ ապ-
,, րեցրուց մեզ նոր ծնվելոյ աւազանովն և սուրբ

,, հոգւոյ նորոգութենովը՝ որ նորան առատութե-
,, նով թափեց մեզ վերայ՝ մեր փրկիչ Յիսուս
,, Քրիստոսի ձեռովը․ որ շնորհքով արդարացած
,, ժառանգ լինինք յուսով յաւիտենական կե-
,, նացն (Տիտ․ Գ․ 4․ 5․ 6)։

,, Մենք որ Յիսուս Քրիստոսովը մկրտուեցանք
,, նորա մահովը մկրտուեցանք․ մկրտութենովը
,, նորա հետ թաղուեցանք դէպի մահ որ ինչպէս
,, Քրիստոս հօր փառքովը մեռելների միջից յա-
,, րութիւն առաւ, էնպէս էլ մենք կենաց նորո-
,, գութեան մէջնման գանք։ Դուք ձեր անձըն
,, մեղքին մեռած համարեցէ՛ք, և Աստուծոյ
,, կենդանի, մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռո-
,, վըն։ Ուրեմն մեղքն թող չի թագաւորէ ձեր
,, մահկանացու մարմինին վերայ՝ որ նորա ցանկու-
,, թիւններին հնազանդվիք․ մեղքն թող չի իշ-
,, խէ ձեզ վերայ՝ ինչու որ՝ օրինաց տակն չէք։
,, բայց շնորհաց տակն (Հռոմ․ Զ․ 3, 4․ 11․
12․ 14)։

,, Քրիստոսովը դուք հաւատով թլփատուեցաք՝
,, էն ձեռով չի գործված թլփատութենովը՝ մար-
,, մընոյ անդամներըն դուրս հանելով Քրիստո-
,, սի թլփատութենովը։ Մկրտութենովը նորա
,, հետ թաղուեցաք, որ նորանով էլ նորա հետ
,, յարութիւն առիք՝ էն հաւատովը՝ որ Աստուած
,, գործեց՝ որ նորան յարոյց մեռելների միջից
(Կողոս․ Բ․ 11․ 12)։

,, Դուք ամէնքդ որ Քրիստոսով մկրտված էք՝
,, Քրիստոսին հագած էք (Գաղ․ Գ․ 27)։

,, Ամէն ով որ Աստուածանից է ծնված, նա

,, մեղք չի գործում. պատճառն որ՝ նորա սերմն՝
,, նորա մէջն է մնում, և կարօղ չէ մեղանչել.
,, ինչու որ՝ Աստուածանից ծնված է. սրանով
,, իրարից ջոկված յայտնի են Աստուծոյ որդի-
,, քըն՝ և սատանայի որդիքըն. ամէն ով որ ար-
,, դարութիւն չի գործում՝ նա Աստուածանից
,, չէ, և էլ նա՝ որ իրան եղբայրըն չի սիրում. (ա.
Յօհ. գ. 9. 10):

,, Ամէն ով որ Աստուածանից է ծնված՝ աշխարհ
,, քին յաղթումէ, և էս յաղթութիւնն՝ որ աշ-
,, խարհքին յաղթումէ, մեր հաւատքն է: Ու ով
,, է նա՝ որ աշխարհքին յաղթէ՝ եթէ ոչ նա, որ
,, հաւատայ՝ թէ Յիսուսն Աստուծոյ որդին է.
(ա. Յօհ. ե. 4: 5):

,, Ձեր ներհակ թշնամին՝ սատանայն՝ առիւծի
,, պէս գոռումէ՝ ման է գալի՝ և խնդրումէ թէ
,, որին կուլ տայ: Որ դուք հաւատքով հաստատ-
,, ված նորան դէմ կենաք. գիտայէ՛ք՝ թէ հենց
,, էն չարչարանաց բաները աշխարհքի մէջն ձեր
,, եղբարներին էլ իրանց անձնումն կատարեցին.
(ա. պետ. ե. 8. 9):

,, Հակառակ կացէք չարախօսին՝ և կփախչի ձե-
,, զանից (յակ. դ. 7):

(ծգ) Այնուր համար հաւատացեալներըն՝ նորոգված և
արթնցած սրտով Աստուածոյն ամէն բանի վերայ սի
րումէն՝ և նորա պատուիրանքներըն ուրախութե-
նով և յօժար համօք պահումեն:

,, Քրիստոս Յիսուս Աստուածանից էլաւ մեզ_
,, համար իմաստութիւն՝ արդարութիւն, սըր-

,, բութիւն, և փրկութիւն (Ա․ Կորնթ․ Ա․ 30)։
,, Աստուծոյ շնորհքն երևեցաւ ամէն մարդկանց
,, փրկելոյ համար՝ որ խրատումէ մեզ՝ որ ամբա-
,, րըշտութիւնն և աշխարհական ցանկութիւննե-
,, րըն ուրանանք, և պարկեշտութենով՝ արդա-
,, րութենով և Աստուածպաշտութենով ապ-
,, րինք էս աշխարհքիս մէջն․ և էն երանելի յու-
,, սոյն մնիկ տանք՝ և մեծ Աստուծոյ և մեր փըր-
,, կիչ Յիսուս Քրիստոսի փառաւոր յայտնու-
,, թեանն՝ որ իրան անձըն մեզ համար տուաւ,
,, որ մեզ ամէն անօրէնութենիցն ազատէ, և սըր-
,, բէ՝ իրան յատուկ ժողովուրդ լինելոյ համար
,, բարի գործքերին հետևօղ (Տիտ․ Բ․ 11․ 12․
13․ 14)։

,, Մենք Աստուծոյն սիրենք՝ ինչու որ առաջ
,, նա սիրեց մեզ։ Այս է Աստուծոյ սէրն՝ որ նորա
,, պատուիրանքներըն պահենք, և նորա պատուի-
,, րանքներն ծանր չեն (Ա․ Յօհ․ Դ․ 19։ Ե․ 3)։

,, Ամէն ինչ որ անէք խօսքերով և գործքերով՝
,, էն ամէնըն տէր Յիսուսի անունովն արէ՛ք․ նո-
,, րա ձեռովն գոհութիւն տուէ՛ք Աստուծոյն և
,, հօրն (Կող․ Գ․ 17)։

,, Ձեր ամէն հոգսըր Աստուծոյ վերայ քցեցէ՛ք՝
,, ինչու որ՝ նա է՝ որ ձեզ համար հոգս է անում․
(Ա․ Պետ․ Ե․ 7)։

,, (Ձեր) վարքն առանց արծաթասիրութեան լի-
,, նի՛ն՝ որ բաւական համարիք էն որ ձեռներու-
,, մըդ է․ ինչու որ՝ հէնց ինքն ասաց թէ՝ չեմ
,, թողիլ քեզ և երեսիցս չեմ քցիլ (Եբրայ․
ԺԳ․ 5)։

,, Ամէն աղօթքներով և խնդրուածներով՝ ամէն
,, ժամանակ աղօթք արէք հոգւով՝ և նորա հա-
,, մար արթուն կեցէք ամէն համբերութենով՝ և
,, ամէն սրբերին համար աղաչանք անելով․
(Եփես. Զ. 18)։

,, Թէ որ նախատւինք էլ ձեզ վերայ գան Քրիս-
,, տոսի անունին համար, երանելի էք. ինչու
,, որ փառքի և զօրութեան անունն է՝ և Աստու-
,, ծոյ հոգին ձեզ վերայ հանգչել է (Ա. Պետ.
Դ. 14)։

,, Հոգւոյ պտուղն էս է՝ սէր, ուրախութիւն,
,, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրու-
,, թիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն,
,, պարկեշտութիւն (Գաղ. Ե. 23)։

,, Ինչ որ ճշմարտութենով է՝ ինչ որ պարկեշ-
,, տութենով, ինչ որ արդարութենով, ինչ որ
,, սրբութենով, ինչ որ սիրով, ինչ որ բարի
,, անունով, ինչ որ քաջութենով, ինչ որ գո-
,, վութենով, նորան մտածեցէք (Փիլիպ. Դ. 8)։
,, Ինքն խաղաղութեան Աստուածն՝ ձեզ ամէն
,, կերպով սուրբ անէ. և ձեր բոլոր հոգին և
,, շունչն և մարմինն անարատ պահվի՛ մինչև 'ի
,, մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալն (Ա. Թես.
Ե. 23)։

,, Սորանով գիտացինք (Աստուծոյ) սէրն որ
,, Քրիստոս իրան անձըն մեզ վերայ դրաւ. և
,, պէտք է՝ որ մենք էլ մեր եղբարներին համար
,, անձներըս դնենք։ Որդեակներ՝ չի՛ լինի որ
,, խօսքերով և լեզուներով սիրենք. բայց գործ-

,, քով և Ճշմարտութենով (Ա. Յօհ. Գ. 16. 18)։
,, Հոգւով ջերմեռանդ էլէք. տէրին ծառայե-
,, ցէ՛ք՝ յուսով ուրախացէ՛ք՝ նեղութեան համ-
,, բերեցէ՛ք՝ աղօթքին խիստ հետեւօղ էլէք.
,, սրբոց հարկաւոր՝ լինօղ բանին հաղորդ էլէք՝
,, օտարասիրութեան հետեւեցէ՛ք։ Ձեզ անիծօղ-
,, ներին օրհնեցէ՛ք. օրհնեցէ՛ք և չի՛ անիծէք.
,, ուրախացօղներին հետ ուրախանալ՝ և լացօղ-
,, ներին հետ լալ՝ իրար հետ հենց մին խոր-
,, հուրդ ունենաք. ամբարտաւան չի՛ լինիք,
,, բայց խոնարհներին հետ խոնարհվեցէ՛ք. ձեր
,, անձներումդ՝ ձեզ իմաստուն չի՛ համարէք.
,, մընին չարի տեղակ չար մի՛ հատուցանէք.
,, ամէն մարդկանց առաջի բարի խորհուրդ ու-
,, նենաք։ Եթէ կարելի լինի ձեզ՝ ամէն մարդ-
,, կանց հետ խաղաղութիւն ունենաք։ Ձեր անձ-
,, ներիդ համար վրէժխնդրութիւն չի՛ անեք
,, սի՛րելիքներ. բայց բարկութեան տեղ տուէք.
,, ինչու որ գրված է՝ թէ վրէժխնդրութիւն
,, անելն իմս է՝ և ես կըհատուցանեմ, ասումէ
,, Տէր։ Բայց թէ որ քո թշնամին սոված լինի
,, հա՛ց տուր նորան. և թէ որ ծարաւ լինի՝
,, ջուր տուր. էս անելով՝ կրակի կայծակներ նո-
,, րա գլխին վերայ կըժողովես։ Չարին մի՛
,, յաղթվիր՝ բայց բարիովն յաղթի՛ր չարին։ "
(Հռովմ. ԺԲ. 17. և այլն)։

(ծա.) Սուրբ հաւատացեալներին ժողովուրդն սուրբ և երանելի մարդկանց ժողովուրդ է՝ որ Քրիստոս իրանց Գլուխ և Տէր ունին. և էնք մին մարմին սիրոյ կապանքով իրար հետ միաւորված են։

Ու էլ նորանք ամէն մեղքից հրաժարելով՝ ճշմար-տութեամբ Աստուծոյ ծառայութեան և նորան փա-ռաւորութեան մարտնչանց մէջն. և էլ ամենեցու-նեան և չարչարանաց մէջն յաւիտենական կենաց յուսոյ ուրախ են՝ և Աստուծոյ աւետարանով մխիթարութիւն ունին. մինչև որ իսպառ աշխարհ-քին յաղթեն՝ և Քրիստոսի մօտ փոխվին՝ և նո-րա հետ երանութեամբ յաւիտենական կեանք վա-յելեն։

,, *Քրիստոս սիրեց եկեղեցին և իրան անձն*
,, *նորա համար մատնեց՝ որ նորան սրբէ աւա-*
,, *զանի սրբութենովն՝ խօսքով։ Որ ինքն իրան*
,, *առաջին փառաւոր կանգնայնէ եկեղեցուն որ*
,, *չունենայ պակասութիւն կամ աղտեղութիւն*
,, *կամ ուրիշ էսպէսի բան. բայց որ սուրբ և*
,, *անարատ լինի* (Եփես. Ե. 25. 26. 27)։
,, *Աստուած Քրիստոսին դրաւ եկեղեցույ ամէն*
,, *բաներին գլուխ՝ որ նա նորա մարմինն է* (Եփես.
,, Ա. 22. 23).

,, *Ինչպէս որ մարմինն մին է և շատ անդամներ*
,, *ունի, և մարմնի էն շատ անդամներն մին մար-*
,, *մին են, էնպէս էլ Քրիստոսն։ Պատճառն*
,, *որ՝ մին հոգով մենք ամէնքս մին մարմին լի-*
,, *նելոյ համար մկրտվեցանք, թէ հրէաներ՝ թէ*
,, *հեթանոսներ՝ թէ ծառաներ՝ թէ ազատներ,*
,, *ամէնքս մին հոգի խմեցինք։ Եթէ մին ան-*
,, *դամ վիշտ ունենայ, ամէն անդամներն նորա*
,, *հետ վշտանումեն. և եթէ մին անդամ փառա-*
,, *ւորվի, ամէն անդամներն էլ նորա հետ ուրա-*
,, *խանումեն։ Բայց դուք Քրիստոսի մարմին*

,, էք՝ և նորա անդամներից անդամներ ( Ա.
,, Կորնթ. ԺԲ. 12. 13. 26. 27.)

,, Դուք ամենքդ որ Քրիստոսով մկրտվեցաք,
,, Քրիստոսին հագած էք. Ջոկութիւն չի կայ.
,, ոչ հրէային՝ և ոչ հեթանոսին, ոչ ծառային՝
,, և ոչ ազատին. ոչ որձին և ոչ էգին. ինչու
,, որ Յիսուս Քրիստոսում դուք ամենքդ մին
էք։ (Գաղ. Գ. 27. 28),

,, Ինչպէս Աստուծոյ ընտրվածներ սրբեր սիրե-
,, լիներ՝ հագէ՛ք գթածութիւնը, ողորմածութիւ-
,, նը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզու-
,, թիւնը, երկայնմտութիւնը՝ որ մինն մինին նե-
,, րող լինիք, իրար շնորհեցէ՛ք թէ որ մինն
,, մէկէլիյն մին տրտնջմունք ունենայ. ինչպէս
,, որ Աստուած Քրիստոսով մեզ շնորհեց, էն-
,, պէս էլ դուք։ Ու էս ամենիս վերայ սէրը
,, (հագէ՛ք) որ կատարելութեան կապն է։ Ու
,, Քրիստոսի խաղաղութիւնն ձեր սրտերումն
,, հաստատվի՛ որ դէպի նա կոչվեցաք մին մարմ-
,, նով. և (Աստուածանից) գոհացօ՛ղ էլէ՛ք՝ որ
,, Քրիստոսի խօսքն լիութենով ձեզանում բը-
,, նակվի՝ որ ամէն իմաստութենով իրար սովոր-
,, ցընէք և խրատէք՝ սաղմոսներով՝ օրհնութիւն-
,, ներով՝ և հոգևոր երգերով՝ և շնորհքով Աս-
,, տուծոյն օրհնէք ձեր սրտերումն (Կողոս. Գ.
,, 12. 13. 14. 15. 16)։

,, Ու թէ ապրումենք՝ տէրին ենք ապրում. և ե-
,, թէ մեռնումենք, տէրին ենք մեռնում. ուրե-
,, մըն եթէ ապրումենք և էթէ մեռնումենք, տէ-
,, րին ենք (Հռովմ. ԺԴ. 8)։

„ Թէ որ Քրիստոսին հետ յարութիւն առիք՝
„ ուրեմն վերին բաները խնդրեցէ՛ք, ուրտեղ որ
„ Քրիստոսն նստում է Աստուծոյ աջ կողմն. վե-
„ րինըն մտածեցէ՛ք՝ ոչ թէ էն՝ որ էս երկրիս
„ վերայ է, ինչու որ դուք մեռաք և ձեր կեանքն
„ Քրիստոսի հետ Աստուծոյ մէջ ծածկված է.
„ բայց երբ որ Քրիստոսն, ձեր կեանքն կըյայտ-
„ նըվի, էն ժամանակն դուք էլ նորա հետ փառ-
„ քով կըյայտնվիք (Կողոս. 4. 1. 2. 3):

„ Դուք ինչպէս կենդանի քարեր հոգևոր տա-
„ ճար էք շինվում, անարատ քահանայութիւն
„ ըլնելով՝ որ հոգևոր պատարագներ մատուցա-
„ նէք՝ Աստուծոյ հաճոյ Յիսուսի Քրիստոսի ձե-
„ ռովն: Դուք ընտրըված ազգ էք, թագաւորու-
„ թիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, սեփ-
„ հական ժողովուրդ, որ ձեր բարեգործութիւն-
„ ներըն ընծայէք նորան՝ որ ձեզ խաւարիցն դէ-
„ պի իրան զարմանալի լոյսն կանչեց (Ա. Պետ.
Բ. 5. 9):

„ Արանից ետև օտարական և պանդուխտ չէք,
„ բայց սրբերին հետ քաղաքակիցներ և Աստու-
„ ծոյ ընտանիներ. առաքելոց և մարգարէից հի-
„ մունքին վերայ շինած՝ որ նորա անկիւնի գը-
„ լուխն՝ Քրիստոս Յիսուս է: Որ նորանում
„ բոլոր շինվածն կապված և յարմարված է՝
„ և տէրին ձեռովն աճում է սուրբ տաճար ըլ-
„ նելոյ համար. որ նորանում դուք էլ նորա
„ հետ սուրբ հոգւով Աստուծոյ բնակութիւն էք
„ շինվում:(Եփես. Բ. 19. 20. 21. 22:)

„ Չէ՞ք գիտում՝ թէ դուք Աստուծոյ տաճար

,, էք՝ և Աստուծոյ հոգին ձեզանում է բնակ-
,, վում. եթէ մինն Աստուծոյ տաճարըն ապա-
,, կանէ, Աստուած էլ նորան կապականէ.
,, ինչու որ Աստուծոյ տաճարն սուրբ է. որ
,, դուք էք (Ա Կորն. Գ. 16. 17.)։
,, Կենդանի եմ՝ չէ՛ թէ ես, բայց Քրիստո-
,, սըն է կենդանի ինձանում. էլ ինչ որ հիմի
,, մարմնով ապրումեմ, Աստուծոյ որդւոյ հաւա-
,, տովն եմ ապրում. որ ինձ սիրեց՝ և իրան ան-
,, ձըն ինձ համար մատնեց։(Գաղ Բ. 20.)։
,, Ո՞վ կըբաժանէ մեզ Քրիստոսի սէրիցն՝ նե-
,, ղութիւն, թէ չարչարանք, թէ հալածմունք,
,, թէ սով, թէ մերկութիւն, թէ վիշտ, թէ
,, թուր. ինչպէս որ գրվածէ թէ՝ քեզ համար
,, ամէն օր ենք մեռնում, մորթվելու ոչխարի
,, պէս համարվեցանք։ Բայց ամէն էս բաներումս
,, էլ աւելի յաղթումենք նորանով, որ սիրեց
,, մեզ (Հռոմ. Ը. 35. 36. 37.)։
,, Էս ժամանակիս չարչարանքներն չեն արժա-
,, նաւոր էն գալու փառքին՝ որ մեզանում պիտի
,, յայտնվի (Հռոմ. Ը. 18.)։
,, Մեր առաքինութիւնն երկնքումն է՝ որ էն
,, տեղից փրկչի գալուն մտիկ ենք տալիս՝ Տէր
,, Յիսուսի Քրիստոսին (Փիլիպ. Գ. 20.)։
,, Քրիստոսին է իմ կեանքս՝ և մեռնելն ինձ
,, շահ է։ Աւելի լաւ եմ համարում (էս մար-
,, մնիցս) դուրս գնալ՝ և Քրիստոսի հետ լինիլ
(Ա. Փիլիպ. Ա. 21. 23.)։
,, Մենք քաղաք չունինք որ էստեղ մնալու
,, լինի՝ բայց էն նոր լինելուն խնդրումենք (Եբ-
րայ. ԺԴ. 14.)

,, Սի՛րելիներ՝ հիմիկ մենք Աստուծոյ որդիք
,, ենք՝ դեռ յայտնի չէ՝ թէ ինչ պիտի ըլլինք.
,, գիտումենք թէ՝ երբոր նա կըյայտնուի՝ նո-
,, րան նման կըլլինք. պատճառն որ՝ նորան
,, կըտեսնենք ինչպէս որ է։
,, Եւ ամէն ով որ էս յոյսը ունի իրան անձ-
,, նումն, իրան անձըն սրբումէ. ինչպէս որ նա
,, էլ սուրբ է (ա̄. յօհ. գ. 23։)
,, Բարի պատերազմ պատերազմեցայ՝ վազելըն
,, կատարեցի, հաւատքըն պահեցի. սրանից ետև
,, պատրաստված է ինձ համար արդարութեան
,, պսակն, որ Տէրն էն օրումն կըհատուցանէ.
,, արդար դատաւորն. և ոչ մէնակ ինձ, բայց
,, ամէններին էլ, որ նորա յայտնութիւնըն սի-
,, րեցին։ Տէրն կըփրկէ ինձ ամէն չար գործ-
,, քերից. և ազատ կըհասցնէ իրան արքայու-
,, թիւնն. որ երկնքումն է. նորան փառք (ըլնի)
,, յաւիտեանս ամէն։(բ̄. տիմ. դ. 7. 8. 18.)։

Ինչպէս էր առաքելոց վարդապետութիւնն՝ որ նորանք ամէն տեղ՝ և ամէն չարչարանքի մէջըն Աստուծոյ զօրութենովն քարոզեցին՝ և սուրբ հոգւոյ վկայութենովն և շատ հրաշ-քներովն հաստատեցին։ Ամէն ով որ հին կտակարանի խօսքերըն գիտումէ, յայտնի տեսնումէ և իմանումէ՝ թէ առաքեալներն հենց էն փրկութիւնըն քարոզեցին՝ որ ադամին և աբրահամին և ամէն մարգարէներն առաջուց յուսային և պասմեցին՝ թէ գալու է։ Սուրբն Աստուծոյ հին խոստմունքներն և առաքելոց քարոզութիւնըն էնպէս համաձայնումեն՝ որ

ամէնն մի Աստուծոյ մի յայտնութիւն է ։ Որ ինչ մարգարէներն իբր յետոյ լինելու բան առաջուց պատմեցին՝ հենց էն բանըն առաքեալներն իբր կատարուած՝ և ամէն մարդկանց համար պատրաստուած ցոյց տուին ։

(2.)

Բայց պէտք է՝ որ էս քարոզութեանս պտուղներըն էլ տեսնենք՝ որ իմանանք, թէ մեղաւոր մարդիք ինչպէս հաւատքի զօրութենովն սրբվեցան մեղքից՝ և Աստուծոյ սուրբ և երանելի ժողովուրդ էլան՝ որ նոր կեանք էին վարում ։

Հաւատացելոց առաջին ժողովուրդն՝ որ երուսաղէմումն դէպի Քրիստոսն դարձաւ, իրանց հաւատալուցն ետև՝ ամէն կողմանէ նոր և միոյն Աստուծոյն նուիրուած ժողովուրդ էլաւ. ինչու որ՝ ամէնների սիրտն լուսաւորուած էր՝ և աշխարհքի ամէն բաներըն թողելով, միայն Աստուծոյ և եղբարց սիրովն էր բորբոքվում և երկնաւոր շնորհացն հետևում էր ։ Ամէնքն սրտի մտօք առաքելոց վարդապետութեանըն հետևեցին՝ հաղորդութեան և աղօթք անելոյ համար իրար հետ ժողովված էին ։ Ամէն մարդկանց վերայ վախ ընկաւ՝ և առաքելոց ձեռներովն շատ նշաններ և հրաշքներ գործվեցան ։

Ամէն հաւատացեալներն մին տեղ էին՝ և ամէն բաներ իրար հետ հասարակ ունէին ։ Իրանց ապրանքներըն և բաներըն ծախումէին և նորանց ամէնին բաժանեցին, որին որ բան պէտք

լինէր ։ Օրէ ցօր միաբանութեամբ տաճարումն էին՝ և հացն տներումն էին կտրում ․ իրանց փրկչի մեռնելը յիշելու և իրանց սէրը հաստատելու համար, և ուրախ և միամիտ սրտով կերակուրը ուտումէին ։ Աստուծոյն օրհնութիւններով փառաբանումէին՝ և բոլոր ժողովուրդի առաջին սիրելի էին և տէրն էլ օրէ ցօր փրկվածների բազմութիւնը աւելացնումէր և նորանց հետ միաւորումէր ։ Ամէնքն սուրբ հոգով լցված էին՝ և Աստուծոյ բանը համարձակութեամբ խօսումէին ։ Եւ հաւատացելոց բազմութիւնն մի սիրտ և մի անձն էր և նորանցից ոչ ով իրան բաներին համար չէր ասում՝ թէ իրան են ․ բայց ամէն բաներ հասարակ էր նորանց միջումն ։ Շատ մեծ շնորհքներ կային նորանց ամէններին վերայ, և նորանցից ոչ ով կարօտութիւն չունէր ․ ինչու որ՝ նորանք որ գիւղերի կամ տների Տէր էին, նորանց ծախումէին՝ և էն ծախվածների գինը բերումէին, և առաքելոյն էին տալիս, և իրար վերայ բաժանումէին՝ ինչպէս որ մընին պէտք էր (Գործք․ Բ և Դ) ։

Բայց ինչպէս որ էն առաջին ժողովուրդն էլաւ, էնպէս էլ հեթանոսների միջից հաւաքված ժողովուրդներն էլան ․ Քրիստոսի աւետարանին հաւատալով՝ խաւարի իշխանութենից դուրս եկին, և Աստուծոյ և լուսոյ որդիք էլան, որ աշխարհքին, և մեղքին և հէնց իրանց համար էլ մեռած էին և մէնակ Աստուծոյ համար էին ապրում ։ Էնտուր համար լուսաւորված հոգ-

ւոյ աչքովն ոչ թէ էս աշխարհքիս երևելի բաներին մոլիկ տուին . բայց միայն յաւիտենական կենաց երանութեանն ցանկայան, մինչև որ էլ իրանց ապրանքների կորուստըն՝ ուրախութենով տարան և համբերեցին ։ Աստուծոյ սէրըն՝ որ սուրբ հոգւոյ ձեռովն նորանց սրտերի մէջ թափված էր, էնպէս ջերմեռանդութենով լցրուց նորանց որ՝ ոչ նեղութիւնք՝ և ոչ հալածմունք, ոչ սով և ոչ մերկութիւն՝ և ոչ էլ չարաչար մահն չի կարացին բաժանել նորանց իրանց փրկչի սէրից, և ոչ իրանց հաւատքի հաստատութիւնըն շարժել՝ կամ տկարացնել՝ բայց էն ամէնի մէջն յաղթեցին նորանով՝ որ առաջ սիրեց նորանց՝ և իրան կեանքըն նորանց վերայ դրաւ ։ Նմանապէս նորանց եղբայրսիրութիւնն էնքան ջերմեռանդ էր, որ մինն մըսին համար ոչ թէ մէնակ իրան ապրանքըն, բայց էլ իրան կեանքըն տալ պատրաստ էր ։ Ինուր համար հեթանոսներըն էլ զարմանալով ասացին՝ թէ տեսէ՛ք թէ Քրիստոնեաներըն ո՛րքան են իրար սիրում . և մինն մըսի համար մեռնել պատրաստ են ։( Տերտուղիանոսի Ջատագովութիւն )՝ բայց իրանց էն սէրն ոչ թէ մէնակ հաւատոյ եղբարց, բայց էլ ամէն մարդկանց ցոյց տուին՝ մինչև որ իրանց չարաչար թշնամիներին և հալածօղներին էլ սիրեցին՝ և նորանց համար աղօթք արին դէպի Աստուած ։ Ուրեմն ամէն կողմանէ սուրբ ժողովուրդ էին՝ որ Քրիստոսովն պատրաստված էին, բարի գործքերին հետևելոյ համար՝ Քրիստոսի պատկեր էին՝ որ նորան կա-

տարեալ սրբութիւնըն աշխարհքի մէջն յայտնումէր · սուրբ հօգւոյ տաճարք էին՝ որ նորանց նում բնակվումէր · և նորանց սիրտերըն լուսաւորումէր՝ սովորցնումէր՝ մխիթարումէր՝ զօրայնումէր և ամէն կերպ նեղութեանց մէջն՝ Աստուծոյ շատ քաղցր խաղաղութեանն լցնումէր , էնպէս որ միշտ երանելի էին Քրիստոսվըն՝ որ իրանց կեանքըն սէրն և յոյսն էր ։ Էս երկրիս վերայ օտար էին՝ և իրանց քաղաքավարութիւնըն երկնքումն ունէին · որ էնտեղ փոխվիլըն նորանց համար ամէնիցն քաղցր ցանկութիւն էր ։ Էնտուր համար հեթանոսների և հրէաների ղիմացն կարօղ էին համարձակութենով տալ և վկայել՝ որ քրիստոնեաներըն ոչ գաւառով կամ լեզուով՝ և ոչ քաղաքավարութենով ուրիշ մարդկանց ջոկված են ։ Հայրենական երկիրներումն բնակվումեն՝ բայց պանդուխտներին նման · ամէն բանի մասնակից են՝ ինչպէս քաղաքայիք՝ և ամէնին համբերումեն ինչպէս օտարներ ։ Ամէն օտար երկիրն նորանց համար հայրենական երկիր է · և ամէն հայրենական երկիրըն՝ նորանց համար օտար է · ամէնինպէս կին են առնում , զաւակ են ծնում · բայց երեխայներըն չեն սպանում · հացի սեղանին՝ ամէններին մասնակից են անում՝ բայց ամուսնութիւնըն սուրբ են պահում ։ Մարմնի մէջն բնակվում են , բայց մարմնինպէս չեն ապրում · երկրիս վերայ կեանք են վարում , բայց իրանց քաղաքավարութիւնըն երկնքումն ունին · հաստատված օրէնքներին հնազանդ են,

բայց նրանց կենդանութիւնըն օրէնքից աւելի կատարեալ է։ Ամէններին սիրումեն՝ և ամէններից հալածվումեն՝ չեն ճանաչվում և դատապարտվումեն, մահին տրվումեն՝ և կենդանի են լինում. աղքատ են՝ և շատերին հարըստացնում են. ամէն բանի կարօտ են՝ և ամէնըն լիութենով ունին։ Նախատվումեն՝ և նախատանքի մէջն փառաւորվումեն. չարախօսվումեն և արդարանումեն՝ թշնամանքով անարգվումեն՝ և օրհնումեն, ոչընչի տեղ են դնվում՝ և պատիւ են տալիս։ Նորանք բարի գործելոյ ժամանակն չարերին պէս պատժըվումեն՝ և պատիժ քաշելոյ ժամանակն ողջացածներին պէս ուրախանումեն։ Հրեաներն նորանց դէմ կռիւ են անում՝ իբր օտարների դէմ, և հեթանոսներն նորանց հալածումեն։ Բայց նորանց ատողներն մին ատելութեան պատճառ կարօղ չեն առաջ բերել։ Եւ որ ամէնն կարճ ասեմ՝ ինչ որ հոգին է մարմնումն՝ հենց էն քրիստոնեաներն են աշխարհքումն. հոգին մարմնի ամէն անդամների մէջն փռված է՝ էնպէս էլ քրիստոնեաներն աշխարհքի ամէն քաղաքներումն փռված են։ Հոգին թէ և մարմնումն բնակված է, բայց նա մարմնից չէ, էնպէս էլ քրիստոնեաներն աշխարհքումն բընակվումեն, բայց աշխարհքից չեն։ Աներևույթ հոգին՝ երևելի մարմնի մէջն պահպանվումէ՝ էնպէս էլ քրիստոնեաներն թէ և աշխարհքումըս են, բայց նորանց Աստուածպաշտութիւնըն աներևույթ է։

Մարմինն ատումէ հոգուցն՝ և նորա դէմ կռիւ է

անում, թէ և վնաս չի ընդունում՝ հոգույն, էնտուր համար՝ որ իրան ցանկութիւններն խափանվումեն․ էնպէս էլ աշխարհքն ատումէ քրիստոնեաներին առանց պատճառի՝ էնտուր համար որ ցանկութիւններին հակառակ են լինում ։ Հոգին սիրումէ ատօղ մարմինը և անդամները՝ էնպէս էլ քրիստոնեաներն իրանց ատօղներին սիրումեն․ հոգին թէ և մարմնումըն փակված է, բայց նա մարմինն պահումէ, էնպէս էլ քրիստոնեաներն թէ և աշխարհքումըն ինչպէս մին բանտի մէջ փակված են, բայց իրանք աշխարհքըն պահումեն ։ Անմահ հոգին ապականելի բնակարանի մէջն բնակվումէ՝ էնպէս էլ քրիստոնեաներն ապականելի աշխարհքումս օտարներին պէս բնակվումեն, մտիկ տալով երկնքումն լինօղ անապականելի երանութեանն և բարիքներին ։ Հոգին՝ մարմնաւոր ուտելիների և ըմպելիների պակասութենովն լաւանումէ, էնպէս էլ քրիստոնեաներն՝ երբ որ օրէցօր չարչարվումեն՝ շատութենով աւելանումեն ։ (Յուստինոս Մարտիրոս փիլիսոփայէն Գրած Դիոգնետոսին)։ Մենք քրիստոնեաներս խելի չար բան չենք ուզում․ խելի մին Քրիստոնեայ մին չարագործութեան համար յանդիմանված չէ՝ եթէ որ մեզանից մինն իբր չարագործ և յանցաւոր յայտնվի, մենք չենք ուզում՝ որ մինն խնայէ մեզ․ բայց որ չարաչար պատիժներ մեզ վերայ գան։ Մեր ռամիկ արհեստաւոր մարդիքն և մեր կնանիքն էլ՝ թէ և ճարտարաբան խօսքերով չէն կարօղ խօսիլ իրանց հաւատքին համար բայց ցոյց են տալիս նորան ճշմարտութենով և գործով ։

Ուղորդ որ արհեստով խօսքեր չեն շինում, բայց գործով ուրիշներին բարեգործութեան և սրբութեան բարի օրինակներ են տալիս։ Նորանք երբ որ թակվումեն, իրանք չեն թակում. և դատաստան չեն անում նորանց դէմ, որ իրանց բաներըն զօրով առնումեն։ Ով որ բան է խնդրում նորանցից՝ նորան տալիս էն, և ընկերին իրանց անձին պէս սիրումեն։ Ուրեմն եթէ չի գիտէինք՝ թէ ամէն աշխարհքի կառավարիչն մեզ հետ է, ինչպէս կարելի էր էն՝ սրբութենովն ապրիլ՝ որ նորանով մենք կառավարվումենք (Աթէնագորայի Ջատագովութիւն)։

Մեր ամէն կնանիքն պարկեշտ են՝ և մեր աղջիկներն Աստուածային բաներին վերայ խօսումեն՝ երբ որ իրար հետ մանումեն կամ բուրդըն պատրաստումեն (Տատիանոս Հեթանոսներին դէմ գրած գրքումն)։

Էս վկայութիւններս յայտնի ցոյց են տալիս՝ թէ որքան զօրաւոր էր աւետարանի վարդապետութիւնն։ Ոնց են մարդիկն՝ որ խաւարի ամէն պղծութեան մէջն կեանք էին վարել, էնքան փոխվեցան Քրիստոսի հաւատովն՝ որ խապառ մեղըն և աշխարհքըն և մարմնի ամէն ցանկութիւններըն թողեցին՝ և միայն Աստուծոյն սրբութենով ծառայեցին՝ և յաւիտենական երանութեանն մտիկ տուին։ Իրաւ՝ որ նորանք սուրբ ժողովուրդ էին՝ որ աւելի ցանկանումէին մեռնիլ, քան թէ Քրիստոսիցըն հեռանալով՝

մին էլ մեղք գործել և սատանայի կամքն կատարել ։ Քրիստոսին իբր իրանց Ճշմարիտ տէր և թագաւոր բոլոր սրտով պատուեցին, և մէնակ նորան ամէն հնազանդութենով հետևեցին ։ Ուրեմն ամէն աշխարհքին յայտնի էլաւ՝ թէ նորանք են Քրիստոսի ժողովուրդ և թագաւորութիւն՝ որ նա մարդկանց մէջն հաստատել է ։ Բայց որքանհաւատացելոց ժողովուրդներն սրբութենով երևելի էլան և ցոյց տուին՝ թէ սատանայի և մեղքի իշխանութենիցն դուրս եկին և Քրիստոսին երանելի էլան, էնքան խաւարի իշխաննջանք արաւ՝ որ էն նոր բուսած ժողովուրդներըն քանդէ. նորա համար՝ որ իրան իշխանութիւնըն մարդկանց մէջն հաստատ մնայ՝ և Քրրիստոսի աւետարանովն չի կործանվի ։ Էս պատճառով՝ առաջ հրէաներն գրգռեց՝ որ ամէն կերպով Քրիստոսի ժողովուրդըն նեղացնեն՝ հալածեն և տանջանքով մահցանեն ։ Եւ երբ որ հրէաների ազգն իրանց մեղքի չափըն լըցրուց և երուսաղէմի քանդվելուցն ետև ամէն աշխարհքի կողմերըն փուլեցաւ, էն ժամանակն հեթանոսներն և նորանց զօրաւոր թագաւորներըն սկսեցին Քրիստոսի հաւատացեալներին հալածել և տանջել և չարաչար կերպով սպանել, և մանաւանդ հռօմայեցոց զօրաւոր կայսերներըն՝ որ էն ժամանակն աշխարհքի շատ երկիրներին վերայ թագաւորեցին, երեք հարիւր տարի ամէն ջանքով հետևեցին. որ հալածելով՝ տանջելով և սպանելով քրիստոնեաների անունըն խսպառ կորցնեն երկրիս երեսի-

ցըն ։ Էնտուր համար քրիստոնեաներն միշտ սպանվելու ոչխարների նման մահի մօտ էին՝ և խելի հանգիստ չունէին, և շատ անգամ էլ իրանց տները և ապրանքները թողեցին և չեօլերումն և սարերումն բնակվումէին, և էնտեղ ժողովվումէին՝ որ իրար մխիթարելով Քրիստոսի հաւատքըն պահեն ։ Բայց նորանցից հազար հազարաւորք հալածօղների ձեռքն ընկան և ամէն կերպ տանջանք քաշելուցն ետև՝ կամ սրով՝ կամ կրակով՝ կամ գազանների բերանովն կորան և սպանվեցան ։ Էն ժամանակն շատ անկարելի էր երևում՝ որ Քրիստոնեաների ժողովուրդն մնայ և ապրի երկրիս վերայ • ինչու որ՝ աշխարհքի մեծամեծ կայսերներն և իշխանքներն՝ որ ամէն մարդ իրանց ձեռքն ունէին, Քրիստոսի անունին էնքան հակառակ էին • որ ամէն Քրիստոնեաներին իբր չարագործ էին համարում և սպանում էին • ապա ով էր կարող նորանց հակառակ կալ ։ Բայց Քրիստոնեաներն չի՛ կորան՝ բայց ամէն հալածմունքի և տանջանքի մէջն՝ է՛լ աւելի շատացան ։ Ո՛չ սուր և ո՛չ կրակ կարող չէր նորանց Քրիստոսից ջոկել, բայց նորանք փրկչի սիրովն է՛նքան բորբոքվեցան, որ զարմանալի համբերութենով ամէն կերպ նեղութիւնք քաշեցին՝ չափաչար տանջանքի մէջն Աստուած օրհնեցին, և Քրիստոսի անունըն փառաբանեցին, և էլ ուրախութենով կրակի՝ և արիւնի ծարաւ գազանների մէջ մտին և մեռան ։ Էնքան էր նորանց համբերութիւնն և

ուրախութիւնն իրանց չարչարանքումն, որ հա-
լածօղներըն և տանջօղներն էլ շատ անգամ
զարմանումէին՝ և ապաշխարութենով լցված՝
Քրիստոսին հաւատքով ընդունումէին և մկըրտ
վելով՝ ժողովուրդի անդամ էին լինում ։ Ու-
րեմըն որքան հեթանոսներն Քրիստոսի հաւա
տացեալներին հալածեցին և տանջեցին, էն-
քան յայտնի էլաւ ամէններին՝ թէ նորանց հա-
ւատքըն Աստուծոյ գործ է՝ և ամէն բանի յաղ-
թումէ, և էնտուր համար էլ աւելի շատ մար-
դիք խաւարըն թողեցին՝ և հաւատքով Քրիս-
տոսի ժողովուրդին հետ միաւորվեցան ։ Որքան
մարտիրոսների արիւնն թափվեցաւ, էնքան հա
ւատացեալոց ժողովուրդն նոր անդամներով հաս
տատվեցաւ. և մարտիրոսների արիւնն եկեղեց-
ւոյ համար շատ պտուղ բերօղ սերմն էլաւ ։
Վերջն Աստուծոյ զօրութենովն՝ լոյսն խա-
ւարին յաղթեց. ինչու որ՝ էն ամէն հալած-
մունքների մէջն Քրիստոնէից ժողովուրդն կա-
մաց կամաց էնքան մեծացաւ, որ երեք հարիւր
տարի Քրիստոսից ետև հռօմայեցոց ամէն
երկիրներումն մարդկանց մեծ մասն Քրիստո-
սի հաւատքըն դաւանեցին՝ և կռապաշտու-
թիւնն օրէցօր տկարացաւ ։ Ապա էն ժամա-
նակումն Աստուած էլ կոստանդիանոս կայսե-
րի սիրտըն լուսաւորեց՝ որ կռապաշտութեան
խաւարըն թողեց, և Քրիստոսի աւետարա-
նի լոյսըն ընդունելով Քրիստոսին իրան տէր
և թագաւոր խոստովանեցաւ և նորան հնա-
զանդվեցաւ ։ Սրանից ետև հալածմունքն դա-
դարեցաւ՝ և քրիստոնէից ժողովուրդներն ամէն

տեղ հանդիստ վայելելով՝ էնքան շատացան, որ Քրիստոսի հաւատքն հռօմայեցոց ամէն երկիր ներումը սկսեց տիրել, և կռապաշտութեան ամէն նշաններըն ջնջել ։ Ապա էն անարգված վարդապետութիւնն՝ որ նորան առաջ՝ տասներկու ձուկն որսող մարդիք մէ ակ հրէաստանումըն քարոզել էին, փիլիսոփաների իմաստութեանըն և մեծամեծ հեթանոսական կայսերի իշխանութեանն՝ և ամէն կռապաշտներին հակառակութեանն էնքան կատարելապէս յաղթեց, որ ամէնքն պէտք էր խոստովանին, թէ նա էն ճշմարտութիւնն է՝ որ Աստուածանից յայտնըված՝ և Աստուծոյ զօրութենովն հաստատված է մարդկանց մէջն՝ որ ամէնքն նորանով լուսաւորվին՝ և Աստուծոյ սուրբ ժողովուրդ լինին ։ Ու էն յաղթութիւնն ոչ թէ սրով կամ մարդկանց զօրութենով կատարվեցաւ, բայց մէնակ Աստուծոյ բանովն որ Քրիստոսի աշակերտներին զօրացրուց և Աստուծոյ լուսովն նորանց թշնամիներին յաղթեց ։

Այս զարմանալի յաղթութեանս պտուղն էն էր որ նորանով Քրիստոսի թագաւորութիւնըն յայտնի էլաւ. էնպէս որ ամէնիցն մեծ կայսրըն էլ իրան տէր և թագաւոր ճանանչեց նորան՝ և երկրպագութիւն տուաւ նորան ։ Անտուր համար հեթանոսական պիղծ և անիրաւ սովորութիւններն ջնջվեցան՝ և թագաւորութեան օրէնքն և կառավարութիւնն էլ Քրիստոսի աւետարանին կեօրէ կարգվեցան՝ էնպէս որ ամէն մարդոյ համար արդարութիւն և հան-

դիստ էր հաստատվում: Բայց էս յաղթութիւնըս ոչ մինակ հռոմայեցոց երկիրներըն Քրիստոսի աւետարանովն լցրուց, բայց ուրիշ հեթանոսներըն էլ էն մեծ բաներն տեսնելով՝ սկսեցին իրանց կռապաշտութեան խաւարն իմանալ և Աստուծոյ լուսոյն ցանկանալ: Ընտուր համար առաջ հայք, վրացիք, եթովպացիք՝ և յետոյ էլ եւրոպայի շատ ազգերն՝ ինչպէս որ ֆրանցուսացիք, սպանիացիք, ինկլիզացիք և նէմսացիք Աստուծոյ աւետարանըն ընդունեցին՝ և կռքերիցն դէպի Քրիստոս դարձան: Ապա Քրիստոսի եկեղեցին ասիայի և աֆրիկայի և եւրոպայի մէջն շատ փառքով ծաղկումէր՝ և նորա անդամներըն ամէն տեղ մեծ հանգստութիւն էին վայելում:

Բայց երբ որ Քրիստոսի եկեղեցին դրսեանց էնքան մեծացաւ, հանգստութիւն գտաւ և փառաւոր էլաւ, շուտով ներսևանց էն երկնաւոր գեղեցկութիւնըն՝ որ առաջ ունէր, իւր հաւատոց և սիրոյ ջերմեռանդութիւնն և կեանքի սրբութիւնըն կորցրուց՝ և աշխարհական և մարմնաւոր բաներով լցվաւ: Քրիստոսն ինքն առաջուց պատմեց՝ թէ «սատանայն կըգայ և
„ մարդկանց քուն լինելոյ ժամանակն՝ լաւ ցորե-
„ նի մէջ որոմ կամ՝ չար խոտէր կըսէրմէ
„ (Մատթ. ԺԳ. 24—30): Ապա հիմիկ էն ժամանակն հասաւ՝ ինչու որ եկեղեցին հանգիստ գտնելով՝ կամաց կամաց արթուն լինելըն մոռացաւ՝ և սատանայի խաբէութեանըն ներս մտնելոյ տեղ տուաւ: Նա առաջ ջանք արաւ

որ հալածմունքով Քրիստոսի ժողովուրդըն կորցնէ , բայց ինքն յաղթւեցաւ • Էնտուր համար հիմիկ խաբելոյ և մոլորացնելոյ հնարք գըդաւ որ հանգստութեան ժամանակումն տկարացնէ և կորցնէ նորան , և էս խաբէութիւնս էլ շատ յաջողակ էլաւ նորան ։ Պատճառն որ՝ շատ մարդիք սկսեցին քրիստոնեայ լինիլ և քրիստոսին բերանով դաւանել մէնակ էնտուր համար՝ որ թագաւորներին ընդունելի լինին՝ և նորանցից փառք և պատիւ ստանան • բայց իրանց սրտերումն խիղճ չի ապաշխարեցին՝ և հաւատքի լոյսըն չի ընդունեցին ։ Էս պատճառովըս մկրտութենից ետև էլ իրանց մարմնաւոր ցանկութիւններըն և աշխարհքի սէրին պահեցին՝ և Քրիստոսին դաւանելով՝ հեթանոսական կերպով կեանք վարեցին ։ Էնպէս կամաց կամաց աշխարհքի իմաստութիւնն՝ փառասիրութիւնն՝ արծաթասիրութիւնն՝ և ամէն մեղաւոր ցանկութիւններ եկեղեցուց մէջ մտին և նորա անդամներին վերայ տիրապետեցին ։ Նրա համար էն ժամանակին շատ հերձուածողներ սկսեցին դուրս գալ և եկեղեցուց շատ անդամներին մոլորացրին և հաւատացեալներին հալածեցին • եկեղեցուց վարդապետներըն էլ Քրիստոսի և առաքելոց խոնարհութիւնըն և աղքատութիւնըն մոռացան՝ և էս աշխարհքիս սէրըն նորանց մէջ մտաւ և շատերին վերայ տիրեց ։ Ապա եկեղեցուց միջումն էլ կռիւներ և հակառակութիւններ էլան՝ մինչև որ հռօմայ պապն իրան անձըն ամէն քրիստոնեաներին գլուխ և Քրիստոսի փոխանորդ ասաց և մեծ և անամօթ

ամբարտաւանութենով էնպէսի հրամաններ
տուաւ՝ որ Աստուծոյ բանին իսպառ հակառակ
էին. էն ժամանակումն Քրիստոսի աւետարանի
քարոզութիւնն պակասեցաւ և քրիստոնէից հա
սարակ ժողովուրդն տգիտութեան խաւարին
մէջ ընկաւ և աւելորդապաշտութեան կար-
ծիքներովն լցվաւ ։ Այս ամէն պատճառներովս
քրիստոնէութիւնն տկարացաւ՝ և երբ որ մահ-
մետն դուրս եկաւ՝ կարող չէին նորան հակա-
ռակ կալ բայց շատ երկիրներ մահմետականաց
ձեռքի տակ ընկան և նորանց բնակողներն շատ
կերտ տանջանք քաշեցին մինչև էսօր ։ Հենց
էնպէս էլ արևմտեան երկիրներն անխրատութե-
նով լցվածէին՝ մինչև որ դժուար էր՝ ճշմա-
րիտ հաւատոյ և Աստուածպաշտութեան նշա-
ներ իմանալ և տեսնել ։ Ապա մին էլ երևե-
ցաւ թէ սատանայի զօրութիւնն յաղթելէր
Քրիստոսի եկեղեցուն, բայց էնպէս չէր՝ ին-
չու որ՝ հենց էն ժամանակներումն Աստուած
կերպ կերպ գաւառների մէջն էնպէսի վարդա-
պետներ վեր կացրուց՝ որ բարձր ձայնով Քրիս-
տոսի աւետարանըն քարոզեցին և մարդկանց
կանչեցին՝ որ զղջանան և կենդանի հաւատ-
քով Քրիստոսին մօտ դառնան և նորա փրկու-
թիւնըն ընդունին. շատ մարդիք էլ արթուն
էլան և Քրիստոսի հաւատքովն լուսաւորված,
սրբված և զօրացած նոր և սուրբ կեանք վա-
րեցին և Աստուծոյ անունըն փառաւորեցին ։
Էն ժամանակիցն ետև շատ եկեղեցիներ էլ
սկսեցին Քրիստոսի աւետարանին աւելի մօտիկ
անել և տգիտութեան խաւարըն հեռացնել

բայց մանաւանդ էս մեր օրերումս հաւատքի
մեծ ջերմեռանդութիւն շատ երկիրներումն ծաղ-
կեցաւ . ինչու որ՝ շատ քրիստոնեաներ միաբան
կեցան՝ որ Աստուծոյ սուրբ գիրքերն ամէն ազ-
գի լեզուի մէջ թարգմանվին և ամէն մարդը-
ձեռքի մէջ տվվին . և շատ քարոզիչներ էլ դուրս
են գնում հեթանոս և կռապաշտ ազգերի մէջ՝
որ Քրիստոսի աւետարանն քարոզեն նորանց
և Քրիստոնէական հաւատքի լուսովն լուսա-
ւորեն : Ուրեմն տեսնումենք՝ թէ Քրիս-
տոս իրան եկեղեցին ոչ մէնակ պահպանեց՝
բայց էլ նորոգումէ և զօրացնումէ նորան՝ որ
մեծ թշնամեաց հակառակութեանն յաղթէ և
օրէցօր աւելի փառաւոր լինի . բայց դեռ վեր-
ջըն չէ հասած . ինչու որ աւելորդապաշտու-
թեան տեղակ էս մեր օրերումս մանաւանդ ան-
հաւատութիւնն մեծացաւ և շատ Քրիստոսի
անունովն մկրտուած մարդկանց սրտերըն և մըտ-
քերըն խաբումէ և մոլորացնումէ՝ մինչև որ
աւետարանըն ատումեն և ոչինչի տեղ համա-
րումեն : Բայց գիտումենք՝ թէ Քրիստոս էս
թշնամեաց էլ կըյաղթէ (յայտն . ժԹ . 11 . մինչև
21) . և վերջն իրան աւետարանի լոյսըն ամէն
ազգերի մէջ լուսաւորել կըտայ՝ մինչև որ ա-
մէնքըն նորան իրանց փրկիչ տէր և թագաւոր
կըճանաչեն (զաքար . ժդ . 8 . 9 . առաջ . հա) .
և Աստուծոյ գիտութիւնն ամէն երկրի բնա-
կօղներըն սուրբ և երանելի կանէ : Ապա էն
ժամանակումն յայտնի կըլինի , թէ ամէն ինչ
որ երկրիս վերայ մեղքով ապականվեցաւ՝ Քը-
րիստոսի ձեռովն կատարելապէս նորոգվեցաւ՝
և ինչպէս որ մարդն և երկիրն ստեղծագործու

թեան ժամանակում բարի էին, ինչպէս էլ էն վերջին ժամանակում կըլնին։

Վերջն՝ ոչ մէնակ սատանայն կըջնջվի՝ բայց էն ամէնն էլ՝ որ նորա խորամանկութենովն ապականվեցաւ էս երկրիս վերայ՝ որ հին ապըստամբութենէյն իսկի մին նշան չի տեսնըվի Աստուծոյ ամէնատուրը յաւիտենական թագաւորութենում։ Էնդուր համար Քրիստոսն՝ որ ամէններին համար կատարեալ փրկութիւն գործեց՝ և էն պատճառովն ամէններին տէր և թագաւոր էլաւ՝ իրան դատաստանի աթոռն կընըստի՝ որ խաղաղ ամէն աշխարհքի մէջ էլած ապըստամբըվածներին դատէ, և նորանց գործքերին պէս հատուցում տայ։ Ապա երկինքն և երկիրն նորա երեսիցն կըփախչին՝ և կրակով կայրվին. և ամէն մեռելներն յարութիւն կառնեն՝ և նորա աթոռին առաջի կը ժողովվին՝ որ իրանց գործքերին պէս դատվին (Է. պէտ. Գ. 10: յայտ. Ի. 11)։

Էն ժամանակն կը յայտնվի՝ թէ ով որ իրան մեղքերն, ապաշխարելով՝ Քրիստոսի փրկութիւնըն ընդունեց, և նորա արիւնովն արդարացաւ, յաւիտեան ընդունելի՝ արդար՝ և երանելի է՝ բայց ով որ Քրիստոսի փրկութիւնըն անարգեց, նա դողալով կը տեսնէ՝ թէ իրան մեղքն կըդատապարտէ նորան՝ ինչու որ անհաւատութենով էն իրան փրկիչն չի ընդունեց՝ որ նորան միշտ կանչումէր, որ ապաշխարէ և հաւատայ։ Էնդուր համար ամէն ով որ չի արդարացաւ Քրիստոսի հաւատովն՝ և Քրիստո-

սի թագաւորութիւնն չի մնար, դատաւորի ահաւոր ձայնը կըլսէ՝ թէ հեռու գնացէք ինձանից՝ անիծածներ՝ է՛ն կրակի մէջն՝ որ սատանային և նորա հրեշտակներին համար պատրաստւած է. բայց Քրիստոսի արիւնովը սրբուած հաւատացեալներն՝ անասելի ուրախութենով կըտեսնեն՝ թէ կատարեալ երանութեան ժամանակըն հասել է, որ ամէն մեղքի և աշխարհքի և մահի և սատանայի ահից և փորձանքից ազատուած՝ յաւիտեան Քրիստոսի հետ լինին և կատարեալ սրբութեան մէջն՝ կատարեալ երանութիւն վայելեն։ Պատճառն որ՝ նոր երկինք և նոր երկիր կըլլի՝ որ նորանում արդարութիւնն է բնակւած՝ և Աստուծոյ խորանն մարդկանց մէջն կըլլի՝ և նա նորանց հետ կըբնակվի՝ և նորանք նորա ժողովուրդ կըլլինին, և նա էլ նորանց Աստուած. և ամէն արտասունքները նորանց աչքերից կըսրբէ, և էլ մահ չի կայ. և ոչ սուգ, և ոչ աղաղակ՝ և ոչ ցաւեր, և ոչ աշխատանք էլ չի կայ. Ահա ամէնն նոր էլաւ՝ ամէնն կատարվեցաւ։ Մարդն փրկվեցաւ՝ սատանայն յաղթեցաւ. Աստուած փառաւորվեցաւ. և յաւիտեան կըփառաւորվի փրկված մարդկանց և ամէն հրեշտակների բերանովը ինչու որ Աստուծոյ և իրան Յիսուսի Քրիստոսի թագաւորութիւնն ամէն աշխարհքի վերայ էլաւ, և նա ամէնների վերայ կը թագաւորէ յաւիտեանս յաւիտենից (Յայտ. եր. ժա. 15)։

# Չորրորդ Գլուխ.

Նորա համար՝ թէ Աստուածաշունչ Գրոց վար-
դապետութիւնն Աստուծոյ հաստատել յայտնու-
թիւն է՝ և ամէն առաջնորդութեանց մերոյ հաստատ է:

Մինչև էստեղ հին և նոր կտակարանի վարդապետութիւնըն սկզբիցն մինչև վերջն. այ. ծննդոց գրքիցն մինչև յօհաննու յայտնութիւնն քննեցինք և նորա գլխաւոր մասունքները իմացանք. ապա կարող ենք ցոյց տալ թէ՝ էս վարդապետութիւնս ամէն կողմանէ Աստուածային է, կատարեալ և հաստատ:

(1)

Աստուածաշունչ գրքերն ոչ թէ մին մարդոյ ձեռով՝ և մին ժամանակում գրվեցան, բայց շատ մարդկանց ձեռովն և ջոկ ջոկ ժամանակներում՝: Հին եկեղեցոյ վարդապետներն քսան երկու գրքեր համարեցին հին կտակարանումն. որ նորանց գրողներն քսան և ինն մարդիք էին՝ (տե՛ս հնոցաց ընծայութեան. Ճառ Գ. և Յովհանէս ոսկեբերանի պատ. Գիրք Գ. Գլ. ՃԳ:) և նոր կտակարանումն քսան և եօթն գրքեր կան որ նորանց գրողներն ութ մարդիք են: Մովսէսըն՝ որ է առաջին գրողն,

օրէնքի գրքերըն հազար չորս հարիւր և ինըսուն տարի Քրիստոսին առաջ գրեց. և յոհաննէսն՝ որ է վերջին գրողն՝ յայտնութեան գիրքըն ինըսուն տարի Քրիստոսէն ետև գրեց: Ուրեմն մովսէսէն մինչև յոհաննէսն հազար հինգ հարիւր ութսուն տարի անցկացան: Բայց թէ և գրողները շատ էին՝ և ժամանակներով իրարից շատ ջոկված էին, բայց էնպէս էլ ամէնքն միաբան էին իրար հետ իրանց խօսքերումն, և մարդկանց փրկութեան մեծ խորհրդոյն վերայ հենց մին կերպով են խօսում. իբր թէ հենց մէնակ մին մարդ գրեց: Ինչ որ Մովսէսն գրեց, մարգարէներն հաստատեցին՝ և առաքեալներն նորա կատարվիլն ցոյց տուին: Ինչ խոստմունք որ փրկչին համար ադամին և աբրահամին էլան, և մարգարէների բերանովըն ամէն իսրայէլ ազգին տվեցան, էն ամէնքըն աւետարանն ցոյց է տալիս՝ թէ Յիսուսի գալովն և մեռնելովն կատարելապէս կատարվեցան. ինչ որ մարգարէներն Քրիստոսի աւետարանին և եկեղեցոյ և յաւիտենական արքայութեան համար առաջուց պատմեցին, էն ամէն առաքելոց խօսքերովն և մանաւանդ յայտնութեան գրքերովն էնքան հաստատված տեսնումենք, որ հին խոստմունքն և նոր պատմութիւնն ամէն կողմանէ միաբան և համաձայն են երևում: Բայց ով կարէ առաջուց գիտել և պատմել էն բաները՝ որ երեք կամ չորս հազար տարուցն ետև պիտի լինին և կատարվին, եթէ ոչ մէնակ ամենագիտողն Աստուած: Ու-

րեմըն հին և նոր կտակարանի ամէն գրողներն զարմանալի համաձայնութիւնն և միաբանութիւնըն յայտնի և հաստատ վկայութիւն է, որ ոչ թէ մարդկանց իմաստութիւնն, բայց Աստուծոյ սուրբ հոգին էն գրողներին լուսաւորեց՝ և առաջնորդեց, և նորանց ձեռովն Աստուծոյ յայտնութիւնըն մարդկանց համար գրել տըւաւ և հաստատեց։ Ինտուր համար մեր Աստուածաշունչ գիրքն Աստուծոյ յատուկ և սուրբ բան և յայտնութիւն է, որ փրկութեան Ճըշմարիտ Ճանապարհն ցոյց է տալիս մեզ։

(2)

Բայց Աստուածաշունչ գրքերումն յայտնված Աստուածային վարդապետութիւնն ոչ մենակ իրան ամէն գրողների զարմանալի միաբանութենովն է հաստատվում, բայց Աստուած ինքըն էլ վկայեց և հաստատեց նորան ամէն կերպ հրաշագործութիւններով՝ որ մարգարէների և առաքեալների ձեռովն կատարեց և ցոյց տուաւ մարդկանց մէջն, որ նորանք յայտնի տեսնեն և իմանան, թէ մարգարէների և առաքեալների խօսքերն և ուսմունքներն ոչ թէ մարդկանց՝ բայց Աստուծոյ յատուկ՝ բաներն և հրամաններըն են՝ որ նա մարդկանց յայտնեց․ նորանց մեղքի և սատանայի իշխանութենից ազատելոյ՝ և դէպի փրկութեան Ճանապարհն տանելոյ համար։ Ուրեմն հրաշագործութիւնների վկայութենովն էլ հաստատվումենք՝ թէ Աստուածաշունչ գիրքն՝ Աստուծոյ յատուկ սուրբ

(3)

բանն է։ Աստուածաշունչ գիրքն ոչ թէմարդոյ, բայց Աստուծոյ զօրութեամբն հազար հազարաւոր մարդկանց մեղքի և խաւարի պղծութեանցն դուրս հանեց՝ և նորանց սիրտըն էնքան փոխեց որ սուրբ վարքով մինակ Աստուծոյ համար ապրումէին՝ և նորան ծառայումէին։ Բայց ով կարէ մարդկանց սիրտերըն փոխել լուսաւորել և սրբել, եթէ ոչ մինակ Աստուած։ Էն մարդիքն էլ էնքան հոգւոյ երանութեամբն՝ և Աստուծոյ էնքան սիրովն լցվեցան, որ նորանից հազարաւոր հոգիք ամէն նեղութեանց և չարչարանաց ուրախութեամբ համբերեցին և աւելի սիրեցին՝ որով կամ կրակով մեռնել, քան թէ Աստուածաշունչ գրքի Ճշմարտութիւնըն ուրանալ։ Սուրբ անհամար վկաներ կան՝ որ ոչ մինակ իրանց կեանքովն, բայց էլ իրանց մեռնելովն հաստատ վկայեցին՝ թէ Աստուածաշունչ գիրքն՝ Աստուծոյ յատուկ սուրբ բանն է՝ որ նորանց մեղքին և կորուստին դէպի յաւիտենական փրկութեան և երանութեան Ճանապարհն առաջնորդեց և տարաւ։

(4)

Բայց Աստուածաշունչ գրոց վարդապետութիւնն ոչ մինակ շատ Աստուածային վկայութիւններով հաստատված է, բայց էլ նա ամէն կողմանէ սուրբ և կատարեալ է։ Եւ առաջ՝ նորա կատարելութիւնն նորանով յայտընվումէ՝ որ ամէն տեղ Աստուծոյ կատարեալ

իմաստութիւնըն և ամենակարողութիւնըն՝ ուէրըն և ողորմութիւնըն, և էլ արդարութիւնըն և սրբութիւնըն յայտ է տալիս մեզ ։ Աստուծոյ կատարեալ իմաստութիւնն նորանով յայտնըված է՝ որ նա աշխարհքի սկզբիցն առաջ մարդկանց փրկութեան խորհուրդըն հաստատեց. և ամէն ժամանակներումն էնպէս կառավարեց և հաստատեց, որ ոչ մարդկանց և ոչ էլ սատանայի հակառակութիւնն կարող էր շարժել կամ փոխել և կամ խափանել նորան. բայց թէ հրեաների թէ հեթանոսների հակառակութիւնըն՝ և թէ սուտ քրիստոնեաների ապստամբութիւնըն նա էնքան իմաստութեամբ թէ կառավարեց և թէ խափանեց, որ Քրիստոսի գալըստն և մեռնելուստն փրկութիւնն կատարեցաւ, և վերջն էլ փրկված մարդկանց ժողովուրդն ամէն չարութեան կը յաղթէ և Քրիստոսի թագաւորութիւնն ամէնի վերայ կը թագաւորէ ։ Ընդուր համար Աստուածաշունչ գրոց վարդապետութեամբ Աստուծոյ իմաստութիւնըն ամէնից յայտնի իմանումենք՝ մինչև որ մեր հոգին զարմանայ և խոնարհութեամբ փառաբանէ նորան՝ որ էնքան իմաստութեամբ մեր փրկութիւնըն հաստատեց և կառավարումէ ։ Աստուծոյ ամենակարողութիւնըն Աստուածաշունչ գրքերումն պատուաւոր յայտնութեամբ տեսնըվումէ՝ ինչու որ Էն փրկութեան խորհուրդըն՝ որ նա առաջուց հաստատեց, էնքան՝ զօրութենով կատարեց, որ ոչ մարդիք և ոչ սատանայն կարող եղխափանել նորան ։ Առաջ-

առաջին աշխարհքն ապստամբեցաւ մինչև որ մէնակ նոյ հաւատարիմ մնայ՝ բայց Աստուած ջրհեղեղովն աշխարհքըն սրբեց • յետոյ կռապաշտութիւնն էնքան զօրացաւ՝ որ երևումէր՝ թէ Աստուծոյ ամէն ճշմարտութիւնըն և նոր եկօղ փրկչի գիտութիւնն իսպառ պիտի կորչի մարդկանց միջից • բայց Աստուած աբրահամին՝ և իսրայէլ ազգըն ընտրեց և նորա միջումն իրան սուրբ օրէնքըն և փըրկութեան գիտութիւնն հաստատեց ։ Նրանից ետև իսրայէլ ազգն էլ ապստամբեցաւ՝ և կըռապաշտութեան մոլորութենովն պղծվեցաւ՝ բայց Աստուած իրան մարգարէներըն ուղարկելով՝ օրէցօր գալու փրկութեան գիտութիւնըն նորոգեց և աւելի հաստատեց, մինչև որ փըրկիչն ինքնին եկաւ ։ Նա անարգվեցաւ և սպանվեցաւ՝ բայց հենց էն խաչվելովն և մեռնելովն աշխարհքի փրկութիւնըն կատարեց և սատանայի իշխանութիւնն քանդեց ։ Նրա տասներկու աշակերտներըն և առաջին ժողովուրդներըն թէ հրէաներիցն և թէ հեթանոսներիցն անարգվեցան և հալածվեցան՝ բայց հենց էն հալածմանց մէջն եկեղեցին զօրացաւ • մինչև որ մեծամեծ երկիրների մէջն ամէն կռապաշտութիւնըն քանդեց, և ճշմարիտ Աստուածպաշտութիւնըն հաստատեց ։ Յետոյ աւելորդապաշտութեան խաւարըն՝ և նորանից ետև անհաւատութեան ամբարշտութիւնըն վերկացաւ և կամեցաւ աւետարանի ճշմարտութիւնն ջընջէ • բայց նա ամէնին կը յաղթէ, և վերջն էլ

ամէն սատանայական պղծութեան նշաններըն կըքանդէ՝ մինչև որ ամէն երկիրն Աստուծոյ փառքովը լցուած լինի և Աստուծոյ թագաւորութիւնըն նոր երկրի և նոր երկնքի մէջն յաւիտեան ծաղկէ ։ Ով․ քանի՜ իմաստութիւն և ամենակարողութիւն է՝ որ էս խորհրդովս յայտնըված է մեզ․ ծունր դի՛ր ով մարդ և երկըրպագութի՛ւն տուր Աստուծոյն՝ որ էսպէս պատրաստեց քո փրկութիւնըդ ։ Բայց Աստուածաշունչ գիրքն էլ յայտնումէ՝ թէ Աստուած սէր է և թէ սրբութիւն է ։ Թէ և մարդն իրան Աստուածանից և ստեղծօղից ապստամբվեցաւ, և սատանայի մոլորութեանն հետևելով՝ սաստիկ պատժոյ արժանաւոր էլաւ, բայց էնպէս էլ նորա ստեղծօղն չի թողեց նորան՝ բայց խորհուրդ արաւ՝ որ նորա մեղքըն ջնջէ թողէ և նորան ամէն թշուառութենից փըրկէ, և դէպի յաւիտենական երանութիւնն տանի ։ Բայց ի՞նչպէս կարելի է՝ մեղքըն էնպէս ջնջել՝ որ մեղաւորն իսպառ նորանից բժշկվի և սըբվի․ և ապա նորոգված սրտով և ամէն ջանքով նորանից փախչի և սրբութենով իրան անձըն պահէ ։ Իսկի մին ստեղծուած էութիւն կարօղ չէր էնպիսի խորհուրդ հանել․ որ դէպի կատարեալ փրկութիւնն տանէր, ինչու որ Աստուծոյ սրբութեան կողմանէ պէտք էր՝ որ մեղքն պատժվի՝ և նորա սէրն պահանջումէր թէ մեղաւորն փրկվի և շնորհք ստանայ ։ Ուրեմըն էնպէսի փրկութիւն պէտք էր հնարվի՝ որ մեղքն պատժելով և ջնջելով՝ Աստուծոյ արդարութիւնըն լցնէր՝ և էլ մեղաւորըն ապա

տելով սրբելով և յաւիտենական երանութեան մէջ տանելով՝ Աստուծոյ անճառելի սէրըն և ողորմութիւնըն յայտնէր ։ Աստուած մարդկին առաջուց ասաց՝ թէ որ ժամանակ մեղք գործէ, մեռնի․ ինչու որ մեղքի վարձքն մահ է (Հռոմ․ Զ․ 23)․ ուրեմն ապստամբեալ մարդն մահապարտ էլաւ՝ և յաւիտենական մահով պէտք էր մեռնի ։ Անոր համար՝ փրկութիւն չի կայ նորա համար․ եթէ ոչ առաջ նորա փրկօղն նորա տեղակ մեռնի և մեռնելով մեղքի պատիժըն իրան վերայ առնէ՝ և Աստուծոյ արդարութիւնըն կատարէ՝ էնպէս որ մեղաւոր մարդըն թողութիւն և յաւիտենական կեանքըն կարենայ ստանալ ։ Բայց ո՞ր ստեղծուած էութիւն կարօղ էր իրան կեանքըն մարդոյ համար տալ՝ և նորա տեղակ մեռնիլ ։ Ոչ ով․ ինչու որ ամէնքն իրանց կեանքըն Աստուածանից ունին՝ և կարօղ չեն նորան իրանց կամացն պէս ծախել ։ Բայց տեսէ՛ք Աստուծոյ անճառելի սէրըն․ ինչու որ՝ ինքն որդին՝ որ իրան անձնումն ունի կեանքըն որ էլ իշխանութիւն ունէր իրան կեանքըն դնելոյ՝ և մին էլ առնելոյ, նա ինքն եկաւ՝ մարմին առաւ, որ մարդոյ միջնորդ լինի․ և նորա համար իրան յատուկ կեանքըն պատարագ ընծայելով՝ մեղքի պատժիյն և յաւիտենական մահիյն ազատէ նորան ։

Ուրովհետև օրէնքումն հաստատուած էր՝ թէ առանց արեան թափելոյ թողութիւն չի լինի (Եբրայ․ Թ․ 22), նա էլ էնպէսի մեռնելոյ կերպըն ընտրեց, որ ամէն չարչարանքով լի-

նէր՝ և նորա ամէն արիւնըն երկրիս վերայ թափումէր՝ նրա համար՝ որ մարդն հաստատ վկայութիւն ունենայ, թէ իրան փրկչի մահովն իսպառ թողութիւն և փրկութիւն պատրաստված է նորա համար: Էն ժամանակն Աստուծոյ անասելի սէրըն լուսիցն յայտնի երևեցաւ ամէն մեղաւորաց. ինչու որ էնքան սիրեց մեզ՝ որ ոչ մէնակ խորհուրդ արաւ մեզ փրկելոյ, բայց էլ իրան որդին տուաւ մեզ համար. և ոչ մէնակ տուաւ, բայց էլ ամէնիցն չարաչար և դառն չարչարանքի և մահի մէջ տուաւ՝ մէնակ էնտուր համար, որ մեզ ապստամբված՝ հակառակօղ և դատապարտված մեղաւորներին փրկէ, և մեր մեղքն ջնջէ՝ և իրան Աստուածային սէրըն՝ մեր օտարացած սրտերումն թափելով՝ մեզ իրան մօտ տանի՝ և իրան հետ միաւորէ: Ով կարօղ է՝ էն սէրըն աժանաւոր պատմել. իրաւի, փրկված մարդիքն՝ և սուրբ հրեշտակներն յաւիտեան չեն կարօղ նորան բաւականապէս փառաբանել: Ամէն մեղաւոր մարդ՝ որ իրան կորուստըն իմանումէ, և ապա իրան Աստուծոյ էն սէրըն ճանանչում է, նա խոնարհութենով և ուրախութենով երկրպագութիւն կըտայ նորան՝ և անառակ որդոյն նման յետ կըդառնայ իրան երկնաւոր հօր մօտըն՝ որ թողութիւն և կեանք գտնէ: Առաջ վախեցաւ Աստուածանից. ինչու որ իմացաւ, թէ արդար դատաւորն կըդատէ նորան՝ և մեղաց համար կըդատապարտէ. և էնտուր համար չի համարձակվեցաւ ճշմարտութենով մօտենալ նորան՝ բայց օրէցօր էլ աւելի հեռացաւ

և նորա խղճմտանքն վախով և դողութենով լցվաւ ։ Բայց երբ որ տեսնումէ՝ թէ Յիսուս Աստուծոյ միածնունդ որդին՝ մեղաւորաց համար խաչին վերայ մեռաւ, որ փրկէ նորանց՝ ապա իմանումէ, թէ Աստուած սէր է՝ թէ նորա մօտ թողութիւն կայ. և էնտուր համար խղճմտանքն մխիթարութիւն է գտնում. և նորա սիրտն ուրախանումէ՝ և նորա ամէն բընութիւնըն բժշկվումէ, էն աւետարանովը՝ որ Աստուծոյ սէրն յայտնեց նորան ։ Էն ժամանակըն նա սիրումէ և փառաբանումէ էն Աստուծոյն, որ առաջ սիրեց նորան, և նորա համար կատարեալ փրկութիւն պատրաստեց և կատարեց ։

Բայց Յիսուսի մեռնելովը ոչ մէնակ Աստուծոյ սէրն կատարելապէս յայտնըվեցաւ, բայց էլ նորա կատարեալ արդարութիւնն և սրբութիւնըն ամէն մարդկանց դիմացն փառաւորվեցաւ ։ Պատճառն որ՝ թէ և Յիսուս Աստուծոյ սիրելի որդին էր, բայց մարդկանց միջնորդ լինելով՝ մեղքի ամէն պատիժն պէտք էր քաշել և թէ հոգւով և թէ մարմնով համբերել ։ Դատապարտված մեղաւորի նման գեթսեմանի պարտիզի մէջն յաւիտենական մահի ամէն դառնութիւնըն հոգւով իմացաւ՝ և էնտուր համար մահի չափ տրտմեցաւ, և արիւնի ռանկ քրտունք էր թափվում նորա մարմինից և վազումէր երկրի վերայ. յետոյ ոչ մէնակ անիծած չարագործի նման ամէնից չար և անարգված մահին խաչի վերայ մարմնով համբերեց,

բայց հոգւով էլ Աստուածային արդարութեան դատաստանըն է՛նքան ծանր և ահաւոր խմացաւ, որ էլ բարձր ձայնով աղաղակում էր՝ իմ Աստուած, իմ Աստուած՝ ինչո՞ւ թողի՛ր ինձ ։ Ո՜հ. որքան ահաւոր է Աստուծոյ սրբութեան էն յայտնութիւնն՝ որ Յիսուսի խաչի վերայ մեռնելովն տեսնըւումէ ։ Քանի՛ գարշելի է մեղքն առաջի նորա և քանի՛ անկարելի է՝ որ մին մեղաւոր մարդ մօտենայ նորան՝ որ Յիսուսի արիւնովն սրբված չէ ։ Ուրեմն դողացէ՛ք ով մեղաւորք՝ և Քրիստոսի փրկութիւնըն խնդրեցէ՛ք. որ սուրբ Աստուծոյ բարկութեան կրակն չի կործանէ ձեզ ։

Բայց Աստուածաշունչ գրոց վարդապետութիւնըն ոչ մէնակ Աստուծոյ ամէն կատարելութիւնըն յայտնումէ և նորան արժան է, բայց էլ մեղաւոր մարդոյն համար ամէն կողմանէ կատարեալ փրկութիւն է ցոյց տալիս՝ մինչև որ խկի մին բան պակասում չէ, նորան դէպի յաւիտենական երանութիւնըն տանելոյ համար ։ Մարդն մեղքով կուրացած է՝ որ ոչ իրան կորուստըն և ոչ էլ Աստուծոյ շնորհքըն ճանաչումէ և իմանում՝ բայց Աստուածաշունչ գիրքըն նորան սովորցնումէ և յայտնումէ, թէ Քրիստոս խաւարիյն ազատեց նորան՝ և սուրբ հոգոյ լուսովն կամենումէ լուսաւորել նորան՝ որ իրան հոգոյ հիւանդութիւնըն և Աստուծոյ շնորհքըն տեսնէ և դէպի փրկութեան գիտութիւնըն գայ ։ Լուսաւորված մարդն հոգոյ լուսովն իմանումէ՝ թէ ինքն մեղաւոր և

Աստուծոյ դատաստանովն դատապարտուած է, և էնտուր համար հողոյ մեծ տրտմութենովն լցուած է և շատ վախենում, թէ իրան մեղաց համար դժոխքի կրակն կընկնի։ Բայց Աստուածաշունչ գիրքն նորան յայտնում՝ թէ Յիսուս Քրիստոս նորա մեղքերըն վեր առաւ, և նորա տեղակ խաչի վերայ մեռնելովն ոչ մէնակ նորան մեղքի պատժիցն և յաւիտենական մահիցն ազատեց, բայց էլ Աստուծոյ առաջին ընդունելի արաւ. ինչպէս՝ որ թողութիւն և փրկութիւն պատրաստուած է նորա համար. միայն թէ հաւատով էն փրկութիւնըն խնդրէ և ընդունի, և դէպի իրան տէրն և փրկիչըն յետ դառնայ։ Էս էլ բաւական չէ. ինչու որ հաւատով փրկված մարդն մեծ տրտմութենով իմանում՝ թէ իրան սիրտն մեղաւոր է՝ և միշտ յօժար դէպի չարն՝ և էնտուր համար մեծ փափքով ցանկանում՝ որ մեղքի իշխանութենիցըն ազատվի և սուրբ սիրտ ստանայ, որ մէնակ Աստուծոյն՝ և նորա պատուիրանքըն սիրէ. և ահա Աստուածաշունչ գիրքըն նորան յայտնում. թէ նա Քրիստոսին հաւատալով՝ սուրբ հոգին կընդունի՝ որ նորա սիրտն սրբէ, Աստուծոյ սէրն նորա մէջ թափէ, մեղքըն մեռայնէ և նորան սրբութեան մէջ տանի և հաստատէ։ Վերջն էլ՝ որովհետև հաւատացեալ մարդն՝ որ յաւիտենական կեանքին ցանկանում, Աստուծոյ լուսովն՝ յայտնի իմանում՝ թէ էս աշխարհքիս մէջն քանի՛ փորձանք և մեղքի թակարդներ կան՝ որ մին էլ սատանայի ձեռքըն

կարօղ են քցել նորան • Էնտուր համար վախումն՝ և իրան տկարութիւնը ճանաչելով երկմտում, թէ թերևս անկարելի է՝ ամէն փորձանքին յաղթել և յաւիտենական փրկութեանը հասնել • բայց Աստուածաշունչ գիրքը սովորցնում նորան՝ թէ Քրիստոս միշտ նորա հետ է՝ և սուրբ հոգին օրէօր նորան զօրացնում և առաջնորդում նորան՝ մինչև որ ամէն թշնամիներին և փորձանքներին յաղթէ և յաւիտենական կեանքի մէջն մտնէ ։ Ուրեմն տեսնումենք՝ թէ էն փրկութիւնն՝ որ Աստուածաշունչ գրքերն ցոյց են տալիս՝ ամէն կողմանէ կատարեալ է ։ Էնտուր համար՝ ով է էն մարդն՝ որ չիմանայ՝ թէ էն գրքերն Աստուծոյ կատարեալ յայտնութիւն են, որ խսկի պակասութիւն չունեն՝ և ով է էն մեղաւորն՝ որ էս փրկութիւնս իմանայ և չի ընդունի՝ բայց անարգէ ։ Իրաւի որ՝ նա իրան անձըն ատում և իրան աչքերըն փակելով՝ և իրան Աստուծոյ սէրըն անարգելով՝ յօժար կամքով յաւիտենական կորուստըն է ընտրում , և փրկութեան ճանապարհ չունի ։ Էս հեռու լինի մեզանից • և էնտուր համար՝ բոլոր սրտով աղաչենք , որ նա մեր հոգոյ աչքերըն բանայ՝ նորա ճշմարտութիւնըն իմանալոյ համար՝ և մեր սիրտըն յօժար անէ իրան փրկութիւնըն ընդունելոյ համար ։

Բայց թէ և ամէն կողմանէ հաստատ և յայտնի է , թէ Աստուածաշունչ գիրքն Աստուծոյ սուրբ և կատարեալ յայտնութիւն և փարգա

պետութիւն է, որ ամէն մարդկանց համար կատարեալ և յաւիտենական փրկութեան ճանապարհըն ցոյց է տալիս. բայց էնպէս էլ շատ մարմնաւոր մարդիք կան որ էնքան ամբարտաւան են՝ և էս աշխարհքիս իմաստութիւնին և մեղաւոր հաշտութիւնըն էնքան սիրումեն, որ խիկի չեն կարենում Աստուծոյ բանըն իմանալ և նորա վարդապետութիւնըն ընդունել. բայց սուտ՝ ունայն և փուճ հակառակախօսութիւններ են հնարում՝ որ Աստուծոյ բանըն անարգեն՝ և իրանց մեղաւոր լինելըն ծածկեն: Էնպիսի մարդկանց համար Պօղոս առաքեալըն ասաց՝ թէ մարմնաւոր մարդն՝ Աստուծոյ հոգու բաներըն չի ընդունում՝ ինչու որ նորա համար հիմարութիւն է, և կարօղ չէ իմանալ (Ա. Կորն. Բ. 14) և՝ մին էլ թէ՝ խաչին համար ասած խօսքն կորածներին համար յիմարութիւն է. բայց մեզ փրկվածներիս համար Աստուծոյ զօրութիւն է (Ա. Կորն. Ա. 18): Ուրեմըն քանի որ մարդն խաւարի գործքերըն սիրումէ, և իրան սիրտըն սուրբ հոգու լուսոյն չի բանում, նա Աստուծոյ բանըն էլ չի սիրում՝ բայց անարգում է և նորա վարդապետութիւնըն ուրանում: Էնտուր համար զարմանալի չէ՝ որ մանաւանդ մահմետականներըն շատ հակառակ բաներեն խօսում՝ և կերպ կերպ տարակուսանք Աստուծոյ գրքին դէմ՝ առաջ են բերում. ինչու որ նորանց միտքներըն մարմնաւոր են և խաւարի սիրոմն խաբված և կուրացած են: Բայց որ ճշմարտութեան լոյսն էլ յայտնի լինի, էստեղ վերջն էլ քննենք՝ թէ

ինչպէս ունայն են նորանց հակառակախօսութիւններըն ։

(1)

Նորանց առաջին առարկութիւնն էն է՝ թէ «Աստ
,, ուած սուրբ գրքերըն՝ ի թօրվաթըն՝ զը-
,, պուրըն, և ինճիլըն երկինքն տարաւ՝ որ հի-
,, միկ մարդկանց մէջըն իսկի չեն երևում» · բայց արեգակի լուսիցն աւելի յայտնի է՝ թէ էս խօսքս ոչ մէնակ սուտ է, բայց էլ Աստուծոյ դէմ հայհոյանք է ։ Պատճառն որ՝ իսկի վկայութիւն չի կայ՝ թէ Աստուած իրան սուրբ բանի լոյսըն կամեցաւ հեռացնել մարդկանցիցըն և նորանց խաւարի մէջ քցել, բայց որովհետև մարդիք մեղքով խաւարված են, էնտուր համար իրան յայտնութիւնըն շնորհեց նորանց՝ և մարգարէների և առաքեալների ձեռովըն գրել տուաւ, որ մարդկանց ազգըն միշտ և ամէն ժամանակ փրկութեան ճանապարհըն կարենայ իմանալ և գտնել, և ապա Աստուծոյ սուրբ և երանելի ժողովուրդ լինիլ ։ Էնտուր համար ինքն էլ խօստացաւ՝ թէ իրան սուրբ բանի ճշմարտութիւնն և լոյսն ամէն խաւարին պիտի յաղթէ՝ և ամէն երկրի ազգերըն լուսաւորէ ։ Ուրեմն եթէ Աստուած իրան սուրբ բանըն երկինքն տարաւ, իրան խոստմունքըն չի պահեց՝ և էլ մարդկանց խաւարի մէջ քցեց՝ որ իսկի կարող չեն Աստուծոյ ճըշմարտութիւնն իմանալ և փրկվիլ, բայց պէտք է որ կորչին · էսպիսի խօսքս յայտնի հայհոյանք է ։

(2)

Ուրիշները ասումեն թէ՝ « Աստուծոյ առաջին
,, գրքերն մանսուխ էլան և նորանց խօսքերն և
,, պատուիրանքներըն հիմիկ զօրութիւն չունին ».
բայց էս ասղութիւնս էլ սուտ է. պատճա-
ռըն որ՝ ինքն Քրիստոս վկայումէ՝ թէ չի կար-
ծէք՝ թէ ես եկել եմ՝ որ օրէնքն և մարգարէ-
քըն քանդեմ, չեմ եկել քանդելոյ, բայց
կատարելոյ համար: Ճշմարիտն ասումեմ ձեզ՝
թէ մինչև երկինքն և երկիրս անցկըկենան՝ օ-
րէնքից և մարգարէներից մին կէտ՝ որ պըզ-
տիկ նշանագիր է՝ չի անց կենալ, մինչև ամէնն
չի կատարվի (Մատթ. Ե. 17. 18): Եւ իրան
յատուկ խօսքերին համար վկայումէ՝ թէ երկին-
քըն և երկիրս անց կը կենան և իմ խօսքերըս
չեն անցկենալ (Մատթ. ԻԴ. 35): Բայց ոչ
մէնակ Քրիստոս ինքնին մեզ վկայեց՝ թէ Աս-
տուծոյ բանն՝ որ նա մին անգամ յայտնեց՝ մին
չև յաւիտեան հաստատ կըմնայ, բայց հիմիկ
էլ ամէն ով որ Աստուածաշունչ գիրքըն կար-
դումէ, յայտնի կարօղ է տեսնել և իմանալ՝
թէ հին և նոր կտակարանն՝ մարգարէների և
Քրիստոսի, և առաքեալների վարդապետու-
թիւններն ամէն բանի համար միաբան են՝ և
իրար հետ իսկի հակառակութիւն չունին: Պատ-
ճառըն որ՝ հին կտակարանն պատմումէ՝ թէ
ինչպէս Աստուած մարդանց համար փրկու-
թիւնըն առաջուց պատրաստեց և խոստացաւ՝
և թէ օրէնքովն և մարգարէների բերանովն ա-
ռաջուց նշանակեց և պատմեց, բայց նոր կտա-

կարանըն ցոյց է տալիս՝ թէ ինչպէս էն խոս-
տացած փրկութիւնն Քրիստոսի ձեռովն կա-
տարվեցաւ և ամէն մարդկանց համար պատ-
րաստված և բացված է ։ Հին կտակարանն սո-
վորցնումէ՝ թէ մեղքով ապականված մարդն
իսկի կարօղ չէր Աստուծոյ սուրբ օրէնքն պա-
հել ․ և մին էլ էն մեղքով կորած սրբութիւ-
նըն ստանալ ․ բայց նոր կտակարանն յայտ-
նումէ՝ թէ Քրիստոս օրէնքն կատարելապէս
կատարեց՝ և սուրբ հոգոյն ուղարկեց , որ թէ
առաքեալներումն և թէ ամէն ճշմարիտ հա-
ւատացեալներումն ներգործեց՝ որ մեղքիյն սըր-
բըված՝ նոր սրտով Աստուծոյն սիրեցին՝ և նո
րա պատուիրանքն պահելով սուրբ կեանք վա
րեցին՝ և Աստուծոյ անունըն փառաւորեցին ։
Ինչ որ հին կտակարանումն մէնակ մարմնա-
ւոր պատկերով դըսըվանց կարգված էր , նոր
կտակարանումն հոգևոր կատարելութենով ներ
սըվանց կատարվումէ ։ Էնտեղ մարմնի լուաց-
մունք հաստատված էին , էստեղ հոգու սրբու-
թիւն է հաստատվում ։ Էնտեղ մարմինն թըլ-
փատումէին , էստեղ սիրտն է թլփատվում՝ և
ամէն ցանկութենիյն հեռանում ։ Էնտեղ ոչ-
խարներ էին պատարագ ընծայում՝ էստեղ հո
գևոր օրհնութիւններ և փառաբանութիւններ՝
և բոլոր կեանքըն են Աստուծոյ պատարագ
ընծայում՝ նորան ծառայելոյ համար սուրբ
վարքով ։ Ուրեմն յայտնի է՝ թէ Աստուծոյ ա-
մէն գրքերն միաբան են՝ և մինն մընին իսկի չեն
հակառակում ․ և էնտուր համար սուտ է էն
ասողութիւնն՝ թէ մինն մընին քանդեց ։

(3)

Բայց Գլխաւոր հակառակութիւնն՝ որ նորան
մահմետն իրան ղուրանումն առաջ բերաւ, էն
է՝ թէ » հրէաներն և քրիստոնեաներն Աստուա
,, ծաշունչ գիրքըն մահմետի ժամանակումն թէ
,, պակասացնելով և թէ աւելացնելով ապականե
,, ցին • պատճառն որ՝ մահմետին անարգելոյ հա
,, մար Աստուածաշունչ գրքերից էն ամէն հա-
,, մարներըն որ նորանցում մահմետի գալոյն հա-
,, մար մարգարէութիւն կար, դուրս քցեցին,
,, և Քրիստոսի Աստուած լինելոյ և նորա մեռ-
,, նելոյ և փրկիչ և միջնորդ լինելոյ համար նոր
,, հնարված բաներ մէջն դրին ։

Բայց էս ասողութիւնս խալառ երեխայական խօսք է • պատճառն որ՝ ամէն կողմանէ անկա-րելի էր՝ որ հրէաներն կամ՝ քրիստոնեաներն էդպիսի բան անեն • ինչպէս որ կերպ կերպ ծա-նըր պատճառներով յայտնի կըլինի ։ Առաջ՝ հրէաներն Աստուածանից հրաման ունէին՝ թէ խակի մին բան չի՛ աւելացնէք էնխօսքին վե-րայ՝ որ ես պատուիրումեմ ձեզ՝ և չի՛ կորէք նորանից (Երկրորդ օրէնք • դ • 2 ։) ։ Ու մինէլ՝ Աստուծոյ ամէն խօսքերն ընտըրված են՝ և նա իրան վախացողներին վերակացու է • չի՛ աւելացնես նորա խօսքերին վերայ՝ որ չի՛ յան-դիմանէ քեզ և սուտ լինիս (Առակ • լ • 5• 6)։ Էնտուր համար հրէաներն թէ մովսէսի և թէ ուրիշ մարգարէների գրքերին համար էնքան զգուշութիւն արին, որ էլ ամէն համարներըն՝ և ամէն համարների գրերըն համարեցին և

գրով նշանակեցին՝ մինչև որ անկարելի էլաւ՝ թէ մին մարդ կամ մին ժողովուրդ մէնակ մին գիր Աստուծոյ գրքիցն դուրս հանէ, և կամ աւելցնելով ներս բերէ: Ուղորդ է՝ հրէաներն կամաց կամաց շատ աւանդութիւներ հնարեցին և մեծ գրքերի մէջ ժողովեցին, մինչև որ Աստուծոյ յատուկ վարդապետութիւնն մոռացան՝ և մէնակ էն ունայն աւանդութիւններըն սովորեցին և պահեցին, բայց էնպէս էլ օրէնքըն և մարգարէների գրեանքն էնքան պատուեցին, որ մէնակ մին գիր փոխելըն՝ մահի չափ մեղք համարեցին: Էնտուր համար՝ թէ և Յիսուսին անարգեցին և սպանեցին, բայց էնպէս էլ խիկի մին մարգարէութիւն՝ որ նորա համար հին կտակարանումն գրած էր, չի քանդեցին կամ փոխեցին. բայց էն ամէնըն էսօր էլ նորանում կան և հրէաներին դէմ վկայումն: Սրանից յայտնի է՝ թէ խիկի կարելի չէր որ հրէաներն մահմետի պատճառովն մին խօսք փոխէին Աստուածաշունչ գրքերումն: Բայց Քրիրիստոնեաներն էլ կարօղ չէին՝ նոր կտակարանի խօսքերն փոխել՝ պատճառն որ՝ նորանք էլ հրաման ունէին Աստուծանից՝ թէ ամէն ով որ աւելի կաւելացնէ քան թէ առաքեալներըն աւետարանեցին, նա անիծած կը լինի: (Գաղ. ա. 8): Եւ նոր կտակարանի վերջումըն գրած է թէ՝ ես վկայումեմ ամէնին՝ որ էս գրքիս մարգարէութեան խօսքերըն լսում է՝ թէ ով որ սորա վերայ բան աւելացնէ՝ Աստուած էլ նորա վերայ կաւելացնէ էն եօթն պատիժ-

ները՝ որ էս գրքիս մէջն գրված են. և թէ որ մինն էս գրքիս մարգարէութեան խօսքերիցըն բան կըպակասացնէ, Աստուած էլ նորա բաժինըն կըպակասայնէ և կը կտրէ կենաց ծառիցըն՝ և սրբոյ քաղաքիցն՝ որ էս գրքիս մէջ գրված է (յայտ. ԻԲ. 18. 19): Քրիստոնեաներըն էլ Աստուծոյ գրքերըն էնքան պատուեցին, որ աւելի սիրեցին ամէն կերպ չարչարանք քաշելըն՝ քան թէ Աստուծոյ մի՛ խօսքն կորցնել. և էնտուր համար էլ իսկի մին մարդ չի ընդունեցին՝ որ Աստուածային գրքերի վարդապետութիւնըն թողելով՝ նոր բան սովորցըրուց, բայց մոլորված հերձուածօղ համարեցին նորան՝ և իրանց միջիցն դուրս հանեցին: Ուրեմն ինչպէս կարելի է թէ մահմետի ժամանակումն առանց վախենալոյ էն սուրբ գըրքերըն փոխեցին՝ որ թէ առաջ թէ յետոյ և թէ միշտ ամէն պատուով պատուեցին՝ և ամէն զգուշութեանով պահեցին: Անկարելի է:

Երկրորդ. հրեաներն և Քրիստոնեաներն մահմետի ժամանակումն ամէն աշխարհքի մէջ փռված էին և թէ ասիայի և թէ ափրիկայի և թէ եւրօպայի երկրներումն բնակված էին: Էնտուր համար հնդստանումն և կամ ինկլիզստանումն և ֆրէնկստանումն ու կամ ուրիշ հեռու երկրումն բնակվածներն մահմէտի անունըն շատ երկար ժամանակ չի լսեցին՝ բայց լինի որ նորա մեռնելուցն ետև իմացան՝ թէ արապստանի մէջն մին մարդ առաջ է եկել, որ իրան՝ Աստուծոյ մարգարէ անուանից և զօրա-

քով շատ մարդկանց սպանեց՝ և նորանց երկիրներըն աւերեց։ Ուրեմն ինչպէս կարելի էր, որ մահմետի դուրս գալոյ ժամանակն շուտով ամէն երկիրների մէջ բնակված էն ամէն հրէաներըն և քրիստոնեաներն իրար հետ հաւաքվին՝ և Աստուածաշունչ գրքերն փոխեն՝ և սուտ ու մուտ բաներով ապականեն. ինչպէս որ մահմետն ասումէ։ Ո՞վ է՝ որ չիմանայ՝ թէ էս բանս անկարելի է։ Բայց եթէ մահմետականայն կարելի է երևում՝ թող ասեն մեզ՝ թէ ինչպէս էլաւ՝ ո՞ր ժամանակ հաւաքվեցան՝ ո՞ր երկրումն և ո՞ր քաղաքումն. թող վըկայութիւն բերեն թէ արապ և թէ հեթանոս ազգերի պատմութենիցն՝ որ էն զարմանալի մեծ ժողովն տեսել են կամ նորա անիրաւ գործքերըն լսել են։ Բայց իսկի վկայութիւն չունին՝ էնպէսի ժողովի համար, ոչ մահմետական՝ և ոչ հեթանոսական՝ և ոչ հրէական, և ոչ էլ քրիստոնէական պատմութիւններումն բայց մէնակ մահմետի ասողութիւնըն կարող են առաջ բերել. և նա էլ ոչ թէ վկայութենով է իրան ասողութիւնըն հաստատում, բայց մէնակ էդպիսի խօսք է հնարում։ Բայց լինի որ մահմետի ասողութեան միտքն էն է՝ թէ ոչ ամէն հրէաներն և քրիստոնեաներն հաւաքվեցան և Աստուծոյ գրքերն փոխեցին, բայց մէնակ արապստանի՝ եգիպտոսի և ասորեստանի մէջ բնակված հրէաներն և քրիստոնեաներն էն գործըն կատարեցին։ Բայց եթէ էնպէս լինէր, պէտք էր՝ որ ուրիշ երկիրներումն բնակ-

ված քրիստոնեաներն յանդիմանէին նորանց՝ բայց իսկի նշան չի կայ՝ որ էդպէսի բանի համար յանդիմանեցին նորանց. էլ պէտք էր որ եւրօպայի մէջ բնակված հրէաների և քրիստոնեաների Աստուածաշունչ գրքերն ուրիշ կերպ լինէին՝ քան թէ էն ասիայի մէջ բնակվածների օրինակներն՝ որ փոխվեցան, բայց իսկի մին ջոկութիւն չի երևում նորանց մէջն. ինչու որ՝ քանի եբրայական և յունական օրինակներ որ կան, ամէնքըն միաբան են՝ և քանի թարգմանութիւնք որ կան ասորայոց, հայոց, ռուսաց, վրայոց, ինկլիզայոց, ֆրանսուզայոց, լատինայոց, նէմսայոց, և ուրիշ շատ ազգերի լեզուներումն՝ էն ամէնքն իրար հետ ամէն խօսքերի և բառերի համար միաբան են՝ որ իսկի մին ջոկութիւն չի երևում: Արանից յայտնի է՝ թէ արապստանի կամ ասորեստանի հրէաներն և քրիստոնեաներն էլ իսկի փոփոխութիւն չի արին, բայց ինչպէս ուրիշ երկիրներումն բնակվածներն, էնպէս էլ նորանք Աստուծոյ գրքերն սուրբ և անփոփոխ պահեցին:

Երրորդ՝ ամէնին յայտնի է՝ թէ հրէաներն քրիստոնեաներին ատումն և անարգումն՝ և իսկի նորանց հետ չեն միաբանվում: Ուրեմն ինչպէս կարելի էլաւ՝ որ էն մին անիրաւ բանի համար. ո՞՝ Աստուծոյ սուրբ խօսքերն փոխելոյ և ապականելոյ համար միաբանեցան նորանց հետ խապառ անկարելի էր: Բայց եթէ մէնակ հրէաներըն մարգարէների խօսքերըն փոխած լինէին՝ քրիստոնեաներն շուտով կըռնեանէին՝ և նո-

րանց էն բանի համար կը յանդիմանէին · և եթէ մինակ քրիստոնեաներն հին կտակարանի բաներն ապականել էին, հրէաներն նմանապէս էն կիմանային՝ և նորանց էն անիրաւ բանի համար կը չարախօսէին մինչև էսօր։ Բայց էնպէսի հակառակութիւն և չարախօսութիւն իսկի չի կայ նորանց մէջն · բայց երկուսն միաբան են հին կտակարանի խօսքերին համար, մինչև որ հրէաներն էլ առ հասարակ էն երբայական օրինակներն կարդում են և գնումեն՝ որ Քրիստոնեաների ձեռքովն տպված են · ջոկութիւնն մինակ էն է՝ որ հրէաներն Աստուծոյ խօսքերն մարմնաւոր մտքով են մեկնում և էն պատճառովն՝ Քրիստոսին համար լինող վկայութիւններն չեն իմանում։ Ուրեմն ոչ հրէաներն և ոչ էլ Քրիստոնեաներն առանձին կարող էին սուրբ գրքերն փոխել։ Բայց քրիստոնեաներին համար էս էլ պէտք է ասել՝ թէ որովհետև նորանք Քրիստոսի պատուիրանին դէմ (յօհ · ժդ · 25 ·) իրարից շատ բաժանված են, էնտուր համար շատ են մոլիկ անում մինն մինին վերայ · ուրեմն եթէ մին եկեղեցի Աստուծոյ խօսքերն մինակ մին բանով փոխելէր, շուտով ուրիշներն էնտեսնելով՝ կըչարախօսէին նորան՝ և էնպէսի գործն իբր մեծ անիրաւութիւն կը յանդիմանէին։ Բայց թէ և մինչև էսօր եկեղեցիներն շատ բան իրար դէմ չարախօսումեն, բայց էնպէս էլ իսկի մին նշան չի կայ՝ որ մինին Աստուծոյ բաներն փոխելոյ համար յանդիմանելին, բայց ամէնքն Աստուծոյ գրքե-

րին համար մին հաւատք և խորհուրդ ունին և խապառ միաբան են ։

Զօրօրէ՝ կան Քրիստոնէից երկիրների մէջն և մանաւանդ եւրօպայի մէջն Աստուածաշունչ գրոց քանի մի ձեռագիր օրինակներ՝ որ երեք հարիւր տարի մահմետին առաջ գրված են . կան էլ ասորացոց՝ ղպտացոց՝ հայոց և լատինացոց լեզուով արած թարգմանութիւններն՝ որ երկու և երեք հարիւր տարի մահմետին առաջ կատարված են . և ահա՛ էն ամէնքն միաբան են նոր օրինակներին հետ՝ որ հիմիկ Քրիստոնեաների և հրէաների ձեռներումն են ։ Բայց ինչպէս կարելի է՝ որ էն մահմետին շատ առաջ գրված օրինակներն մեր նոր օրինակներիս հետ միաբան լինին . եթէ Քրիստոնեաներն մահմետի ժամանակումն Աստուածաշունչ գրքերն փոխեցին ։ Անկարելի է . բայց թէ որ մահմետին համար մարգարէութիւններ կային , պէտք է՝ որ նորանք էն հին օրինակներումն գտնվին . և եթէ Քրիստոնեաներն մահմետի ժամանակումն նոր հնարված բաներ Աստուածաշունչ գրոց մէջն բերին , պէտք է՝ որ էն մահմետին առաջ գրված օրինակներումն չի տեսնվին . բայց էնպէս չէ՝ պատճառն որ՝ էն հին օրինակներն ամէն բաների համար մեր նոր օրինակներին հետ միաբան են ։ Ուրեմն արեգակի լուսին յայտնի է՝ թէ մահմետի ասութիւնն սուտ է՝ և Աստուծոյ գրքերն իսկի մին ժամանակ չի փոխվեցան ։ Բայց թէ որ էս էլ բաւական չի լինի , էլ աւելի վկայութիւններ առաջ բերենք՝ որ

նորանց եկեղեցոյ հին հարանց գրեանքն ցոյց
են տալիս մեզ ։ Մինչև էսօր կան կղեմայ,
իղնատիոսի, և պոլիկարպոսի գրեանքն որ
առաքելոց աշակերտներն էին՝ կան էլ որոգի-
նէսի՝ կլիմէնտոսի, յուստինոս մարտիրոսի
գրեանքն որ երկու հարիւր տարի Քրիստո-
սին ետև, և չորս հարիւր տարի մահմետին
առաջ էին. և յետոյ կան անաստասիոսի,
կիւրղի, գրիգորի Աստուածաբանի, բարսղի,
ոսկեբերանի, եփրեմի, և շատ ուրիշ հարանց
գրքերն՝ որ երկու և երեք հարիւր տարի մահ-
մետին առաջ՝ Աստուծոյ գրքերըն մէկնեցին՝
և թէ նոր և թէ հին կտակարանին շատ հա-
մարներ և գլուխներ վկայութիւն բերին ի-
րանց վարդապետութիւնն հաստատելոյ հա-
մար՝ և ահա էն ամէն խօսքերն՝ որ նորանք
առաջ բերին Աստուածաշունչ գրքերին,
ամէն բառի համար համեմատ են մեր նոր օրի-
նակներին հետ. որ թէ հրեաներն և թէ
Քրիստոնեաներն ձեռներում ունին ։ Ուրեմն
յայտնի է՝ թէ նորանց Աստուածաշունչ
գիրքն ամէն բառի համար համաձայն էր էն
օրինակներին որ հիմիկ ունինք. և էնտուր
համար սուտ է մահմետի ասութիւնն թէ ի-
րան դուրս գոլոյ ժամանակն փոխվեցաւ ։

Չորրորդ. թէև էն վկայութիւններն՝ որ
մինչև էստեղ առաջ բերինք, ամէնին յայտ-
նի ցոյց են տալիս՝ թէ մեր Աստուածաշունչ
գիրքն՝ Աստուծոյ սուրբ և յստակ խօսքն
է՝ և թէ իսկի չի փոխլեցաւ. բայց պէտք է
որ մին վկայութիւն էլ յիշենք ։ Եթէ Աստ-

ուածաշունչ գիրքն Աստուծոյ յայտնըւած
խօսքն է՝ ինչպէս որ մահմետն ինքն էլ խոստո-
վանում է՝ և եթէ Աստուած կամեցաւ՝ որ իրան
էն յայտնութենովն մարդկանց լուսաւորէ և
խաւարից դէպի փրկութեան ճանապարհն տա-
նի՝ ապա պէտք էր՝ որ նա միշտ էն յայտնըւած
խօսքն մարդկանց մէջն պահպանէ, որ նորա
ամէն ճշմարտութիւններն հաստատ մնան, և
իսկի մին բանով չի փոխվին. պատճառն որ՝ ե-
թէ մէնակ մին բան փոխված լինէր նորանում,
շուտով կարօղ էր մոլորութիւն դուրս գալ՝ և
ապա մարդիքն կարօղ չէին մին էլ ճշմարտու-
թեան ճանապարհն գտնել՝ ինչու-որ՝ հենց Աս-
տուծոյ խօսքն ապականված էր և Աստուծոյ
յայտնըւած լոյսն խաւարի հետ խառնըված էր։
Էնտուր համար Աստուած ոչ մէնակ սաստիկ
հրամայեց, որ իսկի մին մարդ իրան խօսքե-
րին հետ մին բան չի աւելացնէ և կամ նո-
րանցից պակասացնէ, բայց էլ նա ինքն ամէն
ժամանակումն ամէն բան էնպէս կարգեց՝ որ
մարդկանց ամէն ապստամբութեան մէջն ի-
րան սուրբ բանն հաստատ և անփոփոխ մնայ։
Առաջ՝ նահապետներին երկար կեանք շնոր-
հեց՝ որ Աստուծոյ գիտութիւնըն իրանք որ-
դիքներին և թոռներին և թոռների որդիք-
ներին մէջ յայտնեն և հաստատեն՝ յետոյ
աբրահամին ընտրեց՝ որ նորա ազգն Աստուծոյ
գիտութիւնըն և օրէնքըն ընդունի և պա-
հէ՝ և երբ որ աբրահամի ազգն էլ կռապաշ-
տութենով պղծվեցաւ, մարգարէներըն ու-
ղարկեց՝ որ թէ բերանով՝ և թէ գրով փրկու-

փրկութեան գիտութիւնըն աւանդեն և հաստատեն․ մինչև որ Քրիստոսն եկաւ։ Նմանապէս էլ Քրիստոսից ետև քրիստոնեաներին մէջ միշտ և ամէն ժամանակ Աստուածասէր վարդապետներ հաստատեց՝ որ էլ շատ մեծ ապստամբութեան մէջն Աստուծոյ սուրբ բանըն մեծ զօրաթենով քարոզեցին և ժողովուրդների մէջն յայտնեցին և էլ միշտ ճշմարիտ հաւատացեալներ կային՝ որ աւելի սիրումէին մեռնիլ՝ քան թէ Աստուծոյ սուրբ վարդապետութիւնըն թողել կամ ուրանալ կամ ուրիշներին ապականել տալ։ Բայց Աստուած մարգարէներովն էլ խոստացաւ՝ թէ մանաւանդ վերջին ժամանակներումն իրան յայտնութիւնն ամէն ազգերի մէջն կը լուսաւորէ, և Քրիստոս խոստացաւ՝ թէ իրան խօսքերն յաւիտեան չեն անցնիլ և իրան աւետարանն մինչև աշխարհքի վերջն կը քարոզվի։ Ուրեմն յայտնի գիտումենք՝ թէ մինչև աշխարհքի վերջըն էլ Աստուծոյ բանն չի կարենայ փոխվիլ, բայց հաստատ կը մնայ։ Ուրեմն եթէ մահմետն ասում է՝ թէ Աստուծոյ բանն փոխվեցաւ․ նա ոչ մէնակ սուտ է ասում, բայց էլ համարձակվում է Աստուծոյ համար ասել՝ թէ նա իրան խոստմունքըն՝ որ մարգարէների բերանովն յայտնեց՝ չի՛ պահեց։ Ուրեմն Աստուած կամ չի կամեցաւ (իրան բանին հաստատ մնալոյ համար ուղված) խոստմունքըն պահել, կամ չի կարաց։ Եթէ ոչ կամեցաւ, ապա նա [illegible]եց մարդկանց․ որ էնպէսի բանն զարշելի հայհոյանք է

Աստուծոյ համար ասել. բայց եթէ ոչ կարաց ապա նա ակար է. որ նմանապէս հայհոյանքի նման ասողութիւն է: Ուրեմն որ տեղ որ նաջինք՝ յայտնի է, թէ մահմետի էն ասողութիւնըն ոչ մինակ սուտ է, բայց էլ Աստուծոյ դէմ գարշելի հայհոյանք է, և էլ ամէնից յայտնի երևումէ՝ թէ Աստուածաշունչ գիրքն Աստուծոյ յատուկ, սուրբ, հաստատ և անփոփոխ խօսքն է, որ Աստուծոյ ճշմարտութիւնըն յայտնելով՝ ամէն մարդկանց համար կատարեալ փրկութեան ճանապարհըն ցոյց է տալիս՝ և մինչև աշխարհքի վերջն էլ ցոյց կըտայ: Բայց մահմետն ինչու համար համարձակվեցաւ էնպիսի սուտ բան հնարել: Պատճառն էն է՝ որ նա տեսաւ՝ թէ Աստուածաշունչ գրքերն իրաւի Աստուածանից են եկել, բայց որովհետև նորանք յայտնի ցոյց տուին՝ թէ նորա մարգարէութիւնն սուտ է: Էնդուր համար ասաց՝ թէ հրեաներն և Քրիստոնեաներն Աստուծոյ սուրբ գիրքըն սուտ ումուտ բաներով էնքան փոխեցին, որ հիմիկ կարելի չէ ընդունիլ նորան՝ բայց մինակ ղուրանն է ճշմարիտ և հաստատ: Ուրեմն իրան մոլորութիւնըն հաստատելոյ համար նա չի փախեցաւ. սուտ հնարել և Աստուծոյ ճշմարիտ բանըն չարախօսել: Բայց փառք Աստուծոյ՝ որ հաստատ վըկայութիւններով մեզ ցոյց է տալիս՝ թէ իրան բանն հաստատ է. և մահմետի խօսքն սուտ և հայհոյանք է: Էնդուր համար բոլոր սրտով հաւատանք նորան՝ և օրէցօր աւելի ջերմեռան-

ղուլթենով նորա ուսմունքներըն ընդունենք, պահենք և կատարենք, որ խալաս եղանելի լինինք:

Բայց եթէ ամէն կողմանէ յայտնի և հաստատ է՝ թէ Աստուածաշունչ գրքերն Աստուծոյ յատուկ խօսքն են՝ որ իսկի մին բանով չի փոխուեցաւ, և էլ՝ եթէ նորանց վարդապետութիւնն սուրբ և կատարեալ է և ամէն մարդկանց համար յաւիտենական փրկութիւն է ցոյց տալիս, ապա ամէն մարդիք պարտական են՝ որ Աստուծոյ էն ճշմարիտ և հաստատ խօսքերըն հաւատով ընդունին և նորանց ականջ դնելով՝ էն փրկութիւնըն խնդրեն՝ որ նորանք յայտնումեն, և էլ էն հրամաններըն պահեն՝ որ նորանցում գրված են: Ուրեմն ով որ Աստուածաշունչ գրքերըն անարգումէ և չի ընդունում, նա ինքն Աստուծոյն է սուտ համարում և անարգում· պատճառն որ՝ էն խօսքըն է անարգում, որ յայտնապէս Աստուծոյ յատուկ խօսքն է: Էնտուր համար գարշելի հայհոյանք է՝ որ մահմետն և նորա աշակերտներն ասումեն՝ թէ անկարելի է՝ որ Աստուծոյ էութեան մէջն երեք անձինք լինին· անկարելի է՝ թէ Աստուած մարմին առաւ և մարդի պէս ապրեցաւ և մեռաւ· և շատ էսպէս բաներ՝ որ ասումեն՝ պատճառն որ՝ էսպէսի խօսք ասելով, Աստուծոյ յատուկ խօսքըն անարգումեն և սուտ են համարում· և ինքն Աստուծոյն իբր սուտ ասօղ չարախօսումեն: Բայց էս հայհոյութեանս յատուկ պատճառն

մարմնաւոր մարդոյ ամբարտաւանութիւնն է՝ որ առանց ամօթոյ համարձակվումէ՝ Աստուծոյ էութիւնը քննել՝ և իրան մտաց չափովը չափել։ Բայց քանի՞ յիմարութիւն է՝ որ մարդն որ կարող չէ արեգակի շողերին մէջն նայել՝ Աստուծոյ անքննելի էութիւնը համարձակվումէ քննել և չափել։ Նա՝ որ իրան մարմնաւոր աչքի զօրութիւնը կարող չէ յայտնել, կամ իրան հոգոյ էութիւնը և բնութիւնը քննել, որ էլ կարող չէ մին սերմի բուսանելն և խոտի դուրս գալըն իմանալ և մեկնել՝ նա ինչպէս երկինքն կըբարձրանայ և Աստուծոյ անսահման և անպատմելի էութիւնը կըքննէ կըչափէ և կըպատմէ։ Ընտուր համար՝ շատ դարշելի համարձակութիւն է մարդոյ համար, որ մեղքով խաւարված մտքովը՝ Աստուծոյ էութիւնը կամենումէ սահմանել, և իրան կարծեաց կեօրէ չափել։ Առաջ պէտք է՝ որ հոգոյ աչքերն Աստուծոյ լուսովը բժշկվին՝ և ապա կարող են տեսնել՝ և Աստուծոյ հոգևոր բաներն իմանալ։ Ընտուր համար էլ Քրիստոս ասաց՝ թէ ոչ ով որդուն չի ճանանչում՝ բայց միայն հայրն՝ և ոչ ով հօրն չի ճանանչում, բայց միայն որդին՝ և ում որ որդին կըկամենայ յայտնել (Մատթ. ԺԱ. 27)։ Եւ պօղոս առաքեալն ասաց՝ թէ ոչ ով կարող չէ՝ որ Յիսուսին տէր ասէ, եթէ ոչ սուրբ հոգովը (Ա. Կորնթ. ԺԲ. 3)։ Այս խօսքերս յայտնի վկայումեն՝ թէ ոչ ով Աստուծոյ էութիւնն կարող չէ իմանալ, եթէ ոչ Աստուծոյ լուսովը։ Ընտուր համար Աստուած խղճալով շնորհեց

մեզ իւրան յայտնութիւնըն՝ և նորանով մեզ ցոյց տուաւ թէ ինչպէս կարենանք նորա ճըշմարտութիւնըն ճանանչել, և նորա փրկութիւնըն գտնել՝ և ապա նորա երանութեանն մօտենալ։ Ուրեմն ամէն ով որ կըկամենայ Աստուծոյն ճանանչել և նորա էութիւնըն իմանալ, նա առաջ պէտք է՝ սուրբ հոգոյ լոյսըն խնդրէ՝ և Աստուծոյ գըքերըն աղօթքով քննէ՝ որ նորանց վարդապետութենով առաջնորդած լինի դէպի ճշմարտութիւնն։ Ինտուր համար յայտնի է՝ թէ քանի ժամանակ որ մահմետականներըն խաւարըն սիրումեն՝ և Աստուծոյ գըքերըն անարգումեն, կարող չեն Աստուծոյ ճշմարտութիւնըն իմանալ և նորա փրկութիւնըն գտնել և ստանալ։

Բայց լաւ է՝ որ էլ նորանց հակառակութիւններըն մին մին քննենք և նորանց համար կարճ պատասխան տանք։ Առաջ՝ սուրբ երրորդութիւնըն ուրանալով ասումեն՝ թէ անկարելի է՝ որ Աստուծոյ էութեան մէջն երեք անձինք լինին։ Ուղորդ է՝ որ մարդոյ միտքըն կարող չէ էս խորհուրդըս քննել և իմանալ․ բայց էլ իսպառ կարող չէ՝ Աստուծոյ էութիւնըն քըննել և սահմանել։ Թէ և աշխարհքի ամէն ստեղծուածների կարգովըն իմանումէ՝ թէ Աստուած կայ որ ամէնըն ստեղծեց և կառավարումէ, և թէ էն Աստուածն ամենակարող, ամէնիմաստուն՝ ամենագիտօղ և ամէն տեղ հազըր է, բայց նա իսկի կարող չէ իմանալ և ասել՝ թէ ի՞նչ և ի՞նչպէս է էն Աստուածութիւնըն, և թէ ի՞նչպէս նա կարող է ա-

մէն տեղ հաղր լինիլ ,և ամէնըն գիտել և կառա
վարել ։ Էնտուր համար մարդկանց աղըն միշտ
խաւարի մէջն պէտք էր ճայ եթէ Աստուած
ինքն չէր յայտնել՝ թէ ո՞վ է՝ և թէ ի՞նչպէս է
նորա էութիւնն , և նորա յատկութիւններն ։
Բայց գոհութիւն լինի՛ նորա ողորմութեան՝
որ նա էնպէսի յայտնութիւն է տուել մեզ՝
որ առաջնորդումէ դէպի կատարեալ լոյսն և
դէպի յաւիտենական կեանքն ։ Նա յայտնեց
մեզ՝ թէ նա մին Աստուած է՝ և թէ իրան
էութենումն երեք անձինք են . այ . հայրըն
որ ամէն բան ստեղծեց՝ և բանն՝ որ յաւիտե-
նից առաջ հօրից ծնված է՝ որ նորա ձե-
ռովն հայրն յայտնըվեցաւ և ամէն բան ստեղծ-
վեցաւ . և սուրբ հոգին՝ որ ամէն բան իրան
զօրութենովն շարժումէ՝ լցնումէ և դէպի կա-
տարելութիւն է տանում ։ Երեքն մի են է-
ութենով՝ բայց Աստուծոյ յայտնութիւնն
մեզ համար ցոյց է տալիս՝ թէ հայրն է ստեղ-
ծիչն՝ որ ամէն բանին լինելութիւն տուաւ
որդոյ ձեռովն . և էլ մեղքով ապականված
մարդկանց փրկութիւնըն հաստատեց և պատ-
րաստեց որդոյ ձեռովն . բանն կամ որդին հօր
յայտնօղն և մարդկանց փրկիչն է , որ նորա
ձեռովն ամէն բան էլաւ , մեղաւոր մարդկանց
քաւութիւն և փրկութիւն կատարվեցաւ .
սուրբ հոգին ամէն բանի շարժօղն՝ և մեղա-
ւոր մարդկանց լուսաւորիչն և սրբիչն է՝ որ
խաւարիցնն դէպի լոյսն՝ և մեղքիցն դէպի սր-
բութիւն առաջնորդումէ մեզ , և ապա կա-
տարելութեան մասնակից է անում ։ Սուրբն

Աստուած իրան յայտնեց մեզ իբր ստեղծիչ, փրկիչ և սրբիչ՝ որ չի լինողին լինելութիւն տուաւ և տալիս է՝ կորածին և ապականվածին փրկութիւն պատրաստեց՝ և մեղքով կուրացածին և պղծվածին լուսաւորութիւն սրբութիւն և նորոգութիւն շնորհեց և շնորհում է։ Ապա ի՞նչ կայ էս յայտնութեան մէջ՝ որ Աստուծոյ էութեանն արժան չի լինի։ Իրաւի՝ որ մարդոյ միտքն կարող չէ հասկանալ նորան՝ բայց հենց էս պատճառիս համար Աստուած յայտնեց, որ հաւատով ընդունինք և հաւատոյ լուսովն ճանանչենք։ Ո՛վ որ հօրն ուրանում է ստեղծողին անարգում է, ով որ բանըն կամ որդին ուրանում է, իրան մեղաց համար քաւիչ և փրկիչ չունի. և ով որ սուրբ հոգին ուրանում է, իրան կուրութեան լուսաւորիչ՝ և իրան պղծութեան սրբիչ չունի։ Ուրեմն տեսնումենք՝ թէ ամէնն էնպէս է կարգված՝ որ մին Աստուած հաւատալով՝ նորան հայր և որդի և սուրբ հոգի պէտք է դաւանենք և ընդունինք։

Երկրորդ՝ ասումեն՝ թէ Աստուած որդի չունի։ Ուղորդ է՝ որ մարդկանց մարմնաւոր ընութեան պէս կարող չէ որդի ունիլ, և հայհոյանք լինէր՝ էդպէսի բան ասել։ Պատճառըն որ՝ Աստուած ամենակատարեալ և ամենախմաստ և ամենասուրբ հոգի է՝ որ նորանում մարմնաւոր բաների նմանութիւն իսկի չի կայ։ Բայց Աստուծոյ սուրբ գիրքն Յիսուսին Աստուծոյ որդի են ասում էն մտքովն՝ որ նա յաւիտենից առաջ հօր էութենից ծընված է՝ և հօր հետ մին Աստուածային բնու-

թիւն ունի ։ Էնտուր համար նորան էլ Աս-տուծոյ բան են անուանում ․ ինչու որ՝ ինչ-պէս որ բանն կամ խօսքն հոգու հոգևոր ծնունդն է՝ և հոգու բնութիւնըն ունի՝ և հոգու ծածկված միտքըն յայտնում է, էնպէս էլ Յի-սուս յաւիտենիցն հօր ծնունդն է և հօր բնու-թիւնըն աշխարհ և հօր էութիւնն և խորհուրդ-ները աշխարհքի մէջն յայտնեց և կատարեց ։ Ու-րեմն եթէ մարդն հենց իրան հոգու բնութիւնն կարող չէ կատարելապէս քննել, ինչպէս Աս-ուծոյ համար կարող է ասել, թէ նորա էութեան մէջըն աներևույթ հօրն յայտնօղ բան չի կայ ։ Ու-ղորդ է՝ որ մարդու ակար միտքն կարող չէ հաս-նել էս խորհրդոյ խորութեանն, բայց էլ կա-րող չէ մին բան հակառակ ասել ․ էնտուր հա-մար որ Աստուած ինքն նորան յայտնեց և հաստատեց ։ Պատճառն որ՝ ամէն ով որ Յի-սուսի ծնունդըն կեանքըն վարդապետութիւ-նըն, գործքերըն և մեռնելըն մտածում է, նա միշտ և ամէն տեղ արեգակի լուսիցն յայտնի տեսնում է՝ թէ նորա մարդ լինելութենումն Աստուածային փառքն փայլում է, և նորան իբր Աստուծոյ էական և յաւիտենական բան է յայտնում ։ Եւ էս գրքիս սկզբումն էլ ցոյց տուինք՝ (տես երես 22 և 23 ) ․ թէ մարդկանց փրկիչն՝ Աստուած և մարդ պէտք էր լինի, որ ամէն մեղաւորաց ազգին համար կատարեալ փրկութիւն գործէ․ և էնտուր համար իսկի պատ-ճառ չի կայ՝ որ մարդ Աստուծոյ յայտնութեա-նըն հակառակ խօսի ։

Բայց էլ ասումեն, թէ ինչու համար Աս-

ուած թոյլ տուաւ որ՝ մարդն մեղք գործէ և այս սատանայի իշխանութեան տակն ընկնի ։ Թէ և էս հարցմունքս էլ մեղաւոր մարդոյ կողմանէն շատ համարձակութիւն է , բայց սուրբ գրքերն նորա համար էլ պատասխան են տալիս · յայտնելով՝ թէ Աստուած իրան ողորմութիւնըն և սէրըն մանաւանդ մարդկանց ազգումն կամեցաւ փառաւորել ։ Պատճառն որ՝ մեղքի մէջ ընկած մարդոյ համար մին էնպէսի փրկութիւն պատրաստեց՝ որ նորա ամէն սէրըն և ողորմութիւնըն ցոյց է տալիս երկնքի ամէն հրեշտակների առաջին · մինչև որ ամէնքն էլ էս փըրկութեան խորհրդոյս համար յաւիտեան երկըրպագութենով կօրհնեն և կըփառաբանեն նորան՝ և մեղքով ապականված մարդին էլ էս փրկութենովս էլ աւելի բարձր կատարելութիւն և երանութիւն է շնորհում՝ քան թէ էն առաջին կատարելութիւնն էր , որ նորան մեղքով կորցրուց ։ Ուրեմն էն որ սատանայի խաբէութենովն քանդվեցաւ , էն ամէնըն Աստուած մին էլ նորոգեց և շինեց՝ էնպէսի կատարելութենով՝ որ ամէն ստեղծուածներն կըզարմանան՝ և նորա անունըն կըփառաւորեն ։

Յետոյ՝ եթէ ասումեն՝ թէ ի՞նչպէս կարելի է՝ որ Աստուած մարդի պէս էս երկրիս վերայ ապրեցաւ , կերաւ , խմեց , և վերջն էլ խաչի վերայ մեռաւ · հեշտ է պատասխան տալ նորանց հակառակութեանն ։ Պատճառն որ՝ Աստուածութիւնըն հաց չի կերաւ և ջուր չի խմեց և խաչի վերայ չի մեռաւ , բայց Յիսուս մարմին առ-

նելով՝ մարդկային բնութիւն էլ առաւ. որ ամէն կողմանէ կատարեալ մարդ լինէր, և էնտուր համար էլ մարդի պէս կերաւ և ապրեցաւ և մեռաւ. ոչ թէ Աստուածութենովն՝ բայց մարդեղութենովն որ առել էր: Մարդի պէս ծարաւեցաւ՝ և սովեցաւ և թուլացաւ, բայց Աստուծոյ նման՝ մեռելներին յարուց՝ և ծովին և քամին հրամայեց: Մարդի պէս մեռաւ, և Աստուծոյ նման յարութիւն առաւ և երկինքը համբարձաւ: Ուրեմն յայտնի է՝ թէ նա Աստուած և մարդ լինելով՝ մարդեղութեան կերպէ միայն մեռաւ, և ապա Աստուածութեան զօրութենովն՝ մարմինը էլ կենդանացնելով և մին էլ իրան հետ միաւորելով՝ յաւիտեան կենդանի է՝ որ ամէնին՝ որ կամենայ, փրկէ մեղաց մահիցն և կենդանի անէ:

Վերջն՝ ասումեն՝ թէ ինչու համար պէտք էր որ Յիսուսն մեռնի և մեռնելովն մարդկանց համար փրկութիւն գործէ: Աստուած ամենակարող է՝ և էնտուր համար կարող էր՝ որ մին խօսքով ամէն մարդկանց մեղքերը ջնջէ և թողէ: Բայց էս խօսքս էնպէսի մարդոյ խօսք է՝ որ Աստուծոյ սրբութիւնը և կատարեալ արդարութիւնը և էլ մեղաց պղծութիւնը և գարշութիւնը իսկի չի իմանում: Ուղորդ է՝ որ Աստուած ամենակարող և ամենաողորմած է, բայց նորա ամենակարողութիւնն և սէրն իսկի մին բան չեն անում, որ նորա սրբութեանն և արդարութեանն հակառակ լինի: Էնտուր համար էլ

որովհետև նորա արդարութիւնն խնդրում է՝ որ մեղաւորն պատժվի՝ նորա ամենակարողութիւնն կարող չէ արդարութեան օրէնքըն քանդել՝ և մեղաւորըն առանց պատժի թողել ․ և որովհետև մեղաց պատիժն մահ է՝ մեղաւոր մարդն կարող չէր փրկվիլ՝ թէ որ Քրիստոսն նորա միջնորդ չըլլներ և նորա տեղակ մահի պատիժըն իրան վերայ չառնէր ապա յայտնի է՝ թէ մարդկանց փրկիչն պէտք էր մեռնի՝ և մեռնելովն մեղաց պատիժըն քաշէ՝ և Աստուծոյ սուրբ արդարութիւնըն լցնէ ։

Բայց էս ամէն բաներս իսկի յայտնի չեն լինիլ մեղքով խաւարված մարդոյն ․ մինչև որ ինքն սկսէ սուրբ հոգոյ լուսաւորութիւնըն խնդրել և նորանով իմանալ՝ թէ մահապարտ մեղաւոր է ․ որ կարող չէ փրկվիլ , ոչ մարդոյ և ոչ հրեշտակի ձեռովն՝ եթէ չի գայ իրան փրկիչ Քրիստոսին մօտ և նորա արիւնովն պատրաստված մեղաց թողութիւնըն խնդրէ և ընդունի ։ Ուրեմն աղաչենք Աստուծոյն՝ որ մահմետականներին ցոյց տայ իրանց սրտի խաւարըն և մեղաց կորուստըն ․ որ զղջանալով փրկութիւն խնդրեն՝ և նորանց էլ աղաչենք սիրով՝ որ իրանց հոգոյ կորուստըն քննեն և իրանց մեղաւոր լինելըն իմանալով Աստուծոյ փրկութիւնըն խնդրեն ։

# Երկրորդ Մաս.

## Մահմետականութեան համար։

Մինչև էստեղ Քրիստոնէական վարդապետութիւնը քննեցինք և նորա հաստատութիւնը և կատարելութիւնը յայտնեցինք։ Ապա հիմիկ պէտք է՝ որ էլ Մահմետի նոր հնարված և յայտնութիւն ասված ուսմունքները քըննենք և մտածենք, թէ հաստատ են՝ և թէ Աստուծոյ և մարդկանց արժանաւո՞ր են՝ թէ ոչ։

—oooooooo—

## Առաջին Գլուխ։

### Մահմետի կեանքին և ուսմունքին համար։

Մահմետն՝ հինգ հարիւր վաթսուն և ինն տարի Քրիստոսից ետև Արաբստանի մէջն՝ Մէքքա քաղաքումն ծնվաւ, և նորա հայրն էր Աբտուլլահ՝ որ փորէյշայոց ազնիւ և զօրաւոր ցեղի մարդ էր։ Արաբներն էն ժամանակումն անհասարակ կռապաշտ էին, և էնտուր համար Մահմետն էլ կռապաշտութեան խաւարի մէջն ծնվաւ և մեծացաւ.(Տես Հատոյ. 10. և 11 որ յետոյ գրած էն)։

Նորա հայրն աղքատ էր՝ և նորա երեխայութեան ժամանակումն մեռաւ և ապա նորա հօր

եղբայրն ապուլթալէպ՝ նորան իրան տունն առաւ և վաճառականութիւնըն սովորցնելոյ համար քանի մի անգամ իրան հետ ասորէս-տանի երկիրն տարաւ. և երբ որ մեծացաւ, մին խատիճայ ասված հարուստ կնկան հաւա-նայրուց՝ որ մահմետին իրան սանն կառավա-րիչ հաստատէ: Էն կինն էլ էնքան հաւան կացաւ նորան, որ քանի մի ժամանակից ետև իրան մարդ շինեց նորան. և ապա նա էլաւ իրան ցեղի մէջն մին հարուստ և մեծ մարդ: Նրանից ետև նա սկսաւ խորհուրդ անել թէ ի՛նչպէս մարգարէի անուն ստանայ՝ և նոր հնար-ված ուսմունքով արաբացոց ազգըն լուսաւո-րելով՝ փառաւոր լինի: Որովհետև նա, հրէա-ները և քրիստոնեաներն իրար մէջ շատ կռ-ուով և հակառակութենով բաժանված և ա-րաբներըն էլ կռապաշտութենով խաւարված տեսաւ, էնտուր համար նա կարծեց՝ թէ ինքն կարող է՝ ամէններին իրան ուսմունքովն միա-ւորել՝ և մին նոր հաւատք հաստատել: Էս պատճառովս նա սկսեց ամէն տարի մին անգամ՝ հարա կոչված սարն գնալ, որ մէքքային մօ-տիկ է, և էնտեղ մին ամիս մնալ՝ որ մարդկանց երևի. թէ նա Աստուծոյ հետ առանձին հա-ղորդութիւն ունի, և վերջն էլ՝ երբ որ քա-ռասուն տարեկան էլաւ, յայտնապէս իրան խա տիճայ կնկանն ասաց. թէ մին Աստուած կայ՝ և նա իրան գաբրիէլ հրեշտակըն ուղարկելով ինձ ընտրեց և հաստատեց, որ նորա առա-քեալ և մարգարէ լինիմ:

խստիճայ կլինն էր՝ և մահմետի եղբօր որդին ալի անուն՝ և քանի մի ընտանիք շուտով հաւատացին նորան, բայց նորա ուրիշ ազգականքն և քուրէյշացոց ցեղի մարդիքն առաջ ծաղր արին՝ և յետոյ էնքան առեցին նորան, որ մէնակ ապութալէպն էր կարող նորան պահպանել նորանց ձեռքիցն ։ Բայց մահմետն ոչ մէնակ մէքքայեցիքըն յորդորեց՝ որ իրան ուսմունքն ընդունին, բայց էլ հետևեցաւ ուրիշ արաբացիքներըն հաւանայնել՝ և իրան աշակերտ շինել ։ Եւ նորա էն գործն շատ յաջողեցաւ. ինչու որ՝ եաթրէպ քաղաքի մէջն շատ մարդիք նորա խօսքերըն ընդունեցին և նորան հնազանդ էլան ։ Էնտուր համար՝ երբ որ ապութալէպի մեռնելոյ ժամանակն խռովութիւնն մեծացաւ մէքքա քաղաքումն, նա իրան աշակերտներին հետ փախաւ էն եաթրէպ քաղաքն՝ և էնտեղ օրէցօր զօրանալով՝ իրան հաւատքըն շատ մարդկանց մէջն փռեց և հաստատեց ։ Նորա էն փախչիլն՝ 622. տարի Քրիստոսին ետև պատահեցաւ, որ նորան մահմետականններըն՝ փախչելոյ տարի են ասում. և էն եաթրէպ քաղաքըն նրանից ետև մէտինադուլ նէբի՝ ի՝ մարգարէի քաղաք անուանեցին ։

Քանի ժամանակ որ մահմետն մէքքայումն նեղութեան մէջն էր՝ և զօրութիւն չունէր՝ նա իրան ամէն աշակերտներին յորդորեց՝ որ թշնամիների նախատինքին և հալածմունքին համբերին. պատճառն որ նա ասում էր՝ թէ

բռնութիւն անելոյ համար (Վէպ. 22. 24. 26.). բայց երբ որ մեդինա քաղաքում օրէցօր զօրացաւ, նա շուտով իրան միտքն և խօսելոյ կերպըն փոխեց՝ և յայտնի հրամայեց՝ թէ պէտք է նոր հաւատոյ թշնամիներին կռուով յաղթել և կամ թրով սպանել նորանց կամ բռնութենով հաւատք բերել (Վէպ. 23. 25. 27.) և իրան մարդկանց սիրտերըն զօրացնելոյ համար նորանց խոստացաւ՝ թէ ամէն ով որ կռուի մէջն մեռնի, շուտով ճէննէթն կըմտնէ։ Նորա համար էլ շուտով սկսեց մէքքայեցոց դէմ կռիւանել և նորանց նեղացնել մինչև որ 630 տարումն նորանց քաղաքն առաւ և ամէն բնակօղներին՝ իրան նոր հաւատքն բերաւ։ Նոյն ժամանակիցն ետև ամէն արաբայիքն սկսեցին վախենալ մահմետի զօրութենիցն և կարօղ չէին նորան հակառակ կալ. բայց ամէնքն նորա իշխանութեան տակն ընկան և նորա հաւատքն ընդունեցին։ Բայց մահմետն մեդինա փախչելոյ ժամանակիցն ետև ոչ մէնակ կռուասէր մարգարէ էլաւ, բայց էլ իգամոլ դառաւ, մինչև որ էլ չի ամանչեց Աստուծոյ անունովն հրամայել՝ թէ նորան պէտք է աւելի շատ կանայք ունել՝ քան թէ ուրիշ մարդկանց. (Վէպ. 12. 13. 14. 15)։

Այսպէս է մահմետի կարճ պատմութիւնն որ իրան Աստուծոյ մարգարէ քարոզեց։ Այս պէտք է՝ որ նորա ուսմունքըն էլ քիչ ճանանչենք և իմանանք։

(1) Աստուծոյ էութեան համար նա սովորցրուց՝

թէ նա մին է․ ոչ մէնակ էութենով, բայց էլ անձներով․ և էնտուր համար Աստուծոյ որդւոյն և սուրբ հոգւոյն ուրացաւ և անարգեց ։

(2) Աստուծոյ աշխարհքըն կառավարելոյ համար սովորցրուց՝ թէ նա ամէն բանի համար առաջուց հաստատեց, թէ ի՞նչպէս պիտի լինի․ և էլ մարդկանց համար սահմանեց՝ թէ մին մասն չար պիտի լինի և դժոխքն գնայ․ և միկել մասն բարի պիտի լինի և ձէննէթն մտնէ ։

(3) Հրեշտակներին համար ասումէ՝ թէ սկզբումըն ամէնքն բարի էլան՝ բայց երբ որ Աստուած հրամայեց․ թէ նոր ստեղծված ադամին երկրպագութիւն տան, իպլիս՝ որ է սատանան՝ ապստամբվեցաւ և դժոխքն քցվեցաւ․ էնտուր համար նա էլ միշտ ջանք է անում որ մարդին ապականէ ։

(4) Մարգարէներին և Աստուծոյ գրքերին համար սովորցրուց՝ թէ ստեղծագործութենից ետև շատ մարգարէներ եկին Աստուածանից՝ մարդկանց յորդորելոյ համար, բայց նորանց միջումն գլխաւորներն են՝ Աբրահամ, Մովսէս, Դաւիթ, և Յիսուս՝ որ նորան իսայ է ասում ։ Մովսէս բերաւ թօրաթըն․ Դաւիթ զըպուրըն, և Յիսուս ինձիլըն՝ որ նորանցով Աստուծոյ օրէնքըն և փրկութեան ճանապարհն ցոյց տան․ Յիսուսին էլ՝ թէ և Աստուծոյ հոգի է ասում նորան, մէնակ մարդ քարոզեց և նորա մեռնիլըն մին տեղ խոստովանեց և ուրիշ տեղ ուրացաւ․ (Վայ․ 29․ 30) ։ Բայց ամենիցըն մեծ և կատարեալ մարգարէ՝ ասումէ Մահ-

մետըն է, որ ղուրանըն բերաւ՝ և նորանով Թօրաթըն և ինճիլըն հաստատեց ։ Նորա դալըն էլ Թօրաթումն և ինճիլումն առաջուց գըրված էր՝ բայց հրէաներն և քրիստոնեաներըն էն սուրբ գրքերն ապականեցին, որ յետոյ արժանի չէ ընդունել նորանց, բայց մենակ ղուրանին պէտք է հաւատալ ։

(5) Մարդոց համար սովորցրուց՝ թէ ադամն և եւան առաջուց երկնքումն մին գեղեցիկ դըրախտի մէջըն էին, բայց սատանայի խաբէութենովըն մոլորվեցան՝ և մին ծառի պտղիցն կերան՝ և էն մեղքին համար երկիր ընկան և մեղաւոր էլան՝ և մարդկանց ամէն բնութիւնն մեղաւոր և մարմնաւոր դառաւ ։ Բայց մարդիք՝ ոչ թէ մենակ թողութիւն կըստանան, բայց էլ ճըննէթին կը հասնեն . եթէ մենակ մահմետին հաւատան և ականջ դնեն՝ օրն հինգ անգամ աղօթք անեն, ղուրանովն հաստատված պասըն պահեն, ողորմութիւն տան, մին անգամ մէքքա գնան, անհաւատներին դէմ քաջութենով կռիւ անեն, և էլ քանի մի ուրիշ հրամաններ կատարեն ։

(6) Աշխարհքի վերջն ամէն մեռելներն յարութիւն կառնեն, և ամէն մարդիք՝ Աստուծոյ դատաստանովն իրանց գործքերին պէս կըդատվին ։

(7) Արդարներն ճըննէթն կը մտնեն, որ էնտեղ ամէն կերպ մարմնաւոր ուրախութեան մէջ կըկենան, և մեղաւորներն դժոխքն կը գնան, որ

Էնտեղ ամէն կերպ մարմնաւոր տանջանքով կը-տանջվին ։

# Երկրորդ Գլուխ ։

Ներա համար, Թէ Մահմետի վարքն և ուսմունքն՝ Աստուծոյ մարգարէի արժանաւոր չէ. և էլ հաստատ չէ ։

Հիմիկ՝ որ Մահմետի կեանքըն և ուսմունքըն պատմեցինք, ապա պէտք է քննենք և տեսնենք՝ եթէ նա ճշմարտութենով Աստուծոյ մարգարէ՞ է՝ թէ չէ ։

(1) Առաջ՝ պէտք է միտք բերել՝ որ վերևումն յիշեցինք, թէ Աստուածաշունչ գրքերն Աստուծոյ հաստատ և չի փոխված խօսքն են՝ որ ամէն մարդկանց համար կատարեալ փրկութեան ճանապարհըն ցոյց են տալիս ։ Նորանք էլ վկայումեն՝ թէ Քրիստոսի աւետարանն և փրկութիւնն մինչև աշխարհքի վերջն պիտի քարոզվի՝ ինչու որ ուրիշ անուն չի կայ՝ որ մարդիք նորանով փրկվին, բայց միայն Յիսուսի անունն (Մատթ. իդ. 14. Գործք. դ. 12.). Էնտուր համար էլ հրամայումեն թէ ամէն մարդ և ամէն հրեշտակ՝ որ աւելի աւետարանէ քան թէ էն՝ որ առաքեալներն քարոզեցին, անիծված պիտի լինի (Գաղա. ա. 8. 9.). Ուրեմն ինքն Աստուած յայտնի վկայեց մարդ-

կանց՝ թէ աշխարհքի փրկիչ Քրիստոսիցն ետեւ էլ ուրիշ մարգարէ կարող չէ առաջ գալ՝ և նոր օրէնք առաջ բերել, բայց ամէն ով որ դուրս գայ՝ և Քրիստոսի վարդապետութիւնըն և փրկութիւնըն չի դաւանի և ուրանէ, նա յայտնապէս սուտ մարգարէ կըլինի՝ և Աստուծոյ ճշմարտութեանն հակառակօղ ։ Անտուր համար յայտնի է. թէ մահմետն սուտ մարգարէ էր. պատճառն որ՝ Աստուծոյ սուրբ ճշմարտութեանն դէմ՝ Քրիստոսի աւետարանըն ուրացաւ, և մէն նոր մարգարէի պէս՝ նոր ուսմունք և օրէնք առաջ բերաւ ։

(2) Եթէ մահմետն ամէնիցն մեծ և կատարեալ մարգարէ էր, պէտք էր՝ որ Աստուած առաջուց նորա գալն և նորա գործքերն նշանակէր և յայտնէր, որ մարդիք ճանանչեն նորան իրան գալոյ ժամանակն և ապա հաւատան. ինչպէս որ Աստուած աշխարհքի սկզբիցն Յիսուսի գալըն և փրկութիւնըն յայտնի պատմեց մարգարէներովն, և հաւատացեալներն նորա գալոյն մօտիկ տարին և ցանկացան՝ մինչև որ եկաւ ։ Ուրեմըն եթէ մահմետն էլ աւելի մեծ մարգարէ էր, պէտք էր՝ որ էլ աւելի շատ մարգարէութիւնք լինէին նորա համար. բայց իսկի մին էլ չի կայ բոլոր Աստուածաշունչ գրքերումն, և մահմետն իսկի մին վկայութիւն կարող չէր առաջ բերել, որ նորա գալոյն վկայէ և հաստատէ ։ Ուղորդ է որ մահմետականներն ասումեն՝ թէ մահմետն է՛ն մխիթարիչն էր, որ նորան Յիսուս իրան աշակերտներին խոստացաւ՝ թէ

պիտի գայ և նորանց ամէն ճշմարտութենով առաջնորդէ. (Յօհ. ԺԶ. 13. ԺԵ. 26. 27: ԺԴ. 26): Բայց Քրիստոս էն մխիթարիչին համար ասաց՝ թէ մին քանի օրիցն ետև պիտի գայ ձեզ վերայ (Գործք. Ա. 5). և էնոուր համար էլ հրամայեց նորանց՝ թէ երուսաղէմ քաղաքումն մնան, մինչև որ գայ նորանց վերայ (Ղուկ. ԻԴ. 49.) Ուրեմն եթէ մահմետն էր էն մխիթարիչն, ինչու համար նա քիչ օրերիցն ետև չի եկաւ՝ էլ ի՞նչպէս կարելի էր՝ որ Քրիստոսի աշակերտներն՝ վեց հարիւր տարի նորան մտիկ տան. պատճառն որ՝ ամէնքն հարիւր տարի Յիսուսիցն ետև մեռան: Էլ ի՞նչ օգուտ էլաւ որ երուսաղեմումն մտիկ տան նորան. ինչու որ նա մեքքայումն՝ և ոչ երուսաղեմումն առաջ եկաւ: Բայց Քրիստոսն էն մխիթարիչին համար էլ աւելի ասաց՝ թէ նա ինձ համար կը վկայէ՝ նա ինձ կըփառաւորէ՝ ինչու որ իմ բաներիցն կառնէ և ձեզ կըպատմէ (Յօհ. 26. և ԺԶ 14.): Ապա մահմետըն ի՞նչպէս Քրիստոսին և նորա ձեռամբ կատարված փրկութեան համար վկայեց. ե՞րբ նորա վարդապետութիւնըն քարոզելով յայտնեց մարդկանց կամ նորա անունըն մեղաւորաց մէջն փառաւորեց: Իսկի մին ժամանակ մահմետըն՝ Քրիստոսին չի յայտնեց՝ թէ նա է մարդկանց փրկիչն, որ նորանց մեղքըն քաւեց՝ և մեղաց թողութիւն պատրաստեց նորանց համար. բայց սորա հակառակն՝ նա Աստուծոյ էակ ան բանըն որ մարմին առաւ և աշխարհք

եկաւ, աշխարհքի ստեղծօղըն, և փրկիչն ուրացաւ, և ամպարիշտ համարձակութենով Աստուծոյ ճշմարտութեանն և վկայութեանն հակառակ՝ նորան ստեղծւած մարդ ասաց․ էլ նորա յաւիտենական փրկութիւնըն ոչ ինքն ճանանչեց՝ և ոչ ուրիշ մարդկանց քարոզեց․ բայց հայհոյանք համարեց և անուանեց։ Ուրեմն ամէն կողմանէ յայտնի է՝ թէ նա Քրիստոսին բերանով խոստացված մխիթարիչն չէր, բայց աւելի Քրիստոսի հակառակօղն էր․ որ որդոյն և հօրըն ուրացաւ։

Էլ իսպառ յայտնի է՝ թէ Մահմետն իսկի կարօղ չէր մին վկայութիւն առաջ բերել․ թէ Աստուած նորա գալըն առաջուց նշանակեց․ պատճառն որ ծաղրածու կերպով հետևեցաւ հաւանացնել մարդկանց՝ թէ ինքն է խոստացված մխիթարիչն՝ որ ամէն կողմանէ անկարելի էր։ Էլ քանի՛ լաւ մխիթարիչ էլաւ՝ նա որ ամէն տեղ որ եկաւ․ գաւառներըն կրակով այրեց և քանդեց, և ամէն հակառակօղ մարդկանց սրով սպանեց, և անհամար հոգիք թշուառութեան մէջ քցեց․ օ՜հ անասելի՛ է նորա անամօթ հակառակութիւնն՝ որ էսպէսի հակառակ բաներ խօսեցաւ։

Բայց քննօղ մարդն յայտնի տեսնումէ՝ թէ ամէնն սուտ է, և էնտուր համար էլ Մահմետին սուտ մարգարէ կը համարէ՝ որ իսկի մին վկայութիւն Աստուծոյ գրքերից չի կարօղացաւ ցոյց տալ իրան համար։ Բայց սուրբ

գրքերն ոչ թէ միայն վկայութիւն չեն տալիս Մահմետի մարգարէ լինելոյն համար, բայց էլ յայտնի ասումեն՝ թէ երուսաղեմիցն պիտի դուրս գայ Աստուծոյ թագաւորութիւնն և Ճըշմարտութիւնն (սաղմոս. ճժ. 2 ։ եսայ. բ. 3)։ Եւ Յիսուս վկայումէ՝ թէ փրկութիւնն հրէաներիցն է (Յօհ. դ. 22)։ Սրանով յայտնի հաստատումեն՝ թէ անկարելի է որ արապստանիցն Աստուծոյ մարգարէ դուրս գայ։

(3) Բայց ինչպէս որ մահմետն սուրբ գրքերից չի կարաց վկայութիւն բերել՝ թէ նա Աստուծոյ մարգարէ է. էնպէս էլ իսկի մին հրաշք չի գործեց՝ որ նորանով իրան մարգարէ լինելըն հաստատէ։ Բայց Նա ինքն խոստովանումէ ղուրանումն՝ թէ նա միայն քարոզիչ է և կարօղ չէ մին հրաշք անել (Հէջայ. 1. Թիւշէ. 6.). ուրեմն ով կարէ հաւատալ նորա առաքելութիւններին՝ եթէ իսկի մին նշան չի բերէ՝ որ նորանով իրան խօսքըն հաստատէ. ով կարէ հաւատալ՝ թէ դաբրիէլ հրեշտակն խօսեցաւ նորա հետ կամ թէ նա երկինքն գնաց և Աստուծոյն տեսաւ. եթէ էս ամենի համար իսկի մին վկայութիւն առաջ չի բերէ։ Անկարելի է։ Բայց էլ աւելի պիտի ասենք՝ թէ նորա առաքելութիւններն սուտ են։

Ուղորդ է՝ որ մահմետականներն իրանց հատիզներումն մեծ պարծանքով ասումեն՝ թէ մահմետն անհամար հրաշքներ գործեց, բայց նորանից էս առաքելութիւնս սուտ է, որովհետև

Մահմետն ինքնին խոստովանումէ ղուրանումն՝ թէ նա կարող չէ հրաշք գործել։ Էլ էն հրաշքներն՝ որ պատմումեն, ոչ թէ Աստուածոյ շնորհքըն յայտնումեն՝ և նորա անունըն մարդկանց մէջն փառաւորումեն՝ ինչպէս որ Յիսուսի և առաքելոց հրաշագործութիւններն էլան, Բայց առհասարակ անպէտ և ոչինչ են՝ և շատերն էլ Աստուծոյ անարժան են։ Էն հաֆիզներն էլ ուրիշ անհամար սուտ բաներ են պատմում. որ իսպառ ղուրանին հակառակ են, մինչև որ իսպառ անկարելի է հաւատալ նորանց։ Նորանք ասումեն թէ Մահմետի հոգին աշխարհքի ստեղծագործութենից առաջ՝ Աստուծոյ մօտ էր, և առանց մեղաց ծնվաւ. և ղուրանն ասումէ՝ թէ նա կռապաշտութեան խաւարումն ծնվաւ՝ և մեղաւոր մարդ էլաւ. (Վկայ. 7. 8. 9. 10. 11.). Հաֆիզներն ասումեն՝ թէ Մահմետն և իմամներն կարող են մեղք ջնջել՝ և միջնորդ լինիլ, և ղուրանն հաստատումէ՝ թէ Մահմետն ինքնին մեղաւոր մարդ է, որ հենց նորա համար էլ միջնորդ պէտք է (Վկայ. 7. 8. 9)։ Ուրեմն հաֆիզներն հակառակ են ղուրանին, և ղուրանըն հակառակ է հաֆիզներին, բայց երկուսն էլ իսկի մին հաստատ վկայութիւն չեն յառաջ բերում՝ իրանց ճշմարտութիւնն հաստատելոյ համար, և էնտուր համար երկուսն էլ իսկի ընդունելի չեն, բայց սուտ պէտք է համարվին։ Ուղորդ է՝ որ Մահմետի մեծանալոյ ժամանակըն՝ շատ արաբներ նորան ընդունեցին՝ և նորա բաներին համար վկայութիւն տուին,

բայց յայտնի է՝ թէ նորանք մարմնաւոր ցանկութեանց, թալաների և փառասիրութեան համար շատ յօժար էին ամէն բանին վկայել, որ նորանց մարգարէն անումէր, բայց նորանցից ո՞վ էր նա՝ որ գաբրիէլ հրեշտակին տեսաւ և նորա խօսքըն լսեց. և ո՞վ էր նա՝ որ մահմետի հետ երկինքն գնաց՝ և էնտեղ տեսած բաներին վկայ էլաւ։ Ուրեմն ի՞նչպէս կարող էին նորանք վկայութիւն տալ՝ էն բաներին համար որ իրանք չէին տեսած իրանց աչքովն. և չէին լսած իրանց ականջներովն։ Ապա յայտնի է՝ թէ նորանց վկայութիւնն ոչինչ է։ Դեռքանի որ մահմետն տկար էր՝ արաբներն հակառակ էին նորան. բայց երբոր զօրացաւ, և շատերին յաղթեց, էն ժամանակն սկսեցին նորան պատուել և նորա ամէն բաներին ճշմարիտ ասել, որ օգուտ լինի նորանց։

(4) Մահմետն ոչ թէ մէնակ վկայութիւն չունի և հրաշք էլ չի արաւ իրան մարգարէ լինելըն հաստատելոյ համար, բայց նորա կեանքն և վարքն էլ Աստուծոյ մարգարէի արժանաւոր չեն, և ցոյց են տալիս՝ թէ ճշմարիտ Աստուծոյ մարգարէ չէր։ Աստուած սէր է. և իրան սիրողներին հրամայեց՝ որ ամէն մարդկանց և թշնամիներին էլ սիրեն. բայց մահմետն սորա հակառակն արաւ և քարոզեց։ Երբոր նա զօրացաւ, կռուասէր և անողորմ թագաւորի նըման սկսեց կռիւ անել իրան թշնամիներին դէմ և օրէցօր նորանց հալածելով սպանեց և անհամար մարդկանց արիւնըն թափեց՝ և նորանց ապ

բանքներըն յափշտակեց, և իրան աշակերտաներին տալաւ՝ որ էլ աւելի արիւնածարաւ և կռուասեր լինին՝ և թշնամիներին դէմ կռիւ անեն: Ինչպէս որ Աստուած հրամայեց՝ որ թշնամիներին սիրենք, էնպէս մահմետն հենց իրան օրինակովն իրան աշակերտներին սովորցըրուց՝ որ թշնամիներին ատեն, հալածեն և սպանեն: Բայց սորանով շատ յայտնի է՝ թէ մահմետն իսկի կարօղ չէ Աստուծոյ մարգարէ լինիլ՝ որովհետև նորա գործքերն և վարքն իսպառ Աստուծոյ կամքին և հրամանին հակառակ են, և աւելի սատանայի կամքն և վարքն են ցոյց տալիս քան թէ Աստուծոյ մարդասէր կամքն և օրէնքըն: Եւ եթէ կռիւներն և մարդկանց սպանութիւններըն թողելով՝ մարգարէ ասած մահմետի տունն մտնենք ի՞նչ ենք տեսնում էնտեղ: Մի թէ սուրբ և պարկեշտ մարդ ենք տեսնում, որ մարմնաւոր ցանկութիւններիցն հրաժարելով՝ մէնակ Աստուծոյ բաներըն մտածում է՝ և նորա անունըն սուրբ կեանքով փառաւորում է: Չէ՛՝ էսպէսի մարդ չի երևում, բայց նորա հակառակն՝ ղուրանն ինքնին պատմում է մեզ՝ թէ մահմետն իգամոլութեան ծառայ էր, և միշտ ջանք էր անում՝ որ կերպ կերպ հնարքովըն իրան պիղծ ցանկութիւններըն լցնէ և կատարէ: Թէ և ղուրանի աշակերտներն մէնակ չորս կին կարօղ են առնել, բայց մահմետըն ինն կանայք և շատ կին ծառաներ ունացաւ, և որովհետև էն շատութիւնն էլ բաւական չէր նորա համար, նա առաջ Աստուծոյ կողմանէ հրաման հնարեց՝ թէ կարելի է նո-

րան՝ իրան հօր եղբօր և հօր քվոր և էլ մօր եղբօր և մօր քըւոր աղջիկներըն իրան կին տանել քան որ կամենայ ։ Նմանապէս էլ իրան օղուլլուխ դայափ կինըն տաւ՝ թէ և հեթանոս պարթներըն էլ էնպէսի գործըն՝ պիղծ և գարշելի էին համարում, բայց էնպէս էլ նորա ցանկութիւնն չի լըցվաւ ․ բայց երբ որ մին ղըփտի ծառայ մարխամ անուն սառայու՝ էնքան ցանկայու նորան, որ էլ իրան հաֆսայ կնկան կարգըն փոխեց՝ էն մարխամին հետ լինելոյ համար, և երբ որ հաֆսայ կինն բարկացաւ՝ երդում կերաւ՝ թէ նրանից ետև մարխամին հետ իսկի մին անգամ էլ չի լինի ․ բայց յետոյ որ դըժուար էլաւ նորան էն երդումն պահել, Աստուծոյ կոլմանէն մին հրաման հնարեց, թէ պէտք չէ՝ որ մարդն իրան կնկան տված խոստմունքըն և երդումըն պահէ (տես ․ Հէայ ․ 12․ 13․ 14․ 15․ 16 ․)։ Էս ամէն խօսքերս ղուրանի խօսքերըն են՝ և նորանք արեգակի լուսիցն յայտնի վկայումեն՝ թէ անկարելի է՝ որ մահմետի նման իգամոլ և ցանկասէր մարդն՝ սուրբ Աստուծոյ մարգարէ լինի ։

(5) Ինչպէս որ մահմետի կեանքն և վարքն յայտնի և հաստատ վկայումեն՝ թէ նա Ճշմարիտ Աստուծոյ մարգարէ չէ, էնպէս էլ նորա վարդապետութիւնըն յայտնումէ՝ թէ նա Աստուածանից չէ եկած ։

Առաջ՝ նորա վարդապետութիւնն ոչ մէնակ Աստուածաշունչ գրոց շատ բաներըն խառնումէ և սուտ կերպով պատմում, բայց էլ Աս-

տուծոյ գրքերին խայտառ հակառակ է։ Ուղորդ է՝ որ ղուրանի մէջն կերպ կերպ բաներ գտնումենք՝ որ Աստուածաշունչ գրոց հետ համաձայն են, ինչու որ մահմետն նորանց սուրբ գրքերիցն առաւ, բայց առ հասարակ Աստուածաշունչ գրոց պատմութիւններն և ուսմունքներն սուտ ումուտ բաներով էնքան աղականեց, որ նորանց ճշմարիտ միտքն խայտառ խափանված է։ Էս խօսքս հաստատելոյ համար քանի մի օրինակներն առաջ կը բերենք։ Սուրբ գրքերն աշխարհքի ստեղծագործութիւնըն՝ և առաջին մարդկանց մեղք գործելըն էնպէս պատմումեն, որ Աստուծոյ ամենակարողութիւնըն, իմաստութիւնըն, սրբութիւնըն և մարդասիրութիւնըն, և էլ մեղքի սկիզբըն և Աստուծոյ փրկութեան խորհուրդըն յայտնի իմանանք. բայց ղուրանըն էս ամէնըս ուրիշ կերպով է պատմում. էնպէս՝ որ մարդոյ միտքն և սիրտն չի շահվում, և Աստուծոյ մօտ չի կանչվում։ Սուրբ գիրքն պատմումէ՝ թէ աբրահամն Աստուծոյ հրամանովն իրան իսահակ որդոյն ուզումէր պատարագ անել, բայց ղուրանն ասումէ. թէ իսմայէլին էր ուզում պատարագել. և էս բանըս հնարեց՝ որովհետև արաբներին քաղցր էր՝ իրանց նախահօր համար պատմութիւն լսել։ Բայց հենց էնպէս էլ յովսէփի, մովսէսի սողոմոնի և շատ մարգարէների պատմութիւններըն խառնումէ՝ և սուտ կերպով պատմումէ։ Բայց ամէնիցն հակառակ և հայհոյանք են էն խօսքերըն՝ որ Քրիստոսին հա-

մար ասումէ: Աստուծոյ գրքերն հին և նոր կտակարանումն հաստատումեն՝ թէ Քրիստոս Աստուծոյ որդին է՝ բայց ղուրանն համարձակ վումէ ամէնքին ուրանալ՝ և Յիսուսին մէնակ մարգարէ՝ և մեզ նման տկար և մեղաւոր մարդ-ասել · թէ և մին քանի տեղ ինքն էլ երբ ճշմարտութեան զօրութենովը բռնադատուած նորան Աստուծոյ բան և Աստուծոյ հոգի է դաւանում՝ և նորանով նորա Աստուածու-թիւնըն խոստովանումէ: (Ալ Իմրայ · 35 · 36 ·) սուրբ գիրքն հաստատումէ՝ թէ Յիսուս է մեր փրկիչն, և միջնորդն Աստուծոյ առաջին՝ որ նորանով մէնակ կարօղ ենք արդարանալ և Աստուծոյ առաջին ընդունելի լինել՝ և յաւիտենական կեանքըն ժառանգել՝ բայց ղուրանն էս մեծ և ամէնիցն հարկաւոր ուս-մունքըս՝ խիկի չի յիշում, և էլ մին ուրիշ միջնորդ չի յայտնում: Սուրբ գիրքն վկայու-մէ՝ թէ Յիսուս մարդկանց մեղքըն քաւելոյ և ջնջելոյ համար մեռաւ՝ և իրան մահովը յաւիտենական մահիցն մեզ փրկեց՝ բայց ղու-րանն՝ Աստուծոյ էս մարդասիրութիւնըս և մարդկանց էս մեծ մխիթարութիւնըս չի ճա-նաչում · բայց մին տեղ Յիսուսի մեռնիլըն ուրանումէ, և մին տեղ հաստատումէ, յայտ-նի ցոյց տալով՝ թէ մահմետն ինքն ճշմարի-տըն չիմացաւ:

Ապա ղուրանի էն ամէն հակառակ խօսքերըն մտածելով՝ ինչպէս կարելի է՝ որ նորան Աս-տուծոյ գիրք համարենք: Աստուած կարօղ

չէ իրան հակառակ խօսիլ՝ բայց նորա ամէն յայտնութիւններն իրար հետ միաբան են. ինչպէս որ Աստուածաշունչ գրքերումն սկզբիցըն մինչև վերջն տեսել ենք. բայց ղուրանն անհամար խօսքեր՝ ուսմունքներ և պատմութիւններ ունի, որ սուրբ գրոց խիստ հակառակ են, և նորանով յայտնի է՝ թէ նա Աստուծոյ գիրք չէ, բայց մարդոյ հնարված գործ է։ Ով որ ղուրանըն կը կարդայ՝ նա շուտով կիմանայ, թէ մահմետն քրիստոնեաներից և հրէաներիցըն մարգարէներին և առաքեալներին համար քանի մի պատմութիւններ լսեց՝ և նորանց արարքների աւանդութիւններին հետ խառնեց. պատճառն որ՝ յոյս ունէր, թէ ամէնքն. ի՝ քրիստոնեաներն, հրէաներն, և արաբներն աւելի հաւան կը կենան՝ եթէ ղուրանումն իրանց յատուկ բաներ հաւաքված տեսնեն։ Ուրեմն ղուրանն մին ժողովածու է. որ թէ հրէաների թէ քրիստոնեաների և թէ հեթանոսների շատ աւանդութիւններ հաւաքված ունի՝ միայն թէ Աստուծոյ ճշմարտութիւնըն իսկի չունի։

Երկրորդ՝ ղուրանի վարդապետութիւնն մեղաւոր մարդոյ համար իսկի փրկութեան և սըրբութեան ճանապարհ չի ցոյց տալիս, բայց ինքըն մարմնաւոր է. և էնտուր համար նա կարող չէ Աստուծոյ վարդապետութիւն լինել։ Մեղքով ապականված և իրան ստեղծողից հեռացած մարդին՝ ամէնից առաջ պէտք է որ մեղքի քաւութիւն, թողութիւն, և մեղքի ծառայութենից փրկութիւն գտնէ. ինչու որ

տանց նորանց կարող չէ սուրբ և արդար Աստուծոյ մօտենալ և երանելի լինիլ ։ Էլ պէտք է նորան՝ որ Աստուծոյ հոգւոյն զօրութիւն ստանայ՝ որ օրէ ցօր իրան մեղաւոր բնութեանն և աշխարհքին յաղթէ , և սրբութեան ճանապարհումն հաստատութենով գնայ ։ Բայց ղուրանն էս ամենիցն մեծ և հարկաւոր բաներիս համար իսկի տեղեկութիւն չի տալիս , ինչպէս որ մեղաւոր մարդոյ համար պէտք է։ Ուղորդէ՝ որ նա հրամայումէ՝ Աստուծոյ և մահմետին հաւատալ՝ օրն հինգանգամ աղօթք անել , պաս պահել · ողորմութիւն տալ , և քանի մի էսպէսի բաներ կատարել ։ Բայց էս ամէնս ի՞նչ է՝ եթէ մարդն էս ամէնըս անելով էլի մեղաւոր միայ իրան սրտումն՝ և իրան հոգոյ մէջն սրբված չի լինի մեղքի պղծութենիցն։

Ի՞նչ օգուտ է՝ դրսըվանց մարմինըն լուանալ , աղօթք անել , պաս պահել , և Աստուծոյ մին լինելըն խոստովանել , եթէ սիրտն ներսըվանց լցված է մեղքերով՝ որ նորան դատապարտումեն սուրբ Աստուծոյ առաջին և նորա երեսիցն հեռացնումեն ։ Ուրեմն ամէն ինչ որ մարդն հնարէ և անէ , անօգուտ է՝ քանի որ նա մեղքի քաւութիւն և թողութիւն չի գտել՝ և սրտի մէջն մեղքիցն չի սրբվել · պատճառն որ՝ ներսի մեղքն նորա ամէն գործքերըն պղծումէ՝ և Աստուծոյ առաջին գարշելի է շինում։ Էնդուր համար գլխաւոր բանն՝ որ մեղաւոր մարդին հարկաւոր է , էն է՝ որ մեղքի թողութեան և սրտի սրբութեան ճանապարհն յայտ-

նըվէ նորան ։ բայց ղուրանն էս ամէն գլխաւոր բաներս թողումէ՝ և սրտի սրբութիւնըն մոռանալով՝ մէնակ մարմնաւոր յատակութեան համար է խօսում ։ Էնտուր համար՝ էլ ոչ թէ կենդանի հաւատըն է քարոզում՝ որ մարդոց սիրտն նորոգումէ, բայց մէնակ մեռած հաւատըն՝ որ առանց բարի գործոց.քանի մի ուսմունք ընդունումէ և բերանով դաւանումէ՝ և քանի մի արարողութիւններ դրսըվանց կատարումէ ։ Ենց էս պատճառովս էլ էն հոգևոր երանութիւնըն՝ որ հաւատքիցն է դուրս գալիս, նա չի գիտում, բայց մէնակ մարմնաւոր ցանկութեանց երանութեանց և հեշտութեանց համար խօսումէ ․ մինչև որ իրան հաւատացելոց ճիննէթըն էլ մարմնաւոր ցանկութեանց տեղ է հնարում և շինում ։ Որեմն ղուրանի վարդապետութիւնն՝ մարդին առանց փրկութեան առանց թողութեան և առանց սրտի սրբութեան է թողում ․ էնպէս որ իրան մեղքի մէջն մարմնաւոր մնայ, և իրան դրսի արարողութիւններովըն էլ աւելի կուրացած լինի՝ որ իրան մեղաւոր և մահապարտ լինելըն չիմանայ ։ Էնտուր համար էլ կարելի չէ՝ որ մահմետի աշակերտները դեռ քանի որ ղուրանին հետևումեն՝ Աստուծոյ և ընկերի ճշմարիտ սէրըն իրանց սրտի մէջ ընդունին ․ պատճառն որ նորանց սիրտըն մարմնաւոր և անբարտաւան է մնում ․ և ղուրանն ինքնին հրամայում է ատել և հալածել նորանց՝ որ մահմետին չեն հաւատում ։ Էս ամէնս յայտնի վկայումէ՝ թէ ղու-

րանըն՝ Աստուծոյ գիրք չէ, և թէ ողորմելի են նորանք՝ որ հետևումեն նորան. ինչու որ փըրկութեան Ճանապարհ չի ցոյց տալիս նորանց, բայց մեղաւոր և մարմնաւոր է թողում նորանց:

Երրորդ՝ ղուրանի շատ ուսմունքն, Աստուծոյ արժանաւոր չեն՝ և էնտուր համար կարօղ չեն Աստուծոյ ուսմունք տալիլ: Աստուած սէր է՝ որ ամէն մարդկանց ուզում է մեղքից փրկել՝ և երանութեան մէջ տանել. բայց ղուրանըն սովորցնումէ՝ թէ Աստուած ինքնին շատ մարդկանց համար առաջուց սահմանեց՝ թէ պէ՛տք է դժոխքն գնան, և յաւիտեան տանջվին և կորչին. (Վէյու. 19. 20. 21): Ուրեմն Աստուած էնքան անողորմ է՝ որ շատ մարդկանց իրանց ծնվելուցն առաջ դատապարտեց և մէնակ յաւիտենական տանջանքին համար ստեղծե՛ց:

Աստուած սէր է և կամենումէ՝ որ ամէն մարդկանց և թշնամիներին էլ սիրենք. ինչպէս որ ինքն էլ արդարներին և անբարիշտներին վերայ անձրև է թափում, և իրան արեգակն լոյսըն ծագումէ: Բայց ղուրանն՝ Աստուծոյ անուանըն հրամայումէ՝ թէ անհաւատներին պէտք է ատել հալածել և սպանել. (Վէյու. 23. 25. 27): Ուրեմն Աստուած մէնակ մահմետականներին է սիրում, բայց ուրիշներին ատումէ. և ուզումէ որ կորչին: Ուրեմն էս խօսքս էլ քանի՛ հակառակ է Աստուծոյ սիրոյն՝ որ

այն մարդկանց կամենում է փրկել և երանելի անել ։ Աստուած սուրբ հոգի է՝ և սրբութիւն է սիրում. և առանց սրտի սրբութեան ոչ ով կարող չէ մօտենալ նորան։ Բայց ղուրանն Աստուծոյ կողմանէն հնարում է և սովորցնում է՝ թէ նա հաւատացելոց համար մին ճիւնաթ է ստեղծել, որ այն կերպ մարմնաւոր ցանկութիւններով և գարշելի պղծութիւններով է լցված. ինչպէս՝ որ Աստուածապաշտ մարդ ամաչում է նորա պատմութիւնը լսել ։ (տե՛ս Ալեայ. 17. 18.) ուրեմն ղուրանի աստւածութեան կեօրէ սուրբ Աստուածն՝ մարմնաւոր ցանկութիւնները սիրում է՝ և ի՛նքան մեծ երանութիւն է համարում, որ էլ իրան սիրելիներին յաւիտեան նորանց մէջ կամենում է քցել ։ Օ՛հ քանի՛ հայհոյանք է էս խօսքս սուրբ Աստուծոյ դէմ՝ որ մեր հոգիներս էլ ուզում է սուրբ շինել. որ նորա հոգևոր երանութեանն մասնակից լինինք ։ Էս այն խօսքերս արեգակի լուսից յայտնի վկայում են՝ թէ ղուրանի ուսմունքներն իսկի Աստուծոյ արժանաւոր չեն, բայց հայհոյանքով լցված են։ Ուրեմն ո՞վ կարող է ընդունել նորանց և հաւատալ՝ թէ Աստուծոյ ուսմունք են. իսկի ո՛չ ով ։

Զորրորդ՝ Աստուծոյ ճշմարիտ ուսմունքներն իրար հետ միաբան են՝ ինչու որ Աստուած կարող չէ իրան հակառակ խօսել. բայց ղուրանի շատ խօսքերն իրար հակառակ են. և էն-

տուր համար ղուրանն կարօղ չէ Աստուծոյ գիրք լինել ։

Շատ տեղ ղուրանն ասում է՝ թէ արժան չէ մարդկանց հաւատք բերելու համար զօռ անել և նորանց բռնադատել (Հէայ․ 22․ 24․ 26․) Բայց ուրիշ տեղերում հրամայում է՝ թէ պէտք է անհաւատներին դէմ կռիւ անել՝ և նորանց հալածել և բռնադատել, մինչև որ հաւատան կամ սպանվին (Հէայ․ 23․ 25․ 27)։ Մին տեղ ասում է՝ թէ Աստուած ամէն մարդկանց համար առաջուց սահմանեց՝ թէ ինչպէս պէտք է լինին՝ մինչև որ մարդն իսկի ընտրելու կարողութիւն չունի (Հէայ․ 19․ 20․ 21)․ և ուրիշ տեղ ասում է՝ թէ մարդն բարին կամ չարըն ընտրելու կարողութիւն ունի (Հէայ․ 28)։ Մին տեղ Յիսուսին համար ասում է՝ թէ Աստուած նորան մեռնել տուաւ, և ապա իրան մօտ բարձրացրուց (Հէայ․ 34)․ բայց ուրիշ տեղ ասում է՝ թէ Յիսուս չի մեռաւ, բայց մին ուրիշ մարդ՝ որ նման էր նորան (Հէայ․ 35)։

Ապա ուրեմն յայտնի է՝ թէ ղուրանն իսկի կարօղ չէ Աստուծոյ գիրք լինել, և էլ էն գիրքըն, որ էսպէսի իրար հետ հակառակ խօսքեր ունի, իսկի արժանաւոր չէ՝ որ մին մարդ հաւատայ նորան, պատճառն որ՝ ամէն տեղ խաբէութեան նշաններ կան նորանում ։

Հիմի՝ որ էս ամէն բաներըս տեսինք և քըննեցինք՝ ամէնին յայտնի է, թէ քանի՛ ողորմելի են էն մարդիքն, որ մահմետի խօսքերին հետևումեն, և ղուրանն Աստուծոյ գրքի պէս

են ընդունում· և որքան էլ աւելի ողորմելի են նորանք՝ որ կենդանի Աստուածանից ապըստամբվեցան, և իրանց փրկիչ Յիսուսին ուրանալով, աշխարհքիս ապրանքներին և փառքին համար, մահմետի սուտ խօսքերն ընդունեցին։ Ճշմարիտ Աստուածն հայրական սիրով յաւիտենական փրկութիւն է պատրաստել նորանց համար· որ մեղքի անէծքից և սատանայի ծառայութենիցըն ազատված, Քրիստոսի արիւնովըն սրբված, և սուրբ հոգւոյ զօրութենովըն նորոգված՝ յաւիտեան Աստուծոյ որդիք լինին և նորա յաւիտենական և կատարեալ երանութիւնըն վայելեն· բայց մահմետին մօտ՝ ոչ փրկութիւն ունին՝ ոչ սրբութիւն՝ և ոչ Աստուծոյ հետ հաղորդութիւն, և ոչ էլ հոգևոր երանութեան յոյս, բայց մարմնաւոր և մեղաւոր մնալով՝ միշտ Աստուածանից պէտք է վախենան՝ և էլ մեղաց համար նորանից զրկված են, որ կարօղ չեն մօտենալ նորան յաւիտեան թէ որ յետ չի դառնան և Քրիստոսի ձեռովն կատարված փրկութիւնըն հաւատով չընդունին։ Բայց պէտք է՝ որ ամէն մարդ իրան աչքով ղուրանի խօսքերըն տեսնէ և կարդայ՝ որ հաստատ իմանայ, թէ որքան Աստուծոյ և նորա ճշմարտութեանն հակառակ են, և էնտուր համար նորանց արաբերէն և հայերէն լեզուով էստեղ կը գրենք, և ինչ որ մութն է, կաճր մեկնութենով կը յայտնենք։

## Ղուրանին ժողոված վկայութիւններ։

### Առաջին անդամ։

### Մահմէտի համար։

### Ա. Մահմետ հրաշքներ չի գործեց։

1.) Սուրաթուլանքէպուտ.

Այէաթուն 49.

Վա գալու՝ լուլա ունդիլա ալայհի այեաթուն մին րապպիհի. գուլ իննամալ այեաթու ինտալ լահի վա իննամա անա նազիրուն մուպինուն։

1.) Սուրաթ ԻԹ.

Համար 49։

Եւ ասումեն (անհաւատներըն) թէ որ հրաշք չի վեր դայ նորա վերայ իրան տէրիցն (մենք չենք հաւատալ.) ասա *) հըրաշքներ մէնակ Աստուծոյ ձեռքն են և ես միայն յայտնի քարոզիչ եմ։

*) ասա։ Հրաման է Աստուծոյ համ Գաբրիէլ հըրեշտակին՝ թէ Մահմետին ինչ ասէլ ասէ իրան անձի համար։ Այս խօսելոյ կերպն Մահմետն շատ անէ Աստուծոյ դիմացն հնարումէ։

2.) Սուրաթուր րաադ.

Այէաթուն 8.

Վա քալուլ լաղինա քաֆարու՝ լաու լա ունզիլա ալայհի աեաթուն մին րապպիհի. իննամա անդամունզիրուն վա լի քուլլի գաումին հատին։

2.) Սուրան ԺԳ.

Համար 8.

Եւ նորանք՝ որ անհաւատ են աստուծն՝ եթէ լէր չի գայ նորա վերայ հրաշք իրան տէրիցը (չենք հաւատալ) իրաւի*) դու միայն քարոզիչ ես, և ամէն ազգին (իրան) առաջնորդ կայ:

*) Մահմետն հնարում է՝ իբր թէ Աստուած է ասել էս բանը, ինչպէս որ շատ տեղ էլ ասում է:

3.) Սուրաթու պէնի իսրայէլ.

Այէաթուն 90—93

Վա քալու՝ լան նումինա լաքա հադդա դաֆջուրա լանա մինալ արզի եանպուան. աու դաքունա լաքա ջաննաթունին նախիլին վա ինապին ֆադու ֆաջջիրալ անհարա խիլալահա դաֆջիրան. աու դուսգիդաս սամաա քամա զաամդա ալայնա քիս

3.) Սուրան. ԺԷ.

Համար 90—93.

Եւ ասումեն, մենք խակի չենք հաւատալ քեզ՝ մինչև որ մեր առաջի մին ջրի աղբիւր բղխեցնես երկրիցն. կամ՝ մին խուրմայի և խաղողի ծառերի բաղջայ լինի քեզ՝ և նորա միջիցը շատ ջրով գետեր բղխեցնես. կամ երկինքն կտոր կտոր կըտրասած թափել տաս

ֆան՝ աւ դադի պիլլա-
հի վալ մալայիքաթի
գապիլան · աւ եաքու-
նու լաքա պայդուն մին
զուխրուֆին աւ դար-
գա ֆիս սամայի՝ վա
լան նումինա լիրու գի-
յյիքա հադդա դու-
նազզիլա ալայնա քիդա
պան նագրաւուհու ·
քուլ սուպհանա րապպի
հալ քունդու իլլա պա
շարան րասուլան ։

*

մեզ վերայ, ինչպէս որ
ասելես · կամ Աստուա
ծը և հրեշտակները բե
րես քեզ վկայութիւն
տալոյ համար · կամ ոս
կուցըմ շինած տուն լի-
նի քեզ · կամ նարտիվա
նով երկինքն վերելնես,
և իսկի չենք հաւատալ
քու վերելնելըն՝ մինչև
որ մին գիրք տաս վէր
գալ մեզ մօտ՝ որ նորան
կարդանք · ասա, փառք
իմ տէրին · մի՞ թէ ես
մէնակ մարդ չեմ (որ-
ուղարկված է ինչպէս)
առաքեալ ։

4.) Սուրէթուլ Էնամ ·
Այէթուն · 57—58 ·

Մա ինտի մա դասդա-
ճիլունա պիհի · ինիլ
հուքմու իլլալիլլահի եա
գուսսուլ հաքքա վա հու-
վա խայրուլ ֆասիլինա ·
քուլ լաւ աննա ինտի
մատասդաճիլունա պիհի՝
լաքուզիյեալ ամրու

4.) Սուրա · Զ ·
Համար 57—58 ·

Ին չէ իմ ձեռքըս՝ որ
դուք փութացնելով
խնդրումեք, ինչու որ
դատաստանըն Աստու-
ծոյն է՝ նա կըհաստատէ
ճշմարիտն, և նա ամէն-
քի վերայ լաւ ջոկօղէ ·
ասա, թէ որ իմ ձեռքս
էր էն որ դուք փութայ-

պայնի վայայնութում : նելով խնդրումք գոր-ծըն իմ և ձեր մէջն կը-հաստատվէր :

### Ծանօթութիւն :

Ղուրանի մեկնիչն ալպայտավի՝ ասումէ , թէ էս խօսքերս պատասխանի են տալիս էն անհա-ւատ մարդկանց՝ որ մեծ համարձակութենով խնդրել էին Մահմետից՝ որ նա եթէ Ճշմա-րիտ մարգարէ էր՝ շուտով երկնքից քարէ անձրև բերէր իրանց վերայ՝ կամ մին ուրիշ պատիժ՝ որ շուտով իրանց կոտորէ . Էնտուր համար նա ասումէ՝ թէ որ էս բանս իմ ձեռքս էր , ես շուտով կը կոտորէի ձեզ ամէնքըդ : բայց էս ասելով՝ էլ յայտնի խոստովանումէր՝ թէ իսկի կարօղ չէ աստուծանից մին հրաշք բերել՝ որ վկայութիւն տայ իրան խօսքերըն Ճշմարտացնելոյ համար :

5.) Սուրաթ-ուլ-անպիեա.
Այէթուն 5—6 :

Պալ քալու ազղասուն ահլամին պալ աֆդա-րայհու պալ հուվա շա-յիրուն. ֆալեադինա պիաեաթին քամա ուր-սիլալ ավվալունա: Մա ամենաթ գապլահում մին քարեաթին ահլաք-

5.) Սուրաթ. իա.
Համար. 5—6 :

Բայց ասումեն՝ երազ-ների խառնըված կի-տուկէ (ղուրանն). իրա-ւի որ նա հնարեց նո-րան. իրաւի ինքն խօսք պըհամանօղ է. թող գայ հրաշքով մեզ մօտ ինչպէս որ առաջին(մար-գարէները) էին ուղար-կված : Նրանցից առաջ

նահա փփահում եումինունա ։

*) ոչ ով էն քաղաքները չի Հաւատաց՝ որ մենք քանդելենք, մի՞ թէ սորանք կը Հաւատան (թէ որ Հրաշք տեսնեն) ։

* Պատասխանն է՝ որ Աստուածոյ գիտացն Հնարէց Համեմատ ։

6.) Սուրաթուլ անամ. Այէթուն 109.

Վա ադսամու պիլլահի Ճահտա այմանիհիմ լալին Ճաադհում աեաթուն լաեումինուննա պիհա. քուլ իննամալ այեադու ինտալ լահի վա մա եաշիրուքում. իննահա իզաՃաադ լա եումինունա ։

6.). Սուրաթ զ. Համար 109

Եւ շատ մեծ երդում կերան աստուծով՝ որ եթէ Հրաշք գալուէ նորանց վերայ՝ իրաւի Հաւատալու են. ասա. իրաւի՝ Հրաշքներ Աստուծոյ ձեռքն մինակ են և նա չի տալ ձեզ իմանալ (նորանց երբոր գան) իրաւի՝ երբոր կըգան՝ նորանք չեն Հաւատալ ։

Ծանօթութիւն ։

Մահմետն էս խօսքերովս կամենումէ իրան անմեղ չինել՝ ինչու որ նա կարօղ չէր էն Հրաշքներըն ցոյց տալ որ մարդիկն խնդրել էին նորանից, և

նրա համար ասումէ՝ թէ Աստուած չէ կամենում հրաշք ցոյց տալ անհաւատներին, ինչու որ նա գիտումէ՝ թէ նորանք չեն հաւատալ՝ թէ և մեծ նշաններ տեսնեն։ Բայց էս քանի՜ քուճ և ունայն խօսքեր են, իբր թէ՝ Աստուծոյ կամքն էր՝ որ մարդիք ամէն խաբեբայ մարդոյ հաւատան՝ որ համարձակվումէ ինքն իրան Աստուծոյ մարգարէ անուանել առանց նշան բերելոյ՝ որ իրան աստուծանից գալըն յայտնումէ։

Յայտնի է էս ամէն ասւածներից՝ թէ մահմետըն կարող չէր առաջի մարդկանց մին հրաշք ցոյց տալ և նորանով յայտնել՝ թէ նա Աստուծոյ անունովն եկած էր. նա ինքն է խոստովանում իրան էս տկարութիւնը, և նրա համար կերպ կերպ փուճ պատճառներ է հնարում՝ թէ ինչու համար Աստուած չի կամեցաւ հրաշք տալ նորան։ Ուրեմն սուտ և ունայն է մահմետականաց խօսքն՝ թէ իրանց մարգարէն հրաշքներ է արել. ուրեմն իսկի մին նշան չունին՝ որ յայտնէ՝ թէ իրանց հաւատքն ճշմարիտ է։

Քանի՞ ողորմելի են նորանք։

Բ. մահմետն մեղաւոր մարդ էր։

| | |
|---|---|
| 7.) Սուրաթուլ Մումին. | 7.) Սուրա. Խ. |
| Այեթուն 57։ | Համար. 57. |
| Փաղպիր ինմա վաատալ-լահի հագգա վա ստաղ-ֆիր լըզանպիքա վա սապ | Ուրեմն համբերի՛ր՝ ինչու որ Աստուծոյ խոստումըն ճշմարիտ է. և |

պիհ պիհամտի րապպի-քա պիլաշիյի վալ իպ-քարի ։

թողութիւն խնդրէ՛ր քո յանցանքի համար և գոհացի՛ր քո տէրոջն առաւօտն և իրիկունըն։

8.) Սուրաթուլ Քաթալ.
Այէաթուն. 21.

Ֆա ալամ աննահու լա իլահա իլլալ լահու վա աստաղֆիր լիզանպիքա վա լիլմումինինա վալ մումինաթի ։

8.) Սուրաթ. խէ.
Համար. 21.

Ուրեմն իմացի՛ր թէ չի կայ Աստուած՝ բայց միայն Աստուածն. և թողութի՛ւն խնդրիր քո յանցանքի համար՝ և հաւատացեալ (մարդկանց) և հաւատացեալ (կանանց) համար ։

9.) Սուրաթուլ Ֆաթհի.
Այէաթուն. 1—2.

Իննա ֆաթահնա լաքա ֆաթհան մուպինան ։ Լիեաղ ֆիրա լաքալ լահու մա թագատտամա մին զանպիքա վամա թաախխարա վա եուդիմ մու նիամաթահու ալայքա վա եահտիեաքա սիրաթան մուստաքիման ։

9.) Սուրաթ. խը.
Համար. 1—2.

Իրաւի մենք շնորհեցինք քեզ մի յայտնի յաղթութիւն՝ որ Աստուած քեզ թողէ քո յանցանքըդ էն որ անցեն կացել և էն էլ որ լինելու են, և կատարէ իւր շնորհքըն քեզ վերայ՝ և առաջնորդ է քեզ ուղիղ Ճանապարհի վերայ ։

## Ծանօթութիւն:

Յայտնի վկայութիւնք ղուրանն՝ թէ Աստուած ինքն հրամայեց մահմետին, որ իւրան մեղքերին թողութիւնն խնդրէ. և ալդամաքշարի, և ալ-պայտալի, և ուրիշ մեկնիչներն խոստովանումն՝ թէ մահմետին պէտք էր մեղքի թողութիւնըն տանալ՝ ինչու որ նա ոչ միայն իւրան կռապաշ-տութեան ժամանակին մեղք գործեց՝ բայց իւրան մարգարէութեան ժամանակին էլ յանցանք ա-րաւ. և մանաւանդ որ նա իւրան երդումըն չի պահելով մին մարիամ կին ծառայի հետ էլաւ՝ և օրէնքի դէմ զայտի կինըն իւրան կին առաւ:

Ուրեմն ունայն և սուտ է մահմետականաց խօսքն որ ասումեն՝ թէ իրանց մարգարէն առանց մեղ-քի էր. և որա համար էլ ունայն և փուճ է նո-րանց յոյսն՝ որ մահմետն կարենայ նորանց համար բարեխօս լինել՝ և նորանց մեղքն ջնջել:

Ինչու որ ոչ ով կարող չէ ուրիշի համար միջ-նորդ և բարեխօս լինիլ առաջի Աստուծոյ, բայց միայն նա՝ որ ինքն անմեղ է՝ և իրան անձըն ու-րիշների տեղն պատարագելով՝ նորանց մեղքերըն քաւեց և ջնջեց: Ուրեմն յայտնի է՝ թէ ինքն մահմետին իբր մեղաւոր մարդոյ մին միջնորդ և բարեխօս պէտք է առաջի Աստուծոյ՝ որ փրկիլ՝ և չի դատապարտուիլ՝ և թէ որ էսպէս է, նա իւ-կի չէ կարող ուրիշների մեղքն քաւել. և նորանց համար բարեխօս լինել: Նստուր համար ամէն-քըն էլ որ նորա եսևէն են գնում՝ առանց միջ-նորդի են առաջի Աստուծոյ և փրկիչ չունին որ

քաւէ նորանց մեղքերը։ Օ՜հ քանի՞ ողորմելի են էսպէսի կորուստի մէջն։

Գ. Մահմետն առաջուց կռապաշտ էր։

10.) Սուրաթուլ շուրայ. Այէթուն. 49.

Մա քունդա դադրի մալ քիդապու վա լալ իմանու վա լաքին ճաալ նահու նուրան՝ նահտի պիհի ման նաշաու մին իպատինա։

10.) Սուրաթ ԽԲ. Համար. 49։

Դու (սրանից առաջ) չէիր իմանում՝ թէ ինչ է գիրքն՝ և թէ ինչ է հաւատն. բայց մենք նորան դրած ենք իբր մի լոյս՝ որ նորանով առաջնորդենք որինոր ուզումենք մեր ծառաներիցն։

11.) Սուրաթուլ դուհա. Այէթուն. 7.

Վա վաճատաքա դալլան ֆահատայ։

11.) Սուրաթ. ՂԳ. Համար 7։

Եւ (Աստուած) քեզ մոլորւած գտաւ և առաջնորդեց։

Ծանօթութիւն։

Էս խօսքերս յայտնի վկայումեն՝ թէ Մահմետ իւրան երեխայութեան ժամանակումն Աստուծոյ գիրքըն և ճշմարտութիւնըն չէր ճանանչում, բայց կռապաշտ էր՝ և կռապաշտի պէս խաւարի մէջն իւրան կեանքըն վարումէր։ Ուրեմն սուտ է մահմետականաց ասութիւն՝ » թէ նորա ծնընդի

ժամանակում լոյս ծագեց նորանից՝ և յետոյ որտեղ որ գնումէր՝ էն լոյսն նորանից փայլումէր և ամենըն լուսաւորումէր»: Ինչու որ՝ ինչպէս լոյս կըծագէ նորանից որ ինքն խաւարի միջում է ծնված և կեանքըն վարում: Ուրեմն յայտնի է՝ որ ունայն է մահմետականաց կարծիքն և պարծանքն՝ թէ էն ասած լոյսն մահմետի մարգարէ լինելըն նշանակեց՝ և յայտնեց և հաստատեց. Ինչու որ ղուրանն ինքն վկայումէ՝ թէ էսպիսի լոյս չի կար՝ և մահմետն խաւարի մէջն է ծնված: Քանի՞ ողորմելի են՝ որ էսպէսի առասպելական խօսքերի վերայ իրանց հաւատքըն շինումեն՝ և նորանց ականջ են դնում:

Գ. մահմետի վարքն պիղծ՝ և ցանկասէր էր:

12. Սուրաթուլ ահ-զապ.

Այեթ. 48:

Եա այեուհան նապիյու իննա ահլալնա լաքա ազ վաճաքալ լադի ադայ-դաու ճուրահուննա վա մա մալ աքադ եամինուքա միմմա աֆալ լահու ալայքա վա պանադի ամ-միքա վա պանադի ամ-մադիքա վա պանադի խալի քա վա պանադի խալադիքալ լադի հա-ճարնա մաաքա վա ամ-

12.) Սուրաթ. լգ.

Այեթ. 48:

Ով մարգարէ՝ իրաւ որ մենք շնորհել ենք քեզ քո կնանիքըդ՝ որ նորանց տուել ես իրանց հասութըն և (քո կին ծառայքըն) որ նորանց քո աջ ձեռն ստացել է էն (թալանով) որ Աստուած է տուել քեզ՝ և քո հօր եղբօր աղջիկնե-րըն՝ և քո հօր քրոջ աղջիկներըն՝ և քո մօր եղբօր աղջիկներըն և քո մօր քրոջ աղջիկներն՝ որ

րաաթան մումինաթան ին վահապադ նաֆսահա լիննապիյի ին արատան նապիյու անեասդանքի հահա • խալիսաթան լաքա մին տունիլ մումինինա • գատ ալիմնա մա ֆարաղնա ալայհիմ ֆի ազվաճիհիմ վա մալաքադ այմանուհում լիքայլա եաքունա ալայքա հարաճուն • վա քանալ լահու ղուֆուրան րահիման ։

* * * * *

քեզ հետ փախելեն (մեք քայլըն) և ուրիշ ) հաւատացեալ կինըն էլ՝ որ իրան անձըն մարգարէին տայ (և) թէ որ մարգարէն ուզէ նորան կին առնել • (էսէ) առանձին շնորհք քեզ համար ուրիշ հաւատացելոց վերայ • գիտումենք թէ ինչ ենք հաստատել նորանց մէջն իրանց կանանց համարև էն (կին ծառաները համար) որ իրանց աջ ձեռնէ ստացել է նորանց • որ չի լինի թէ յանցանք համարվի քեզ վերայ (էս առանձին շնորհքս) և Աստուած ներօղ է և ողորմած ։

Ծանօթութիւն ։

Մահմետն ինն կանայք և շատ կին ծառաներ ունէր էն ժամանակն որ էս խօսքերը առաջ բերաւ՝ թէ և ուրիշ մահմետականներն մէնակ չորս կին կարէին առնել և ունել ։

13.) Սուրաթուլ ահզապ. Այէաթուն. 49.

Դուրճի ման դաշաու

13.) Սուրաթ. ԼԳ. Համար. 49.

Ուշացնես էն քո (կա-

մի՛ն հուննա վա դուվլի իլայքա մա՛ն դաշաու՝ վամա՛ն իպդաղա՛յդա միմ մա՛ն ազալդա ֆալա ճունահա ալայքայ ։

նանց) կարգըն՝ որին որ կամենաս նորանցից՝ և քեզ մօտ առնես՝ որին որ կամենաս՝ և որին որ ցանկանաս նորանցից՝ որ դուրս ես քցել (առաջ) և մեղք չէ քեզ համար։

## Ծանօթութիւն ։

Մահմետականքն պարտական են՝ որ էն կանայքըն որ ունին՝ մին կերպով պատուեն՝ և հաստատ կարգով ամէն մէկին հետ լինին՝ և թէ որ մինը երեք անգամ արձակեն՝ կարող չեն նորան մին էլ իրանց կին առնել՝ մինչև որ ուրիշ մարդ նորան առնէ՝ և արձակէ․ բայց մահմետն էն առանձին շնորհքն ըստացաւ՝ որ էն կնկան կարգըն կարենայ ուշացնել՝ որին որ կամենայ՝ և էն կնկան հետ լինիլ որին որ կամենայ․ նա էլ կարող է արձակել և մին էլ առնել՝ քանի անգամ որ կամենայ ։

14․) Սուրաթուլահզապ․

Այէթուն , 51 ․

Ալա մա քանա լաքում անտուզու ռասուլալ լահի վալա անդանքիհու ազվաճահու մին պաատիհի ապատան․ իննա զալիքում քանա ինտալ

14․) Սուրաթ․ լգ․

Համար․ 51 ․

Ու չի վայելում ձեզ որ Աստուծոյ առաքելոյն նեղութիւն տաք․ և էլ որ նորա կանայքըն ձեզ չի առնէք նորանից ետև մինչև ամէն ժամանակն․

լահի ազիման ։

Ինչու որ էս մեծ յանցանք կը լինի ձեզ առաջի Աստուծոյ ։

## Ծանօթութիւն։

Մարգարէի սիրտն վիրաւորվեցաւ տեսնելով՝ թէ մին մարդ նորա այլշայ անուն կնկան ձեռին մօտեցաւ՝ և ահա՛ շուտով Աստուածանից հրամանէ բերում որ խակի մին մարդ մարգարէին նեղութիւն չի տայ՝ և էլ խորհուրդ չի անէ որ նորա մեռնելուն ետևնորա կանանցիյն մինըն առնէ ։

15։Սուրաթուլ ահզապ.)

Այէաթուն. 30 ։

Վա իզ դաքուլու լիլլազի անամալլահու ալայհի վա անամդա ալայհի ամսիք ալայքա զաուճաքա վադդաքիլլահա . վա դուխֆի ֆի նաֆսիքա մալ լահու մուպտիհի վա դախշան նասա վալլահու ահագգու ան դախշայհու , ֆալամմա քազայ զայտուն մինհա վաթարան զավվաճնա քահա

15.) Սուրաթ. լԳ.

Համար. 30.

Ու երբոր յասումէիր նորան՝ որ Աստուծոյ շնորհք է տուել՝ և դու էլ շնորհք ես տուել՝ թէ քո կինըդ քեզ պահի՛ր՝ և աստուածանից վախի՛ր. և թաքցնումէիր քո մտքումդ որ ինչ Աստուած յայտնելու էր և վախումէիր մարդկանցից թէ և աւելի արժան էր որ Աստուածանից վախենաս։ Բայց

լի քայլա եաքունա ալալ մումինինա հարաճուն ֆի ազվաճի ատիեայհիմ իզաքազաու մին հուննա վաթարան վա քանա ամ րուլլահի մաֆուլան ։

երբ որ զայիտ հաստատեց գործըն՝ արձակելով նորան (ո̃ իրան կինըն) էն կինըն քեզ ենք տուել՝ որ չի լինի թէ յանցանք լինի հաւատացելոց վերայ իրանց օղուլլուխների կանայքըն առնելոց համար՝ որ ժամանակ նորանց արձակելով գործըն հաստատեցին, և Աստուծոյ հրամանըն պէտք է կատարվի ։

## Ծանօթութիւն .

Զայիտն մահմետի օղուլլուխն էր՝ և մին զայնապ անուն կին ունէր ․ մահմետն մին ժամանակ եկաւ զայիտի տունն և նորա կնոջ գեղեցկութիւնըն տեսաւ՝ և աղաղակելով ասաց՝ փառք Աստուծոյ որ մարդկանց սիրտն իրան կամքին պէս տանումէ՝ և երբ որ զայիտն իմացաւ թէ մարգարէն ցանկանումէր էն կնկան ․ նորան ուզեց արձակի (թողանէ)։ Բայց մահմետ ինքն իմացաւ՝ թէ քանի՛ պիղծ պէտք էր երևի էս գործս ամէն մարդկանց առաջի՝ և նորա համար վախեցաւ, որ ամէն ժողովուրդն իրանց մարգարէի էն կինամոլութեան և ցանկասիրութեան համար գայթակղվի, և նրա համար երկմտեցաւ և ուշացաւ առնել նորան ։ Բայց շուտով Աստուածն էս խօսքերումս հրա-

ման տուաւ որ մարգարէն էն կինըն առնէ՝ և ապա տուաւ նորան, և իրան ցանկութիւնըն լցրուց։ Այսպէս են պատմում ալպայտավի, ալճաննալի՝ և ճալլալօտին մեկնիչներըն ։

16.) Սուրաթուլ թահրիմ .

Այէաթուն 1—2 ։

Յասյեուհան նապիյու լիմա դուհարրիմու մա ահալլաշ լահու լաքա՝ դապդաղի մարզադա ազվաճիքա վալլահու ղաֆուրուն րահիմուն . գատ ֆարաձալ լահու լաքում դահիլլաթա այմանիքում ։

16.) Սուրաթ . ԿԶ .

Համար . 1—2 ։

Ո՛վ մարգարէ ինչու հարամես համարումէն որ Աստուած հալալ է արել քեզ համար (պատճառն) որ ուզում ես (մէնակ) քո կանանց ցանկութիւնը լցնել . և Աստուած ներօղ է և ողորմած . վաղուց թոյլ տուաւ ձեզ Աստուած ձեր երդմունքըն քակել ։

Ծանօթութիւն ։

Ալզամաքարի, ալպայտավի, ճալլալօտին և եահեա մեկնիչներըն էս խօսքերըս էսպէս են մեկննում՝ թէ մահմետն մին ղփտի կին ծառայ ունէր մարիամ անուն՝ և նորա հետ էլաւ էն օրն՝ որ պէտք էր իրան կին հաֆսայի հետ լինիլ ։ Նրա համար հաֆսան շատ բարկացաւ մինչև որ մահմետն երդումով խոստացաւ նորան՝ թէ յետոյ իսկի մին ժամանակ մարիամի մօտ չեմ գնալ և նորա հետ չեմ լինիլ ։ Բայց որովհետև մար

դարէի ցանկութեան դժուար էր երդումն պահել շուտով Աստուածանից մին յայտնութիւն բերաւ՝ ասելով՝ թէ պէտք չէ որ մարդն իրան երդումըն պահէ և իրան կանանց տըվված խոստմունքն կատարէ ։ Ապա կարող էր մահմետն մարիամի հետ լինել և իրան ցանկութիւնըն լցնել ։

Բայց հիմիկ նայեցէ՛ք և տեսէ՛ք՝ թէ քանի՞ է մարդոյս աներեսութիւնըն ։ Ինչպէսի Աստուած է նա՝ որ էսպիսի իգամոլ մարգարէին ուղարկում աշխարհքս և էնպէսի հրամաններըն և խօսքերըն նորան է տալիս՝ և նորա մարմնաւոր և պիղծ ցանկութիւններըն լցնելոյ համար ոչ մենակ ամէն ամօթոյ և պարկեշտութեան օրէնքըն է քանդում ․ բայց էլ հրաման է տալիս՝ թէ իրան մարգարէն ամէն իրան երդմունքըն քակէ և քանդէ ։ Ո՞ր տեղ է էն մեր Աստուծոյ սըրբութիւնըն և արդարութիւնըն որ հին և նոր կտակարանի մէջն ․ և մանաւանդ Յիսուսի սուրբ մարդեղութեան մէջն տեսնումենք և սովորումենք ։ Իրաւի՝ որքան երկինքն հեռու է երկրիցս՝ էնքան մեր աւետարանի Աստուածն հեռու է էն ղուրանի աստուածանիցն ․ և ինչպէս որ խաւարն հակառակ է լուսոյն՝ էնպէս մահմետի պիղծ հրամաններըն հակառակ են մեր փրկչի սուրբ աւետարանին ։ Էլ ի՞նչ ասենք ․ կռապաշտների օրէնքներըն էլ աւելի սուրբ էին քան էն Աստուծոյ օրէնքըն՝ որ մահմետին ուղարկեց ․ ինչու որ՝ մահմետ ինքն վախեցաւ առաջի մարդկանց յայտնել էն իրան Աստուծոյ հրամանըն՝ թէ պէտք էր զայիտի կինն ինքն առնել՝ ինչու որ՝ գիտայ թէ

կռապաշտներն էլ էնպիսի գործըն պիղծ են համարում ։

Բայց անասելի է էս մարդոյս համարձակութիւնըն՝ որ կենդանի Աստուծոյ անունովն հրաման բերաւ՝ թէ մարմնաւոր ցանկութեանց համար պէտք է երդմունքն էլ քանդել ։ Ուրեմն Աստուծոյ անունովն պէտք է խաբել և սուտ ասել՝ միայն թէ մարմնոյ պիղծ ցանկութիւնն լցվի ։ Օ՜հ ․ քանի՛ հայհոյանք է ամենասուրբ Աստուծոյ դէմ ։ Յայտնի տեսնումենք՝ թէ էսպէսի մարդս չի եկաւ էն սուրբ և կենդանի Աստուածանիցըն՝ որ երկնքի և երկրի ստեղծօղն, և ճշմարտութեան Աստուածն է ․ յայտնի տեսնումենք թէ քանի՛ մոլորված և ողորմելի պէտք է լինի էն մարդն՝ որ էսպիսի մարմնաւոր՝ և հայհոյանքով լցված ուսմունքին հետևումէ ․ յայտնի էլ տեսնումենք՝ թէ քանի՞ պէտք է ամէնին յորդորել՝ որ էսպիսի կորուստի ճանապարհիցն հեռանան, և ճշմարիտ Աստուծոյ մօտ դառնան ։ Աստուած ողորմութիւն անէ էն ողորմելի մարդկանց՝ որ խաբված և կուրացած մտքով էսպէսի մարդոյ ետևէն են գնում ։

—○○○✻○○○—

## Երկրորդ անդամ.

### Ղուրանի համար։

1.) Նա էնպիսի ուսմունք ունի իրան մէջն՝ որ ամենևին արժանի չեն Աստուծոյ։

Բ.) Թէ Ջիննաթն մարմնաւոր է։

17.) Սուրաթուլ ջադալ.

Այէաթուն 16—17։

Մասալուլ Ջիննաթիլ լադի վուիդալ մուդդագունա՝ ֆիհա անհարուն մին մայի ղայրի ասինին։ Վա անհարուն մին լապանին լամ եադաղայեար թաամուհու. վա անհարուն մին խամրին լազզաթին լիշշարիպինա. վա անհարուն մին ասալին մուզաֆֆայ վա լահում ֆիհա մին քուլ լիզ զամարադի վա մաղֆիրաթուն մին րապպիհիմ։

17.) Սուրաթ. ԽԷ.

Համար 16—17։

Այս է Ջիննաթի նմանութիւնն՝ որ խոստացված է Աստուածապաշտներին։ Նորա մէջն կան չի ապականելի ջրի գետեր և կաթնի գետեր՝ որ նորա համն չի փոխվիլ. և գինոյ գետեր խմօղներին ցանկալի. և յստակված մեղրի գետեր՝ և նորա մէջն կայ նորանց համար ամէն կերպ պտուղներ և թողութիւն իրանց տերիյն։

18.) Սուրաթուլ Վաքի֊աթ.

Այէթուն 13—43.

Ուլայիքալ մուգարրապունա. ֆի Ճաննաթին նայիմին. սուլլաթուն մինալ ավվալինա. վա գալիլուն մինալ ախիրինա. ալայ սուրուրին մաուգունաթին. մուդդաքիյինա ալայհամուդագապիլինա. եաթուֆու ալայհիմ վիլտանուն մուխալլատունա. պիաքվապին վա ապարիքա՝ վա քասին մին մաինին. լա եուզատտաունա անհա, վա լա եունզիֆունա. վա ֆաքիհաթին միմմա եադախայեարունա. վա լա հիմ թայրին միմմա եաշտահունա. վա հուրուն այնուն. քա ամսալիլ լուլուվիլ մաքնունի. Ճազաան պիմա քանու եամալունա. լա եասմաունա ֆիհա լաղվան վալա դաղիման. իլլա քիլան սալաման սալաման. վա ավհապուլ

18.) Սուրաթ. ԾԶ.

Համար 13—43.

Նորանք էն են՝ որ Աստուծոյն կը մօտանան ցանկալի Ճիննաթի մէջըն. շատ կը լինին առաջիններիցն և քիչ յետիններիցըն. ոսկի տեօշեկի վերայ դինձանումեն. նորանց վերայ իրար դիմացն նստելով. նորանց չորս կողմով Ճահիլ ծառաներ ման են գալիս որ միշտ ծաղկումեն գեղեցկութենով. բաժակներ և թասեր և բղխօղ գինոյ գաւաթներ բերելով՝ որ գլխիցաւ չեն ստանալ նորանից՝ և էլ չեն թմրիլ. և պտուղներ (բերելով) ինչ կերպ որ ընտրումեն և թռչերի միս՝ ինչ կերպ որ ցանկանումեն. և (էնտեղ կան նորանց) գեղեցիկ աղջիկներ թուխ աչք ունօղ ծածկված մարգարիտներին ըման, նորանք էն գործ-

եամենի․ մա ասհապուլ եամինի՝ ֆի սիտրին մահզուտին․ վա թալհին մանզուտին․ ՛վա զիլլին մամտուտին․ վա մային մասքուպին․ վա ֆաքիհաթին քասիրաթին․ լա մագթուաթին վա լա մամնուաթին․ վա ֆուրուշին մարֆուաթին․ իննա անշաանահուննա ինշաան․ ֆաճաալ նահուննա ապքարան ուրուպան աթրապան․ լիասհապիլ եամինի․ սուլլաթուն մինալ ավվալինա․ վա սուլլաթուն մինալ ախիրինա ։

քերի վարձքն են՝ որ նորանք գործել են․ չեն լսումէն տեղ կուիւ և չարա խօսութիւն՝ բայց միայն ողջոյն՝ խաղաղութիւն, խաղաղութիւն․ և աջի կողմի լինօղներն (քանի՞ երանելի են աջի կողմի լինօղներն) կըբնակվին փշերից սրբված լոթօս ծառի տակ և կարգով տնկված մաուզի ծառի տակ, և լայն շուաքի տակ․ և բղխօղ ջրերի մօտ և պտուղների շատութեան մէջն՝ որ չի պակասիլ՝ և նորանցից հաւաքելն չի արգելված․ և կը դինջանան բարձր դեօշեկների վերայ․ իրաւի ստեղծել ենք նորանց (ճիննաթի աղջիկներին) յատուկ ստեղծագործութենով՝ և նորանց շինել ենք կոյս, մարդկանց սիրելի և համեմատ աջի կողմի լինօղներին համար․ շատ առաջիններից կըլինին և շատ էլ յետիններից ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.

Ամէն մարդոյ՝ խիղճմտանքն վկայումէ՝ թէ Աստուած ամենասուրբ հոգի է՝ որ ամէն պղծութիւն ատումէ. և ամէն մարդիք էլ գիտումեն թէ մարդոյ գլխաւոր մասն հոգին է՝ և ոչ մարմինն. և նրա համար ամէն ով որ միշտ և ճշմարիտ երանելի կամենումէ լինիլ՝ չէ, թէ մարմնոյ հեշտութիւն պէտք է խնդրէ, բայց հոգւոյ երանութիւն։

Բայց հոգւոյ երանութիւնն էն է՝ որ մարմնոյ մեղաւոր ցանկութենից ազատվի և սրբվի՝ և ամենասուրբ Աստուծոյ շնորհքըն գանէ և նրա հետ միաւորվի։ Էս բանս կռապաշտներին էլ յայտնի էլաւ. բայց էլ աւելի մեր սուրբ գրքերն են վկայում՝ թէ Աստուած սուրբ է (Եսայ. Զ. 3.). և նորա կամքն էն է՝ որ մենք էլ սուրբ լինինք (Ղևտ. ԺԱ. 45.). ինչու որ առանց սրբութեան ոչ ով չի տեսնիլ Աստուծոյն. (Եբր. ԺԲ. 14.)։ Էնտուր համար էլ Քրիստոս ասումէ՝ թէ երանի նորանց որ սրտով սուրբ են՝ որ նորանք Աստուած պիտի տեսնեն (Մատթ. Ե. 8.). և արդարների համար վկայումէ՝ թէ յարութեան ժամանակն ոչ կին կառնեն և ոչ մարդոյ կը գնան. բայց երկնքումն հրեշտակների նման են (Մատ. ԻԲ. 30)։

Բայց մահմետն ինչ է խոստանում իրան աշակերտներին. նա չի՛ գիտում՝ թէ մարդոյ անմահ հոգին ինչ է. նա մէնակ մարմինըն և մարմնոյ ցանկութիւններըն է ճանաչում, և նրա համար

իւրան ճիննաթն մարմնաւոր պղծութեան. տեղ է շինում՝ որ էնտեղ իւրան հաւատացեալներն մենակ աղջիկներ, գեղեցիկ ճահիլ ծառաներ, գինի ղուշերի միս, ամէն կերպ պտուղներ, և կանանչ խոտեր և ծառեր ունին՝ և նորանցով իւրանց մարմինըն ուրախացնումէն. բայց նորանց հոգին ի՞նչ կըլինի: Իրաւի էն ճիննէթի մէջն ուրախութիւն չի կայ նորա համար՝ բայց միայն տրտմութիւն. ինչու որ հոգին մարմնոյ ցանկութենիցն ազատվիլըն և Աստուծոյ հետ միաւորվիլըն է խնդրում. և էնտուր համար էն ճիննէթն դժոխքի պէս պէտք է լինի նորա համար:

Ասա ի՞նչ երանութիւն կայ նորա համար. ի՞նչ պէս մարմնիցն կազատվի՝ և Աստուծոյ հետ կըմիաւորվի: Իսկի յայտնի չէ. իսկի պատասխան չի կայ էս մեծ հարցմունքիս համար. ինչու որ մահմետըն մենակ մարմնոյ ցանկութեանց ճիննաթըն ճանանչեց՝ և նորա փառաւոր գեղեցկութիւնըն պատմեց: Բայց Աստուածապաշտ մարդն որ սըրտով սիրումէ Աստուծոյն՝ նա ամաչումէ էս պըղծութեանց համար, նա էլ չի կամենում նորանց վերայ խօսիլ՝ ինչու որ գարշելի են երևում Աստուածասէր հոգւոյն:

Բայց քանի՞ մեծ հայհոյանք է՝ որ մահմետն համարձակումէ ամենասուրբ Աստուծոյ անունովն էսպէսի ճիննաթ խոստանալ հաւատացեալներին՝ և ամէն մարմնաւոր պղծութեան մէջ կանչել նորանց: Քանի՞ յայտնի է սորանից՝ թէ մահմետն ճշմարիտ Աստուածն չի ճանանչեց՝ և նորանից չի եկաւ. կամ կարելի՞ է՝ որ մեր Աստուածն ու

յոյս է և սրբութիւն՝ որ սրտի և մարմնոյ սրբութիւն է հրամայում մեզ՝ որ Քրիստոսին էլ է ուղարկել մեզ մարմնոյ և մեղքի իշխանութենից փրկելու համար. կարելի՞ է որ նա հիմիկ մինոր մարգարէ ուղարկէ՝ և իրան ամէն սուրբ պատուիրանքն և խոստմունքն քանդելով՝ մէնակ մին մարմնաւոր և պիղծ ճիննաթ խոստանայ՝ և մեզ կանչէ գալ նորա մէջ։ Այսպիսի մտածմունք հայհոյանք կըլինէին Աստուծոյ դէմ։ Ուրեմն յայտնի է՝ թէ Աստուծոյ անարժան են էն մահմետի ուսմունքըն՝ և էլ անարժան են մարդոյ անմահ հոգւոյն՝ որ ստեղծված է նորա համար՝ որ սուրբ լինի և Աստուծոյ հետ միաւորված միշտ երանելի լինի էլ յայտնի է թէ ամենի վերայ ողորմելի են նորանք՝ որ մահմետի մարմնաւոր ուսմունքին են հետևում։ Ուրեմն աղօթք անենք եղբարք՝ որ բացվին նորանց հոգւոյ աչքերըն։

---

Բ.) Թէ Աստուած ինքն առաջուց սահմանեց՝ որ մարդկանց մեծ մասն դժոխքըն գնան. և ընտուր համար Աստուած ինքն նորանց մոլորացնումէ՝ որ չի հաւատան։

19.) Սուրաթուլ անամ. Այէաթուն 39։

Ման եաշաալլահու եուզլիլհու վա ման եաշաա եաճալհու ալայ զի րաթին մուստաղիմին։

19.) Սուրաթ. զ. Համար. 39.

Որին որ Աստուած կամենումէ՝ մոլորացնումէ, և որին որ կամենումէ ուղիղ ճանապարհի վերայ է տանում։

20.) Սուրաթուլ պագարա

Այաթուն 6—7.

Ինընալ լազինա քաֆա- րու սավա ուն ալայհիմ անդարդահում ամ լամ դունդիրհում լա եումինունա ։

Խատամալ լահու ալա գուլուպիհիմ վա ալա սամիհիմ վա ալա ապ- սարիհիմ ղիշավաթուն վալահում ազապուն ա- զիմուն ։

21.) Սուրաթուլ աարաֆ

Այաթուն 176.

Ման եահտիլ լահու ֆահուվալ մուհդատի վա ման եուզլիլ ֆաու- լայիքա հումուլ խասի- րունա . վալագատ զա- րանա լիճահաննամա քա- զիրան մինալ ճինի վալ ինսի ։

20.) Սուրահ. Բ.

Համար. 6—7.

Իրաւի նորանց համար՝ որ անհաւատ են՝ մի և նոյն է եթէ յորդորես նորանց՝ եթէ չի յորդո- րես՝ չեն հաւատալ ։

Աստուած մօհրեց (փա կեց) նորանց սրտերն՝ և նորանց լսելիքն՝ և ծած կոց կայ նորանց աչքերի վերայ և նորանց մեծ պա տիժ կը լինի .

21.) Սուրահ. Է.

Համար 176.

Որին որ Աստուած կը առաջնորդէ՝ նա առաջ- նորդված կը լինի, և ո- րին որ Աստուած կը մո- լորայնէ՝ նորանք կըկոր չին . և իրաւի՝ դևերից և մարդկանցից շատերն ստեղծել ենք դժոխքն գնալու համար ։

## Ծանօթութիւն ։

Քանի՛ մեծ անիրաւութեան խորհուրդ է էստեղ յայտնված ։ Աստուած՝ որ է աղբիւր ճշմարտութեան՝ նա ինքն կասի մարդկանց մոլորացնող լինիլ ։ Աստուած՝ որ ինքն է սրբութիւն նա մեղքի և չարութեան կասի լինիլ պատճառ ։ Աստուած որ ինքն է սէրն և ողորմութիւնն, նա կասի մարդկանց նրա համար ստեղծած լինել՝ որ դժոխքն տանի նորանց և յաւիտենական տանջանքի մէջ ։ Ինչպէս կարելի է՝ որ էնպիսի Աստուծոյ հաւատանք որ մարդկանց մոլորացնում է ։ Ինչպէս կարելի է՝ որ ականջ դնենք էնպէսի Աստուծոյն՝ որ մոլորացնելով մեղքի և չարութեան մէջ է տանում մեզ ։ Ինչպէս կարելի է՝ որ սիրենք էն Աստուածն՝ որ շատ ողորմելի մարդկանց մէնակ դժոխքն տանելոյ համար է ստեղծել ։

Տեսէ՛ք թէ ինչպէսի է ղուրանի Աստուածն ։ քանի՛ հակառակ են նորա կամքն և գործքն ճշմարիտ Աստուծոյ կամքին և գործքին՝ որ սուրբ գրոց մէջ խօսում է՝ որ չի կամենում մեղաւորի մահըն՝ բայց որ դառնայ և ճշմարտութեան գիտութեան մէջ հասնէ և ապրի՝ որ Քրիստոսին էլ ուղարկեց մեզ փրկելոյ համար՝ և միշտ էլ կանչում է և յորդորում է մեզ՝ որ ապաշխարենք և հաւատով Քրիստոսին մեր սիրտն ընդունենք և նորանով կորուստի միջից ազատվինք ։ Բայց էն ամէն բաներն ճշմարիտ և կենդանի Աստուծոյ համար ասել՝ և նորա սուրբ անունին քարոզել, քանի՞ անասելի հայհոյանք է ։ Ո՞վ կարող է հաւատալ՝ թէ էսպէսի ուսմունքներ ճշմարիտ Աստ-

ուծանից եկել են ։ Ուրեմն կամ պէտք է հաւատանք թէ Աստուած Ճշմարիտ չէ, սուրբ չէ մարդասէր չէ․ կամ պէտք է խոստովանինք թէ ղուրանն սուտ է ։

2․) Ղուրանի շատ ուսմունքն իրար հետ հակառակ են ։

Ա․) Նա առաջ հրամայում՝ թէ արժան չէ՛ հաւատք բերելոյ համար զօռ անել մարդկանց․ և յետոյ հրամայում՝ թէ պէտք է զօռ անել՝ և բռնադատել ։

Արժան չէ բռնադատել ։

| | |
|---|---|
| 22․) Սուրաթուլ պաջրաթ․ | 22․) Սուրաթ․ Բ․ |
| Այէաթուն 275․ | Համար 275․ |
| Հուվալ ալիյեուլ ադիմու․ լաիքրահա ֆիտդինի ։ | Նա է բարձր և մեծ․ չի կայ բռնութիւն հաւատքի համար ։ |

Պէտք է բռնադատել ։

| | |
|---|---|
| 23․) Սուրաթուլանֆալ․ | 23․) Սուրաթ․ Ը․ |
| Այէադուն 40—41 ։ | Համար 40—41 ։ |
| Վաքադիլուհում հադդայ լա դաքունա ֆիդնաթուն վա եաքունադդինու քուլլահու լիլահի ։ | Եւ կռուէ արէք նորանից դէմ մինչև որ (կռապաշտութեան) փորձանք չի լինի նորանցից, և ամէն հաւատքն դէպի Աստուած լինի ։ |

### Արժան չէ բռնադատել:

24)․ Սուրաթուլ Ղաշիյէ

Այէթուն 20—21 ։

Իննամա անդա մուզաքքիրուն լասդա ալայհիմ պիմուզայթիրին ։

24 ․) Սուրաթ ՁԸ ․

Համար 20—21 ։

Իրաւի դու միայն յորդորիչ ես․ դու չես հեօքմ տալ նորանց վերայ ։

### Պէտք է բռնադատել:

25 ․) Սուրաթութ Թահրիմ ․ Այէթուն ։ 9 ։

Եա ․ այեուհան նապի Ճահիտիլ քաֆֆարա վալ մունաֆիքինա վա ղլուժալայհիմ ։

25 ․) Սուրաթ ․ ԿԶ ․

Համար ․ 9 ։

Ո՛վ մարգարէ կռուէ այս անհաւատներին և կեղծաւորներին դէմ՝ և խիստ պատիժ տուր նորանց ։

### Արժան չէ բռնադատել:

26 ․) Սուրաթուն Նուր ։

Այէթուն ․ 55 ։

Քուլ․ ատիուլ լահա վա ատիուր րասուլա՝ ֆաին դավալլաու ֆաին նամա ալայհի մահումմիլա վա ալայ քում մահումիլդում վա են դուդիուհու դահդադու վա մա ալայ րասու

26 ․) Սուրաթ ․ ԻԴ ․

Համար ․ 55 ։

Ասա ականջ դրէք Աստուծոյ՝ և ականջ դրէք առաքելոյն ․ բայց թէ որ յետ դառնաք՝ իրաւի նա կը կատարէ ինչ որ պարտական է՝ և դուք պէտք է կատարէք ինչ որ պարտական էք և եթէ ականջ դընէք՝ կառաջնորդվիք ․ և առաքե-

| | |
|---|---|
| ըլ իլլալ պալաղուլ մու պինու ։ | Ըս վերայ ուրիշ պարտականութիւն չի կայ՝ բայց միայն հայտնի քարոզութիւն ։ |

## Պէտք է բռնադատել ։

| | |
|---|---|
| 27.) Սուրաթուն Նիսա. Այէթուն. 84. | 27.) Սուրաթ. Դ. Համար. 84. |
| Ֆաին դավալլաու ֆախուզուհում վաքդալուհում հայզու վաճատդումուհում ։ | Ու թէ որ յետ դառնան (հաւատքից) բռնեցէք նորանց և սպանեցէք՝ որտեղ որ գտնէք նորանց ։ |

## Ծանօթութիւն ։

Անկարելի է որ մարդոյ սիրտըն և խղճմտանքըն բռնադատելով փոխենք՝ կամ մին բանի համար հաւանեցնենք. ինչու որ մարդոյ խղճմտանքըն և մտածմունքն ազատ են և ինչ որ կամենումէ հաւատումէ՝ և ինչ որ չի կամենում չի հաւատում ։ Էնտուր համար բռնութենով ուրիշ բան չի լինիլ՝ բայց միայն էն որ մարդ չարչարանքից վախենալոյ համար բերանով մին խօսք ընդունի՝ և կեղծաւորութենով դաւանի՝ բայց նորա սիրտն չի հաւանում և չի ընդունում ։ Էս պատճառով էլ Աստուած իսկի մին ժամանակ հրաման չի տուաւ մարգարէներին կամ առաքեալներին՝ որ մարդկանց զօռ անեն նորանց հաւատք բերելոյ համար. բայց նա հրամայեց որ գնան ամէն աշ-

խարհքըն և ամէն մարդկանց մէնակ սովորյնեն . ինչու որ Ճշմարիտ Աստուծոյ բանն ինքն ունի էն զօրութիւնըն որ սրտերն շարժումէ և հաւատք է բերում :

Նա էլ աւելի հրամայեց՝ որ ամէն նեղութիւնքը և չարչարանքը համբերութենով քաշէն անհաւատ մարդկանցից՝ քան թէ իրանք մին մարդոյ զօռ անեն և նեղայնեն :

Էն ժամանակն էլ՝ որ Աստուած իսրայէլացիքներըն քանանի երկիրն տարաւ՝ չի հրամայեց նորանց քանանայիքներըն սպանել նորանց հաւատք բերելոյ համար . բայց նրա համար՝ որ նորանք իրանց անիրաւութենով արժան էլած էին Աստուծոյ պատիժին : Բայց զուրանն շատ ուրիշ հրամաններ է բերում Աստուածանից . թէ ա վերևումն ասաց՝ թէ Աստուած ինքն մարդկանց կը մոլորայնէ որ չի կարողանան հաւատալ . բայց էնպէս էլ իրան աստուածն հրամայումէ էստեղ՝ թէ պէտք է ողորմելի անհաւատներին զօռ անել՝ հալածել և սպանել : Աւաջ ինքն մոլորայնումէ , և ապա էլ հրամայումէ էն մոլորածներին հալածել և սպանել : Ուրեմն էս ի՞նչպէսի աստուած է . ո՞վ կարող է սիրել նորան : Աւելի պէտք է փախչիլ նորանից :

Աւետարանի Աստուածն հրամայումէ՝ թէ սիրեցէ՛ք ձեր թշնամիներըն , օրհնեցէ՛ք ձեր անիծօղներըն , բարի արէք ձեր ատօղներին և աղօթք արէք նորանց վերայ՝ որ ձեզ կը չարչարեն և կըհալածեն (Մատթ . Ե . 44) : Բայց զուրանի աստ-

ուածըն հրամայում՝ զօռ արէք անհաւատներին հալածեցէ՛ք անհաւատներին՝ սպանեցէ՛ք անհաւատներին ։ Ուրեմն ո՞րն է ճշմարիտ աստուածըն և որն է ճշմարիտ յայտնութիւնն ․ դու ինքն տեսնումես ․ ինչու որ արեգակի լուսիցն աւելի յայտնի է ։ Ինչու որ ամէն բան վկայում՝ թէ Աստուած է սէրն ։

Բայց էս բաւական չէ ․ թէ և զուրանն Աստուծոյ համար սովորցնում՝ թէ նա ամէն բաներըն մեծ և փոքր առաջուց սահմանեց՝ և երկնքումըն տախտակի վերայ գրեց՝ թէ ինչպէս պիտի լինին ․ բայց էնպէս էլ համարձակվում ասել՝ թէ Աստուած իրան խորհուրդների և հրամանների մէջն փոփոխամիտ է ։ Նա որ առաջուց սահմանեց՝ թէ պէտք է մարդկանց հալածմունքով և սպանութենով զօռ անել՝ և էնպէս նորանց հաւատք բերել՝ նա ինքն ուրիշ ժամանակ շուտով իրան միտքըն փոխում՝ և հրամայում՝ թէ զօռ չի՛ անես՝ բայց մենակ քարոզես ։

Ուրեմն ինքն է քանդում էն՝ որ առաջուց սահմանեց ․ ինքն հաստատ միտք չունի՝ բայց փոփոխամիտ է՝ և ինքն իրան հակառակ ։ Քանի՞ հայհոյանք է Աստուծոյ դէմ ․ ուրեմն անկարելի է որ էսպէսի գիրք Աստուածանից եկած լինի ։

Բ ․) Ասում՝ թէ Աստուած մարդոյն ազատ ընտրութիւն է տուել բարւոյն և չարին ․ և վերեն ասել էր՝ թէ մարդն ընտրութիւն չունի՝ բայց ինչպէս որ Աստուած առաջուց սահմանեց նորա համար ․ էնպէս պէտք է լինի ։

28.) Սուրաթուլ շամս - Աշշամսուն 7—8 :

Վա նաֆսին վա մա սավվայհա . ֆալհամահա ֆուճուրահա վաղաք վայհա :

28.) Սուրաթ. շմ. Ծամար 7—8.

Իբր հոգով և նորանով որ ստեղծեց նորան և նորա մէջ փչեց կարողութիւնըն ջոկելոյ և կարողութիւնըն ընտրելոյ (բարին և չարըն) :

Ծանօթութիւն :

Մարգարէն Աստուծոյ անուանին առաջ սովորցրել է՝ թէ Աստուած ամէն մարդոյ վիճակըն առաջուց սահմանել է որ կամ ճիննաթն գնայ կամ դժոխքըն ընկնի : Ուրեմն մարդ կարօղ չէ ուրիշ վիճակ ընտրել և ստանալ՝ բայց մէնակ էն՝ որ Աստուած նորա համար սահմանել է : Ինչպէս որ Աստուած հաստատել է՝ նա կամ չար և ողորմելի կը լինի, կամ բարի և երանելի կը լինի . ինքըն ընտրութիւն չունի : Բայց էստեղ մարգարէն Աստուծոյ էն առաջին հրամանըն և սահմանագրութիւնըն մոռացել է՝ և նորա հակառակըն է ասում՝ թէ Աստուած մարդոյն շնորհել է բարին և չարըն ընտրելոյ կարողութիւն . ինչպէս որ ինքըն է կամենում : Ուրեմն մարդն ազատ է . էլ Աստուած չի սահմանեց նորա վիճակըն՝ բայց թողեց նորան ընտրել բարին կամ չարըն ճիննէթըն կամ դժոխքըն :

Քանի՛ հակառակութիւն. Ինչպէս կարելի է նորան մարգարէ անուանել՝ որ էսպիսի հակառակ

բաներ Աստուծոյ դիմացն հնարումէ և առաջ է բերում ։

Գ․) Յիսուսի մեռնելոյն համար․ առաջ ասումէ՝ թէ մեռաւ, և յետոյ ասումէ՝ թէ չի մեռաւ

### Թէ Յիսուս մեռաւ ։

29․) Սուրաթուլ իմրան․

Այէթուն (50) ։

Իզա քալալ լահու՝ եա իսայ իննի մուդավաֆֆիքա վա րաֆիուքա ։

29․) Սուրա Գ․

Համար (50)․

Երբոր Աստուած ասաց՝ ով Յիսուս, իրաւի ես քեզ մեռնիլ կը տամ և քեզ կը բարձրացնեմ ինձ մօտ ։

### Թէ Յիսուս չէ մեռաւ ։

30․) Սուրաթուն նիսա․

Այէթուն 101—102․

Վա քաուլիհիմ իննա քադալնալ մասիհա իսա պնա մարեամու րա սուլալ լահի․ վա մա քադալուհու վա մա սա լապուհու վալաքին շուպպիհա լահում․ վա իննալ լազին ախդալաֆու ֆիհի լաֆի շաքքին մինհու․ մալահում պի-

30․) Սուրա Դ․

Համար 101—102․

Եւ իրանց (ջհուտների) խօսքի համար թէ իրաւի մենք սպաննել ենք մեսիային Յիսուսին․ մարիամայ որդոյն Աստուծոյ առաքելոյն՝ և չի սպաննեցին նորան և չի խաչեցին նորան՝ բայց մընին՝ որ նման էր նորան․ և նրանք որ իրար

հի մին իլմին իլլա դդա-պաաղ զաննի. վա մա քաղալուհու եաքինան. պա րաֆաահուլ լահի իլայհի ։

հետ հակառակօղ էին նորա համար, տարակուսանք ունէին էս բանիս համար, և հաստատ գիտութիւն չունէին նորա համար՝ բայց միայն կարծիքներին հետևեցին. չի սպանեցին նորան ճըշմարտապէս՝ բայց Աստուած բարձրացրուց նորան իրան մօտ ։

Ծանօթութիւն ։

Էս խօսքերիս կեօրէ երևումէ՝ թէ Աստուած ինքն հաստատ չի գիտում՝ եթէ Քրիստոսն մեռել է թէ չէ ։ Ինչու որ առաջ ասումէ նորան թէ մեռնել կըտամ քեզ և ապա վկայումէ՝ թէ ջհուտներն չի սպանեցին նորան, բայց Աստուած բարձրացրուց իրան մօտ ։

Ապա. արժա՞ն է էնպէս հակառակ բան ասել Աստուծոյ համար. ապա՝ Աստուծոյ մարգարէ կըլինի՞ նա՝ որ համարձակվումէ էնպէսի հակառակ բաներ Աստուծոյ անունով առաջ բերել ։ Անկարելի է ։

Սուրբ գրոց համար ։

Թէ մինչև մահմետի ժամանակն չի փոխվեցան ։

31.) Սուրաթուլանպիեա.

Այէաթուն 7.

Փասալու ահլազ զիքրի
ին քունդում լա դաա-
լամունա ։

31.) Սուրաթ. 21.

Համար 7 ։

Հարցրէ՛ք գրքի ազգի-
ցը՛ն ( ա՛յ ջհուտներիցն և
քրիստոնեաներիցն ) թէ
որ դուք չէք գիտում ։

32.) Սուրաթու Էունուս.

Այէաթուն 92.

Ֆաին քունդա ֆի շաք-
քին միմմա անզալնա ի-
լայքաֆ սաալիլ լազինա
եաքրաունալ քիդա-
պա մին գապլիքա ։

32.) Սուրաթ. 10.

Համար. 92 ։

Եւ թէ որ տարակու-
սանք ունենաս էն բանե-
րի համար որ քեզ մօտ
վեր գալ տուինք . ապա
հարցրու նորանցից որ
քեզանից առաջ գրքե-
րը՛ն ( ա՛յ հին և նոր կտա-
կարանաց գրքերն ) կար-
դային ։

33.) Սուրաթուլ պայի-
նաթ.

Այէաթուն 1. 2. 3. 4 ։

Լամ եաքունիլլազինա
քաֆարու մին ահլիլքի
դաապի վալ մուշրիքինա
մունֆաքքինա հադդայ
դադիեահումուլ պայի-
նաթու . րասուլուն մի-
նալ լահի եադլու սու-

33.) Սուրաթ 98.

Համար 1—4 ։

Նորանք որ գրքի ազգի-
ցը՛ն և կռապաշտներիցն
անհաւատ են՝ երկմտե-
լով չի դրդվեցան ( հա-
ւատքի բաներիցն ) մին-
չև որ եկաւ նորանց
պարզ յայտնութիւն ։

հուփան մուլթահհարա_
թան • ֆիհա քուղու_
պուն քայիամաթուն •
վամա դաֆարրաքալ
լադինա ուղուլ քիդա_
պա իլլա մին պաատի մա
ճաատհումուլ պայինա
թուն ։

մին առաքեալ Աստ_
ուածանից(ուղարկված)
որ կարդումք նորանց
առաջն շատ յստակ գըր
քեր՝ որ նորանցում հաս
տատուղիղ խօսքեր կան,
և էլ չի բաժանվեցան նո
րանք որ գրքերն ունին.
բայց էն ժամանակիցըն
ետև որ յայտնի յայտ_
նութիւն եկել էր նո_
րանց ։

## Ծանօթութիւն ։

Այս խօսքերովս Աստուած առաջ մահմետին և ժողովրդին հրամայումք որ քանի մի բաների համար տեղեկութիւն առնեն նորանցից որ սուրբ գրքերըն իրանց ձեռքն ունին՝ և յետոյ վկայումք թէ ջըհուտներն և Քրիստոնեայքն իրանց հաւատքըն և վարդապետութիւնըն հաստատ պահեյին՝ մինչև որ մահմետն նոր յայտնութենովն եկաւ ։ Առաջ ամէնն հաստատ մնայ, ինչպէս որ մովսէս և Յիսուս կարգեյին՝ բայց մահմետի դուրս գալոյ ժամանակն սկսեյին երկմտիլ և հեռանալ և իրանց գրքերըն փոխեյին ։ Այս է մահմետի խօսքն որ Աստուծոյ անունովն առաջ է բերում ։ Բայց եթէ սուրբ գրքերն մինչև մահմետի դուրս գալն չի փոխվեցան՝ յետոյ էլ չի փոխվեցան, ինչու որ մենք քրիստոնեայքս մին քանի ձեռագիր հին և նոր կտակարանի օրինակ

ներ ունինք՝ որ մահմետից երեք հարիւր տարի
առաջ գրված են աղեքսանդրիա քաղաքում, և
նորանց ամէն բառերն համեմատ են էն օրինակ-
ներին՝ որ հիմիկ ջըհուտների և քրիստոնէից ձեռ-
քըն են ։ Արանից կեօման որոգինէսի, կիւրղի,
եփրեմի, բարսղի, ոսկեբերանի, գրիգոր Աստ-
ուածաբանի, և ուրիշ սուրբ հարց շատ մեկնու-
թիւնք ունինք՝ որ նորանց մէջն ամէն տեղ էն
սուրբ գրոց բառերն կան՝ որ հիմիկ էլ մեր օրի-
նակներումս կան ։ Բայց էն ամէն հարքն չորս,
երեք, երկու հարիւր տարի մահմետից առաջ
էին և իրանց գրքերըն գրել էին ։

Արանից յայտնի է՝ թէ նորանց աստուածաշունչն
ամէն բառի և բանի մէջն համեմատ էր մեր օրի-
նակներին հետ՝ և իսկի մին փոփոխութիւն չի պա-
տահեցաւ ։ Ուրեմն ոչ մէնակ էն հին աղեքսանդ-
րացի ձեռագիր օրինակն, բայց ամէն հին սուրբ
հարց գրքերն յայտնի վկայումեն՝ թէ մեր սուրբ
գիրքն իսկի մին պակասութիւն չունի ։ Ուրեմն
էլ ունայն և սուտ է մահմետի և նորա աշակերտ-
ների ասութիւնն՝ թէ ջհուտներն և քրիստոնեայ-
քըն մահմետի ժամանակում սուրբ գրքերն շատ
տեղ փոխեցին՝ և մահմետի համար լինօղ վկայու-
թիւններըն կտրեցին ։

Յայտնի է՝ որ մահմետ ինքն էս բանըս հնա-
րեց նրա համար՝ որ կարօղ չէր սուրբ գրոց մի-
ջիցըն իսկի մին վկայութիւն առաջ բերել
իրան մարգարէ լինելոյն համար ։

## Տէր Յիսուսի համար ։

34.) Սուրաթուլ Իմրան.

Այէթուն . 45 ։

Իզա քալադիլ մալայի-քաթուն եա մարեամու իննալ լահու եուպաշշի րուքա պի քալիմաթի մին հու սմուհուլ մա-սիհու Իսայ ։

34.) Սուրաթ . Գ .

Համար . 45 ։

Երբ որ հրեշտակներն ասացին ով մարիամ՝ իրաւի Աստուած քեզ աւետիք է տալիս իրան Բանին համար՝ որ ի-րանից է (դուրս գալիս) որ նորա անունն է մե-սիա Յիսուս ։

35.) Սուրաթուն Նիսա .

Այէթուն . 164 ։

Իննամալ մասիհու իսայ պնու մարեամա րասուլ ուլ լահի վա քալիմա թու հու ալքայհաիլայ մարեամա վա րու հուն մին հու ։

35.) Սուրաթ . Դ .

Համար . 164 ։

Իրաւի մեսիայն Յիսուս մարիամայ որդին՝ է Աս տուծոյ առաքեալն, և նորա Բանն՝ որ նորան ածեց մարիամայ մէջն՝ և նորանից (դուրս բղ-խօղ) Հոգին ։

### Ծանօթութիւն ։

Մահմետականքն շատ ժամանակ ասումեն՝ թէ ղաբրիէլն Աստուծոյ հոգին է կոչւում, բայց էս տեղ յայտնի է՝ թէ ղուրանն Քրիստոսին է Աս-տուծոյ հոգի կոչում, և ոչ ղաբրիէլին ։

36.) Սուրաթուլ թահրիմ.

Այէաթուն. 12.

Վա մարեամա պնադա իմրանալ լադի ահզանադ ֆարճահա ֆանաֆախնա ֆիհի մին րուհինա ։

36.) Սուրա. կզ.

Համար. 12։

Եւ (Աստուած առակ դնելով առաջ բերաւ) մարիամ իմրանի աղջիկըն, որ իրան որովայնըսուրբ պահեց՝ և փչեցինք նորա մէջ մեր հոգւոյն ։

## Ծանօթութիւն ։

Ղուրանն էս համարներումս յայտնի խոստովանում է և Աստուծոյ դիմացն ասում է՝ թէ Յիսուս է Աստուծոյ Բանն և Աստուծոյ Հոգին՝ որ նորա միջիցն է բղխում՝ և որ մարիամ կուսիցըն մարդ ծնաւ ։

Բայց Աստուծոյ բանն կամ խօսքն որ նորա ներսիցն դուրս է գալիս՝ ինչ է ։ Բանն կամ խօսքըն առհասարակ է մտաց յայտնութիւնն կամ հոգւոյ յայտնըված միտքն ։ Որեմն ինչպէս որ միտքն հոգւոյ հետ միաւորված է որ կարող չես բաժանել մինըն միւսիցն՝ էն պէս էլ բանըն կամ յայտնըված միտքըն կարող չես բաժանել հոգւոյն ։ Ինչու որ ինչ բնութիւն որ ունի հոգին՝ էն բնութիւնըն էլ ունի միտքն ։

Որեմն յայտնի է՝ թէ Աստուծոյ բանն էլ՝ Աստուծոյ էութեան հետ էնպէս մի է՝ որ կարող չես բաժանել նորան Աստուծոյ էութենիցն և բնու

թենիցն և ստեղծուած ասել նորան ։ Ուրեմն եթէ Քրիստոս է Աստուծոյ բանն, Աստուծոյ էութիւնքն՝ էլ ունի և հօր Աստուծոյ հետ մի է։

Տեսէ՛ք՝ թէ ղուրանն ինքն կարօղ չէ ուրանալ Քրիստոսի Աստուածութիւնքն, բայց խոստովանում նորա Աստուած լինելն ։ Մին էլ հարցնենք՝ թէ մարդոյ հոգին չունի՞ մարդոյ բնութիւն ․ ՚ի հարկէ ունի ։ Ուրեմն թէ որ Քրիստոս է Աստուծոյ հոգին՝ որ նորան Աստուած մարեամայ մէջն փչեց, կարելի՞ է՝ որ նա Աստուծոյ բնութիւն չունենայ ․ ամենևին անկարելի է ։ Ուրեմն ղուրանն ինքն Քրիստոսին Աստուած է դաւանում ։ Բայց ինչպէս որ բանն է հոգւոյ ծննունդ՝ որ միշտ դուրս է գալիս նորանից՝ և նորա միտքըն յայտնում, էնպէս էլ Աստուծոյ բանն է Աստուծոյ ծննունդ որ միշտ նորանից բղխում՝ և նորա էութիւնքն՝ և կամքըն յայտնում ։ Ուրեմն ղուրանն՝ Քրիստոսին Աստուծոյ բան ասելով՝ յայտնի դաւանում՝ թէ Քրիստոսն է Աստուծոյ ծնունդն կամ Աստուծոյ որդին ։ Էլ որովհետև անկարելի է՝ թէ Աստուած առանց հոգւոյ և առանց մտաց յայտնութեան՝ ու առանց բանի լինի, ապա ղուրանն յայտնի էլ դաւանում՝ թէ անկարելի է՝ որ Աստուած առանց Քրիստոսին լինի ։ Ուրեմն ինչ է՝ որ Մահմետն և նորա աշակերտներն Քրիստոսին էս տեղ Աստուած են դաւանում, և ապա նորան հայհոյանքով անարգումն՝ և մէնակ աստուածանից ստեղծուած մարդ են ասում ։ Ինքն երանք կարօղ չեն ասել՝ թէ Աստուած

տուանց բանի և հոգւոյ լինի. բայց ինչպէս էլ համարձակվումեն Աստուծոյ բանըն և հոգին ուրանալ ։

Երբեմն յայտնի է՝ թէ ինքն իրան հակառակ է խօսում նորանց մարգարէն և Աստուծոյն չի ճանաչում ։

## Երրորդ անգամ ։

### Կէրպ կէրպ աստուածք ։

37.) Սուրաթուլիմրան.

Այէաթուն. 8 ։

Հուվալ լազի անզալա ալայքալ քիթաբա մին հու այեաթուն մուհքամա թուն. հուննա ումմուլ քիթաբի վա ուխարու մութաշաբիհաթուն. ֆաամմալ լազինա ֆի ղուլուբիհիմ զայղուն ֆայաթթաբիունա մա թաշաբահա մինհու ըբթիղաալ ֆիթնաթի վաբթիղաա թավիլիհի. վա մա յալամու

37.) Սուրահ. 4.

Համար. 8 ։

Նա էն է՝ որ տուել է ձեր գալ գիրքն քեզ մօտ՝ որ նորանում քանի մի համարներ յայտնի են. նորանք գրքի հիմունք են և ուրիշները առակաւոր են ։ Բայց նորանք՝ որ իրանց սրտերումըն մոլորութիւն ունին՝ էն բաները կը հետևին որ նորանում առակաւոր են՝ հերձուածի ցանկու-

մու դաավիլահու իլլալ-
լահու · վար րասիխու-
նա ֆիլ իլմի եաքուլու-
նա ամաննա պիհի · քուլ-
լուն մին ինտա րապպի-
նա՝ վա մա եաղզաքքա-
րու իլլա ուլուլ ալպա-
պի ։

թեան համար և էն բա-
ների մեկնութեան ցան-
կանալոյ համար։ Բայց
ոչ ով նորա մեկնու-
թիւնըն չի գիտում ե-
թէ ոչ Աստուած՝ և
հաստատ գիտութիւն
ունօղներըն ասումեն՝
(թէ) մենք հաւատու-
մենք նորան · ամէնն՝
մեր տէրիցն է՝ և ոչ
ով միտքն չի առնել՝
բայց միայն խելօքներըն։

## Ծանօթութիւն ։

Ղուրանըն խոստովանումէ՝ թէ շատ բաներըն կան իրան մէջ՝ որ մարդիք կարօղ չեն իմանալ՝ բայց միայն Աստուած ։ Ուրեմն ինչու համար յայտնել է Աստուած էնպէսի բաներըն որ ոչ ով կարօղչէ իմանալ ։ Մարդկանց ինչ օգուտ կըլինի նորանցից · ոչ ինչ · ուրեմն անօգուտ են · ուրեմն էլ Աստուած անօգուտ բան է գործում ։

Քանի՞ անմտութիւն · Աստուծոյ ճշմարիտ բաներըն մեր ոտից ճրագ է և լոյս է տալիս մեր ճանապարհի վերայ · Աստուծոյ ճշմարիտ խօսքերըն տգէտներին էլ լուսաւոր և իմաստուն են անում · (Սաղմ. ՃԺԹ.) ուրեմն քանի՛ ջոկողութիւն է Ղուրանի և մեր սուրբ գրոց մէջն ։

38.) Սուրաթուն Նիսա.

Այէաթուն 77.

Ափալա եադդատապպա-րունալ ղուրանա վա լաւ ու քանա մին ինտի ղայ-րիլ լահի լավաճատու ֆիհի խտիլաֆան քասի-րան:

38.) Սուրաթ. դ.

Համար 77:

Մի՞թէ մտիկ չե՞ն տա-լիս ղուրանին. և թէ որ մին ուրիշիցըն էր քան Աստուծանից՝ ի-րաւի կը գտնէին նորա մէջն շատ իրար հետ հա-կառակ բաներ:

Ծանօթութիւն:

Ղուրանն կանչումէ մեզ քննել իրան ասած բաներըն՝ և թէ որ իրար հետ հակառակ բաներ գտնենք՝ ինքն ասումէ՝ թէ էս նշան է՝ որ նա Աստուածանից չէ եկել: Հիմիկ մենք քննեցինք նո-րան, իրար հետ հակառակ բաներ շատ գտինք. ու-րեմըն ինքն իրան հրամանին կեօրէ հիմիկ պէտք է խոստովանինք՝ թէ իրաւի նա Աստուածանից չէ եկել, բայց մարդոյ գործ է:

---

39.) Սուրաթուլ Հաքաթ

Այէաթուն 42—45.

Վա լաու դաքավվալա ալայնա պաադալ աքավի-լի. լաախազնա մինհու պիլեամինի. զումմա լա-քաթաանա մինհուլ վա-դինա. ֆամա մինքում

39.) Սուրաթ կթ.

Համար 42—45:

Նու եթէ (մահմետ) էն մեզանից եկող խօսքերի-ցըն քանի մին (ինքն) էր հնարել՝ իրաւի որ նո-րան աջ ձեռնիցն բռնել էինք՝ յետոյ նորա

մին ահատին անհու հաճիզինա :

սրտի տամարըն կտրել էինք և ձեզանից ոչ ով չէինք խափանել որ նորան պատժէ :

Ծանօթութիւն :

Մահմետն էս խօսքերս էլ Աստուծոյ դիմացն ասումէ : Բայց մենք գիտումենք՝ թէ Աստուած իրան անքննելի իմաստութեան կեօրէ ուրիշ սուտ մարգարէներին էլ թոյլ է տուել՝ որ անիրաւութիւն սիրօղ մարդկանց մոլորայնեն : Ինչպէս էլ հին պարսկաց մէջն զօրօաստէր դուրս եկաւ և չինաց մէջն ֆօ սուտ մարգարէ էլաւ և Աստուած չի սատակեց նորանց . բայց հիմիկ էլ շատ մարդիք նորանց են հաւատում և հետևում . ուրեմն Աստուծոյ ներօղ լինիլըն իսկի նշան չէ՝ թէ մահմետն ճշմարիտ մարգարէ էլաւ՝ բայց ինչպէս որ Աստուած մինչև դատաստանի օրն սատանայի ապստամբելոյն համբերումէ, ինչպէս էլ սուտ մարգարէներին համբերումէ :

—✿✿✿✿✿✿✿✿✿✿✿✿—

40.) Սուրեաթուլ Շուրեայ

Այէաթուն . 15 :

Քուլ ամանդու պիմա անզալալ լահու մին քի-դապի վա ումիրդու լի աատիլա պայնաքում ալլահու րապպունա վա

40.) Սուրաթ 42.

Համար . 15 :

Ասա ( քրիստոնէից և ջհուտներին ) հաւատումեմ էն ամէն գրքին որ Աստուած տուաւ վէր գալ և ինձ հրաման է-

ապպուքում . լանա սա-մալունա վա լաքում սամալուքում . լա հուճ ճալթա պայնանա վա պայնաքում ։

լաւ որ ձեր մէջն արդարութիւն չինեմ . Աստուած մեր Տէրն է և ձեր Տէրն . մեզ վերայ են մեր գործքն և ձեզ վերայ են ձեր գործքն . չի լինի հակառակութիւն մեր և ձեր մէջն ։

41.) Սուրաթուլ անքէպութ .

Այէթուն . 45 ։

Վա լա դուճատիլու ահլալ քիդապի իլլա պիլլաթի հիյեա ահսանու իլլալ լազինա զալամու մինհում վաքուլու ամաննա պիլլազի ունզիլա իլայնա վա ունզիլա իլայքում վա իլահունա վա իլահուքում վահիտուն վա նահնու լահու մուսլիմունա ։

41.) Սուրաթ . ԻԹ .

Համար 45 ։

Եւ հակառակութիւն չի՛ անէք գրքի ազգին հետ՝ բայց միայն շատ քաղցր կերպով , և միայն նորանց հետ որ նորանց միջին անիրաւութիւն են անում, և ասացէ՛ք՝ թէ հաւատումենք էն որ մեզ համար վէր եկաւ և էն որ ձեզ համար վէր եկաւ և մեր Աստուած և ձեր Աստուած մի է և նորան յանձնվածենք մենք ։

Ծանօթութիւն ։

Թէ որ էսպէս՝ է ինչու՞ մահմետականքն ղուրանի հրամանըն չեն կատարում . ինչու՞ ջըհուտ-

ներին և քրիստոնեաներին ատումն, անարգումն, հալածումն և սպանումն՝ թէ որ հաւատումն ամէն Աստուածանից եկած գրքերին, ինչու՞ աւետարանըն անարգումն՝ և մարդկանց զօռ են անում որ աւետարանըն թողեն և մահմետական դառնան ։ Քանի՞ հակառակ են նորանց գործքըն իրանց խօսքերին ։

—✿✿✿✱✿✿✿—

42.) Սուրաթուլ էնամ. Այէթուն 145 ։

Քուլ լա աճիտու փիմա ուհիեա իլայեա մուհարրաման ալայ թայիմին եաթամու հու իլլա ան եաքունա մայդաթան աուտաման մասփուհան աու լահմա աու խինզիրին, փաիննահուրիճսուն աու փիսքան ուհիլլա լիղայրիլ լահի պիհի․ փաման իդթուրրա ղայրի պաղին վա լալ աատին փա իննա րապպաքա ղաֆուրուն րահիմուն ։

42.) Սուրա. Զ. Համար. 145 ։

Ասա նորանում որ ինձ յայտնըւած է՝ չեմ գտնում մին բան արգելված ուտօղին, որ չի ուտէ՝ եթէ ոչ լինի մեռելոտ (ինքն սատակած) կամ գնայօղ արիւն կամ խոզի միս՝ ինչու որ էօ գէշ է՝ կամ էն որ ուրիշի՝ քան Աստուծոյ անունովն է մորթւած ։ Բայց որ հարկաւորութենով բըռնադատված ուտէ (էս բաները) առանց ցանկանալոյ և առանց (կամօք) անցկենալոյ․ իմաւի որ տէր ներօղ և ողորմած կը լինի (նորա համար) ։

43.) Սուրաթ ուլ Մայիտա.

Այէթուն 9:

Ա.լեաումուհիլլալաքու մուլթ թայիպաղու վա թաամուլ լազինա ու-դուլ միդապա հիլլուն լաքում վա թաամու-քում հիլլուն լահում:

43.) Սուրէ. Է.

Համար. 9:

Այսօր հալալ էլան ձեզ բարի բաներն (ուտե-լու համար) և նորանց կերակուրն՝ որ գրքե-րըն ունին՝ հալալ է ձեզ՝ և ձեր կերակուրն հալալ է նորանց:

---

Ծանօթութիւն

Ուրեմն ղուրանն էստեղ թոյլ է տալիս մահմե-տականացն՝ որ ջհուտներին և քրիստոնեանե-րին հետ հաց ուտեն:

✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲

## Երրորդ Գլուխ:

Մահմէտականաց առարկութեան համար՝ թէ ղուրանն ինչպէս ամենէն մեծ հրաշք է:

Մինչև էստեղ յայտնի և հաստատ իմացել ենք՝ թէ աւետարանի ուսմունքներն Աստուա-ծային, հաստատ և ամէն ընդունելութեան ար-ժանաւոր են, և ղուրանն սուտ և Աստուծոյ Ճըշ-

մարդութեան հակառակ՝ հայհոյանքով լցուած՝ և մարդկանց խաբելու համար հնարուած է ։ Ուրեմըն ամէն մարդ պէտք է փախչի նորա խաբեբայութիւններէն և ամէն ով որ հիմիկ էլ ողորմած Աստուծոյ ճշմարտութիւնըն կանարգէ, նա ինքըն իրան անձըն կը դատապարտէ, և չի կարենալ պատասխանի տալ դատաստանի օրումն ։ Մէնակ մին հակառակախօսութիւն է մնացել, որ նորան պէտք է քննենք, և նա է՛ն է՝ որ մահմետականներըն ասումեն՝ թէ ղուրանն ինքնին ամէնիցըն մեծ հրաշք է՝ և էնտուր համար մահմետի մարգարէ լինելըն մեծ հաստատութենով հաստատումէ ։ Պատճառն որ՝ ասումեն թէ ղուրանն էնպէս գեղեցիկ փառաւոր և զարմանալի կերպով գրուած է՝ որ խպառ անկարելի է՝ թէ մարդն՝ մէնակ մին խօսք նորան նման շինէ և գրէ ։ Բայց էս ասողութիւնս խպառ ջիմար և ծաղր անելի է. պատճառն որ՝ բաւականապէս տեսինք, թէ ղուրանի միտքն չար և սուտ է ։ Բայց ամէն գրքի միտքըն՝ նորա գլխաւոր բանն է. և էնտուր համար ամէն գիրքըն ոչ ինչ է՝ եթէ նորա միտքն Աստուածային չէ՝ թէ և նորա բառերն շատ քաղցր և զարմանալի հնչեն ։

Ուղորդ է՝ որ արաբացոց լեզուն գիտօղներն վկայումեն՝ թէ ղուրանի բառերն լաւ են հնչում, բայց էս քաղցր հնչմունքս ինչ օգուտ են մարդկանց՝ եթէ էն քաղցր բառերի միտքն բարի չէ՝ բայց սուտ և հայհոյանքով լցված է ։ Էլ ո՞վ կարօղ է էն քաղցր հնչմունքըն իմանալ և նորանց գեղեցկութեան համար դատողութիւն ա-

նել. եթէ ոչ մինակ մին քանի ուսեալ մարդիք
որ արաբայոյ լեզուն քաջ գիտումեն. բայց ա-
մէն ուրիշներն պէտք է հաւատան՝ ինչ որ էն մին
քանի կարդացօղներն ասեն: Ուրեմն մարդկային
ազգն պէտք է իրան յաւիտենական փրկութիւ-
նըն մին քանի մարդկանց ձեռքն տալ և հաւա-
տալ ինչ որ նորանք ասեն և հրամայեն: Բայց էս
անմիտ բան է. պատճառն որ՝ եթէ ամէն մարդ
իրան մարմնական բաների համար ինքն է ուզում
դատողութիւն անել և նորանց կառավարել, ա-
պա իրան հոգոյ բաներըն և իրան յաւիտենական
փրկութիւնըն պէ՞տք է ուրիշ մարդկանց ձեռքն
տալ՝ որ ամէն օր կարող են մոլորվիլ և նորան
խաբել: Ուրեմն Աստուած աղքատներըն և տգէտ
ներըն կարդացողների ձեռքն մատնեց՝ որ նորանք
անեն ինչ որ կամենան. էսպէսի ասողութիւնս
հայհոյութիւն կը լինէր Աստուծոյ դէմ: Բայց
մահմետականներն՝ ինքնին Աստուծոյն չեն գի-
տում՝ բայց մինակ իրանց կարդացողների խօս-
քերին են հետևում, էնտուր համար իրանց փրկու-
թեան համար էլ հաստատ յոյս չունին և Ա-
տուծոյ սէրըն չեն ճանաչում՝ բայց ծառայիպէս
Աստուածանից վախումեն՝ և առանց սիրոյ ծա-
ռայիպես դրսի արարողութիւններով նորան պաշ
տումեն: Իրաւի որ մարդկանց ազգն անասելի
կերպով ողորմելի լինէր՝ եթէ Աստուած էնպէս
էր կարգել, որ իմաստուններն մինակ հաւատոյ
բաներըն իմանային և հասկանային: Որքան աւե
լի յարմար և Աստուծոյ արժան է Քրիստոսի
կարգն՝ որ ասում է թէ « աւետիքն աղքատներին

են քարոզվում „ (Մատթ. Ժա. 5.). Եւ մինէլ. ոչ թէ շատ իմաստուններ մարմնոյ կողմանէ՝ ոչ շատ հզօրներ՝ ոչ շատ ազնուականներ (կոչվեցան), բայց աշխարհքիս յիմարներին ընտրեց Աստուած՝ որ իմաստուններին ամօթ անէ: Եւ աշխարհքիս տկարներին ընտրեց Աստուած՝ որ հըզօրներին ամօթ անէ: Եւ աշխարհքիս խոնարհներին և անարգվածներին ընտրեց Աստուած՝ և ոչինչներին, որ մին բան համարվածներին խափանէ: Որ իսկի մին մարմին չի պարծենայ Աստուծոյ առաջին. (Ա. Կորն. Ա. 26. 29:):

Այս խօսքերս ցոյց են տալիս՝ թէ Աստուծոյ առաջին երեսպաշտութիւն չի կայ. ինչու որ նորա ողորմութիւնն և մարդասիրութիւնն ամէնին ընդունումէ՝ որ իրան կորուստըն իմանալով տրտմած է հոգով՝ և փրկութիւն է խնդրում անկեղծ սրտով: Որքան մինն աղքատ և ողորմելի է՝ էնքան աւելի Աստուծոյ ընդունելի է, պատճառն՝ որ էն է Աստուծոյ փառքն՝ որ տգէտներին իմաստուն, մեղաւորներին արդար, և ողորմելիներին երանելի շինէ իրան շնորհքովն և մարդասիրութենովն, որ իրան գրքերումն յայտնեց: Բայց եթէ նա մէնակ իմաստուններին լուսաւորէր՝ և մեծաւորներին երանելի անէր, ապա մարդկանց նման էր՝ որ աղքատներին և տգէտներին թողելով՝ կարդացողներին և հարուստներին մէնակ փառաւորումեն և պատվումեն: Բայց ինչ տեղից ճանանչենք՝ թէ կարելի չէ ղուրանի նման գիրք շինել. պատճառն որ՝ եթէ մահմետական երկիրների մէջն մին մարդ համարձակվի ասել՝

թէ աւելի լաւ և գեղեցիկ գրքեր կան քան թէ ղուրանն, շուտով կըսպանեն նորան։ Ընտուր համար ոչ ով չի համարձակվում ճշմարիտըն ասել, բայց ամէնքն իրանց կեանքըն պահելու համար դաւանումեն՝ թէ ղուրանն ամենիցն գեղեցիկ է։

Դեռ քանի՛ որ մահմետն տկար էր՝ շատ արաբներ յայտնի ասումէին՝ թէ ղուրանն մարդու հնարած գործ է. բայց երբոր մահմետն զօրացաւ, ամէնքն վախեցան որ չի սպանվին, և էնտուր համար ղուրանի գեղեցկութիւնըն դաւանեցին։ Բայց դաւանութիւնն՝ որ մահի վախելուցն է դուրս գալիս, ոչ ինչ է. և իսկի կարող չէ վկայութիւն լինիլ մին բանի համար։

Բայց թէ և ճշմարիտ լինի՝ թէ ղուրանի բառերն լաւ հընչումեն՝ բայց էնպէս էլ կարելի է՝ որ մին մարդ առաջ գայ. որ աւելի քաղցր ձայնօղ գիրք շինէ. պատճառն որ մարդիք օրէցօր առաջանումեն արհեստներով և գիտութենով։ Ուրեմն եթէ էնպէսի մարդ առաջ գայ, և ամէնիցն քաղցր ձայնօղ գիրք շինէ, որ Աստուծոյ հակառակ հայհոյանքով և սուտ բաներով և պիղծ և չար ուսմունքներով լցված լինի՝ միթէ էն գիրքըն էլ իրան քաղցր հնչմունքին համար հրաշք պէտք է համարենք՝ և իբր Աստուծոյ գիրք ընդունենք։ Իրաւի՝ եթէ ղուրանն իրան քաղցր հնչօղ բառերին համար՝ Աստուծոյ գիրք պէտք է համարվի, ապա էն նոր դուրս եկօղ չար գիրքըն էլ իրան հնչմունքին համար Աստուծոյ գիրք պէտք է համարենք, թէ

և ամէն չարութենով լցւած լինի ։ Ապա յայտնի է՝ թէ անմտութիւն և հայհոյութիւն է էս-պէսի ասողութիւնս . ուրեմն էլ անմտութիւն է ասել՝ թէ ղուրանն իրան քաղցր հնչմունքին համար պէտք է մեծ հրաշք համարվիլ . և իբր Աստուծոյ գիրք ընդունվիլ ։

—✺✺✺✶✺✺✺—

# Վերջաբանութիւն։

Ահա տեսանք եղբարք՝ թէ քանի՜ ողորմելի են մահմետականները՝ և մանաւանդ նորանք, որ Քրիստոսին ուրանալով՝ Մահմետի սուտ և հոգի սպանօղ ուսմունքները ընդունեցին։ Ապա միտք ներնիս բերենք՝ թէ Աստուած կամենում է՝ որ ամէն մարդիկ փրկվին և ճշմարտութեան գիտութեան մէջ հասնեն. ինչու որ՝ Քրիստոսին ամէն մեղաւոր մարդկանց համար իրան կեանքը փրկութեան գին տուաւ. և աւետարանումն հրամայում է՝ որ ամէն աշխարհքին նորա փրկութիւնը քարոզենք՝ և փրկիչ Քրիստոսի մօտ կանչենք և տանենք։ Ուրեմն ինչ է մեր պարտաւորութիւնն՝ ով Քրիստոնէական եղբարք, եթէ ոչ էն՝ որ Քրիստոսի հրամանին պէս ջանք անենք որ մեր լոյսն լուսաւորէ առաջի հօրը, որ երկնքումն է. (Մատթ. Ե.)։ Քրիստոնեաներն երկրի աղն՝ և աշխարհքի լոյսն են. որ պէտք է ամէն խաւարը լուսաւորէ։ Նորա համար պետրոս առաքեալն ասում է՝ թէ դուք ընտրըված ազգ էք՝ թագաւորութիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, Աստուծոյ յատուկ ժողովուրդ՝ որ ձեր բարի վարքը ընծայ բերէք նորան, որ ձեզ խաւարիցն դէպի իրան զարմանալի լոյսն կանչեց (Ա. Պետր. Բ. 9։)։ Ուրեմն մենք մանաւանդ

պարտական ենք՝ որ մահմետականաց խաւարն՝ Քրիստոսի լուսովն լուսաւորենք. պատճառն որ իբր Քրիստոսի սուրբ ժողովուրդ՝ նորանց մի-ջումն բնակված ենք՝ նորանց լեզուները և վարքերը ճանանչում ենք․ օրէցօր նորանց հետ ընկերութիւն ունինք․ և էնտուր համար ամէնիցն լաւ կարօղ ենք նորանց հետ խօսիլ՝ Աստուծոյ ճշմարտութիւնը յայտնել, Քրիստոսի զարմանալի սէրը քարոզել, և նորանց յորդորել՝ որ յաւիտենական կորստիցն փախ-չեն՝ և Յիսուսի արիւնովն պատրաստված փրկու-թիւնը խնդրեն և ընդունեն ։ Որովհետև կոչված ենք Աստուծոյ որդիք լինել՝ ապա էլ պէտք է մեզ՝ որ ամէն տեղ օրհնենք և բարի անենք և մէզաւորներին և անհա-ւատներին իրանց խաւարիցն փրկիչ Քրիստո-սին մօտ կանչենք ։

Բայց ի՞նչպէս կարելի է՝ որ մենք ամէնքս եղ-բայրական սիրով՝ Քրիստոսի աւետարանը՝ մահմետականաց մէջն յայտնենք և փառաւո-րենք ։ Շատ հեշտ կարելի է՝ միայն թէ ջեր-մեռանդ սրտով կամենանք և ջանք անենք․ ինչպէս որ քիչ խօսքերով էստեղ յայտնի կըլինի ։

(1․) Առաջին բանն է՛ն է՝ որ մեր միջումն ա-ւելի ջերմեռանդութենով ջա՛նք անենք՝ որ Քրիստոսի աւետարա՛նը կարդանք, իմանանք և նորա քաղցր և փրկութիւն տուօղ վարդա-պետութիւնը մեր միտքն առնենք․ ինչու որ՝

եթէ մենք ինքնին Աստուծոյ սէրըն և Քրիստոսի փրկութիւնըն չենք գիտում՝ ի՞նչպէս կարելի է՝ նորան ուրիշին յայտնել: Ընտուր համար պէտք է՝ որ վարժարանների համար աւելի հոգս քաշենք և մեր երեխաներըն Աստուածապաշտ վարժապետների ձեռքն տանք՝ որ Քրիստոսի ուսմունքներըն կարդան՝ իմանան և աշխարհքի խաւարիցն դէպի Աստուծոյ լոյսն դառնան. և պէտք է որ սուրբ աւետարանն օրէցօր մեր տըներումն աղօթքով կարդանք՝ որ ամենների սրտներն լուսաւորվին և Քրիստոսի քաղցր սիրովն մխիթարվին: Եթէ էսպէս անենք, ապա Աստուծոյ սուրբ հոգին օրէցօր կառաջնորդէ մեզ դէպի ճշմարտութեան գիտութիւնն՝ որ սրտի ուրախութենով կարող լինինք մեր փրկչի անունն ուրիշներին յայտնել և նորանց կանչել՝ որ Քրիստոսի երանելի աշակերտ լինին:

(2.) Բայց մեր ամէն գիտութիւնն ոչ ինչ է՝ եթէ ճշմարիտ ապաշխարութենով չի հրաժարինք աշխարհքի և մեղքի ճանապարհիցն՝ և հաւատով Քրիստոսին մօտ չի դառնանք՝ որ նորա արիւնովն պատրաստված մեղաց թողութիւնն մեզ համար ստանանք՝ ընդունինք և ճշմարտութենով նորան ինչպէս մեր ողորմած մարդասէր և ամէնակարող փրկիչ իմանանք, ճանանչենք և ամէն բանի վերայ աւելի սիրենք: Մենք ամէնքս մեղքով ապականված ենք՝ և կարող չենք բժշկութիւն գտնել՝ եթէ հիւանդների պէս մեր մեծ բժիշկ Քրիստոսի մօտ չի դառնանք՝ և նորա

աւետարանովն խոստացած բաւութիւնն և փրկութիւնըն չի ընդունենք. ինչու որ Աստուծոյ որդոյ արիւնն միայն կարող է մեզ սրբել ։

Այս ուրեմն եթէ կամենումենք մահմետականացն՝ Քրիստոսի փրկութիւնըն յայտնել, առաջ պէտք է՝ որ մենք ինքն նորան խնդրենք՝ և նորանով բժշկվինք, պատճառն որ՝ ոչ ով կարող չէ իրան Քրիստոնեայ համարել և Քրիստոսին ճշմարտութենով իրան տէր և փրկիչ ասել և ուրիշներին քարոզել, եթէ ինքն մեղքից բժշկված չի լինի նորա սուրբ արիւնովն ։ Բայց երբոր մարդ ինքն ճշմարտութենով իմանայ թէ քանի՛ քաղցր և մարդասէր է Քրիստոսն, թէ քանի՛ յօժարութենով և ողորմութենով՝ պարշելի մեղաւորներին ընդունումէ և սրբումէ, ապա նորա սիրտն ջերմեռանդ սիրով կբորբոքվի և կարող չէ լուռ կենալ՝ բայց միշտ կը ցանկանայ, որ ամէն մարդկանց յայտնէ Քրիստոսի էն մեծ մարդասիրութիւնըն, և ամէններին նօրա մօտ կանչէ՝ որ իրան նման երանելի լինին ։ Ուրեմն՝ ե՛ղբարք՝ ամէնքս դառնանք Քրիստոսի մօտ՝ որ նորա քաղցրութիւնըն իմանանք՝ և ապա մահմետականներին էլ յայտնենք ։

3.) Բայց ով որ Քրիստոսի արիւնովն մեղքից սրբված է, նա մինչև յետ չի դառնալ նորանց մէջ՝ բայց Աստուծոյ սուրբ հոգովն սուրբ կեանք կը վարէ՝ և Քրիստոսի պատուիրանքները կը պահէ ։ Ուրեմն եղբարք. եթէ Քրիստո-

սի ճշմարիտ աշակերտներ ենք, Քրիստոսի լոյսն մեր վարքերովս պէտք է փայլէ. և եթէ լոյսն մեզանով լուսաւորէ, նորա անունն մահմետականաց մէջն կը փառաւորուի. պատճառն՝ որ կիմանան՝ թէ Քրիստոսի շնորհքն մեզանում բնակված է: Անոր համար պէտք է որ արթուն լինինք և ջանք անենք՝ որ ամէն պղծութիւն և խաբէութիւն և ատելութիւն մեզանից դուրս հանենք՝ և նորան հակառակն սրբութեան, ճշմարտութեան, և սիրոյ հետևենք: Ուրեմն՝ եղբարք՝ ջանք անենք՝ որ մահմետականաց մէջն սուրբ կեանք վարենք՝ և սուրբ կեանքի օրինակովն նորանց յայտնի ցոյց տանք, թէ Աստուծոյ շնորհքն Քրիստոսի ձեռովն թափված է մեզ վերայ: Երբ որ էս մեծ բաներս կիմանան, ապա էլ կը ճանաչեն՝ թէ մէնակ Քրիստոսն կարող է փրկութիւն տալ. և էնոր համար կըգան և նորա փրկութիւնըն կը խնդրեն:

(4.) Դեռ քանի որ մենք ինքնին մեղաց ծառայումենք, կարող չենք ուրիշներին ապաշխարութիւն և սրբութիւն քարոզել. պատճառն որ՝ կասեն մեզ՝ թէ բժի՛շկ՝ առաջ քու անձը բժշկի՛ր բայց երբոր սկսենք մեր կեանքըն Քրիստոսի պատուիրանքին կեօրէ կարգել, էն ժամանակն կարող ենք խօսքերով էլ աւետարանի ուսմունքըն յայտնել և ուրիշներին կանչել՝ որ Յիսուսի երանելի աշակերտներ լինին, և ոչ մէնակ կարող ենք, բայց էլ պարտական ենք էն փրկիչն ցոյց տալ՝ որ մեր հոգոց հիւանդութիւնն բժշկեց.

ինչու որ նա ցանկանումէ՝ որ ամէնքն նորա մօտ գան և բժշկվին ։ Բայց եթէ մահմետականներին հետ խօսենք, պէտք է որ սիրով՝ և ոչ թէ բարկութենով կամ նախատինք տալով խօսենք. պատճառն՝ որ մէնակ սէրն և համբերութիւնըն կարող են նորանց սիրտերըն բանալ և շարժել՝ որ աւետարանի խօսքերին միտք տանեն՝ և յօժարութենով լսեն ։ Եւ պէտք է որ հաստատութենով և համարձակութենով խօսենք. ինչու որ Քրիստոսի վարդապետութիւնըն հաստատ և ճշմարիտ է, և կատարեալ փրկութիւն է ցոյց տալիս խնդրօղներին և քննօղներին և էնտուր համար ամանչելոյ պատճառ չի կայ ։ Երրորդ՝ պէտք է՝ որ ջերմեռանդ սրտով՝ և ոչ թէ թեթևամտութենով և ծաղրածութենով աւետարանի խորհուրդներին համար խօսենք, պատճառըն՝ որ ով որ Աստուծոյ սուրբ խօսքերըն թեթևամտութենով առաջ է բերում, ոչ մէնակ ցոյց է տալիս՝ թէ ինքն անհաւատ մեղաւոր մարդ է, բայց էլ Աստուծոյ խորհուրդներըն մահմետականաց առաջին անարգումէ, և սրանով մեծ դատաստան է բերում իւրան հոգուն վերայ ։ Ափսոս նորանց՝ որ Քրիստոսի արիւնովն կատարված փրկութեան համար պղծութենով և ծաղրածութենով են խօսում ։ Չորրորդ՝ պէտք է՝ որ ոչ մեր փուճ մտածմունքներըն կամ ուրիշ առասպելական բաներ մահմետականներին քարոզենք, այլ միայն Աստուծոյ ճշմարտութիւնըն և

Աստուածաշունչ գրքերով յայտնըւած խօս-
քերըն սովորցնենք. ինչու՝ որ մարդոյ ամէն ի-
մաստութիւնն անպիտան է փրկութեան համար,
բայց Աստուծոյ աւետարանն է էն հաստատ և
չի շարժվելի հիմունքն՝ որ մէնակ նորա վերայ
կարօղ ենք մեր հաւատքն շինել ։

(5.) Բայց ամենիցն հարկաւոր է՝ որ մեր ողորմե-
լի մահմետական ընկերներին համար ջերմե-
ռանդ սրտով աղօթք անենք դէպի Քրիստոս՝ որ
ողորմութիւն անէ նորանց և սուրբ հոգով
նորանց աչքերըն բանայ՝ որ իրանց կորուսածն
իմանան և սրտի զղջութենով փրկութիւն
խնդրեն և գտնեն ։ Պատճառն՝ որ մեր մահ-
մետական ընկերներն կարօղ չեն՝ որ իրանց
կարողութենով և զօրութենով խաւարի մո-
լորութիւնըն իրանց սրտից դուրս հանեն և
Աստուծոյ որդի Յիսուսին հաւատան՝ և նորան
իբր իրանց յաւիտենական փրկիչ և միջնորդ ըն-
դունեն. ինչու՝ որ ոչ ով կարօղ չէ Յիսուսին
տէր անուանել՝ եթէ ոչ սուրբ հոգով (Ա.
Կորնթ. ԺԲ. 3). Էնդուր համար պէտք է՝ տէ-
րին աղաչենք՝ որ նորանց սրտերըն լուսաւորէ
և արդարութեան համար ծարաւցնէ նորանց։
Բայց էլ պէտք է՝ որ հաւատով և յուսով համ-
բերութիւն անենք նորանց դառնալուն համար.
ինչպէս որ տէրն էլ մեզ համար երկայնամիտ
էլաւ և մեր մեղաց համար շատ ժամանակ համ-
բերութիւն արաւ ։ Ու եթէ նորանք նախա-
տինք են տալիս մեզ Քրիստոսի աւետարանին
համար, չի՛ բարկանանք՝ բայց մեր միտքներս

բերե՛նք՝ թէ առաքեալներն՝ քանի՞ նախատինք և չարչարանք քաշեցին և համբերեցին՝ երբ որ մեր նախահարց մէջն Քրիստոսի աւետարանըն քարոզեցին ։ Անոր համար մենք էլ նորանց նման լինինք՝ և յուսահատ չե՛ լինինք՝ թէ որ մահմետականներն հակառակութիւն անեն, բայց էլ աւելի ջերմեռանդ լինինք աղօթքով, սիրով և հաբերութենով՝ մինչև որ տէրըն լսէ մեզ, և ողորմութիւն անէ նորանց ։ Պատճառն՝ որ նա խոստացաւ՝ թէ իսմայէլին էլ ողորմութիւն անէ, և նա հաւատարիմ է՝ որ իրան խօսքըն կատարելապէս կատարէ ։ Ժամանակն հասել է՝ որ Քրիստոսի ամէն աշակերտներն պէտք է արթուն լինին և իմաստուն կուսանքի պէս իրանց փեսայի գալըյն համար պատրաստ լինին ։ Բայց ինչպէս պատրաստ լինինք՝ եթէ ոչ մեր հին ծուլութիւնըն թողենք, աշխարհքի ցանկութիւններիցըն հրաժարենք՝ և հաւատոյ ջերմեռանդութենովն մեր տէրի սուրբ ճանապարհին վերայ գնանք ։ Ուրեմն մենք էլ ամէն խաբեբայութիւնըն, պղծութիւնըն, հակառակութիւնըն թողենք՝ և եղբարց նման խաղաղութենով իրար հետ վարվինք՝ որ մահմետականներն մեր խօսքերովն և վարքերովն Քրիստոսի լոյսն տեսնեն և իմանան, թէ նա միակ է ճշմարիտ փրկիչն և միջնորդն, և ապա նորանք էլ կը խնդրեն նորան ։

Դու մարդասէր Տէր և Փրկիչ՝ որ ամէն մեղաւորներին համար քո արիւնըն թափեցիր՝ և

ամէն մարդկանց ազատեցիր՝ ողորմեա՛ մեր
մահմետական եղբարներին. որ քո Աստուա-
ծային լուսովն իրանց կորուստըն իմանան, և
ապա սրտի զղջութենովն քեզ մօտ գան: Շնոր
հի՛ր նորանց ամէններին՝ որ քո աւետարանի ձայ
նովն մեղքի ծանր քնիցն վեր կենան՝ և վա-
տակածներին և բռնաւորներին պէս քեզ մօտ
հանգիստ խնդրեն և գտնեն. և փառաւորվի քո
մեծ և սուրբ անունդ ամէն ազգերի մէջն:
Քեզ և հօր և սուրբ հոգւոյ լինի՛ փառք և
երկրպագութիւն յաւիտեանս

ԱՄԷՆ:

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ